

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

«Կրթությունը 21-րդ դարում»
գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես

Հատոր 7, համար 2, 2025, Երևան

«Образование в 21-ом веке»
международный научно-методический рецензируемый журнал

Том 7, Номер 2, 2025, Ереван

«Education in the 21st Century»
International Scientific-Methodical Peer-Reviewed Journal

Volume 7, Issue 2, 2025, Yerevan

ԵՊՀ հրատ. • Издательство ЕГУ • YSU Press

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ԴԴ ԴԱՐՈՒՄ» գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդեսն ընդգրկված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ընդունելի պարբերականների գիտական հրատարակությունների ցուցակում:

Международный научно-методический рецензируемый журнал «ОБРАЗОВАНИЕ В 21-ОМ ВЕКЕ» включен в перечень периодических научных изданий, рекомендованных Комитетом высшего образования и науки Министерства образования, науки, культуры и спорта РА.

The international scientific-methodical peer-reviewed journal "EDUCATION IN THE 21ST CENTURY" is included in the list of scientific periodicals recommended by the Committee of Higher Education and Science of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia.

Գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդեսը տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ:

Международный научно-методический рецензируемый журнал издается по рекомендации Ученого совета Ереванского государственного университета.

The international scientific-methodical peer-reviewed journal is published by the recommendation of the Academic Council of Yerevan State University.

ՀԱՆՐԱՅԻՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

**Գլխավոր խմբագիր՝
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Կ.**

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստանի Հանրապետություն

Խմբագրական խորհուրդ՝

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ. Վ.

Երևանի պետական համալսարանի ռեկտոր, պատմ. գիտ. դոկտոր, Հայաստանի Հանրապետություն

ՍՍՐԻՅԱՆ Է. Վ.

Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր, հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ, Հայաստանի Հանրապետություն

ՄԱՐԴՈՅԱՆ Ռ. Ա.

Գլխավոր խմբագրի տեղակալ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Շիրակի պետական համալսարան, Հայաստանի Հանրապետություն

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Ա. Ս.

Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
Գրացի համալսարան, Ավստրիայի Հանրապետություն

ԲԵՐՄՈՒՍ Ա. Գ.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Դոնի Ռոստովի Հարավային դաշնային համալսարան, Ռուսաստանի Դաշնություն

ԲՈՅԼ Բ.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Ձևավորող գնահատման ուսումնասիրությունների կենտրոն, Մանչեսթերի համալսարան, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Կ.

Ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնասպորտային համալիր» հիմնարկի տնօրեն, Հայաստանի Հանրապետություն

ԳԵՎՈՐԳՅԱՆ Պ. Հ.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., Վանաձորի պետական համալսարան, Հայաստանի Հանրապետություն

ԺՈՒԿ Ա. Ի.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Բելառուսի Մ. Տանկի անվ. պետական մանկ. համալսարանի ռեկտոր, Բելառուսի Հանրապետություն

ԽԱՉԱՏՅԱՆ Ռ. Խ.

Բան. գիտ. թեկնածու, դոցենտ, Աբու Դաբիի կրթության և գիտության նախարարություն, Որակի ապահովման և վերահսկողության վարչություն, ԱՄԷ

ԿԱՐՄՊԵՏՅԱՆ Ի. Կ.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան, Հայաստանի Հանրապետություն

ՄԱՂԱԼԻՆՍԿԱ-ՄԻՉԱԼԱԿ Ի.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Վարչավայի համալսարան, Լե-
հաստանի Հանրապետություն

ՄԵՀՐԱՆԵԱՆ Ե.

Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, Ջորջիա քոլեջ,
Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ. Հ.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Վ. Բրյուսովի
անվան պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն

ՊԼԱՉԻՆՈՍ Ս. Ս.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Յուրի Կոնդրատյուկի անվան Պոլտավայի պո-
լիտեխնիկական ազգային համալսարան,
Ուկրաինա

ՊՈՂՍՈՎԱԼ Ս.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Մոսկվայի
պետական մանկավարժական համալսարան,
Ռուսաստանի Դաշնություն

ՎՈԻՔԵԼՍ Թ. Հ.

Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Ուտրեխտի համալսարան,

ՔԱՐԴՍ Ս.

Նիդեռլանդներ
Տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Բրազանսայի պոլիտեխնիկական ինստիտուտ,
Պորտուգալիա

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ НАУЧНОГО ЖУРНАЛА

Главный редактор:

АРУТЮНЯН Н. К.

Доктор пед. наук, профессор,
Ереванский государственный университет,
Республика Армения

Члены редакционного совета:

ОГАННИСЯН О. В.

Ректор Ереванского государственного
университета, доктор ист. наук, Республика
Армения

АСРИАН Э. В.

Проректор Ереванского государственного
университета, кандидат психол. наук, доцент,
Республика Армения

МАРДОЯН Р. А.

Заместитель главного редактора, доктор пед.
наук, профессор,
Ширакский государственный университет,
Республика Армения

АЛЕКСАНИЯ А. С.

Кандидат пед. наук, доцент, Грацский
университет, Австрийская Республика

БЕРМУС А. Г.

Доктор пед. наук, профессор,
Южный федеральный университет, Ростов-на-
Дону, Российская Федерация

БОЙЛ Б.

Доктор пед. наук, профессор, Центр
исследований формирующего оценивания,
Манчестерский университет, Великобритания

ВУББЕЛЬС Т. Х.

Доктор пед. наук, профессор,
Утрехтский университет, Нидерланды

ГЕВОРГЯН П. Г.

Доктор пед. наук, профессор,
Ванадзорский государственный университет,
Республика Армения

ГРИГОРЯН А. К.

Кандидат физ.-мат. наук, доцент,
Директор учреждения «Учебно-спортивный
комплекс» ЗАО «Газпром Армения»,
Республика Армения

ЖУК А. И.

Доктор пед. наук, профессор, ректор
Белорусского государственного
педагогического университета, Республика
Беларусь

КАРАПЕТЯН И. К.

Доктор пед. наук, профессор, Государственный
университет им. В. Брюсова, Республика
Армения

КАРДИМ С.

Доктор экономических наук, профессор,
Политехнический институт Брагансы,
Португалия

МАДАЛИНСКА-МИЧАЛАК И.

Доктор пед. наук, профессор,
Варшавский университет, Республика Польша

МЕЙРАНИЯН Е.

Кандидат пед. наук, доцент, Колледж Джорджия,
Соединенные Штаты Америки

ПЕТРОСЯН Г. А.

Доктор пед. наук, профессор,
Государственный университет
им. В. Брюсова, Республика Армения

ПЛАЧИНДА Т. С.

Доктор пед. наук, профессор,
Полтавский технический университет имени Ю.
Кондратюка, Украина

ПОДЫМОВА Л. С.

Доктор пед. наук, профессор,
Московский педагогический государственный
университет, Российская Федерация

ХАЧАТРЯН Р. Х.

Кандидат филолог. наук, доцент, Министерство
Образования и Науки Абу-Даби,
Департамент контроля качества, ОАЭ

EDITORIAL BOARD

Editor-in-chief:

HARUTYUNYAN N.K.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Yerevan State University, RA

Members of the Editorial Board:

HOVHANNISYAN H. V.

Rector of Yerevan State University,
Doctor of Historical Sciences, RA

ASRIYAN E. V.

Vice-rector of Yerevan State University,
PhD in Psychology, Associate Professor, RA

MARDOYAN R. A.

Deputy editor-in-chief, Doctor of Pedagogical
Sciences, Professor, Shirak State University, RA

ALEKSANYAN A. S.

PhD in Pedagogy, Associate Professor,
University of Graz, Republic of Austria

BERMUS A. G.

Doctor of Pedagogical Sciences,
Professor, Rostov-on-Don
Southern Federal University, RF

BOYLE B.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Center for Formative Assessment Studies,
University of Manchester, UK

CARDIM S.

Doctor of Economical Sciences, Professor, Instituto
Politécnico de Bragança, Portugal

GRIGORYAN A. K.

PhD in Physical and Mathematical Sciences,
Associate Professor, Director of the “Educational-
Sport Complex” Enterprise of “Gazprom Armenia”
CJSC, RA

GEVORGYAN P. H.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Vanadzor State University, RA

ZHUK A. I.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Rector of Belarus State Pedagogical University,
Republic of Belarus

KHACHATRYAN R. KH.

PhD in Philology, Associate Professor, Ministry
of Education and Science, Abu Dhabi, Department
of Quality Control, UAE

KARAPETYAN I. K.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Brusov State University, RA

MADALINSKA-MICHALAK J.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
University of Warsaw, Republic of Poland

MEHRANIAN Y.

PhD in Pedagogy, Associate Professor, Georgia
College, USA

PETROSYAN H. H.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Brusov State University, RA

PLACHYNDA T. S.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
National University “Yuri Kondratyuk Poltava
Polytechnic”, Ukraine

PODYMOVA L. S.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Moscow Pedagogical State University, RF

WUBBELS T. H.

Doctor of Pedagogical Sciences, Professor,
Utrecht University, Netherlands

Խմբագրության հասցեն՝ ՀՀ,
0025, Երևան, ԵՊՀ,
փ. Աբովյան 52ա:

Адрес редакции:
Республика Армения, 0025,
Ереван, ЕГУ
ул. Абовяна 52а,

Editorial address: Armenia,
0025, Yerevan, YSU,
Abovyan str., 52a.

Հեռ.՝ (060) 71-06-16

Тел.: (060) 71-06-16

Tel: (060) 71-06-16

Էլ. կայք՝ publications.y-su.am
publishing.y-su.am

Эл. адрес:
publications.y-su.am
publishing.y-su.am

Webpage:
publications.y-su.am,
publishing.y-su.am

Էլ. փոստ՝
education21@ysu.am

Эл. почта:
education21@ysu.am

E-mail:
education21@ysu.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ հա-
մամիտ չլինելով հեղինակ-
ների տեսակետներին:

Редакция может
публиковать материалы, не
соглашаясь с мнением
авторов.

Authors' ideas may not
necessarily coincide with
those of the editorial office.

Հանդեսի պատասխանատու

քարտուղար՝ Մերի Ավետիսյան

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ,

Երևանի պետական համալսարան, ՀՀ

Սույն համարի գրախոսները՝

Ալեքսանյան Ա.

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, Գրացի համալսարան,
Ավստրիա

Աշիկյան Ա.

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ

Ասատրյան Ս.

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ

Ավետիսյան Մ.

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ

Բրուտյան Ա.

բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ

Խաչատրյան Ռ.

բան. գիտ. թեկնածու, դոցենտ, Աբու Դաբիի
Կրթության և գիտության նախարարություն, Որակի
ապահովման և վերահսկողության վարչություն, ԱՄԷ
փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբա-
նության ամբիոնի ասիստենտ, ԵՊՀ, ՀՀ

Խաչատրյան Ս.

մանկ. գիտ. թեկնածու, ԵՊՀ, ՀՀ

Հակոբյան Տ.

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ

Հայրապետյան Լ.

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ

Ղազարյան Ա.

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ

Ղուկասյան Լ.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԵՊՀ, ՀՀ

Մարդոյան Ռ.

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, Ջորջիա քոլեջ, ԱՄՆ

Մեհրանեան Ե.

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԵՊՀ, ՀՀ

Ոսկանյան Ա.

մանկ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԲՊՀ, ՀՀ

Պետրոսյան Հ.

Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի
ասիստենտ, ԵՊՀ, ՀՀ

Սերոբյան Ս.

տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Բրազանսայի պոլիտեխնի-
կական ինստիտուտ, Պորտուգալիա

Քարդիմ Ս.

Հանդեսում ներառված հոդվածներում արտահայտված մտքերի ու գաղափարների
հեղինակային իրավունքը պատկանում է հոդվածի հեղինակ(ներ)ին. նա է (ներանք
են) պատասխանատու հոդվածում առկա մտքերի ձևակերպման, ինչպես նաև բո-
վանդակության համար:

Ответственный секретарь журнала:

Мери Аветисян
канд. пед. наук, доцент,
Ереванский государственный университет, РА

Рецензенты данного номера:

Аветисян М.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Айрапетян Л.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Акопян Т.	канд. пед. наук, ЕГУ, РА
Алексян А.	канд. пед. наук, доцент, Университет Граца, Австрия
Асатрян С.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Ашикян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Брутян А.	канд. филол. наук, доцент, ЕГУ, РА
Восканян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Гукасян Л.	канд. пед. наук, доцент, ШГУ, РА
Казарян А.	канд. пед. наук, доцент, ЕГУ, РА
Кардим С.	доктор эконом. наук, профессор, Политехнический институт Брагансы, Португалия
Мардоян Р.	доктор пед. наук, проф., ШГУ, РА
Мейранян Е.	канд. пед. наук, доцент, Колледж Джорджия, США
Петросян Г.	доктор пед. наук, проф., ГУ им В. Брюсова, РА
Серобян С.	ассистент кафедры истории сопредельных с Арменией стран, ЕГУ, РА
Хачатрян Р.	канд. филол. наук, доцент, Министерство образования и науки Абу-Даби, ОАЭ
Хачатрян С.	ассистент кафедры истории, теории философии и логики, ЕГУ, РА

Авторские права на идеи и мысли, выраженные в статьях
журнала, принадлежат автору/авторам статьи, которые несут
ответственность за формулировку и содержание статьи.

Executive secretary of the journal:

Meri Avetisyan,
PhD in Pedagogy, Associate Professor,
Yerevan State University, RA

The reviewers of this volume:

Aleksanyan A.	PhD in Pedagogy, Associate Professor, University of Graz, Austria
Asatryan S.	PhD in Pedagogy, Associate Professor, YSU, RA
Ashikyan A.	PhD in Pedagogy, Associate Professor, YSU, RA
Avetisyan M.	PhD in Pedagogy, Associate Professor, YSU, RA
Brutyan A.	PhD in Philology, Associate Professor, YSU, RA
Cardim S.	Doctor of Economical Sciences, Professor, Instituto Politécnico de Bragança, Portugal
Ghazaryan A.	PhD in Pedagogy, Associate Professor, YSU, RA
Ghukasyan L.	PhD in Pedagogy, Associate Professor, ShSU, RA
Hakobyan T.	PhD in Pedagogy, YSU, RA
Hayrapetyan L.	PhD in Pedagogy, Associate Professor, YSU, RA
Khachatryan R.	PhD in Philology, Associate Professor, Ministry of Education and Science Abu Dhabi, Head of Quality Control Department, UAE
Khachatryan S.	Assistant of Chair of History, Theory, and Logic of Philosophy, YSU, RA
Mardoyan R.	Doctor of Pedagogical Sciences, Professor, ShSU, RA
Mehranian Y.	PhD in Pedagogy, Associate Professor, Georgia College, USA
Petrosyan H.	Doctor of Pedagogical Sciences, Professor, Brusov SU, RA
Serobyan S.	Assistant of Chair of History of Neighboring Countries of Armenia, YSU, RA
Voskanyan A.	PhD in Pedagogy, Associate Professor, YSU, RA

The copyright to the ideas and thoughts expressed in the articles contained in the journal belongs to the author(s) of the article, and he/she (they) is (are) responsible for the formulation and content of the article.

ԲԱԺԻՆ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	15
РАЗДЕЛ 1: ТЕОРИЯ ПЕДАГОГИКИ	15
SECTION 1: THEORY OF PEDAGOGY	15
<i>Աշիկյան Արսենուհի, Ղազարյան Արևիկ</i>	
ԲՈՒԼԻՒԳԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ	15
<i>Էմիլյան Գաղիկ</i>	
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ	27
<i>Акопян Тигрануи</i>	
ПЕРЕОСМЫСЛЕНИЕ ПЕДАГОГИКИ XXI ВЕКА: ОТ ТРАНСЛЯЦИИ ЗНАНИЙ К ФОРМИРОВАНИЮ КУЛЬТУРНОЙ СРЕДЫ	42
<i>Четырбок Наталья</i>	
РОЛЬ ИНСТИТУТА ОБРАЗОВАНИЯ В ОБЕСПЕЧЕНИИ КОНКУРЕНТНОГО РОСТА СТРАНЫ	51
ԲԱԺԻՆ 2. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	65
РАЗДЕЛ 2: ОБУЧЕНИЕ И ВОСПИТАНИЕ	65
SECTION 2: TEACHING AND UPBRINGING	65
<i>Հովհաննիսյան Մերի</i>	
ԿԱՆԱԶ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	65
<i>Վարդանյան Նվարդ</i>	
ԲԱՆԱՀԱՎԱՔՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՂՀ ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ	74
<i>Варданян Луиза</i>	
ХИМИЯ ДЛЯ ВСЕХ: ПЕДАГОГИЧЕСКИЕ СТРАТЕГИИ ДОСТУПНОГО НАУЧНОГО ОБРАЗОВАНИЯ	87
<i>Мардоян Рузанна, Гукасян Лусик</i>	
ПРЕДМЕТ «ОСНОВЫ ПРОВЕДЕНИЯ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ РАБОТ В ПРОФЕССИОНАЛЬНОЙ СФЕРЕ» КАК ВАЖНОЕ СРЕДСТВО ФОРМИРОВАНИЯ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ НАВЫКОВ СТУДЕНТОВ БАКАЛАВРИАТА	97
<i>Оганян Корюн</i>	
КОНВЕРГЕНТНОЕ И ДИВЕРГЕНТНОЕ МЫШЛЕНИЕ В ПЕДАГОГИКЕ: КОМПЛЕКСНОЕ РАЗВИТИЕ РЕЧЕВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ	109
<i>Boyle Bill, Charles Marie</i>	
LET'S TALK ABOUT A REVISED RACE-BASED CURRICULUM	125

Marchenko Olga, Zelenskaya Olena

METHODOLOGICAL AND THEORETICAL FUNDAMENTALS OF FORMATION OF OFFICER PROFESSIONAL CULTURE AS A TOPICAL PROBLEM OF MILITARY PROFESSIONAL TRAINING.....	139
--	-----

Mehranian Yeprem

REFLECTING ON PEDAGOGY: TEACHING AND LEARNING IN AN ARMENIAN UNDERGRADUATE CLASSROOM	152
--	-----

Mkrtchyan Lilit

ASSESSING DIGITAL-HISTORICAL LITERACY AND CRITICAL THINKING AMONG HISTORY STUDENTS	161
--	-----

Nalbandyan Nelly

INTEGRATION OF SUSTAINABLE DEVELOPMENT CONCEPTS INTO UNIVERSITY SERVICE SPECIALTY CURRICULUM: AN ENGLISH LANGUAGE TEACHING PERSPECTIVE.....	175
---	-----

ԲԱԺԻՆ 3. ԴԱՍՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ.....	184
--	------------

РАЗДЕЛ 3: МЕТОДИКА ПРЕПОДАВАНИЯ	184
--	------------

SECTION 3: TEACHING METHODICS.....	184
---	------------

Արզումանյան Արմենուհի

«ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՑ ԳԼԽԱՐԿՆԵՐ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻԿԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	184
---	-----

Պողոսյան Սամվել, Եփրիկյան Արմինե

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԵՐԸ. ՄԵԴԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ.....	195
---	-----

Սահակյան Ազնիվ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՅԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՎՐԱ.....	210
---	-----

Otaryan Mher

TERRITORIAL ECONOMY AND LOCAL SELF-GOVERNMENT (METHODOLOGICAL APPROACHES TO TEACHING IN HIGHER EDUCATION PROGRAMS)	223
--	-----

ԲԱԺԻՆ 4. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՃՅՈՒՂԵՐ	233
---	------------

РАЗДЕЛ 4: НАУЧНЫЕ ОТРАСЛИ ПЕДАГОГИКИ	233
---	------------

SECTION 4: SCIENTIFIC BRANCHES OF PEDAGOGY.....	233
--	------------

Ալեքսանյան Մանե

ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՆԸՆԴՀԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	233
---	-----

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՁԱԽԼԻԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	242
--	-----

Հայրապետյան Լուսինե, Ավետիսյան Մերի

ԳԵՆՈԳՐԱՄՄԱՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՈՐՊԵՍ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ	250
---	-----

Asatryan Samvel

ARTIFICIAL INTELLIGENCE APPLICATIONS IN SOCIAL PEDAGOGY: PREDICTIVE ANALYTICS FOR EARLY INTERVENTION ENHANCEMENT	259
---	-----

ԲԱԺԻՆ 5. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	272
--	------------

РАЗДЕЛ 5: УПРАВЛЕНИЕ ОБРАЗОВАНИЕМ.....	272
---	------------

SECTION 5: EDUCATION MANAGEMENT.....	272
---	------------

Հարությունյան Նազիկ, Տոնոյան Տաթևիկ

ԷԹԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՆՁԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	272
---	-----

ԲԱԺԻՆ 6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՑԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ	288
--	------------

РАЗДЕЛ 6: ОБРАЗОВАНИЕ В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ	288
---	------------

SECTION 6: EDUCATION IN FOREIGN COUNTRIES.....	288
---	------------

Արաքյան Խաչիկ

ԲՈՒՀ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	288
---	-----

ԲԱԺԻՆ 7. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	300
---	------------

РАЗДЕЛ 7: ГРАЖДАНСКОЕ ОБРАЗОВАНИЕ.....	300
---	------------

SECTION 7: CIVIC EDUCATION.....	300
--	------------

Գալստյան Մարինա

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	300
--	-----

**ԲՈՒԼԻՆԳԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՈՉՐՆԴՈՏ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ**

Աշիկյան Արմենուհի

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն,

armenuhi.ashikyan@ysu.am

<https://orcid.org/0000-0002-7172-6007>

Ղազարյան Արևիկ

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն,

arev.ghazaryan@ysu.am

<https://orcid.org/0000-0003-0231-2844>

Ամփոփում

Համառոտ ներածական: Ավագ դպրոցական տարիքը անձի զարգացման այն փուլն է, երբ շարունակվում է սոցիալական ինքնության, արժեքային համակարգի և միջանձնային հարաբերությունների կառուցման հմտությունների ձևավորման գործընթացը: Կրթական միջավայրում ձևավորվող սոցիալական փորձառությունը կարող է նպաստել կամ խոչընդոտել ավագ դպրոցականի արդյունավետ ինտեգրմանը հասարակության մեջ: Այդ համատեքստում բուլինգը՝ որպես ինտենսիվ ու համակարգված հոգեբանական կամ ֆիզիկական ճնշում, դառնում է լուրջ մարտահրավեր թե՛ սովորողի, թե՛ կրթական համակարգի համար: Այն մեր իրականության մեջ նորություն չէ, պարզապես ստացել է նոր որակ ու հնչեղություն: Դրսևորումներն ու շարժառիթները տարբեր են, սակայն հետևանքները նույնն են. խեղվում է բուլինգի ենթարկված ավագ դպրոցականի անձի ձևավորման ու սոցիալականացման գործընթացը: Ավելին, բուլինգը խաթարում է ավագ դպրոցականի սոցիալական փոխհարաբերությունները, առաջացնում ինքնանվաստացման, հակառակ դեպքում՝ ագրեսիվ վարքագծի ամրապնդում: Այնուհանդերձ, դեռևս բուլինգը դիտարկվում է ոչ թե որպես մարտահրավեր, այլ տարիքային առանձնահատկություն ու հույզերի կառավարման անկարողականություն:

Բանալի բառեր՝ բուլինգ, ավագ դպրոցական, անձի ձևավորում, սոցիալականացում, ֆիզիկական բուլինգ, կիբերբուլինգ, հոգեբանական բուլինգ, ագրեսիվ վարքագիծ, բուլեր:

Հիմնախնդիրն է ուսումնասիրել ու վերլուծել բուլինգի դրսևորման այն հնարավոր տարբերակները ավագ դպրոցում, որոնք խոչընդոտում են ավագ դպրոցականի սոցիալականացումն ու ինքնության ձևավորումը:

Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակներն են.

- համակարգել ու վերլուծել միջազգային ու տեղական գիտական գրականությունը՝ գնահատելու բուլինգի դրսևորումների, պատճառների ու հետևանքների առանձնահատկությունները ՀՀ դպրոցների ավագ դասարաններում բուլինգի դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ մշակելու ու իրականացնելու գործում,
- վերլուծել բուլինգի ազդեցությունը ավագ դպրոցականի սոցիալականացման ու ինքնության ձևավորման գործընթացներում, բացահայտել դրա մանկավարժական հետևանքները՝ առաջարկելով կանխարգելիչ մեխանիզմներ:

Հետազոտության նորայրը: Դիտարկումների վերլուծությունները հնարավորություն են տալիս փաստելու, որ բուլինգի ենթարկված ավագ դպրոցականի սոցիալականացման ու ինքնության ձևավորման միջև գոյություն ունի փոխկապվածություն, որը դիտարկվել է որպես մարտահրավեր մանկավարժական հանրությանը:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների ու հրատարակությունների վերլուծություն: Հոդվածում տարբեր մոտեցումներով ներկայացված են հիմնախնդրի բազմաշերտ քննությունները՝ ներառելով ինչպես միջազգային փորձը, այնպես էլ ՌԴ-ում (Լ. Գ. Բարիսովա, Ա. Ն. Դախին, Մ. Ա. Նովիկովա, Ա. Ա. Բոչավեր, Կ. Դ. Խլոմով, Ն. Յիմբալենկո) բուլինգի հաղթահարման հնարավոր մեխանիզմներն ու առաջարկները:

Հիմնական նյութի շարադրանք: Բուլինգը ագրեսիայի տարածված ձև է, որը համաշխարհային մասշտաբով ճանաչված է որպես հանրային առողջապահական ու կրթական լուրջ խնդիր, որը բացասաբար է ազդում աշակերտների ֆիզիկական, հոգեկան ու բարեկեցության վրա: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների՝ աշխարհում 13-15 տարեկան աշակերտների գրեթե կեսը (մոտ 150 միլիոն) հայտնել է, որ ենթարկվել է բռնության դպրոցում կամ դրա շրջակայքում: Այս տվյալները մատնանշում են խնդրի համաշխարհային ծավալներն ու դրա անհապաղ լուծման անհրաժեշտությունը [8]: Միջազգային հանրությունն ակտիվորեն ուսումնասիրում է բուլինգի դրսևորումները, պատճառներն ու հետևանքները՝ նպատակ ունենալով մշակել արդյունավետ կանխարգելիչ մեխանիզմներ:

Հայաստանի Հանրապետությունում բուլինգի խնդրի շուրջ լայնածավալ հետազոտություններ ու ազգային վիճակագրություն գործնականում բացակայում են, ինչի պատճառով հաճախ ընդունված է «թեթե թվեր չկան, ուրեմն խնդիր չկա» մոտեցումը: Այս անտեսումը խանգարում է իրականացնել խնդրի իրական ծավալների գնահատում ու դրա դեմ պայքարի համապարփակ ռազմավարությունների մշակում: Չնայած դրան՝ առկա հատվածական տվյալները, որոնք հիմնականում հավաքագրվել են ոչ պետական կառույցների կողմից, վկայում են, որ բուլինգը լուրջ ու արդիական մարտահրավեր է հայկական դպրոցների համար:

Բուլինգը՝ որպես բազմաշերտ սոցիալական երևույթ, կարող է խախտել սովոր-

րողի հոգեբանական կայունությունը, առաջացնել վախեր, ինքնամփոփություն, ընկճվածություն, իսկ ծայրահեղ դեպքերում՝ հանգեցնել նաև հոգեբանական ծանր հետևանքների: Բուլինգը հոգեբանական, ֆիզիկական կամ հուզական անցանկալի սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման հնարավորություն: Այս խնդիրը ժամանակակից դպրոցներում պահանջում է համակարգային ու մասնագիտացված մոտեցում՝ բացահայտելու բուլինգի դեպքերը վաղ փուլում, իրականացնելու կանխարգելիչ քայլեր ու աջակցելու ինչպես զոհ դարձած, այնպես էլ ագրեսոր երեխաներին [1]:

Հայաստանում դպրոցական բուլինգը շարունակում է անտեսված խնդիր մնալ: Վիճակագրություն այն մասին, թե քանի երեխա է յուրաքանչյուր տարի բռնության կամ հետապնդման ենթարկվում ուսումնական հաստատություններում, չկա: Թեմայի վերաբերյալ համապարփակ, համակարգային հետազոտություններ ևս երկրում երբևէ չեն իրականացվել: Խնդրին մասնակիորեն անդրադարձել են միայն մի քանի հասարակական կազմակերպություններ տեղային մակարդակում իրականացված ուսումնասիրությունների շրջանակում:

Բուլինգը ուժի, հարկադրանքի, վիրավորական ծաղրի կամ սպառնալիքի կիրառում է՝ վիրավորելու նպատակով, ագրեսիվ գերիշխանության կամ ահաբեկման նպատակով: Այս պահվածքը հաճախ կրկնվում է և դառնում սովորական: Էական նախադրյալներից մեկը (բուլերի կամ այլ անձանց կողմից) ֆիզիկական կամ սոցիալական ուժի անհավասարակշռության ընկալումն է: Այս անհավասարակշռությունը տարբերակում է բուլինգը կոնֆլիկտից: Բուլինգը ագրեսիվ վարքի ենթահասկացություն է, որը բնութագրվում է թշնամական մտադրություններով, իշխանության անհավասարակշռությամբ ու որոշակի ժամանակահատվածում կրկնությամբ [4,59]: Այս սահմանումն էականորեն տարբերակում է բուլինգը պարզ վեճերից, որոնցում ներգրավված կողմերը մոտավորապես հավասար ուժի են: Բուլինգի դրսևորումները կարող են լինել ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական կամ կրթական վնաս պատճառող: Սրանցից յուրաքանչյուրը թողնում է իր յուրահատուկ հետքը զոհի վրա: Բուլինգն ըստ ձևերի կարելի է բաժանել երկու խմբի՝ *ուղղակի* ու *անուղղակի* [7, 83]: Ուղղակի բուլինգի դեպքում դրսևորվում են վարքային հետևյալ ձևերը՝ հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, անընդհատ բարկացնել, վիրավորել, սպառնալ: Իսկ անուղղակի բուլինգի դեպքում բուլինգի զոհին կանխամտածված մեկուսացնում են իր միջավայրից, ընկերներից: Դրանք ներառում են՝

- **Ֆիզիկական բուլինգ**, որն ամենաակնհայտն է և ներառում է ֆիզիկական ագրեսիա, ինչպիսիք են հարվածները, հրումը, ոտքով տալը կամ ծեծը: Այն կարող է նաև տարածվել գույքի գողության կամ վնասման վրա:
- **Բանավոր (վերբալ) բուլինգ**, որը ներառում է անվանարկում, ծաղրանք, վիրավորանքներ կամ սպառնալիքներ՝ ուղղված զոհին: Ուսումնասիրություն-

ները ցույց են տալիս, որ բանավոր բուլինգը բոլոր ձևերից ամենատարածվածն է:

- **Սոցիալական (հարաբերական) բուլինգ**, որը նպատակ ունի վնասելու զոհի հեղինակությանը կամ սոցիալական հարաբերություններին: Դրա դրսևորումներից են խմբից դուրս թողնելը, բամբասանքներ տարածելը կամ հանրային ամոթանք տալը: Այս տեսակն ավելի դժվար է հայտնաբերել, քան ֆիզիկական կամ բանավոր բուլինգը:
- **Կիբեռբուլինգ**, որը տեղի է ունենում էլեկտրոնային սարքերի՝ տեքստային հաղորդագրությունների, սոցիալական ցանցերի կամ էլեկտրոնային փոստի միջոցով [3]: Այն կարող է դրսևորվել՝ վնասակար բովանդակություն կամ անձնական տեղեկություններ տարածելով, որոնք նպատակ ունեն նվաստացնելու զոհին:

Բուլինգը կարող է իրականացվել անհատապես կամ խմբով, որտեղ բուլերը կարող է ունենալ մեկ կամ մի քանի հետևորդներ, որոնք պատրաստ են օգնել հիմնական բուլերին, կամ որոնք բուլերին ոգևորում են դրական արձագանքներով, ինչպիսին է ծիծաղը:

Բուլինգի մշակույթը կարող է զարգանալ ցանկացած համատեքստում, որտեղ մարդիկ շփվում են միմյանց հետ: Սա կարող է ներառել դպրոցը, ընտանիքը, աշխատավայրը, տունն ու շրջակայքը: Ժամանակակից մշակույթում բուլինգի հիմնական պլատֆորմը նաև սոցիալական մեդիայի կայքերն են:

Որո՞նք են ավագ դպրոցում բուլինգի պատճառները: Դպրոցում բուլինգի պատճառ կարող են հանդիսանալ մանկավարժական ոչ ճիշտ մոտեցումը՝ վիրավորանքը, կոպիտ վերաբերմունքը, անտեսումը, որը կարող է ավագ դպրոցականի կողմից ընկալվել որպես բուլինգի իրականացման թույլտվություն: Այս թույլտվությունից օգտվում է այն երեխան, որի մոտ առկա են վերոնշյալ դիրքորոշումները:

Ռեֆերենտ խմբերը պատանեկության տարիքում նույնպես կարող են բուլինգի պատճառ դառնալ, եթե այդտեղ գործում են այլ մարդուն նսեմացնելու միջոցով ինքնահաստատման գործընթացներ:

Ծաղրողի հոգեկան խնդիրները ևս կարող են դասվել բուլինգի պատճառակության մեջ: Ծաղրողը հաճախ կամքով թույլ մարդ է և իրեն բարձր է զգում միայն այն ժամանակ, երբ ծաղրում է մնացածին, երբ իր աշխարհում նա դառնում է բարձրագույնը: Բուլը կենտրոնացած է հենց գործընթացի վրա: Նա հարձակվում է ավելի թույլի վրա՝ նրա հաշվին ինքնահաստատվելու, իր բարդույթներն ու վախերը քողարկելու, սեփական զայրույթն ու ցավը ուրիշի վրա զցելու կամ իր վրա ուշադրություն գրավելու համար:

Ներկայումս որոշ պատանիներ աչքի են ընկնում էմոցիոնալ անհավասարակշռությամբ ու խոցելիությամբ, ինչպես նաև ագրեսիվ, գերզգայուն վարքագծով, ինչը դարձյալ նպաստում է բուլինգի առաջացմանը ավագ դպրոցում: Բացի վերոթվարկյալ պատճառներից՝ մեր օրերում բուլինգի առաջացման պատճառ կարող է

լինել նաև՝

- 1) ընտանեկան խնդիրները,
- 2) միջավայրի բացասական ազդեցության խնդիրները,
- 3) հոգեբանական խնդիրներ (ունեն ցածր ինքնագնահատական և ուզում են ուրիշների վրա ինքնահաստատվել),
- 4) ազգային, կրոնական, մշակութային տարբերություններ,
- 5) կրթության և դաստիարակության բացթողում:

Բուլինգի պատճառների ակունքը հաճախ ընտանեկան արժեքների, դիրքորոշումների ընդօրինակումն է երեխայի կողմից: Արժեքներն ու դիրքորոշումներն ընտանիքում շատ հաճախ դառնում են վարքագծի հիմնաքար:

Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջնային սոցիալական ինստիտուտն է, որը ձևավորում է նրա անձնային որակներն ու վարքագիծը: Ընտանիքում դաստիարակության որոշակի ոճեր կարող են նպաստել բուլինգի առաջացմանը: Օրինակ՝ ավտորիտար ծնողական մոտեցումը, որը բնութագրվում է չափից ավելի խստությամբ, ցածր կարեկցանքով և առանց արդարացի պատժի, սերտորեն առնչվում է հետագայում ավագ դպրոցականի մոտ բուլինգային վարքագծի ձևավորմանը: Բուլինգ իրականացնող երեխաները հաճախ գալիս են այնպիսի ընտանիքներից, որտեղ քիչ են համախմբվածությունը, ապրումակցումն ու վերահսկողությունը: Ի հակադրություն ծնողի դաստիարակության ավտորիտար ոճին՝ համագործակցային ոճը խրախուսում է երկխոսությունն ու փոխըմբռնումը, նպաստում է երեխաների դրական սոցիալական վարքագծին ու աջակցող հարաբերություններին: Հայկական հասարակության մշակութային առանձնահատկությունները նույնպես կարող են նպաստել բուլինգի տարածմանը: Փորձագետները նշում են, որ Հայաստանում բուլինգը հաճախ բխում է կարծրատիպային մտածողությունից ու անհանդուրժողականությունից, որն ուղղված է նրանց, ովքեր տարբերվում են «նորմայից»: Ընտանեկան դաստիարակության ոճի ու մշակութային հիերարխիկ պայմանների միջև առկա փոխազդեցությունը կարող է բացատրել բուլինգի արմատները հայկական դպրոցներում: Եթե երեխան դաստիարակվում է ավտորիտար միջավայրում, որտեղ բռնությունը կամ վերահսկողությունը դիտվում է որպես խնդիր լուծելու միջոց, ապա նա նույն վարքագիծը կդրսևորի նաև դպրոցում՝ փորձելով իշխանություն ձեռք բերել: Այս համատեքստում բուլինգի դեմ պայքարը չի կարող սահմանափակվել միայն հոգեբանական միջամտություններով. այն պետք է լինի մշակութային ու սոցիալական աշխատանքի համակարգված գործընթաց՝ ուղղված հանդուրժողականության ու փոխըմբռնման մակարդակի բարձրացմանը:

Ավագ դպրոցական տարիքում բուլինգի հիմնական պատճառներից են նաև արտաքին տեսքը, ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակն ու այլ խնդիրներ: Դպրոցական միջավայրը, որը կենտրոնացած է միայն գիտելիքների փոխանցման վրա և անտեսում է միջանձնային հարաբերությունները, նույնպես նպաստող գործոն է: Ավելին, ուսուցիչները կարող են անզգույշ արտահայտություններով կամ

անտարբերությամբ անգիտակցաբար խթանել բուլինգը, ինչը լուռ թույլտվություն է դառնում աշակերտների համար [5]: Անշուշտ, խնդիրը շատ արդիական է, իսկ պատճառները՝ տարբեր, սակայն, միևնույնն է, բուլինգ երևույթը ձևավորած վարքագիծը հետագայում կազմավորում է երեխաների անձնային հատկանիշներն ու որակները: Եթե աչք փակենք այս խնդրի վրա, ապա երեխաների վարքագիծը տարիների ընթացքում ավելի փտանգավոր դրսևորումներ կստանա:

Հետևապես, դպրոցական բուլինգը ժամանակակից աշխարհում դիտվում է որպես սոցիալ-մանկավարժական լուրջ խնդիր, որը նվազեցնելու կամ կանխելու համար կիրառվող ռազմավարական քայլերը ներառում են աշակերտներին բուլինգի ենթարկելու մասին կրթելը, անվտանգության տեխնոլոգիաների կիրառումը, սոցիալական մանկավարժի դերի ու գործառնությունների կարևորությունն ու դպրոցում անվտանգության աշխատակիցների առկայությունը: Այն, թե ինչպես են դպրոցները արձագանքում բուլինգին, շատ տարբեր է: Դպրոցում բուլինգի ենթարկվածների վրա ազդեցությունները ներառում են ընկճախտ (դեպրեսիա), անհանգստություն, զայրույթի, սթրեսի, անօգնականության ու դպրոցական կատարողականի նվազում:

Բուլինգի տեսակների տարածվածությունը փոփոխվում է տարիքի հետ: Միջազգային հետազոտությունները ցույց են տալիս, որ ֆիզիկական բուլինգն ավելի տարածված է կրտսեր դպրոցականների մոտ, իսկ ավագ դպրոցականների մոտ ավելի մեծ տարածում են գտնում քողարկված ձևերը, ինչպիսիք են սոցիալական ու կիբերբուլինգը [13]: Ավագ դպրոցներում բուլինգի ձևերի փոփոխությունը ֆիզիկականից դեպի սոցիալական ու կիբերբուլինգ արտացոլում է դեռահասության ու պատանեկության տարիքի զարգացման առանձնահատկությունները: Այս շրջանում ինքնության ձևավորումն ու սոցիալական կապերը դառնում են կենտրոնական նշանակություն ունեցող գործոններ: Դպրոցական միջավայրը, որը նպաստում է ակադեմիական ուսուցմանն ու սոցիալական փոխհարաբերություններին, կարող է նաև նպաստել բուլինգին՝ թույլ տալով ստեղծել սոցիալական կապեր՝ ի հաշիվ այլոց մարզինալացման: Այս փոփոխությունը կարևոր է՝ հասկանալու համար, թե ինչու են կանխարգելիչ ծրագրերը, որոնք կենտրոնացած են միայն ֆիզիկական բուլինգի վրա, ավելի քիչ արդյունավետ ավագ դասարաններում: Դրա փոխարեն արդյունավետ ծրագրերը պետք է կենտրոնանան ոչ թե միայն անհատական վարքագծի, այլև դպրոցական սոցիալական համակարգի փոփոխության վրա:

Բուլինգի դեպքերի վերաբերյալ առաջարկվող հակաազդեցությունները բազմազան են, և կարող են պահանջվել տարբեր մեթոդներ՝ կախված բուլինգի տեսակից ու ներգրավված մարդկանցից: Դիտարկենք դրանք:

1. *Վկաների վկայությունները:* Վկաները, անկախ նրանից, թե տուժողին հայտնի են, թե ոչ, տեղեկատվության կարևոր աղբյուր են բռնության դեպքում: Հնարավորության դեպքում խորհուրդ է տրվում պահպանելու անանունությունը:

2. *Միջամտություն ակնատեսի կողմից:* Առաջարկվում է, որ ակնատեսներն ու այլ երրորդ անձինք խուսափեն կոնֆլիկտային իրավիճակում միջամտելուց՝ իրավիճակը ավելի չսրելու համար:
3. *Ծնողների արձագանքը:* Մասնագետները խորհուրդ են տալիս, որ ներգրավված ծնողները խուսափեն միմյանց հետ անմիջականորեն խոսելուց: Փոխարենը խորհուրդ է տրվում կապ հաստատելու դպրոցի, սոցիալական մանկավարժի հետ՝ թույլ տալով դպրոցի մասնագիտական համակազմին քայլեր ձեռնարկել, պատասխանատվություն ստանձնել ու հանդես գալ որպես միջնորդ:
4. *Ուսուցչի արձագանքը:* Ուսուցչի միջամտությունը կարևոր է բազմաթիվ հակաբուլինգային ծրագրերում: Շատ երկրներում ուսուցիչները իրավական պարտավորություն ունեն կանխելու իրենց աշակերտների վնասումը: Ուսուցիչները կարող են միջամտել՝ օգտագործելով հեղինակության վրա հիմնված միջամտություններ, զոհերին աջակցելով և այլ ուսուցիչների կամ մասնագետների ներգրավմամբ: Պարզվել է, որ ուսուցչի միջամտություններն օգտակար են ահաբեկումը նվազեցնելու համար: Այս միջամտությունները ներառում են սահմանների հստակ մատնանշում՝ պարզ դարձնելով, որ դրսևորվող վարքագիծը ընդունելի չէ: Ավագ դպրոցում բուլինգի ու դրա բացասական հետևանքների անուղղակի քննարկումն ամբողջ դասարանի հետ նույնպես օգտակար է բուլինգը նվազեցնելու համար:
5. *Կասեցում և հեռացում:* Եթե բուլինգի համար որևէ այլ լուծում չի գործում, կամ այն դեպքերում, երբ բռնությունը շատ դաժան է, հնարավոր է, որ անհրաժեշտ լինի կասեցնել կամ հեռացնել բուլին:
6. *Տեղափոխում:* Այն դեպքերում, երբ ավելի դժվար է լուծել, տուժողը կարող է մտածել հաստատության փոփոխության կամ նույնիսկ իր ընտանիքի հետ մեկ այլ վայր տեղափոխվելու մասին:
7. *Հոգեւոցիալական աջակցություն:* Բուլինգի ենթարկվելուց հետո զոհերը կարող են աջակցություն խնդրել, օրինակ՝ նոր ընկերներ ձեռք բերելու կամ նոր գործունեություն ծավալելու հարցում:

Վերոնշյալ առաջարկությունները վկայում են, որ բուլինգի մշակույթը կարող է զարգանալ ցանկացած համատեքստում, որտեղ մարդիկ շփվում են միմյանց հետ: Սա կարող է ներառել սոցիալական բոլոր ինստիտուտները, ներառյալ՝ ժամանակակից մշակույթում զգալի տեղ զբաղեցնող սոցիալական մեդիայի կայքերը, իսկ այդ դեպքերի բացահայտման, կանխարգելման ու արձանագրման գործում հստակ մեխանիզմները դեռևս բացակայում են:

Բուլինգը հանգեցնում է ծանր ու երկարատև հետևանքների, որոնք ազդում են պատանիների վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ոչ միայն զոհերը, այլև բուլինգ իրականացնողներն ու այն երեխաները, որոնք միաժամանակ և՛ են-

թարկվում են բուլինգի, և՛ բուլինգ են իրականացնում, ավելի հակված են հոգեկան առողջության խնդիրներ ունենալու [2,11]: Նրանք հաճախ տառապում են հոգեբանական ու հուզական խնդիրներից, ներառյալ անհանգստությունը, ընկճախտը, ցածր ինքնագնահատականը, մեկուսացման զգացումը և այլն:

Բուլինգը բացասաբար է անդրադառնում նաև գոհերի կրթական ու սոցիալական կյանքի վրա: Տուժածների մոտ դիտվում է ակադեմիական առաջադիմության անկում, դպրոցից բացակայությունների աճ և դպրոցը թողնելու բարձր ռիսկ: Չնայած միջազգային գրականությունը հստակ կապ է հաստատում բուլինգի ու ինքնասպանության մտքերի կամ փորձերի միջև (դպրոցական բուլինգը ինքնասպանության մտքերի պատճառ է դառնում դեպքերի 26.1 %-ում) [7], Հայաստանում ինքնասպանության դեպքերի ու դրանց՝ բուլինգի հետ կապը պաշտոնապես երբեք չի ուսումնասիրվել: Այս անտեսումը մատնանշում է ազգային մակարդակով լուրջ հետազոտական ու մանկավարժահոգեբանական բաց, որը խոչընդոտում է խնդրի իրական մասշտաբների ճանաչումը:

Կարևորելով վերոհիշյալը՝ պետությունը պետք է ձեռնարկի անհետաձգելի միջոցառումներ՝ երաշխավորելու յուրաքանչյուր երեխայի պաշտպանված լինելու ու բռնությունից զերծ միջավայրում ապրելու իրավունքը:

Ինչպե՞ս կարելի է պայքարել բուլինգի դեմ ավագ դպրոցում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ավագ դպրոցում բուլինգի դեմ պայքարի ամենաարդյունավետ ռազմավարությունը «ողջ դպրոցի» մոտեցումն է [12]: Այս մոդելը կենտրոնանում է ոչ թե միայն անհատական խնդիրների վրա, այլև դպրոցական միջավայրի, ուսուցիչների, ծնողների ու համայնքի վրա՝ նպատակ ունենալով ստեղծել միջավայր, որն արգելում է բուլինգը: Միջազգայնորեն ճանաչված հաջողված ծրագրերից են «KiVa»-ն ու «Olweus Bullying Prevention Programme (OBPP)»-ը [9]:

«Դեմ ենք բռնությանը» («KiVa») ծրագիրը մշակվել է Ֆինլանդիայում և աշխարհում ամենաարդյունավետ հակաբուլինգային ծրագրերից մեկն է: Այն ներառում է դերային խաղեր ու համակարգչային սիմուլյացիաներ՝ բարձրացնելու համար դիտորդների կարեկցանքը, նրանց մղելու միջամտել բուլինգի դեպքերում: «KiVa»-ի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն զգալիորեն նվազեցրել է ընկճախտի մակարդակը և բարձրացրել ինքնագնահատականը բուլինգի գոհերի մոտ: Թեև ավագ դասարաններում դրա արդյունավետությունն ավելի քիչ է եղել, քան տարրականում, այն դրական ազդեցություն է ունեցել ակադեմիական մոտիվացիայի ու առաջադիմության վրա:

«Օլվեյուսի բռնության կանխարգելման ծրագիրը» («Olweus Bullying Prevention Programme (OBPP)» լայնորեն կիրառվում է հանրակրթական դպրոցներում և հասցեագրում է բուլինգի խնդիրը չորս մակարդակում՝ դպրոցական, դասարանական, անհատական ու համայնքային: «OBPP»-ն ներառում է ուսուցիչների վերապատրաստում՝ բուլինգը ճանաչելու ու դրան միջամտելու համար, դասարանական պարբերական քննարկումներ, կանոնների հստակ սահմանում և անհատական

միջամտություններ՝ յուրաքանչյուր դեպքին առանձին արձագանքելու համար:

Հայաստանում բուլինգի կանխարգելման ոլորտում երկար ժամանակ առկա է եղել քաղաքական ու իրավական բաց: Սակայն վերջին տարիների (2025) տվյալները ցույց են տալիս իրավիճակի դրական փոփոխություն: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը (ՀՄՓԿ) ՀՀ ԿԳՄՄՆ-ի և այլ գործընկերների հետ համագործակցությամբ կազմակերպում է գիտաժողովներ («ԱՆՎՏԱՆԳ ԴՊՐՈՑ. ԱՌԱՆՑ ԲՈՒՆԻՏԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» դպրոցական գիտաժողովը) և մշակում մեթոդական ձեռնարկներ բուլինգի կանխարգելման համար [11]: Նրանք նաև իրականացնում են պիլոտային ծրագրեր և ապահովում թեժ գիծ՝ բուլինգի դեպքերին արագ արձագանքելու համար: Այս քայլերը մատնանշում են, որ ՀՀ-ն անցնում է բուլինգի խնդրի պաշտոնական ճանաչման ու լուծման փուլ:

Ավագ դպրոցական տարիքի բուլինգի ենթարկված երեխաների հետ սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը կազմակերպվում և իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1. կոմպետենտության սկզբունք,
2. վստահելիության սկզբունք,
3. գաղտնիության (կոնֆիդենցիալության) սկզբունք,
4. արդյունավետության սկզբունք,
5. այցելուին չվնասելու սկզբունք,
6. իրավասու լինելու սկզբունք,
7. սոցիալական մանկավարժի և այցելուի փոխադարձ հարգանքի սկզբունք,
8. անաչառության սկզբունք,
9. սոցիալ-մանկավարժական մեթոդների համապատասխանության սկզբունք,
10. հետազոտությունների արդյունքների գիտականության սկզբունք:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում բուլինգի վերաբերյալ համագ-գային, պաշտոնական վիճակագրության բացակայությունը լուրջ խոչընդոտ է խնդրի համապարփակ գնահատման ու ազգային քաղաքականության մշակման համար: Այնուամենայնիվ, առկա են մի քանի փոքրածավալ, հատվածական ուսումնասիրություններ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել խնդրի մասշտաբների մասին:

- Ըստ «Երիտասարդ ձայների» («Young Voices») 2017 թվականի հետազոտու-թյան՝ ՀՀ դպրոցականների 38 %-ը ականատես է եղել ծեծի, իսկ 35 %-ը՝ ծաղրանքի դպրոցում [10]:
- Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄՓԿ) 2021 թվականի զեկույցի համաձայն՝ ուսումնասիրված երեխաների 34 %-ը հայտնել է դպրոցում խնդիրներ ունենալու մասին: Նշվել է, որ բուլինգի դեպքերի 21 %-ը տեղի է ունեցել արտաքին տեսքի, իսկ 10 %-ը՝ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակի պատճառով [11]:

- «Նոր լույս» երիտասարդական կենտրոնի 2021 թվականի ուսումնասիրությունը, որն անցկացվել է Գյումրիում, ցույց է տվել, որ 287 աշակերտներից 64 %-ը ականատես է եղել բուլինգի, իսկ 24 %-ը թիրախ է դարձել արտաքին տեսքի կամ խոսքի տարբերությունների պատճառով: Այս հետազոտությունը նաև բացահայտել է, որ ուսումնասիրված ուսանողների ու ուսուցիչների շրջանում տարածված են ծաղրանքը, «պիտակավորումն» ու սոցիալական մեկուսացումը:

Վերոնշյալ տվյալները, չնայած իրենց հատվածական բնույթին, համահունչ են միջազգային միտումներին, որոնք ցույց են տալիս, որ բուլինգի պատճառները հաճախ պայմանավորված են արտաքին տեսքով, ֆիզիկական թերություններով ու սոցիալ-տնտեսական կարգավիճակով: Բացի դրանից՝ Հայաստանում բուլինգը հաճախ հիմնված է կարծրատիպերի ու սոցիալ-մշակութային անհանդուրժողականության վրա:

Եզրակացություն: Բուլինգը Հայաստանի դպրոցներում լուրջ և տարածված խնդիր է՝ չնայած պաշտոնական վիճակագրության բացակայությանը: Տեղական հատվածական հետազոտությունների տվյալները վկայում են, որ հալածանքի ականատես է եղել կամ թիրախ դարձել աշակերտների զգալի մասը, սակայն դեպքերի մասին թերզեկուցման բարձր մակարդակը թույլ է տալիս ենթադրել, որ իրական պատկերն ավելի մտահոգիչ է: Բուլինգը ավագ դպրոցական տարիքում ոչ միայն անհատական խնդիր է, այլև մանկավարժական ու սոցիալ-հոգեբանական մարտահրավեր: Այն խաթարում է սոցիալականացման բնականոն ընթացքը, խոչընդոտում ինքնության կայուն ձևավորումը և երկարաժամկետ հետևանքներ է թողնում: Կրթական համակարգի առաջնային խնդիրն է ապահովել անվտանգ միջավայր, զարգացնել կանխարգելիչ ծրագրեր՝ ձևավորելով մանկավարժական միջամտության հստակ մեխանիզմներ:

BULLYING AS AN OBSTACLE TO PERSONALITY SOCIALIZATION AND IDENTITY FORMATION IN HIGH SCHOOL

Ashikyan Armenuhi

*PhD in Pedagogy, Associate Professor,
Yerevan State University, Republic of Armenia,
armenuhi.ashikyan@ysu.am*

Ghazaryan Arevik

*PhD in Pedagogy, Associate Professor,
Yerevan State University, Republic of Armenia,
arev.ghazaryan@ysu.am*

Summary

The social experience formed in the educational environment can either promote or hinder a high school student's successful integration into society. In this context, bullying, as intense and systematic psychological or physical pressure, becomes a serious challenge for both the student and the educational system. It is not new to our reality; it has simply taken on a new quality and resonance. The manifestations and motivations are varied, but the consequences are the same: the process of personality formation and socialization of the high school student who is subjected to bullying is

distorted. Moreover, bullying disrupts the high school student's social interactions, leading to self-abasement or, conversely, the reinforcement of aggressive behavior. Nevertheless, bullying is still viewed not as a challenge, but as an age-related characteristic and an inability to manage emotions.

The Problem: To study and analyze the possible forms of bullying manifestation in high school that hinder the high school student's socialization and identity formation.

Keywords: *bullying, high school student, personality formation and socialization, physical bullying, cyberbullying, psychological bullying, aggressive behavior, bully.*

БУЛЛИНГ КАК ПРЕПЯТСТВИЕ ДЛЯ СОЦИАЛИЗАЦИИ ЛИЧНОСТИ И ФОРМИРОВАНИЯ ИДЕНТИЧНОСТИ В СТАРШЕЙ ШКОЛЕ

Ашикян Арменуи

*Кандидат педагогических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
armenuhi.ashikyan@ysu.am*

Казарян Аревик

*Кандидат педагогических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения
arev.g hazaryan@ysu.am*

Аннотация

Социальный опыт, формирующийся в образовательной среде, может либо способствовать, либо препятствовать успешной интеграции старшеклассника в общество. В этом контексте буллинг как интенсивное и систематическое психологическое или физическое давление становится серьезной проблемой как для учащегося, так и для образовательной системы.

Это не новость для нашей реальности; он просто приобрел новое качество и звучание. Проявления и мотивы различны, но последствия одинаковы: искажается процесс формирования личности и социализации старшеклассника, подвергшегося буллингу. Более того, буллинг нарушает социальные взаимоотношения старшеклассника, вызывая самоуничижение или, наоборот, закрепление агрессивного поведения. Тем не менее, буллинг до сих пор рассматривается не как вызов, а как возрастная особенность и неспособность управлять эмоциями.

Проблема. Изучить и проанализировать возможные варианты проявления буллинга в старшей школе, которые препятствуют социализации и формированию идентичности старшеклассника.

Ключевые слова: *буллинг, старшеклассник, формирование личности и социализация, физический буллинг, кибербуллинг, психологический буллинг, агрессивное поведение, булль (агрессор).*

Օգտագործված գրականության ցանկ

1. Amartikian, Armenia lagging in addressing school bullying, *Jamnews in English*, Jan. 17, 2022. <https://jam-news.net/armenia-lagging-in-addressing-school-bullying/> “OIWeus Bullying Prevention Programme - Foundations,” *Foundations*. <https://foundations.org.uk/toolkit/guidebook/-olweus-bullying-prevention-programme/>.
2. Aleksandrovna A.E. and Borisovich B.A., BULLING V SHKOLE KAK KRIMINOLOGICHESKAYA PROBLEMA i UGROZA BEZOPASNOSTI DETEJ, *KiberLeninka*, 2019. <https://cyberleninka.ru/article/n/bullying-v-shkole-kak-kriminologicheskaya-problema-i-ugroza-bezopasnosti-detej> . (in Russian)
3. Bocharov A.A. and Khlomov K.D., Kiberbullying: travlya v prostranstve sovremennykh tekhnologiy, *Psikhologiya. Zhurnal Vyshey Shkoly Ekonomiki*, vol. 11, no. 3, 2007, pp. 177–191. (in

Russian)

4. Borisova L.G. and Dakhin A.N., Monitoring shkol'nykh konfliktov: prichiny, vyvody, rekomendatsii, *Pedagogicheskie Tekhnologii*, no. 1, 2005, pp. 57–72. (in Russian)

5. Dakhin A.N., Bulling v shkole i ne tol'ko..., *Sibirskiy Pedagogicheskiy Zhurnal*, no. 6, 2015, pp. 208–214. (in Russian)

6. Novikova M.A. and Rean A.A., Vliyanie shkol'nogo klimata na vzniknovenie travli: otechestvennyy i zarubezhnyy opyt issledovaniya, *Voprosy obrazovaniya / Educational Studies Moscow*, no. 2, 2019, pp. 78–89. (in Russian)

7. Novikova M., Rean A., and Konovalov I., Bulling v rossiyskikh shkolakh: opyt diagnostiki rasprostranennosti, polovozrastnykh osobennostey i svyazi so shkol'nym klimatom, *Voprosy obrazovaniya. Educational Studies Moscow*, no. 3, 2021, pp. 62–90. (in Russian)

8. Ishak M.S., Sarkowi A., Ahmi A., Abdulrauf-Salau A., and Memon S., Global Research Trends in School Bullying: A Bibliometric analysis, *Journal of Educational and Social Research*, vol. 13, no. 1, Jan., 2023, p. 91, doi: 10.36941/jesr-2023-0009

9. Kärnä A., Voeten M., Little T.D., Alanen E., Poskiparta E., and Salmivalli C., Effectiveness of the KIVA Antibullying Program: Grades 1–3 and 7–9, *Journal of Educational Psychology*, vol. 105, no. 2, Oct., 2012, pp. 535–551, doi: 10.1037/a0030417.

10. Bullying, *Youth Violence Prevention*, Oct. 28, 2024. <https://www.cdc.gov/youth-violence/about/about-bullying.html>

11. Home | RPPC - Hanrapetakan mankavarzhahogebakan kentron, Last visit: August 31, 2025, <https://hmk.am/en/home-en/>

12. OlWeus Bullying Prevention Programme - Foundations, *Foundations*. <https://foundations.org.uk/toolkit/guidebook/olweus-bullying-prevention-programme/>

13. PREVNet, Types of bullying - PREVNet, *PREVNet*, Jul. 05, 2024. <https://www.prevnet.ca/bullying/types-of-bullying/>

Получено: 03.10.2025

Рассмотрено: 13.10.2025

Принято: 22.10.2025

Received: 03.10.2025

Reviewed: 13.10.2025

Accepted: 22.10.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Էմինյան Գագիկ

մանկավարժական գիտությունների թեկնածու,

Վանաձորի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն,

geminyan@mail.ru

<https://orcid.org/0009-0005-7976-9801>

Ամփոփում

Համառոտ ներածական: Համաշխարհայնացումը, որը աշխարհը վերափոխում է որպես մի ամբողջություն տնտեսական, մշակութային, քաղաքական ու հասարակական համակարգերի միջոցով, մեծ ազդեցություն է թողնում նաև կրթության ու դաստիարակության գործընթացների վրա: Դրանք ընդգրկում են ոչ միայն կրթական ծրագրերի վերանայման ու ուսումնական մեթոդների փոփոխության, այլ նաև հասարակական մտածողության, մշակութային դրսևորումների ու սոցիալական համախմբման հարցերը: Համաշխարհայնացման ազդեցությունը դաստիարակչական գործընթացի վրա դառնում է առավել ակնհայտ այն ժամանակ, երբ տարբեր մշակույթների ու արժեքների հաղորդակցությունն ու փոխազդեցությունը ներգործում են մշակութային ինքնության ու ազգային արժեքների կորստի կամ փոփոխության վրա: Հոդվածում ներկայացված են ուսումնասիրության արդյունքներ, որոնք վերաբերում են համաշխարհայնացման ազդեցությանը հանրակրթական ուսումնական հաստատություններում դաստիարակչական գործընթացների կազմակերպման վրա, հատկապես ազգային ինքնության, մշակութային արժեքների ու դաստիարակության մեթոդների փոխակերպման համատեքստում: Անդրադարձ է կատարվում, թե ինչպես են ուսուցիչները ընկալում համաշխարհայնացումը, ինչպես են արձագանքում առաջադրված մարտահրավերներին և ինչպիսի փոփոխություններ են դիտարկում իրենց մասնագիտական գործունեության մեջ: Հոդվածը հիմնված է հանրակրթական դպրոցների ուսուցիչների շրջանում անցկացված հարցման արդյունքների վրա:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է կրթության ոլորտում չդադարող փոփոխություններով, կրթական տեխնոլոգիաների զարգացման ու ուսումնադաստիարակչական գործընթացում դրանց ներդրման աճով և ազգային ինքնության պահպանման նկատմամբ ընդլայնվող մտահոգություններով:

Գիտական նորույթը հիմնվում է համաշխարհայնացման վերաբերյալ պատմական ու համեմատական վերլուծության, ուսուցիչների շրջանում իրականացված հարցումների վրա: Հոդվածում անդրադարձ է կատարվում տեսական ու գործնական այնպիսի մոտեցումների, որոնց միջոցով հնարավոր կլինի պահպանել ազգայինը՝ միաժամանակ արդյունավետ արձագանքելով համաշխարհային կրթական միտումներին: Վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ ուսուցիչների զգալի մասը համաշխարհայնացումը ընկալում է որպես սպառնալիք ազգային ինքնության համար, սակայն միաժամանակ ընդունում է դրա դրական դերը՝ տեխնոլոգիական, գիտական ու մասնագիտական զարգացման տեսանկյունից: Հոդվածում առաջարկվում է համակցված մոտեցում՝ որը կշեշտադրի մշակութային ինքնության պահպանումը, ուսուցման մեթոդների արդիականացումն ու ուսու-

ցիչների շարունակական վերապատրաստումը գլոբալ մարտահրավերների պայմաններում:

Բանալի բառեր՝ դաստիարակություն, սովորող, ուսուցիչ, դպրոց, մեթոդ, նպատակ, համաշխարհայնացում, գործընթաց, հարցաթերթիկ:

Արդիականությունը: Կրթական հարափոփոխ համակարգերը մշտապես պահանջում են նոր մոտեցումներ դաստիարակչական աշխատանքների կազմակերպման հարցում: Այդ գործընթացի արդյունավետությունը կախված է հատկապես դաստիարակության նպատակների ու մեթոդների ճիշտ ընտրությունից: Դաստիարակչական գործընթացը՝ որպես ուսուցման ու ճանաչողական զարգացման մի մասնիկ, ունի իր ձևավորող դերն ու կարևորությունը: Այն ենթադրում է ոչ միայն գիտելիքի փոխանցում, այլ նաև սոցիալական հարաբերությունների զարգացում, փոխհարաբերությունների ձևավորում, անձի ազգային, սոցիալական ու մշակութային ինքնությունը պահպանելու կամ փոփոխելու գործընթաց: Ահա թե ինչու համաշխարհայնացումը՝ որպես հիմնախնդիր, մեծ դեր է խաղում ուսուցման ու դաստիարակչական գործընթացների կազմակերպման վրա:

Նպատակը: Ուսումնասիրել համաշխարհայնացման պատմական ընթացքը, ուսուցիչների պատկերացումները դաստիարակչական գործընթացի վրա համաշխարհայնացման ազդեցության վերաբերյալ:

Հիմնախնդիրները:

Մշակութային համաշխարհայնացման ազդեցությունը

Համաշխարհայնացման արդյունքում մշակույթների փոփոխությունն անխուսափելի է դառնում, ինչը կարող է հանգեցնել ազգային մշակույթի ու ավանդույթների նկատմամբ հետաքրքրության պակասի: Այդ գործընթացի պատճառով դպրոցներում կամ առհասարակ կրթական միջավայրերում դժվար է պահպանել ազգային մշակութային առանձնահատկությունները:

Տեխնոլոգիական փոփոխություններն ու ուսուցման մեթոդների խոր վերափոխումը

Տեխնոլոգիական առաջընթացների ընդլայնումն իր հերթին փոխում է դաստիարակության մեթոդներն ու կառուցվածքը: Դասերը դառնում են տեխնոլոգիապես ավելի հագեցած, սովորողների մոտ ձևավորվում են նոր սովորություններ՝ կապված առցանց միջավայրերի և այլ նորարարությունների հետ:

Հասարակական և տնտեսական անհավասարությունը

Համաշխարհայնացման ազդեցությունը կրթության վրա կարող է ստեղծել տարբերություններ կրթական հնարավորությունների ու ռեսուրսների միջև հատկապես զարգացող երկրներում:

Վերջին տասնամյակներին թեմայի տեսական ուսումնասիրմանն անդրադարձել են մի շարք գիտնականներ՝ առաջարկելով տարբեր տեսություններ ու վերլուծական մոդելներ:

Համաշխարհայնացման երևույթի սոցիալ-մշակութային հետևանքները լայնորեն ներկայացված են Ա. Թոֆլերի (Toffler A.), Մ. Կաստելսի (Castells M.), Զ. Բաու-

մանի (Bauman Z.) և այլ հեղինակների աշխատություններում: Ա. Թոֆլերն իր «Երբորդ ալիքը» աշխատությունում անդրադառնում է տեղեկատվական հասարակության ձևավորմանն ու դրա ազդեցությանը մարդու սոցիալականացման գործընթացի վրա: Մ. Կաստելսը ներկայացնում է գլոբալ տեղեկատվական հոսքերի ու տեխնոլոգիական զարգացումների դերը կրթության բովանդակության և մատուցման ձևերի փոփոխման գործընթացում: Զ. Բաումանն իր «Հեղուկ ժամանակներ» հայեցակարգում ցույց է տալիս արժեքային ու ինդիվիդուալ ընտրությունների անորոշության աճը գլոբալիզացված աշխարհում, ինչը բարդացնում է դաստիարակության նպատակային հստակեցումը: Այս փոփոխությունները մասնավորապես կարևորվում են Փ. Ֆրեյրեի (Freire P.) կողմից: Վերջինս կրթությունը դիտարկում է որպես ազատագրական ու քննադատական մտածողության ձևավորման գործընթաց՝ ընդգծելով նրա դերը սոցիալական արդարության համատեքստում:

Նորույթը: Ուսումնասիրության գիտական նորույթն այն է, որ դիտարկվում է համաշխարհայնացման ազդեցությունը կրթության ու հատկապես **դաստիարակչական գործընթացների վրա՝** հիմք ընդունելով ուսուցիչների ընկալումները, հարցումների արձագանքները:

Իրականացված ուսումնասիրությունը համադրվել է մի քանի մոտեցումներով.

- **պատմական ժամանակագրական վերլուծություն**, որը ներկայացնում է համաշխարհայնացման ազդեցության փուլերը կրթության ոլորտում (1910-ականներից մինչև COVID-19-յան ժամանակահատված),
- **համեմատական վերլուծություն**, որի միջոցով գնահատվում են գլոբալ կրթական միտումների ներգործության ուժգնությունն ու ուղղությունները,
- **ուսուցիչների շրջանում իրականացված հարցումների արդյունքների քանակական ու որակական տվյալների համադրություն:**

Նորություն է նաև այն փաստը, որ դաստիարակության թեման՝ որպես ոչ ֆորմալ, հաճախ ստվերում մնացող կրթական բաղադրիչ, ներկայացվում է որպես համակարգային մարտահրավեր համաշխարհայնացման համատեքստում: Հոդվածը նաև առաջարկում է **համակցված մոդել**, որը միավորում է մշակութային ինքնության պահպանումը, տեխնոլոգիական զարգացումն ու ուսուցիչների շարունակական վերապատրաստումը՝ որպես կրթության կայունության առանցքային բաղադրիչներ:

Հիմնական նյութի շարադրանք: Համաշխարհայնացումը և կրթության փոխհարաբերությունը

Համաշխարհայնացման ազդեցությունը կրթության ոլորտում տեսանելի է թե՛ կրթական ծրագրերի, թե՛ կրթական մոտեցումների մեջ: Այդ փոփոխությունները կարող են ձևավորել միատեսակ մտածելակերպ և քաջալերել համաշխարհային քաղաքացիության գաղափարները: Արդյունքում կրթությունը դառնում է համաշխարհայնացված, իսկ դպրոցներում ու համալսարաններում ինտեգրվում են աշխարհի տարբեր մշակույթները: Բայց այդ ժամանակ հարց է առաջանում՝ ինչպե՞ս են մշակութային տարբերությունները խառնվում կրթական ծրագրերում:

Համաշխարհայնացումը ինչ-որ սկզբունքորեն նոր բան չէ [1, 216]:

Համաշխարհայնացումը կառուցված է երեք հիմնական և փոխկապակցված հիմնասյուների վրա՝

1. արտադրանքի ու ծառայությունների հանրայնացում՝ հիմնված միջազգային առևտրի, օտարերկրյա ուղղակի ներդրումների և շուկայում կապիտալի հոսքերի աճի վրա,
2. տեղեկատվական, հաղորդակցական ու մեդիա նոր տեխնոլոգիաների լայն տարածում, որոնք ընդգծում են կրթության ու աշխատանքի գիտելիքահեն լինելը,
3. ինչպես նաև բազմաթիվ երկրներում գաղթի ծավալների ընդլայնում, որը հանգեցնում է մշակութային լուրջ փոփոխությունների [6, 93]:

Ինչպես պահպանել ազգային ինքնությունը, երբ կրթությունը դառնում է միաձուլված գլոբալ հասարակական պահանջներին:

Համաշխարհայնացումը մասամբ կապված է տեխնոլոգիաների առաջընթացի հետ, ինչը փոփոխություններ է ներմուծում կրթական համակարգ: Տեխնոլոգիական նորարարությունները, օրինակ՝ հեռավար կրթությունը, առցանց դասերը, սիմուլացիոն ծրագրերը, թույլ են տալիս դաստիարակչական գործընթացները դարձնել ավելի օպտիմալ ու լայնածավալ: Մակայն դրանց կիրառումը կարող է հանգեցնել առանձին երկրների ու ժողովուրդների ազգային տարրերի ոչնչացմանը:

Դաստիարակությունը լայն իմաստով անհատի սոցիալականացման գործընթացն է, որը ձևավորվում է սեփական ակտիվության արդյունքում՝ բնական, սոցիալական ու մշակութային միջավայրի ազդեցությամբ, այդ թվում՝ ծնողների ու մանկավարժների կողմից կազմակերպված, նպատակաուղղված գործունեության շնորհիվ [4, 226]:

Դաստիարակության հիմնական նպատակն է սովորողների համակողմանի զարգացմանը նպաստելը, որպեսզի նրանք լինեն ֆիզիկապես առողջ, մտավորապես և հոգեպես խելոք ու առաքինի, իսկ այդ նպատակները որոշվում են հասարակական հարաբերություններով [2, 50]: Այս զարգացումները կարող են ազդել սովորողների սոցիալական հմտությունների վրա, քանի որ ուսումնադաստիարակչական գործընթացներում, երբ կիրառվում են վիրտուալ ռեսուրսներ, պակասում են դեմառդեմ շփումների հնարավորությունները:

Համաշխարհայնացումը մեծացնում է մշակութային փոխազդեցությունը՝ նպաստելով տարբեր ազգերի ու երկրների միջմշակութային հաղորդակցության ուժեղացմանը: Այնտեղ, որտեղ տիրապետում են համաշխարհային մշակույթների ներկայացուցիչները, կարող է նվազել ազգային մշակույթների և ավանդույթների կարևորությունը: Այնուամենայնիվ, այս ամենն իր հետ կարող է հանգեցնել լեզվամտածողության տարանջատմանն ու մշակույթի պահպանման դեմ բացասական ազդեցություններին:

Համաշխարհայնացումը կարող է առաջ բերել նաև կրթական, տնտեսական կամ քաղաքական տարբերություններ: Զարգացող երկրներում, ի թիվս այլ խնդիր-

ների, կարող են առաջանալ դժվարություններ՝ կապված կրթական միջազգային չափանիշներին համապատասխանեցման ու որակական ցուցանիշների ապահովման հետ, ինչը կարող է խորացնել կրթական մակարդակների խզվածքը:

Գլոբալ փոփոխություններ առաջացնող գործընթացները պայմանավորում են համաշխարհային զարգացման հիմնական ուղղությունները, որոնք կենսագործունեության բոլոր ոլորտներում տեխնոլոգիական հեղափոխությունների են հանգեցնում՝ կազմակերպությունների գործունեության արդյունավետության ապահովման համար ստեղծելով տեղեկատվական համընդհանուր հարթակներ ու սկզբունքորեն նոր պայմաններ, հաղորդակցման միջոցներ ու մասնագիտական առանձնահատուկ կարողություններ պահանջող տեխնոլոգիաներ [3, 11-12]:

Համաշխարհայնացումը ավելի արագորեն է տարածվում խոշոր քաղաքներում, որտեղ գլոբալ մշակույթները սերտորեն միավորվում են, հնարավոր է հանդիպել ազգային ինքնության օբյեկտիվ ընկալմանը: Իրավիճակը շատ տարբեր է գյուղական ու հեռավոր շրջաններում, որտեղ դաստիարակչական գործընթացը դեռևս պահպանում է ավանդական արժեքները:

Համաշխարհայնացումը ունի թե՛ դրական, թե՛ բացասական նշանակություն: Դրական է համարվում այն, որ զարգացած երկրները, օրինակ՝ ԱՄՆ-ն, Ճապոնիան, Գերմանիան, իրենց տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային արժեքները տարածում են ավելի հետամնաց զարգացող երկրների վրա: Իսկ ո՞րն է համարվում համաշխարհայնացման բացասական նշանակությունը: Բացասականը պարտադրական է, որը քեզ ստիպում է հրաժարվել դարերով ունեցած քո ազգային արժեքներից [8]:

Համաշխարհայնացման հետևանքները դաստիարակչական գործընթացների վրա ևս ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Դրական կողմերից կարելի է նշել միջազգային կրթության ու մշակութային բազմազանության հասանելիությունը: Բացասական կողմերը ներառում են մշակույթի միատարրության վտանգը, ազգային ինքնության կորուստը:

Համաշխարհայնացումը նաև առաջացնում է մրցակցություն կրթական հաստատությունների միջև, ինչը երբեմն հանգեցնում է չափազանց մեծ ուշադրության վարկանիշների ու հեղինակության վրա՝ ի վնաս ուսուցման և գիտական հետազոտությունների որակի [7]:

Այսպիսով՝ անհրաժեշտ է մտածել, թե ինչպես պահպանել ազգային մշակույթների ինքնությունը՝ միաժամանակ ընդլայնելով գլոբալ կրթական հնարավորությունները:

Ստորև ներկայացնում ենք համաշխարհայնացման ազդեցության համեմատական վերլուծություն ժամանակագրական տեսանկյունից (ավելի մանրամասն տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Համաշխարհայնացման ազդեցության ժամանակագրական դինամիկան կրթության ոլորտում

Ժամանակահատված	Համաշխարհայնացման ազդեցություն	Կրթական համակարգի առանձնահատկությունները	Համաշխարհայնացման ազդեցության նշաններ
1910-1950 (Առաջին համաշխարհային պատերազմ - Երկրորդ համաշխարհային պատերազմ)	Մահմանափակ համաշխարհայնացում, երբ ազգային ինքնությունն ու պետական գաղափարախոսությունը գերակշռում են կրթության մեջ:	Կրթության համակարգը հիմնականում կենտրոնացած է ազգային մշակույթի, ազգային պատմության ու լեզվի պահպանման վրա:	Կրթական համակարգերը հիմնականում փակ են արտաքին ազդակներից, մեծ ուշադրություն է դարձվում հայրենական արժեքներին:
1950-1980 (Երկրորդ համաշխարհային պատերազմ - Հաղթող երկրի տնտեսությունների վերակառուցում)	Սկսում են դիտարկվել միջազգային կրթական փոխանակումներ, բայց համաշխարհայնացումը դեռ թույլ է:	Արևմտյան երկրներում սկսվում են միջազգային փոխանակման ծրագրեր, ԽՍՀՄ-ում՝ սոցիալիստական արժեքների տարածում:	Միջազգային գիտաժողովներ, համագործակցություններ, միջազգային ծրագրեր, բայց սահմանափակ ներգրավվածություն
1980-1990 (Տեխնոլոգիական հեղափոխություն, Գլոբալ տնտեսական ինտեգրացիա)	Համաշխարհայնացման ինտենսիվացում՝ տեխնոլոգիական զարգացման ու միջազգային առևտրի համապատկերում:	Ուսումնառությունը սկսում է ընդգրկել միջազգային տարրեր, զարգանում են կրթության փոխանակման ծրագրեր:	Միջազգային համալսարաններ, եվրոպական ծրագրեր (Erasmus+), լեզվաբարձրարանների ուսուցում, առաջին տեխնոլոգիական փոխանակումներ
2000-2010 (Տեղեկատվական տեխնոլոգիաների ծավալում, համաշխարհային կրթական բարեփոխումներ)	Համաշխարհայնացման ազդեցությունը հասնում է նոր մակարդակի՝ թվայնացման և համացանցի արագ զարգացման հետ զուգընթաց:	Ուսումնառությունը դառնում է գլոբալ ուսանողները մասնակցում են բազմամշակութային կրթական ծրագրերի:	Հեռավար կրթություն, միջազգային կրթական փառատոներ, կրթական տեխնոլոգիաների կիրառություն
2010-2020 (Կրթության համաշխարհային ինտեգրացիա, համաշխարհային քաղաքացիություն)	Համաշխարհայնացումը դառնում է համաշխարհային կրթության հիմնական պահանջ, նկատվում է ուսումնական պլատֆորմների աճ:	Համաշխարհային կրթական ծրագրեր, հեռավար դասընթացներ, բազմալեզու կրթություն:	Համաշխարհային կրթական չափանիշներ, գլոբալ քաղաքացիություն, առցանց կրթություն (MOOC), մոբիլություն

2020-հետո (COVID-19 համավարակի ազդեցություն, կրթության թվայնացում)	COVID-19 համավարակի պատճառով գլոբալ կրթական համակարգի արագ թվայնացում	Կորոնավիրուսի համավարակը արագացրեց թվային կրթության ընդունումը, նկատվում է համաշխարհային մոտեցումների ավելացում:	Առցանց կրթության ծավալում, միջազգային փոխանակման ծրագրեր թվային հարթակներում
---	---	--	--

Վերոբերյալը թույլ է տալիս դիտարկել, թե ինչպես է համաշխարհայնացման ազդեցությունը փոփոխվել տարբեր ժամանակահատվածներում, ինչպես նաև կրթական համակարգերի համատեքստում համաշխարհայնացման զարգացման փուլերը՝ սկսած ազգային առանձնահատկությունների պահպանումից մինչև համաշխարհային կրթության համակարգի զարգացում (ավելի մանրամասն տե՛ս Աղյուսակ 2):

Արդյունքում ի հայտ է եկել գլոբալիստիկան: Գլոբալիստիկան հիմնովին նոր գիտական ոլորտ է, որը ներառում է փիլիսոփայություն, հումանիտար գիտություններ, բնական գիտություններ և ուսումնասիրում է գլոբալ գործընթացների բազմաբնույթ ասպեկտները [5, 28]:

Աղյուսակ 2. Համաշխարհայնացման ազդեցության տարրերը կրթական համակարգում

Համաշխարհայնացման ազդեցության տարրեր	Գործառնություններ	Ազդեցությունները	Վտանգները	Ավելի լավ կողմեր (Առավելություններ)	Թերություններ
Կրթության համաշխարհային հասանելիություն	Ուսումնական նյութերի համատեղում և փոխանակում, հեռավար ուսուցման և առցանց կրթական ռեսուրսների զարգացման խթանում	Կրթության որակի բարձրացում՝ շատ երկրների համար գրեթե հասանելի դարձնելով միջազգային գիտելիքներ:	Տեխնոլոգիական անհավասարություն՝ զարգացող երկրներում կրթության անհավասարություն	Աշխարհի տարբեր կետերից ուսանողների ու դասախոսների համագործակցություն	Զարգացող երկրների հեռավոր տարածքներում տեխնոլոգիական ու ֆինանսական անբավարարություն
Թվային տեխնոլոգիաների ազդեցություն	Թվային գրադարաններ, դասընթացների առցանց հարթակներ, հեռավար ուսուցում	Դասընթացների թվայնացում՝ ուսանողներին մատչելի դարձնելով ամբողջ աշխարհում մեկ հարթակ:	Տեխնոլոգիական ներդրումների անհրաժեշտություն՝ կրթական ոլորտում համընդհանուր ներդրում	Ուսումնական նյութերի ավելի լայն տարածում՝ առավելագույնս բազմազանեցնելով ուսումնական փորձը	Թվային խոչընդոտներ՝ տեխնիկական համեմատաբար վատ պայմաններ որոշ տարածաշրջաններում

Միջազգային կրթական ստանդարտների ներդրում	Համաշխարհային կրթական չափանիշների հաստատում՝ համընդհանուր գնահատման մեթոդներ	Աշխարհի տարբեր երկրների ուսումնական համակարգերի միավորում՝ ուսումնական նյութերի համընդհանրացում	Մշակութային արժեքների և տեղական լեզուների կորուստ	Կրթական բազաների միասնականացում՝ համարժեք ուսումնական ծրագրերի ստեղծում տարբեր երկրների համար	Ապացուցողական և մշակութային տարբերությունների ընկալում ու տեղական արժեքների մերժում
Բազմամշակութայնություն և համաշխարհային քաղաքացիություն	Բազմամշակութային գաղափարների ներառություն՝ ուսումնական ծրագրերում համաշխարհային քաղաքացիության դաստիարակման նպատակով	Բազմամշակութային կրթություն՝ ուսանողներին ավելի բաց և համատեղ մտածելու հնարավորություններ տալու համար	Մշակութային բախումներ՝ տարբեր երկրների ու ավանդույթների ներկայացումների ընդհանրացում	Նոր աշխարհայացքների ձևավորում համաշխարհային մտածողություն ուսուցման և դաստիարակչական աշխատանքներում	Մշակութային բազմազանության որոշ տարրեր, որոնք կարող են խաթարել ուսուցման և դաստիարակության գործընթացը:
Ուսումնական բովանդակության համընդհանրացում	Համընդհանուր կրթական չափանիշներ՝ ուսուցում և գնահատման միասնական մոտեցում՝ համաշխարհային կրթական ծրագրերի մեջ	Կրթական տարբեր գործիքների և մեթոդների համադրում՝ ավելի համապարփակ ու արդյունավետ ուսումնական ծրագրերի ստեղծում	Ազգային ինքնության ու արժեքների կորուստ՝ համաշխարհային ծրագրերի համատեղումը	Բարձրացված կրթական մակարդակ՝ համաշխարհային չափանիշներով ծրագրեր, ավելի լավ կրթություն	Պետական մշակութային արժեքների պակաս՝ համաշխարհային կրթական մոտեցումների գերակայությամբ

Պարզելու համար, թե ինչպիսի պատկերացումներ ունեն հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչները հիմնախնդրի վերաբերյալ, իրականացրել ենք առցանց հարցումներ Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի ուսուցիչների շրջանում: Հարցմանը մասնակցել է 75 ուսուցիչ:

«Ինչպե՞ս եք գնահատում համաշխարհայնացման ազդեցությունը կրթական համակարգի վրա» հարցին ուսուցիչների գերակշռող մասը (80 %) պատասխանել է, որ համաշխարհայնացումը բացասաբար է ազդում կրթական համակարգի վրա: 15%-ի կարծիքով դա կարող է բարելավել կրթական համակարգը, բայց համեմատաբար ավելի փոքր ծավալներով: Սա նշանակում է, որ ուսուցիչները հիմնական-

նում չեն տեսնում համաշխարհայնացման դրական ազդեցությունը կրթական համակարգի բարելավման վրա, և շատերը կարծում են, որ այն ուղղակիորեն վատթարացնում է առկա համակարգը:

«Ինչպե՞ս եք վերաբերվում համաշխարհայնացման ազդեցությանը ազգային արժեքների պահպանման գործընթացում» հարցի պատասխանների արդյունքները շատ հակասական են. մեծամասնությունը (65%) նշում է, որ համաշխարհայնացումը լուրջ խոչընդոտներ է առաջացնում ազգային արժեքների պահպանման համար: Սա ակնհայտորեն ցույց է տալիս, որ ուսուցիչները բացասաբար են վերաբերվում գլոբալ մշակույթների ներթափանցմանը, որը կարող է վտանգել ազգային ինքնությունն ու արժեքների պահպանումը: Մի փոքր մասի (3%) կարծիքով համաշխարհայնացումը նպաստում է ազգային արժեքների զարգացմանը: Հարցմանը մասնակցած մյուս ուսուցիչները չեն կարողանում հստակորեն տարանջատել համաշխարհայնացման դրական կամ բացասական ազդեցությունը ազգային արժեքների պահպանման գործընթացում:

«Ի՞նչ եք կարծում՝ համաշխարհայնացումը նպաստում է հանրակրթական գործընթացում ուսուցման և դաստիարակչական մեթոդների արդիականացմանը» հարցին հարցվողների 45 %-ը պատասխանել է, որ համաշխարհայնացումը չի նպաստում ուսուցման և դաստիարակչական մեթոդների արդիականացմանը: Սա նշանակում է, որ ուսուցիչների մեծ մասը կարծում է, որ կրթական համակարգն ու մեթոդները չեն առաջադիմում համաշխարհայնացման միջոցով: Չնայած դրան՝ 35%-ը պնդում է, որ համաշխարհայնացումը այդ փոփոխությունները առաջացնում է. հնարավոր է նոր տեխնոլոգիաների կամ ուսուցման և դաստիարակչական նոր մոտեցումների ներմուծումը: 20%-ի կարծիքով այն որևէ ազդեցություն չունի:

«Ինչպե՞ս է համաշխարհայնացումը ազդում սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա» հարցին հարցվողների մի մասը պատասխանել է, որ համաշխարհայնացումը աջակցում է ազատ մտածողության զարգացմանը (35 %), մինչդեռ մյուսները գտնում են, որ այն կարող է կրճատել ազգային ինքնագիտակցությունը (33%): Վերջին խմբի կարծիքով համաշխարհայնացումը կարող է ձևավորել «համաշխարհային մտածողություն», որն ավելի հեռու է ազգային ինքնությունից: Հետևաբար կային նաև մասնակիցներ, որոնց կարծիքով որ համաշխարհայնացման ազդեցությունը իրատեսական չէ, ինչը պատկերացում է տալիս, որ ավելի շատ համախմբվածություն ու քննարկումներ պետք է իրականացվեն այս հարցի շուրջ (32 %):

«Ի՞նչ եք կարծում՝ արդյոք համաշխարհայնացումը ազդեցություն ունի ուսուցիչների մասնագիտական զարգացման վրա» հարցին ուսուցիչների 45 %-ը պատասխանել է, որ համաշխարհայնացումը մասամբ օգնում է ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, մինչդեռ 30 %-ի կարծիքով այդ ազդեցությունը դրական է: Մյուս մասը (25 %) կարծում է, որ համաշխարհայնացումը չի ազդում մասնագիտական զարգացման վրա, ինչը նշանակում է, որ նրանք չեն տեսնում նշանակալի փոփոխություններ ուսուցիչների աշխատանքային պրակտիկայում:

«Համաշխարհային մշակույթի ներթափանցումը, ձեր կարծիքով, նվազեցնում է ազգային մշակութային արժեքների դերը» հարցին ուսուցիչների մեծամասնությունը (85%) պատասխանել է, որ համաշխարհային մշակույթի ներթափանցումը նվազեցնում է ազգային մշակութային արժեքների դերը: Սա նկատելիորեն ցույց է տալիս, որ ուսուցիչները զգում են, որ գլոբալ մշակույթները ունեն գերակայություն, ինչը կարող է խոչընդոտել ազգային մշակույթների պահպանումն ու զարգացումը:

«Ըստ Ձեզ, համաշխարհայնացումը ազդո՞ւմ է սովորողների աշխարհայացքի ընդլայնման վրա» հարցին հարցվողների 75 %-ը պատասխանել է, որ համաշխարհայնացումը չի ազդում սովորողների աշխարհայացքի ընդլայնման վրա: Սա կարող է ենթադրել, որ ուսուցիչները չեն տեսնում համաշխարհայնացման ազդեցությունը կրթական միջավայրում սովորողների մտածելակերպի փոփոխության վրա:

«Ի՞նչ եք կարծում՝ համաշխարհայնացումը նպաստում է գիտության ու տեխնոլոգիաների զարգացմանը» հարցին շատ ուսուցիչներ պատասխանել են, որ համաշխարհայնացումը նպաստում է գիտության և տեխնոլոգիաների զարգացմանը, քանի որ 72 %-ը տեսնում է դրական ազդեցություն: Գիտությունն ու տեխնոլոգիաները ավելի արագ զարգանում են գլոբալ շուկայի միջոցով:

«Ինչպե՞ս կգնահատեք համաշխարհայնացման ազդեցությունը մայրենի լեզվի պահպանման գործընթացում» հարցին հարցվողների մեծամասնությունը (69 %) պատասխանել է, որ համաշխարհայնացումը առաջացնում է լուրջ խոչընդոտներ մայրենի լեզվի պահպանման գործընթացում: Նման պատասխանները ցույց են տալիս, որ ուսուցիչները մեծապես անհանգստացած են՝ լեզվի պահպանման հարցում համաշխարհայնացման ազդեցությամբ պայմանավորված:

Այս հարցումը նպատակ ուներ բացահայտելու, թե ինչպես է համաշխարհայնացումը ազդում կրթական համակարգի վրա, ինչպես նաև ինչպես է այն փոխում սովորողների արժեհամակարգերը, ազգային մշակույթները, լեզուները և ուսուցիչների մասնագիտական զարգացումը: Հարցման արդյունքները ցույց են տալիս մի շարք հետաքրքիր միտումներ, որոնք խոսում են համաշխարհայնացման երկակի, նույնիսկ հակասական ազդեցության մասին: Ուսուցիչները հիմնականում քննադատաբար են վերաբերվում համաշխարհայնացման ազդեցությանը, հատկապես կապված ազգային արժեքների, մշակույթի, լեզուների և կրթական անհավասարությունների հարցերին: Ընդհանրացնելով հարցման արդյունքները՝ ընդգծենք հետևյալը.

1. Համաշխարհայնացումը՝ որպես մարտահրավեր ուղղված կրթական համակարգին

Ուսուցիչների մեծամասնությունը (80 %) համաշխարհայնացումը դիտարկում է **բացասական ազդակ** կրթական համակարգի համար: Ըստ նրանց՝ համաշխարհայնացումը ոչ թե խթանում է զարգացումը, այլ **վատթարացնում է առկա համակարգը**: Այս մոտեցումը փաստում է այն մասին, որ կրթական միջավայրը դեռևս պատրաստ չէ համաշխարհային մրցակցության մեջ լիարժեք ինտեգրվելու:

2. Ազգային ինքնության և արժեքների պահպանման վերաբերյալ լուրջ մտա-

հոգություններ

Հարցվողների գերակշիռ մասը (65-85 %) համաշխարհայնացումը ընկալում է որպես **սպառնալիք ազգային արժեքներին**, մշակույթին ու մայրենի լեզվին: Բարձրացվում են ինքնության կորստի, մշակութային համահարթեցման և լեզվական աղավաղման հարցերը:

3. Տեխնոլոգիական և գիտական ոլորտում հարաբերական դրական վերաբերմունք

Ի տարբերություն ընդհանուր բացասական պատկերին՝ գիտության և տեխնոլոգիաների մասով դիտվում է զգալի դրական տրամադրվածություն. 72 %-ը **ընդունում է համաշխարհայնացման դրական ազդեցությունը** այդ ոլորտներում: Սացույց է տալիս, որ ուսուցիչներն ընդունում են գլոբալ համագործակցության ներուժը տեխնոլոգիական առաջընթացի համար:

4. Սովորողների արժեհամակարգի և աշխարհայացքի վրա հակասական ազդեցությունը

Սովորողների մտածելակերպի ձևավորման ու արժեհամակարգի վրա համաշխարհայնացման ազդեցության վերաբերյալ պատասխանները **բաժանված են մոտավորապես երեք մասի**: Մի մասը տեսնում է դրական կողմեր (ազատ մտածողություն), մի մասը՝ բացասական (ազգային ինքնության կորուստ), իսկ մնացածը չի կարողանում հստակորեն գնահատել:

5. Մասնագիտական զարգացման վրա ազդեցությունը՝ միջին մակարդակի

Ուսուցիչների շուրջ **45 %-ի կարծիքով համաշխարհայնացումը մասամբ նպաստում է մասնագիտական զարգացմանը**, սակայն կա նաև զգալի մաս (25 %), որն այն որպես ոչ մի ազդեցություն չունեցող գործոն է տեսնում: Սա ենթադրում է մասնագիտական հնարավորությունների օգտագործման թերի համակարգ:

Հիմնական մարտահրավերն է գտնել հավասարակշռություն ազգային ինքնության պահպանման ու համաշխարհային ինտեգրման միջև:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ համաշխարհայնացումը դաստիարակչական գործընթացների նկատմամբ ունի և՛ խթանող, և՛ խոչընդոտող ազդեցություն: Ուսուցիչների մեծամասնությունը ոչ վստահելի վերաբերմունք ունի գլոբալ մշակույթի ներթափանցմանը՝ դրանում տեսնելով ազգային արժեքների ու լեզվի կորստի վտանգ: Միննույն ժամանակ տեխնոլոգիական ու գիտական առաջընթացի հնարավորությունները դրական են գնահատվում:

Այս իրավիճակը պահանջում է կրթական նորագույն ռազմավարությունների մշակում, որոնցում առաջնահերթություն կտրվի մշակութային ինքնության պահպանմանը: Ուսուցիչների վերապատրաստումը, երկլեզու մոդելների ներդրումը, թվային գրագիտության զարգացումն ու բազմակողմ քննարկումների կազմակերպումը կարող են ձևավորել ավելի կայուն ու ժամանակակից կրթական միջավայր:

Ուսուցիչների գերակշիռ մասը համաշխարհայնացումը ընկալում է որպես մարտահրավեր ազգային ինքնության ու կրթության ավանդական մոդելների պահպանման տեսանկյունից, որտեղ յուրաքանչյուր տարր միտված է կրթական

միջավայրը դարձնելու ժամանակակից, ներառական ու արժեքահեն՝ միաժամանակ ապահովելով ուսուցիչների մասնագիտական աճ, սովորողների ինքնագիտակցության զարգացում և մայրենի լեզվի ու մշակույթի ամրապնդում:

Ստորև ներկայացվում են դաստիարակության գործընթացի կազմակերպման մոդելի բովանդակային բաղադրիչները, նպատակներն ու աշխատանքների իրականացման հակիրճ նկարագրությունները:

1. Կրթական համակարգում ազգային և համաշխարհային համադրման նոր մոտեցումներ

Համաշխարհայնացման պայմաններում անհրաժեշտ են դաստիարակչական այնպիսի գործընթացներ, որոնք համադրում են **ազգային արժեքներն ու համաշխարհային չափանիշները՝** փոխադարձ հարգանքի և գուզընթաց զարգացման հիմքով:

- Մշակել դասընթացներ, որոնք միաժամանակ ուսուցանեն ազգային ինքնություն և համաշխարհային մտածողություն:
- Իրականացնել մշակութաբանական կրթություն՝ սովորողներին օգնել հասկանալ իրենց ինքնությունը համաշխարհային մշակութային համակարգում:

2. Ուսուցիչների վերապատրաստման համակարգերի արդիականացում

Համաշխարհայնացման՝ մասնագիտական զարգացմանը նպաստելու համար իրականում անհրաժեշտ է ակտիվացնել ուսուցիչների մասնակցությունը **միջազգային կրթական ծրագրերին, վեբինարներին ու նորարարական մեթոդների ուսուցմանը:**

- Ներմուծել միջազգային համագործակցության ծրագրեր:
- Ապահովել տեխնիկական ու մեթոդաբանական աջակցություն նոր տեխնոլոգիաների կիրառման համար:

3. Ազգային լեզվի պահպանմանն ուղղված ծրագրեր

Մայրենի լեզվի պաշտպանության համար պետք է մշակել կրթական հատուկ ռազմավարություն՝ ի պատասխան գլոբալ մշակույթների ներթափանցման:

- Խթանել մայրենի լեզվով ստեղծագործական աշխատանքները:
- Ներմուծել երկլեզու կրթական մոդելներ, որոնցում անգլերենը կամ այլ լեզու կդասավանդվի՝ մայրենին խաթարելու փոխարեն այն հզորացնելու նպատակով:

4. Տեխնոլոգիաների ու մեթոդների արդիականացում՝ համաշխարհային մակարդակին համարժեք լինելու համար

Անհրաժեշտ է ցույց տալ ուսուցիչներին, թե ինչպես համաշխարհայնացումը կարող է փոխել դասավանդման մեթոդները՝ դարձնելով կրթությունը ավելի դինամիկ և մատչելի:

- Ներկայացնել հաջողված միջազգային մեթոդական մոդելներ:

- Ներառել մեղիագրագիտություն, թվային դիդակտիկա և արհեստական բանականություն կրթական ծրագրերում:

5. Հանրային քննարկումների և հետազոտությունների խրախուսում

Մասնակիցների պատասխաններում նկատվում են որոշ հարցերի վերաբերյալ կարծիքների բաժանում և անորոշություն: Սա պահանջում է **հանրային քննարկումների, սեմինարների ու հետազոտական միջոցառումների ակտիվացում:**

Առաջարկվող մոդելը միտված է ստեղծելու այնպիսի միջավայր, որտեղ ազգային ինքնությունը պահպանվում և զարգացվում է՝ համադրվելով համաշխարհային մտածողության ու արժեքային համակարգերի հետ: Սա ոչ միայն կապահովի սաների բազմակողմանի զարգացում, այլև կնպաստի մրցունակ, ներառական ու ազգային արժեքների պահպանման նկատմամբ պատասխանատու վերաբերմունք ունեցող հասարակության ձևավորմանը:

THE ROLE AND IMPACT OF GLOBALIZATION IN THE EDUCATIONAL-UPBRINGING PROCESS

Eminyan Gagik,
PhD in Pedagogy,
Vanadzor State University,
Republic of Armenia,
geminyan@mail.ru

Summary

Brief Introduction: Globalization, which is transforming the world into a unified system through economic, cultural, political, and social dimensions, significantly influences the processes of education and upbringing. These include not only issues of the revision of curricula and the change in teaching methods, but also the ones related to public thinking, cultural expression, and social cohesion. The impact of globalization on the educational-upbringing process becomes particularly evident as the interaction and exchange of diverse cultures and values can lead to the loss or transformation of cultural identity and national values. This article presents findings from a study focused on the impact of globalization on the organization of educational-upbringing processes in public educational institutions—particularly in the context of national identity, cultural values, and the transformation of pedagogical methods. It explores how teachers perceive globalization, how they respond to the associated challenges, and what changes they observe in their professional activities. The article is based on survey results collected from teachers working in public schools.

The relevance of this research stems from ongoing changes in the field of education, the development and integration of educational technologies, and growing concerns regarding the preservation of national identity. The scientific novelty of the article lies in its historical and comparative analysis of globalization, supported by data gathered through surveys conducted among teachers. The article discusses both theoretical and practical approaches that can help preserve national identity while effectively responding to global educational trends.

The analysis reveals that a significant number of teachers perceive globalization as a threat to national identity, yet at the same time recognize its positive contributions to technological, scientific, and professional advancement. The article proposes a combined approach that emphasizes the preservation of cultural identity, modernization of educational methods, and continuous professional development of teachers in response to global challenges.

Keywords: *upbringing, learner, teacher, school, method, goal, globalization, process, questionnaire.*

РОЛЬ И ВЛИЯНИЕ ГЛОБАЛИЗАЦИИ НА ВОСПИТАТЕЛЬНЫЙ ПРОЦЕСС

Эминян Гагик

Кандидат педагогических наук
Ванадзорский государственный университет,
Республика Армения
geminyan@mail.ru

Аннотация

Краткое введение: Глобализация, преобразующая мир в единую систему посредством экономических, культурных, политических и социальных процессов, оказывает значительное влияние и на образование, и на воспитание. Это влияние затрагивает не только пересмотр образовательных программ и изменение методов обучения, но и вопросы общественного мышления, культурных проявлений и социальной сплоченности. Воздействие глобализации на воспитательный процесс становится особенно заметным, когда взаимодействие различных культур и ценностей приводит к утрате или трансформации культурной идентичности и национальных ценностей.

В статье представлены результаты исследования, посвященного влиянию глобализации на организацию воспитательных процессов в общеобразовательных учреждениях, особенно в контексте национальной идентичности, культурных ценностей и преобразования образовательных методов. Рассматривается, как учителя воспринимают глобализацию, как они реагируют на возникающие вызовы и какие изменения наблюдают в своей профессиональной деятельности. Основой статьи являются данные анкетирования, проведенного среди учителей общеобразовательных школ.

Актуальность темы обусловлена непрерывными изменениями в сфере образования, развитием образовательных технологий, их активным внедрением в учебно-воспитательный процесс и возрастающими тревогами относительно сохранения национальной идентичности. Научная новизна статьи заключается в историко-сравнительном анализе феномена глобализации и использовании результатов опроса учителей. В статье рассматриваются как теоретические, так и практические подходы, которые могут способствовать сохранению национального начала при эффективном отклике на глобальные образовательные тенденции.

Результаты анализа показывают, что значительная часть учителей воспринимает глобализацию как угрозу национальной идентичности, однако одновременно признаёт её положительное влияние в контексте технологического, научного и профессионального развития. В статье предлагается комплексный подход, сочетающий сохранение культурной идентичности, модернизацию образовательных методов и непрерывную профессиональную подготовку педагогов в условиях глобальных вызовов.

Ключевые слова: воспитание, ученик, учитель, школа, метод, цель, глобализация, процесс, анкета.

Օգտագործված գրականության ցանկ

1. Asatryan V.M. *Pilisopayutyun neratsutyun* (usumnakan dzernark), Yerevan, Noyan Tapan, 2004, 220 ej.
2. Harutyunyan N.K. *ev urishner, Mankavarjakan barraran*, Zangak, 2018, 248 ej.
3. Khachatryan R., Hovhannisyan S., Sargsyan K., Hovsepyan A., *Karravarchakan hmtutyunner*, Usumnamethodakan dzernark, Yerevan, 2020, 276 ej.
4. Avdeev N.F. *Vyshshaya shkola v usloviyakh globalizatsii: uchebnoe posobie*, Moskva: MGIU, 2011, 578 p.
5. Grinina L.E. i drugie, *Universal'naya i global'naya istoriya: Evolyutsiya vselennoi, zemli, zhizni i obshchestva*, Volgograd, 2012, 688 p.
6. *Globalization and Education*, Joint Working Group, Vatican City, 2006, 290 p.
7. <https://moluch.ru/archive/531/117008> (ditvel e 22.07.2025 t.)

8. <https://gohargabrielyan.wordpress.com/2017/01/30/globalizacia-hamahayagum> (ditvel e 22.07.2025 t.)

Получено: 24.07.2025

Рассмотрено: 03.09.2025

Принято: 25.11.2025

Received: 24.07.2025

Reviewed: 03.09.2025

Accepted: 25.11.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License

ПЕРЕОСМЫСЛЕНИЕ ПЕДАГОГИКИ XXI В.: ОТ ТРАНСЛЯЦИИ ЗНАНИЙ К ФОРМИРОВАНИЮ КУЛЬТУРНОЙ СРЕДЫ

Акопян Тигрануи,

*Кандидат педагогических наук, ассистент,
Ереванский государственный университет,*

Республика Армения,

tigranuhi.hakobyan@ysu.am

<https://orcid.org/0009-0002-1985-2265>

Аннотация

Современная система образования переживает кризис идентичности, обусловленный сменой цивилизационных ориентиров и ускорением социокультурных процессов. Педагогика, сформированная в индустриальную эпоху, оказывается неспособной адекватно отвечать на вызовы XXI в. Возникает необходимость в переосмыслении её концептуальных оснований: от функциональной трансляции знаний – к формированию живой, культурной и ценностной среды, способной поддерживать целостное развитие личности. В статье предпринимается попытка теоретически обосновать культурную парадигму педагогики как стратегию будущего, в которой школа становится не только местом обучения, но и пространством смыслообразования и воспитания культуры.

Актуальность статьи. Традиционные модели педагогики, ориентированные на трансляцию знаний, перестают эффективно отвечать на потребности развития личности в условиях глобализации и цифровизации. Это делает актуальным поиск новых парадигм, которые обеспечат целостное развитие и культурное воспитание учащихся.

Цель исследования. Целью исследования является теоретическое обоснование культурной парадигмы педагогики XXI в. и предложение практической модели школы как культурной экосистемы, способствующей целостному развитию личности.

Задачи. Задачами исследования являются: определение теоретических оснований культурной парадигмы образования, разработка практической модели школы как культурной экосистемы, переосмысление критериев оценки образовательных результатов с учётом личностного и культурного развития, рассмотрение роли духовного измерения в педагогическом процессе.

Новизна. Новизна исследования состоит в обосновании культурной парадигмы педагогики XXI в., которая объединяет теоретические основания (гуманистическая, культурно-историческая и духовная педагогика) и практическую модель школы как культурной экосистемы, где ключевыми результатами образования становятся не знания, а личностная динамика, культурная вовлечённость и духовное развитие.

Практическая значимость. Результаты исследования обладают определенной практической значимостью для модернизации образовательной системы в условиях XXI в. Предложенная культурная парадигма педагогики может быть применена: *в школьной практике* – при проектировании образовательных программ, ориентированных не только на усвоение знаний, но и на формирование культурной среды, развитие ценностных ориентиров, творческого мышления и духовной устойчивости учащихся; *в организации школьного пространства* – при создании культурной экосистемы, включающей открытые учебные зоны, мастерские, культурные залы, что обеспечивает интеграцию образовательного и культурного процессов; *в системе оценки образовательных результатов* – через внедрение альтернативных инструментов (портфолио, проектная работа, самооценка, педагогическое наблюдение), позволяющих фиксировать личностную динамику и культурную вовлечённость учащихся; *в социально-культурной политике школы* – через расширение взаимодействия с родителями, учреждениями культуры, представителями искусства, науки и местным сообществом, что укрепляет роль школы как культурного центра.

Таким образом, предложенные в статье идеи и модели могут быть использованы как в образовательной политике, так и в практической деятельности школ, педагогических вузов и культурных учреждений. Реализация культурной парадигмы способствует созданию целостной образовательной среды, формирующей гармоничную личность и устойчивое культурное развитие общества.

Ключевые слова: педагогика XXI в., образовательная экосистема, школа как сообщество, роль учителя, формирование личности, культурная среда, целостное развитие ребёнка, учитель как культурный архитектор, социально-культурное образование, трансляция знаний.

Проблема. Проблема исследования заключается в недостаточной разработанности теоретических и методологических основ культурной парадигмы образования, а также в отсутствии практических моделей её реализации в условиях современной школы. Существует разрыв между целями образования и его реальными результатами в области формирования духовно-нравственной и культурной идентичности.

В основе традиционного образования лежит модель, ориентированная на усвоение стандартизированных знаний и проверку уровня их усвоения. Такая система во многом игнорирует индивидуальные особенности учащегося, его культурный контекст, а также растущую потребность в развитии критического мышления, креативности и духовных оснований личности. Исследователи отмечают, что современная школа функционирует как бюрократическая структура, неспособная гибко адаптироваться к вызовам постиндустриального общества [3, с. 21–22; 9, с. 45]. В результате происходит разрыв между образованием и жизнью, между знанием и смыслом, между школой и культурой.

Краткий анализ исследований, связанных с проблемой. Вопрос о переосмыслении педагогики в XXI веке активно обсуждается в научном сообществе в разных странах. Можно выделить несколько направлений исследований, близких к культурной парадигме образования.

1. Зарубежные исследования, где авторы акцентируют внимание на гуманистических и культурных основаниях образования: П. Фрейре предложил концепцию диалогического образования, где обучение становится актом культурного освобождения; Г. Биеста критикует «образование как измерение» и настаивает на том, что подлинная цель школы — формирование субъекта и гражданской ответственности; К. Робинсон развивает идеи творческого образования, в котором важна среда для раскрытия талантов, а не стандартизированная передача знаний; М. Нуссбаум пишет о воспитании «культуры человечности» через ценности, искусство и гуманитарное знание; Ю. Хабермас вводит концепцию коммуникативного действия, важную для педагогики диалога; Э. Фромм и А. Маслоу исследовали духовные и этические основания развития личности, которые легли в основу гуманистической педагогики.

2. Российская и постсоветская традиция, где особое значение имеют культурно-исторические и философские подходы: Л.С. Выготский разработал культурно-историческую теорию развития, согласно которой личность формируется в процессе усвоения культурных средств; В.С. Библер предложил концепцию «Школы диалога культур», в которой образование понимается как пространство культурного общения и сотворчества; Э.В. Ильенков обосновал значение культуры и мышления в формировании личности; Е.В. Бондаревская развивала идею педагогики культуры и личностно-ориентированного образования; А.Г. Асмолов писал о вариативности и культурно-личностных основаниях образовательных стандартов; Д.С. Лихачёв подчёркивал роль культуры как духовного основания образования; Б.Д. Эльконин, В.В. Давыдов

разработали деятельностный подход, предполагающий освоение культурных форм деятельности; М.В. Федотова показала роль интуиции и творчества в педагогике как проявления культурного измерения образования.

3. Армянские исследования. В Армении вопросы культурной идентичности и философии образования обсуждаются в работах культурологов и философов (Г. Арутюнян, С. Золян и др.). Однако педагогическая разработка модели школы как культурной экосистемы пока недостаточно представлена, что создаёт исследовательский пробел и определяет актуальность настоящей статьи.

Таким образом, обзор показывает, что хотя отдельные элементы культурной парадигмы образования (диалог, гуманизм, творчество, духовность) уже разрабатывались в различных исследованиях, целостная модель школы как культурной среды и экосистемы пока остаётся открытым направлением для дальнейших научных разработок.

Изложение основного материала. Культурная парадигма в педагогике опирается на представление о человеке как носителе и творце культуры. Образование в этом контексте рассматривается не как передача информации, а как процесс приобщения к культурному наследию, диалога с традициями и формирования способности к культуротворчеству. Эту парадигму поддерживают идеи гуманистической педагогики [5, с. 61–110], концепции культурно-исторического развития [1, с. 139–182], философия Живой Этики и синергетический подход в образовании.

Образование становится неотделимым от культурной среды, в которой формируется личность. Оно перестаёт быть только «подготовкой к жизни» и становится самой жизнью — творческой, осмысленной, направленной на развитие внутреннего мира человека и его способности к со-действию в мире.

Формирование культурной среды в образовательном пространстве требует пересмотра методологических принципов. В основе новой педагогики лежит не трансляция готовых знаний, а сотворчество, диалог и погружение в культурные контексты [4, с. 12–19, 44–59]. Методологически это означает переход:

- от линейного преподавания к проектному и исследовательскому обучению;
- от роли учителя-эксперта к роли педагога-куратора, вдохновителя и культурного проводника;
- от оценки результатов к оценке процессов и личностной динамики ученика.

Важно внедрение интердисциплинарных программ, культурных практик, взаимодействия с учреждениями культуры и вовлечения учащихся в реальные социокультурные проекты. Школа при этом становится не только образовательным, но и культурным центром – пространством смысла, общения и творчества.

Школа как культурная экосистема предполагает создание среды, где учащиеся и педагоги совместно участвуют в культурных, творческих и исследовательских проектах. В экосистеме школы важно учитывать три ключевых компонента: физическое пространство (открытые зоны, мастерские, медиатеки, культурные залы), временную организацию (интеграция творческих и исследовательских блоков, тихие часы, культурные события) и социальные взаимодействия (партнёрство с родителями, деятелями искусства, наукой и местным сообществом). Такая экосистема позволяет учащимся развивать критическое мышление, способность к сотрудничеству и культурное самосознание, а педагогам — выполнять роль наставников и кураторов культурного развития.

Реализация культурной парадигмы возможна через создание новой архитектуры школьной жизни:

- **Пространство:** открытые учебные зоны, мастерские, медиатеки, культурные залы.
- **Расписание:** включение блоков творческой и исследовательской деятельности, «тихих часов», культурных событий.
- **Роли:** педагог как фасилитатор культуры, ученик как активный участник и создатель культурной среды.
- **Сообщество:** партнёрство с родителями, деятелями искусства, наукой, местным сообществом.

Культурная экосистема школы поддерживает личностный рост, формирует устойчивую идентичность и ориентиры в быстро меняющемся мире.

Традиционная модель измерения образовательных достижений опирается на количественные метрики — тесты, экзамены, рейтинги. Однако в рамках культурной парадигмы такие формы оценки оказываются неэффективными, так как не отражают глубинные изменения в личности ученика, его способность к смыслообразованию, внутренней мотивации и культурной самоидентификации [10, с. 2-3].

Культурно-ориентированное образование предполагает расширение понятия образовательного результата. Ключевыми ориентирами становятся:

- личностная динамика: развитие эмпатии, ответственности, этического мышления;
- культурная вовлечённость: способность участвовать в культурных практиках, понимать и создавать культурные тексты;
- способность к саморазвитию: умение ставить и достигать цели, рефлексировать и учиться на опыте;
- смыслотворчество: формирование собственной системы ценностей и смыслов.

Вместо стандартных тестов приоритет получают портфолио достижений, проектные продукты, дневники наблюдений, самооценка и педагогическое наблюдение. Такие подходы позволяют оценивать не только результат, но и процесс, личностный путь и уникальность каждого учащегося.

Ниже представлена таблица, наглядно показывающая различия между традиционными и культурными образовательными результатами:

Таблица 1. Сопоставление традиционных и культурных образовательных результатов

Традиционные результаты	Культурные результаты
Запоминание фактов и информации	Глубокое понимание и осмысление содержания
Оценка через стандартизированные тесты	Оценка через портфолио, проекты, самооценку
Фокус на когнитивных навыках	Развитие эмоционального и этического интеллекта
Усвоение фиксированных знаний	Способность к творческому мышлению и культуротворчеству
Результаты фиксируются количественно	Результаты включают качественные изменения личности

Конечный акцент на итоговом экзамене	Акцент на процесс обучения и личностный рост
Индивидуальная конкуренция	Коллективное и кооперативное обучение

Таким образом, переосмысление образовательных результатов — это шаг к гуманизации образования, где цель обучения заключается не в накоплении фактов, а в становлении целостной, культурно зрелой и творчески активной личности.

В рамках культурной парадигмы педагогики большое значение приобретает духовное измерение образования, которое выходит за рамки простого освоения знаний и умений. Духовность здесь понимается как внутренняя осознанность, морально-этические ориентиры, стремление к гармонии с собой, обществом и природой [8, с. 370–396; 5, с. 159–184].

Духовное воспитание включает:

- формирование ценностей, основанных на уважении к жизни, справедливости и сострадании (Маслоу, 1943; Фромм, 1947);
- развитие интуиции и творческого начала (Федотова, 2010);
- воспитание ответственности за свой выбор и действия;
- поддержку поиска смысла и предназначения в жизни (Выготский, 1934).

Практические методы включают:

- этические дискуссии и диалоги, стимулирующие рефлекссию и моральное мышление (Хабермас, 1981) [6, с. 35–40];
- творческие проекты, направленные на выражение внутреннего мира и культурного наследия (Элкинс, 2003) [4, с. 12–19, 44–59];
- различные техники для развития внутренней сосредоточенности и эмоциональной устойчивости (Кабат-Зинн, 1994; Федотова, 2010) [7, с. 10–27; 2, с. 45–60].

В педагогической практике такие подходы способствуют созданию образовательной среды, поддерживающей гармоничное развитие личности, где ребёнок чувствует себя значимым и способен к созидательной деятельности.

Для практической реализации культурной парадигмы педагогики целесообразно выделить несколько пилотных шагов:

- экспериментальные школы – создание и апробация моделей «школы как культурной экосистемы» на базе отдельных образовательных учреждений, где тестируются новые формы организации пространства, времени и взаимодействия;
- культурно-образовательные проекты – внедрение междисциплинарных программ («Школа и музей», «Школа и театр», «Наука и искусство для детей»), интегрирующих учебный процесс с живыми культурными практиками;
- учительские модули в вузах – разработка курсов для будущих педагогов по темам «Учитель как культурный архитектор», «Проектирование образовательной среды», «Методы культурного воспитания»;
- сетевые сообщества – формирование образовательных кластеров, объединяющих школы, вузы, учреждения культуры и местные сообщества для обмена опытом и реализации совместных инициатив;
- новые формы оценки – внедрение портфолио достижений, творческих проектов и рефлексивных практик как обязательной части образовательного процесса.

Такая поэтапная стратегия позволит не только апробировать культурную парадигму в реальных условиях, но и выработать механизмы её масштабного внедрения в образовательную систему.

Заключение. В статье рассмотрена необходимость переосмысления педагогики XXI в. с переходом от функциональной трансляции знаний к формированию живой культурной среды, которая поддерживает целостное развитие личности. Обоснована культурная парадигма образования, включающая методологический переход к сотворчеству и диалогу, а также практическая модель школы как культурной экосистемы. Особое внимание уделено переосмыслению образовательных результатов и духовному измерению педагогики, что является ключевым для воспитания целостного человека культуры.

Внедрение этих концепций требует изменения не только образовательных программ, но и философии обучения, подготовки педагогов и организационной культуры школы. Перспективы развития культурной педагогики связаны с интеграцией культурных, этических и духовных практик, что позволит создать образовательную систему, отвечающую вызовам современного мира и формирующую гармоничную личность.

RETHINKING 21ST-CENTURY PEDAGOGY: FROM KNOWLEDGE TRANSMISSION TO CULTURAL ENVIRONMENT FORMATION

Hakobyan Tigranuhi

*PhD in Pedagogy, Assistant,
Yerevan State University,
Republic of Armenia,
tigranuhi.hakobyan@ysu.am*

Summary

The modern education system is experiencing an identity crisis caused by a change in civilizational landmarks and the acceleration of socio-cultural processes. Pedagogy formed in the industrial era is unable to adequately respond to the challenges of the 21st century. There is a need to rethink its conceptual foundations: from the functional transmission of knowledge to the formation of a living, cultural and value environment capable of supporting the holistic development of the individual. The article attempts to theoretically substantiate the cultural paradigm of pedagogy as a strategy for the future, in which school becomes not only a place of learning, but also a space for meaning-making and cultural education.

Relevance of the article. Traditional models of pedagogy, focused on the transmission of knowledge, are no longer effective in meeting the needs of personal development in the context of globalization and digitalization. This makes it urgent to search for new paradigms that will ensure the holistic development and cultural education of students.

The aim of the article is to theoretically substantiate the cultural paradigm of 21st-century pedagogy and propose a practical model of school as a cultural ecosystem that promotes the holistic development of the individual.

The objectives of the study are to discover the theoretical foundations of the cultural paradigm of education, to develop a practical model of the school as a cultural ecosystem, to rethink the criteria for assessing educational results taking into account personal and cultural development, and to consider the role of the spiritual dimension in the pedagogical process.

The novelty of the article lies in the substantiation of the cultural paradigm of pedagogy of the 21st century, which combines theoretical foundations (humanistic, cultural-historical and spiritual pedagogy) and a practical model of school as a cultural ecosystem, where the key results of education are not knowledge, but personal dynamics, cultural involvement and spiritual development.

- Observation of collaborative discussions and problem-solving processes
- Analysis of digital participation in polling and mind-mapping activities
- Review of critical viewing guide responses and analytical notes.

Summative Assessment

- Evaluation of analytical writing task using a rubric focusing on:
 - o Evidence-based reasoning
 - o Critical evaluation of sources
 - o Academic language usage
 - o Synthesis of multiple perspectives.

Self-Assessment

- Reflection journals documenting learning progression
- Peer evaluation of collaborative contributions
- Goal-setting for continued critical thinking development.

Differentiation and Accommodation

For Advanced Learners

- Additional primary source materials for deeper analysis
- Leadership roles in collaborative activities
- Extended writing tasks with higher-order thinking prompts.

For Struggling Learners

- Graphic organizers for information processing

- Vocabulary support with visual aids
- Modified reading materials with guided questions
- Partner support during complex analytical tasks.

For English Language Learners

- Academic vocabulary pre-teaching with visual supports
- Sentence frames for structured discussions
- Multilingual resources when available
- Extended processing time for written tasks.

Extension Activities

- Research project on local climate impacts and community solutions
- Creation of multimedia presentations on specific climate topics
- Participation in campus sustainability initiatives
- Interview projects with environmental professionals.

Materials Checklist

- Laptops/tablets for digital activities
- Video projection equipment
- Printed reading materials and handouts
- Whiteboard markers and flip chart paper
- Access to interactive software platforms
- Timer for activity management
- Assessment rubrics and feedback forms.

Thus, integrating sustainability literacy into English for Specific Purposes (ESP) instruction is a crucial pedagogical shift that moves beyond traditional language acquisition. It advocates for Content-Based Instruction (CBI) as an effective methodology, where teaching is organized around substantive environmental content. This approach enables students to develop critical thinking and problem-solving skills alongside their linguistic competencies. By using the language for functional, real-world purposes, learners are transformed into more informed and environmentally conscious individuals prepared for the modern service sector.

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ (ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՄԱԿԱՆԴՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

Նալբանդյան Նելլի,

մանկավարժական գիտությունների թեկնածու,

Շիրակի պետական համալսարան,

Օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս,

Հայաստանի Հանրապետություն

nelly.nalbandyan1@gmail.com

Ամփոփում

Կայուն զարգացման հայեցակարգի ինտեգրումը «Անգլերենը մասնագիտական նպատակների համար» (ESP) առարկայի դասավանդման գործընթացում կրթական նշանակալի բարեփոխում է, որ միտված է խթանելու ուսանողների գլոբալ քաղաքացիության ու բնա-

պահպանական պատասխանատվության գիտակցումը: Թեև որոշ մանկավարժներ կարող են խուսափել բնապահպանական վիճահարույց թեմաների քննարկումից, սովորողներին կլիմայի փոփոխության և ժամանակակից այլ մարտահրավերների հաղթահարմանն ուղղված անհրաժեշտ գիտելիքներով զինելը դարձել է ժամանակի հրամայական: Այս մոտեցումը, որը հայտնի է նաև որպես «կանաչ մանկավարժություն» կամ «կրթություն հանուն կայուն զարգացման», էապես բարձրացնում է ուսումնառության արդյունավետությունը:

Հոդվածում հիմնավորվում է Բովանդակության վրա հիմնված ուսուցման մոդելի կիրառման նպատակահարմարությունը, որի շրջանակում լեզվի ուսուցումը կազմակերպվում է բնապահպանական բովանդակության հիման վրա: Այս մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում սովորողներին զարգացնելու լեզվական կարողությունները, ինչպես նաև կիրառելու անգլերենը՝ որպես իրական խնդիրների լուծման գործիք: Սա նպաստում է նաև բարձր իրազեկվածությամբ ու էկոլոգիական գիտակցությամբ օժտված մասնագետների պատրաստմանը, որոնք կհամապատասխանեն ժամանակակից աշխատաշուկայի, մասնավորապես սպասարկման ոլորտի պահանջներին: Կլիմայական ճգնաժամի թեմայով մշակված դասի պլանը լավագույն օրինակ է ներկայացնելու տեսական գիտելիքի ու դրա գործնական, առարկայական-մասնագիտական կիրառության արդյունավետ համադրման հնարավորությունները:

***Բանալի բառեր՝** զրոքալ քաղաքացիություն, բնապահպանական պատասխանատվություն, քննադատական մտածողության հմտություն, անգլերենը՝ որպես օտար/երկրորդ լեզու, խնդիրների լուծման սխեմայացիա:*

ИНТЕГРАЦИЯ КОНЦЕПЦИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ В ОБРАЗОВАТЕЛЬНУЮ ПРОГРАММУ УНИВЕРСИТЕТСКОЙ СПЕЦИАЛЬНОСТИ «СЕРВИС» (НА ПРИМЕРЕ ПРЕПОДАВАНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА)

Налбандян Нелли,

Кандидат педагогических наук,

Ширакский государственный университет,

Преподаватель кафедры иностранных языков и литературы,

Республика Армения

nelly.nalbandyan1@gmail.com

Аннотация

Интеграция грамотности в области устойчивого развития в преподавание английского языка для специальных целей (ESP) представляет собой важнейший педагогический сдвиг, выходящий за рамки традиционного овладения языком и направленный на формирование глобальной гражданственности и экологической ответственности. Хотя некоторые преподаватели могут избегать спорных экологических тем, необходимость вооружить студентов знаниями для решения реальных проблем, таких как климатический кризис, имеет первостепенное значение. Этот подход, часто называемый «зелёным образованием» или образованием в интересах устойчивого развития, обогащает учебный процесс, делая его более содержательным и вовлекающим. Используя экологическую тематику в качестве основы для языковой практики, студенты не только совершенствуют свои языковые компетенции, но и развивают навыки критического мышления и решения проблем.

В статье отстаивается модель обучения на основе содержания (Content-Based Instruction, CBI), которая организует преподавание языка вокруг значимого экологического контента. Этот метод позволяет учащимся использовать английский язык для решения функциональных, реальных задач, тем самым трансформируя их в более информированных и экологически сознательных личностей, подготовленных к требованиям современного сектора услуг. Предлагаемый

план урока, посвящённый климатическому кризису, служит примером того, как можно соединить теоретические знания с их практическим, узкопрофильным применением.

Ключевые слова: глобальная гражданственность, экологическая ответственность, навык критического мышления, английский как иностранный/второй язык, симуляция решения проблем.

References:

1. Ali S., Green pedagogies in EFL: Promoting environmental literacy through language teaching. *Journal of Language and Ecology*, 4(1), 2022, 56-72.
2. Bhusal D.R., English language teachers' perceptions on integrating environmental education. *i-manager's Journal on English Language Teaching*, 11(3), 2021, p.11-19. DOI:10.26634/jelt.11.3.17696
3. Brown H.D., 50 simple things you can do to teach environmental awareness and action in your English language classroom. *The Language Teacher*, 15 (8), 1991, 4–5.
4. Cotton D.R.E., Teaching controversial environmental issues: Neutrality and balance in the reality of the classroom. *Educational Research*, 48 (2), 2006, 223–41.
5. Dogan S., Sustainability and language education: Enhancing motivation through environmental themes, *Language Learning Journal*, 51(2), 2023, 189-203.
6. Garner M. & Borg E., An ecological perspective on content-based instruction, *Journal of English for Academic Purposes*, 4(2), 2005, 119–134.
7. Paterson J., Integrating environmental education. *Education Digest*, 75 (7), 2010, 38–42.
8. Richards C.J. & Rodgers T., *Approaches and Methods in Language Teaching* (2nd ed.). Cambridge University Press, United Kingdom, 2001.
9. Snow M., «Content Based and Immersion Models for Second and Foreign Language Teaching», in M. Celce-Murcia, (Ed.), *Teaching English as a Second or Foreign Language*, (3rd ed.). Heinle & Heinle, Boston, 2001, pp. 303–318.
10. Tang Y.C., *The preliminary study for incorporating environmental education into English curriculum and teaching*. Dahan, Taiwan: Dahan Institute of Technology, 2009.

Получено: 27.08.2025

Received: 27.08.2025

Рассмотрено: 18.09.2025

Reviewed: 18.09.2025

Принято: 23.10.2025

Accepted: 23.10.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**«ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՑ ԳԼԽԱՐԿՆԵՐ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱԴՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Արզումանյան Արմենուհի

*բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն,
armenuhiarzumanyan@mail.ru
<https://orcid.org/0000-0002-8482-7683>*

Ամփոփում

«Մտածողության վեց գլխարկ» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառումը գրականության դասավանդման գործընթացում՝ վերտառությամբ հողվածում փորձել ենք ցույց տալ վերոնշյալ մեթոդի կիրառման յուրահատկությունները՝ պայմանավորված ուսուցանվող նյութի բնույթով, գաղափարական հարցադրումների ընդգրկվածությամբ, քննության առարկա թեմայի տարակերպ գնահատումների, աշակերտների տարբեր կարծիքների հնարավորությամբ: Դիտարկել ենք մեթոդի կիրառման սկզբունքները՝ ըստ մեթոդի բովանդակային առանձնահատկությունների: Հետաքրքիր շեշտադրումներով բացահայտվել են վերոնշյալ մեթոդի էությունը, տվյալ ձևաչափով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով և հիմնավորելով դասավանդման այդ եղանակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

«Մտածողության վեց գլխարկ» մեթոդի կիրառմամբ շեշտադրվել են որոշ գրական երկերի ուսուցման առանձնահատկությունները: Վերոնշյալ ուսուցման եղանակով քննաբանվել են գրական երկի վերլուծության արդյունավետ միջոցները, որոնք նպաստում են ուսուցանվող նյութի բազմաշերտ ուսումնասիրությանը, աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը:

Շեշտադրվել են մեթոդի կիրառման մի շարք առավելությունները՝ քննաբանվող հարցադրման բազմաշերտ մեկնաբանում, տարբեր դիտանկյուններից ուսուցանվող նյութի համակարգում, թեմայի ավելի խորքային իմացություն:

***Բանալի բառեր և բառակապակցություններ՝** մտածողության գլխարկներ, գույների խորհրդաբանություն, քննադատական-վերլուծական մտածողություն, գաղափարական հարցադրումներ, հոգեբանական շերտեր:*

Հոդվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել «Մտածողության վեց գլխարկ» ուսուցման մեթոդի էությունը, դրա՝ տարբեր մոտեցումներով կիրառման հնարավորությունները, որոնք պայմանավորում են ուսուցանվող նյութի բազմաշերտ ուսումնասիրություն:

Հետազոտության հիմնախնդիրն է բացահայտել «Մտածողության վեց գլխարկ» ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի առավել խորքային վերլուծություն, քննարկվող հարցադրման բազմաշերտ դիտարկումների հնարավորություն, որոնք նպաստում են աշակերտների քննադատական մտածողության զարգացմանը, համեմատական-վերլուծական խոսք կառուցելու հմտությունների ձևավորմանը:

Մեթոդական գրականության մեջ կան վերոնշյալ հիմնախնդիրն նվիրված մի շարք գիտական հետազոտություններ (Rebec E. Metody generirovaniya novyh idey <https://www.e-xecutive.ru/quorums/229-metody-generirovaniya-novyh-idey>, Rementsova N. Metod "Shest shlyap myshleniya" Edvarda de Bono dlya razvitiya navykov raboty s informatsiey. <http://www.trizway.com/art/form/348.html>, Edvarda de Bono E., Shest shlyap myshleniya, Piter Publishing, 1997, Halpern D., Psihologiya kriticheskogo myshleniya, Piter, 2000, 512 s.- https://royallib.com/read/halpern_dayana/psihologiya_kriticheskogo_mishleniya.html#0): Նրանք փորձել են յուրովի ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին բնորոշ առանձնահատկությունները, կիրառման յուրահատկությունները:

Հետազոտության նորույթը: Բացահայտվել են «Մտածողության վեց գլխարկ» ուսուցման մեթոդի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի խորքային վերլուծության հնարավորություն, ուսումնասիրվող գրական ստեղծագործության՝ տարբեր դիտանկյուններից կատարվող քննարկում, տարակերպ կարծիքների համադրում, երևույթների բազմակողմանի վերլուծություն, աշակերտների քննադատական մտածողության զարգացում:


Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ուսուցման ժամանակակից մեթոդաբանության պահանջներով՝ դիտարկել գրական երկերի ուսուցման գործընթացը՝ այն դարձնելով ժամանակակից կրթական ծրագրերին համահունչ: Հնդվածում ցույց ենք տվել «Մտածողության վեց գլխարկ» ուսուցման մեթոդի կիրառման արդյունավետությունը, դրա օգնությամբ գեղարվեստական ստեղծագործության առավել բովանդակային ու բազմաշերտ ուսումնասիրության հնարավորությունները:

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին. «Մտածողության վեց գլխարկ» ուսուցման մեթոդը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը, աշակերտների՝ գեղարվեստական երկի հերոսների, գաղափարական հարցադրումների տարբեր դիտանկյուններից կատարած քննարկումների հնարավորությանը, առաջադրված խնդրի բազմաշերտ ուսումնասիրության հմտությունների ձևավորմանը, դասը առավել հետաքրքիր ու բովանդակալից դարձնելուն:

Հիմնական նյութի շարադրանք: «Մտածողության վեց գլխարկներ» ուսուցման ժամանակակից մեթոդի հեղինակը հոգեբան, ստեղծագործ մտածելակերպի ոլոր-

տում փորձագետ Էդուարդ դե Բոնոն է, որն այս մեթոդի կիրառմամբ ավելի արդյունավետ դարձրեց խմբային քննարկումը, օգնեց հետևողականորեն պլանավորել և կատարելագործել մտածելու գործընթացը: Մեթոդը քննադատական մտածողության զարգացման միջոցներից է [5]:

Քննադատական մտածողությունը հաճախ համարում են սառը ու հույզերից զուրկ: Սա ճիշտ մոտեցում չէ: Որևէ խնդրի ցանկալի լուծումը հաճախ պայմանավորված է լինում արժեքների ընտրությամբ, զգացմունքների արտահայտմամբ ու սեփական հակումների ցուցադրմամբ, ինչպես նաև, լավ արդյունքի հասնելու համար վատ չի լինի խնդրին նայել այլ մարդկանց տեսանկյունից: Տեսակետի այսպիսի փոփոխությունն ավելի շուտ մեծացնում է հուզականությունը, քան փոքրացնում: Բացի դրանից՝ քննադատական մտածողությունն իր հոգեբանական հիմքերով հաշվի է առնում մտածողության ու զգացմունքների կապը: Հուզականությունը, ստեղծագործական երևակայությունը, արժեքային ներքին մղումները քննադատական մտածողության բաղադրիչ մասեր են [7, 25]:



Մեթոդի հիմքում զուգահեռ մտածելու, մտքեր փոխանակելու, միմյանց հակադարձելու կամ համաձայնվելու ճանապարհով նյութի ավելի խորությամբ քննարկման գործընթացն է: Մեթոդի հեղինակը առաջարկում է մտածողության վեց ուղղություն՝ դրանք ներկայացնելով տարբեր գույնի գլխարկների տեսքով: Գունամտածողության ավանդական ընկալումների տիրույթում ամբողջանում են գլխարկների բնորոշումները: Քննարկմանը մասնակցող յուրաքանչյուր աշակերտ (խումբ) հագնում է համապատասխան գույնի գլխարկը՝ առաջնորդվելով իր գլխարկի գույնի բովանդակային ուղղվածությամբ:

Մեթոդը կիրառելիս պետք է կատարել հետևյալ քայլերը՝

- . ընտրել քննարկվող հարցադրումը,
- . կատարել գլխարկների բաշխում,
- . ընդգծել գլխարկների խորհրդաբանությունը,
- . յուրաքանչյուրի համար նախատեսել ելույթի կոնկրետ ժամանակահատված,
- . համադրել բոլորի կարծիքները,
- . ամփոփել բարձրաձայնված բոլոր տեսակետները,
- . համակարգել վերջնարդյունքը:

«Մտածողության վեց գլխարկներ» մեթոդի կիրառումը շատ հետաքրքիր և արդյունավետ է գրականության դասավանդման գործընթացում: Այն կիրառվում է նյութի ամփոփման փուլում: Մեթոդը նպաստում է աշակերտի բազմաշերտ մտածողության զարգացմանը: Օգնում է զուգահեռ մտածողության ընթացքում հանգել ճիշտ որոշման՝ երևույթը գնահատելով տարբեր տեսանկյուններից: Այս մեթոդը հնարավորություն է տալիս երևույթները քննարկելու ավելի խորքային դիտարկումներով՝ բացահայտելով գրական կերպարների հոգեբանական բարդ աշխարհը, ստեղծագործության գաղափարական հարցադրումները:

Գլխարկի գործոնը հոգեբանական ազդակ է, որ աշակերտը կենտրոնանա իրեն առաջադրված մտածողության դաշտում: Եվ մինչ դասի սկսվելը աշակերտը կարող է իր համար պատրաստել հարցեր, որպեսզի մտածողության իր ուղղվածությունը արդյունավետ դրսևորվի:

1.Կապույտ գլխարկը խորհրդանշում է գործընթացի կառավարումը, համակարգումը, ամբողջացումը:

Այս գլխարկը կրող աշակերտը պատասխանատու է քննարկման բարեհաջող ընթացքի, նյութի տարաշերտ վերլուծության, դասընթացի արդյունավետ ավարտի համար: Գիտակցելով իր առջև դրված խնդիրները՝ նա պետք է համակողմանի քննարկման շնորհիվ կառավարի ողջ գործընթացը՝ ապահովելով ցանկալի վերջնարդյունք:

Կապույտ գլխարկը ուղղակիորեն չի առնչվում լուծմանը: Կապույտ գլխարկը կապված է մտային գործընթացի կազմակերպման ու ղեկավարման հետ: Ի տարբերություն մյուս հինգի՝ նախատեսված է գաղափարների իրականացման գործընթացը կառավարելու ու խնդիրների լուծման աշխատանքները համակարգելու համար: Ըստ էության, այստեղ այն մասնակիցը կամ մասնակիցներն են, որոնք գնահատում են բոլոր խմբերի առաջարկները և գտնում օպտիմալ լուծումը: Այս գլխարկը կրող խումբը որոշում է, թե ինչ է նախատեսվում անել, այսինքն՝ նպատակների ձևակերպումը, իսկ վերջում՝ արդյունքների ամփոփում ու քննարկում: Այս խմբում կարող է լինել նաև ուսուցիչը [6]:

Կապույտ գլխարկը կրող աշակերտը կարող է նախապես մտորել հետևյալ հարցերի շուրջ.

ա) որքա՞ն խորությամբ է ինքը ուսումնասիրել քննաբանվող գրական ստեղծագործությունը,

բ) ծանո՞թ է ինքը գրականագիտական դաշտում եղած բոլոր կարևորագույն տեսակետներին,

գ) կարո՞ղ է գրականագետների կարծիքները ու աշակերտների տեսակետները համակարգել թեման ամբողջացնելու համար:

2. Սպիտակ գլխարկը խորհրդանշում է օրյեկտիվ մտածողություն, ուսումնասիրության ավելի մեծ դաշտ, ավելի լայն հնարավորություններ, լրացուցիչ տեղեկություններ:

Այս գլխարկը կրող աշակերտի խնդիրն է տարբեր փաստերով, լրացուցիչ տեղեկությամբ, ուսուցանվող նյութին առնչվող տեղեկատվական տարբեր աղբյուրներից ստացած միջոցներով առավել համակարգված և տարբեր կողմերից քննել տվյալ հարցադրումը:

Սպիտակ գլխարկը կրող աշակերտը կարող է նախապես մտորել հետևյալ հարցերի շուրջ.

ա) արդյո՞ք լավագույնս տեղյակ է գրական ստեղծագործության գաղափարական հարցադրումներին, գրողի պատկերակերտման արվեստի առանձնահատկություններին,

բ) ծանոթ է լրացուցիչ կարևորագույն աղբյուրներին,

գ) պատրա՞ստ է իր սուբյեկտիվ կարծիքը առաջնային չհամարել՝ հենվելով օրյեկտիվ փաստերի ու երևույթների վրա:

3. Կարմիր գլխարկը խորհրդանշում է ինտուիցիա, կանխատեսում, զգացմունքներ ու հույզեր: Այս գլխարկը կրող աշակերտը փորձում է առավել խորությամբ բացահայտել քննարկվող հարցադրման հոգեբանական կողմը, հերոսների ներքին ապրումները, հուզաշխարհը: Այս գլխարկը պետք է կրի առավել զգացմունքային աշակերտը, որն իր հուզական աշխարհի ներքին զգացողությամբ պետք է կարողանա թափանցել գրական կերպարների հոգեբանական բարդ աշխարհի խոր շերտերը՝ զգուշությամբ մեկնաբանելով նրանց գործողությունները:

Կարմիր գլխարկը կրող աշակերտը կարող է նախապես մտորել հետևյալ հարցերի շուրջ.

ա) Ի՞նչ է ինքը՞ զգում գրական կերպարի փոխարեն:

բ) Ինչպե՞ս կվարվեր ինքը՞ նման իրավիճակում:

գ) Որքա՞նով է իր համար ընդունելի գրական կերպարի տվյալ քայլը:

դ) Ի՞նչ է հուշում իր ինտուիցիան:

Այսինքն՝ աշակերտը, մի պահ իրեն պատկերացնելով այդ կարգավիճակում, ավելի լավ կհասկանա կերպարի հոգեբանությունը, նրա ներաշխարհը:

4. Սև գլխարկը խորհրդանշում է զգուշավորություն, մերժողական քննադատություն, հոռետեսություն: Այս գլխարկը կրող աշակերտի քննադատության կենտրոնում են անընդունելի երևույթները, բացասական կերպարները: Նա անընդհատ վեր է հանում երևույթի առավել խոցելի կողմերը, կերպարների անընդունելի, ոչ ցանկալի հատկանիշները:

Սև գլխարկը կրող աշակերտը կարող է նախապես մտորել հետևյալ հարցերի շուրջ.

ա) Ինքը՞ երբևէ կարդարացնե՞ր նման բացասական քայլը:

բ) Ինչպե՞ս ինքը կհաղթահարեր այդ բարդ իրավիճակը՝ ունենալով հասարակական կարծիքի ճնշումներ:

գ) Կա՞րողոք գրական կերպարի արարքը արդարացնող որևէ հանգամանք, որը գուցե իր համար ընդունելի չէ, բայց քննարկման արժանի է:

5. Դեղին գլխարկը խորհրդանշում է լավատեսություն, ցանկալի սպասելիքներ, դրական երևույթների, բարուն ու գեղեցիկին հավատալու կարողություն: Այս գլխարկը կրող աշակերտը անընդհատ շեշտադրում է նյութին առնչվող դրական կողմերը, դրական հերոսների վարքագիծը դարձնում օրինակելի:

Դեղին գլխարկը կրող աշակերտը նախապես կարող է մտորել հետևյալ շեշտադրումներով՝

ա) Ամեն ինչ լավ է լինելու, պետք է զինվել համբերությամբ:

բ) Պետք է կարողանանք այս անգամ էլ հաղթահարել դժվարությունները:

գ) Ցանկացած վատ իրավիճակից պետք է ավելի կոփվել և հոգեպես ամրանալ:

6. Կանաչ գլխարկը խորհրդանշում է ստեղծագործական մտորումներ, նորարար գաղափարներ, ցույց է տալիս դժվարությունները հաղթահարելու նոր ճանապարհը՝ ցանկացած վատ երևույթի մեջ փորձելով գտնել դրական գծեր, որոնք կօգնեն գտնել դեպի հաղթանակ տանող նոր մտքեր, նոր ճանապարհներ: Այդ պատճառով ցանկալի է, որ այս գլխարկը կրող աշակերտը խոսի սև գլխարկից հետո:

Կանաչը թարմ սաղարթների, առատության ու պտղաբերության գույնն է: Կանաչ գլխարկը խորհրդանշում է նոր գաղափարների ստեղծագործական սկիզբն ու ծաղկունքը: Այն ստեղծագործականության ու ստեղծարարության գլխարկն է: Ենթադրում է նոր մոտեցումներ, ստեղծագործ և ուղղորդված մտածելակերպ, փորձում է գտնել այլընտրանքներ և կատարել փոփոխություններ, դիտարկել բոլոր տեսակի դրսևորումները, առաջարկել նոր գաղափարներ, նորացնել եղածներն ու դիտարկել այլոց մշակումները, չվանել ոչ ստանդարտ ու սադրիչ մոտեցումները, փնտրել ցանկացած այլընտրանք: Այս խմբի անդամը կամ անդամները առաջարկում են նոր գաղափարներ, հասկացություններ, այլընտրանքներ, անգամ եթե դրանք ֆանտաստիկ ու անսպասելի են [4, 171-208]:

Կանաչ գլխարկ կրող աշակերտը կարող է նախապես մտորել հետևյալ հարցերի շուրջ.

ա) Պետք է փորձել նոր, հետաքրքիր ու արդյունավետ մոտեցումներ գտնել:

բ) Չպետք է վախենալ ստեղծագործական համարձակ ու ինքնատիպ քայլ կատարելուց, որը սկզբում կարող են ընկերները ճիշտ չհասկանալ:

գ) Ստեղծագործական նոր մոտեցումները տալիս են ուսումնասիրության նոր հնարավորություններ:

Էդուարդ դե Բոնոն զարգացնում է «մտածողության վեց գլխարկների» տեսությունն այնպես, որ կարողանան այդ գլխարկները տեղադրել, փոխել, հանել և այլն:

Արդյունքում հեղինակի այս տեխնիկան օգնում է տեսությունը դարձնել ընկալման համար ավելի դյուրին՝ նույնիսկ ամենափոքր տարիքի սովորողների համար: Հետևաբար վեց գլխարկների տեխնիկան հաճախ օգտագործվում է դասերի ու թրեյնինգների ընթացքում ինտելեկտի ու ստեղծարարության զարգացման համար [5]:

Մեթոդը կարելի է կիրառել մի քանի մոտեցումներով:

1. Յուրաքանչյուր աշակերտի տրվում է մեկ գույնի գլխարկ, և քննարկման ընթացքում նա միշտ գործում է այդ գույնի խորհրդաբանության դաշտում:

2. Կարելի է դասի ընթացքում հանպատրաստի փոխել աշակերտների գլխարկները՝ փորձելով աշակերտների արագ կողմնորոշվելու հմտությունները:

3. Կարելի է կիրառել անհատական տարբերակով:

4. Կարելի է կիրառել խմբային տարբերակով:

Մեթոդը կարելի է կիրառել Նար-Դոսի «Մեր թաղը» նովելաշարի «Ադամամուրին» պատմվածքի ուսուցման ժամանակ՝ զուգահեռ դիտարկելով Ս. Զորյանի «Անհայտ թելեր» պատմվածքը: Նովելաշարի ամփոփման փուլում, երբ ուսուցիչը բացատրել և աշակերտների հետ քննարկել է նովելաշարի գեղարվեստական արժեքը, գաղափարական հարցադրումները, հեղինակի պատկերակերտման արվեստի առանձնահատկությունները, կարելի է «Մտածողության վեց գլխարկներ» մեթոդի կիրառմամբ ամբողջացնել «Ադամամուրին» նովելը, որը այդ շարքում ամենահոգեցունց պատմությունն է: Այդ պատճառով այն առավել մանրակրկիտ հոգեբանական դիտարկումներով և տարակերպ հարցադրումներով կարելի է ամփոփել՝ շեշտադրելով պատմվածքի դաստիարակչական արժեքը: Կատարվել է մարդկային արարքներից ծանրագույնը. սոցիալական անհաղթահարելի պայմաններում գտնվող մայրը, որը չէր կարողանում պահել իր չորս երեխաներին, անգործությունից սպանում է նորածին երեխային...: Կատարվել է սարսափելին...: Դասարանում քննարկումները կարող են թեժանալ, յուրաքանչյուր գլխարկ կրող աշակերտ իր գլխարկին տրված մտածողության դիրքերից կարող է մեղադրել, քարկոծել, փորձել հասկանալ նրա ծանր հոգեվիճակը, նոր լուծումներ փնտրել, գործողությունների ընթացքին հակադրվել..., մի խոսքով, տարբեր դիտանկյուններից քննարկումը հնարավորություն կտա հասկանալու կատարվածի հոգեբանական, բարոյական բոլոր դրդապատճառները, մայրական հույզերի բարդ ներաշխարհը, կերպարը վերլուծել տարբեր կողմերից:

Սպիտակ գլխարկ կրող աշակերտը, որը լրացուցիչ տեղեկություններով պետք է մասնակից դառնա թեմայի քննությանը՝ նպաստելով նյութի բազմաշերտ ուսումնասիրությանը, կարող է հերոսուհու՝ զավակին սպանող մոր կերպարին հակադրել Ս. Զորյանի «Անհայտ թելեր» պատմվածքի հերոսուհու քայլը. սոցիալական ծանր վիճակում գտնվող մայրը մի պահ համաձայնվում է երեք զավակներից մեկին տալ մեծահարուստ ընտանիքին, որը երեխաներ չունի: Մակայն անմեկնելի զգացողություններ են արթնանում մոր ներաշխարհում, գիտակցում է արած քայլի

ծանր հետևանքները. մայրական սիրտը հաղթահարում է մի պահ իր ներսում արթնացած հոգեբանական թուլությունը, ոչ սթափ մտածողությունը, և հաղթում է կամային ճիշտ քայլը: Երկու երեխային կերակրողը կպահի նաև երրորդին. ոչ մի հարստություն, բարեկեցիկ կյանք չեն կարող երեխային տալ մայրական քնքշանք ու գորով, մայրական հոգու ջերմություն:

Սյուժետային այս հակադիր հանգուցալուծումները աշակերտների մոտ տարբեր մտքեր ու կարծիքներ կարթնացնեն, և նյութի քննարկումը կդառնա տարակերպ մոտեցումներով հագեցած: Աշակերտները կարող են խմբերով կամ անհատական դիտարկումներով իրենց հանձնարարված գլխարկի խորհրդաբանության դաշտում քննարկել խնդիրը: Կարմիր գլխարկ կրող աշակերտը, երևույթը քննելով հերոսուհու հոգեբանական բարդ հույզերի տիրույթում, պետք է փորձի հնարավորինս տեսանելի դարձնել այն բարդ ու անելանելի վիճակը, որը դժբախտ մորը ստիպեց այդ քայլը կատարել: Սարսափելի թշվառությունը, սոցիալական ծանր վիճակը, չաշխատող ու հարբեցող ամուսնու գործոնը, ավագ որդու վատ միջավայրում հայտնվելը, օգնող ուժի բացակայությունը, ձմռան սառնամանիքը հաղթահարելու անկարողությունը. փաստեր, որոնց գործադրմամբ նա պետք է հնարավորինս փորձի հասկանալի դարձնել դժբախտ մոր հուզաշխարհը, որն էլ դրդեց նրան այդ քայլը կատարել: «Նա կամաց վեր կացավ և ցրտից սարսալով մոտեցավ մորը: Մոր ծնկների արանքից մի պստիկ, շատ պստիկ մանուկ տեսավ, մերկ, կարմիր: Մայրը, ամբողջ մարմնով խոնարհված նրա վրա, ատամները պինդ սեղմել էր իրար և ձեռքերով հույս էր տալիս մանկան կոկորդը՝ շարունակ կրկնելով սեղմած ատամների միջից. «Ի՞նչ եմ անում... ի՞նչ եմ անում... քի՞չ ունեմ...քե՞զ ոնց պահեմ...քե՞զ ոնց պահեմ...»: Մանուկը գլուխը ետ էր գցել, աչքերը փակ, և տարօրինակ կերպով շարժում էր պստիկ կարմիր ոտներն ու ձեռքերը:

Սոսնեն հանկարծ ճչած. ինքն էլ չէր իմանում – ուրախությունի՞ց, որ մայրը երեխա էր բերել, թե՞ սարսափած այն բանից, ինչ որ անում էր մայրը իր նորածին մանկանը» [3, 100]: Կարմիր գլխարկը կրող աշակերտի այս դիտարկումներին պետք է հակադարձի սև գլխարկը կրող աշակերտը՝ շեշտադրելով, որ ոչ մի հանգամանք, հոգեվիճակի ծանր դրսևորում չեն կարող արդարացնել նորածին մանկան՝ մոր կողմից կատարված սպանությունը: Նրա այս շեշտադրումներին զուգահեռ՝ կանաչ գլխարկը կրող աշակերտը կարող է առաջարկել լուծման նոր ճանապարհներ՝ երեխային հանձնել մանկատուն, տալ մեկին, ով կարող էր նրան խնամել, դնել ինչ-որ մեկի տան մոտ..., լուծումներ, որոնք չարյաց փոքրագույնն են, գոնե երեխայի կյանքը կփրկվեր: Դեղին գլխարկը կրող աշակերտը կարող է շեշտադրել ընկերոջ առաջարկած այս լուծումների դրական ու մարդասիրական կողմերը. անպայման կգտնվեն բարի մարդիկ, որոնք կցանկանան երեխային օգնել կամ որդեգրել, նյութական ու հոգեբանական աջակցություն ցույց տալ, հոգեպես և ֆիզիկապես հյուծված մորը օգնության ձեռք մեկնել: Նա կարող է Ս. Զորյանի «Անհայտ թելեր» պատմվածքի հերոսուհու արարքով ցույց տալ մայրական սրտի անհայտ թելերը, որոնք կարող են անհնարինը հնարավոր դարձնել. «–Աստված, դրա համար չի ինձ

երեխա տվել, որ ես բաժանեմ: Չէ՛, Երե՛մ, վրես բարկանաս ոչ...: Երեխա տվողը ապրուստ էլ կտա. ես գիշերներն էլ կաշխատեմ. իմ երեխին ուրիշին չեմ տա...

Եվ նա կրկին ու կրկին համբուրեց աղջկա ճակատը, այտերը, մազերը: Համբուրում, ժպտում էր ինքն իրեն, և ամեն բան այժմ պայծառ, ուրախ էր թվում նրան... [1, 334]:

Իսկ կապույտ գլխարկը կրող աշակերտը, որն ամբողջ դասի ընթացքում լսում էր ընկերներին, կազմակերպում քննարկումների հաջորդականությունը, վերջում պետք է ամփոփի հարցադրումը: Նա, ամբողջացնելով կատարված ողբերգության մասին ընկերների կողմից բարձրաձայնված բոլոր դիտարկումները, պետք է ամփոփի նյութը՝ շեշտը դնելով գրական երկի դաստիարակչական նշանակության վրա. ոչ մի իրավիճակ, հանգամանք չեն կարող արդարացնել նորածին մանկան սպանությունը, պետք է միշտ ուժեր գտնել ցանկացած դժվարություն հաղթահարելու, անելանելի վիճակից դուրս գալու համար...

Դասի ավարտին ուսուցիչը կարող է կիրառել սովորածը պարզելու մի հետաքրքիր հնար՝ սկսել, դադարել, պահել քայլերի համադրմամբ, որն ընդգրկում է հետևյալ հարցադրումները.

- Նշե՛ք մի բան, որը կուզեք անել:
- Նշե՛ք մի բան, որը կուզեք դադարեցնել:
- Նշե՛ք մի բան, որը կուզենաք շարունակել [2, 37]:

Նման խորքային ու տարաշերտ քննարկումներից հետո վստահաբար աշակերտների պատասխանները կունենան այսպիսի բնութագիր՝ փրկել երեխայի կյանքը, դադարեցնել մանկան սպանությունը, փոքրիկին ու նրա ընտանիքին ապահովել բարեկեցիկ պայմաններով:

Եզրակացություն

«Մտածողության վեց գլխարկներ» մեթոդի կիրառումը շատ հետաքրքիր և արդյունավետ է գրականության դասավանդման գործընթացում: Այն նպաստում է ուսումնասիրվող գրական ստեղծագործության բազմաշերտ քննարկմանը, գրական կերպարների առավել խորքային բնութագրումներին, աշակերտների տարբեր կարծիքների հիման վրա նյութի տարակերպ մոտեցումներով դիտարկումներին, ինչն էլ նպաստում է աշակերտների քննադատական մտածողության, վերլուծական-համադրական խոսք կառուցելու հմտությունների ձևավորմանը:

APPLICATION OF THE MODERN TEACHING METHOD «SIX HATS OF THINKING» IN THE PROCESS OF TEACHING LITERATURE

Arzumanyan Armenui

*PhD in Philology, Associate Professor,
Yerevan State University,
Republic of Armenia,
armenuhiarzumanyan@mail.ru*

Summary

In the article entitled «The application of the modern teaching method «Six caps of thinking» in the process of teaching literature,» we tried to show the features of the application of the above

method, due to the specifics of the taught material, the inclusion of ideological (worldview) issues, the possibility of different assessments of the topic under discussion, and the different opinions of students. We have considered the principles of applying the method in accordance with the substantive features of this method. The essence of the above-mentioned method, the principles of teaching the material in this format are revealed with interesting accents; both the advantages due to the relevant features of this method of teaching and the features resulting from the purpose of teaching are indicated and justified.

Using the «Six Hats of Thinking» method, the peculiarities of teaching individual literary works were emphasized. Within the framework of this teaching method, effective methods of analyzing literary works were considered, contributing to the multi-layered study of the taught material and the development of students' critical thinking.

A number of advantages of using the method were emphasized: the multilayered interpretation of the issues discussed, the systematization of the material taught from different points of view, and a deeper understanding of the topic.

Keywords and phrases: *caps of thinking, color counseling, critical and analytical thinking, posing ideological questions, psychological layers.*

ПРИМЕНЕНИЕ СОВРЕМЕННОГО МЕТОДА ОБУЧЕНИЯ «ШЕСТЬ ШЛЯП МЫШЛЕНИЯ» В ПРОЦЕССЕ ПРЕПОДАВАНИЯ ЛИТЕРАТУРЫ

Арзуманян Арменуи

*Кандидат филологических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения,
armenuhiarzumanyan@mail.ru*

Аннотация

В статье под названием «Применение современного метода обучения "Шесть шляп мышления" в процессе преподавания литературы» мы попытались показать особенности применения вышеуказанного метода, обусловленные спецификой преподаваемого материала, включением идеологических (мировоззренческих) вопросов, возможностью различных оценок обсуждаемой темы, различными мнениями учащихся. Нами рассмотрены принципы применения метода в соответствии с содержательными особенностями этого метода. С интересными акцентами раскрыта сущность вышеуказанного метода, принципы преподавания материала в данном формате, указаны и обоснованы как преимущества, обусловленные соответствующими особенностями этого метода обучения, так и особенности, вытекающие из цели обучения.

С использованием метода «Шесть шляп мышления» были подчеркнуты особенности преподавания отдельных литературных произведений. В рамках данного метода обучения были рассмотрены эффективные методы анализа литературных произведений, способствующие многослойному изучению преподаваемого материала и развитию критического мышления учащихся.

Был подчеркнут ряд преимуществ применения метода: многослойность интерпретации обсуждаемых вопросов, систематизация материала, преподаваемого с разных точек зрения, более глубокое понимание темы.

Ключевые слова и фразы: *шляпки мышления, консультирование по цветам, критико-аналитическое мышление, постановка идеологических вопросов, психологические слои.*

Օգտագործված գրականությունը ցանկ

1. Zoryan St., Yerkeri zhoghovatsu 12 hatorov, h. 1-in, «Sovetakan grogh» hrat., Yerevan, 1977t., 524 ej. (in Armenian)

2. Khachatryan S., Usutsman ardyunavet hnarnner, Er. F. Ebert himnadram, Hayastan, 2020t., 73 ej. (in Armenian)
3. Nar-Dos, Patmvatskner, vipakner, «Luys» hrat., Yerevan, 1978t., 345 ej. (in Armenian)
4. Rebec E., Metody generirovaniya novykh idey. <https://www.e-xecutive.ru/quorums/229-metody-generirovaniya-novyh-idey> (in Russian)
5. Rementsova N., Metod «Shest' shlyap myshleniya» Edvarda de Bono dlya razvitiya navykov raboty s informatsiey. <http://www.trizway.com/art/form/348.html> (in Russian)
6. Edvarda de Bono E., Shest' shlyap myshleniya, Piter Pablishing, 1997, 256 s.
7. Halpern D., Psikhologiya kriticheskogo myshleniya, Piter, 2000, 512 s. https://royallib.com/read/halpern_dayana/psihologiya_kriticheskogo_mishleniya.html#0

Получено: 19.09.2025

Рассмотрено: 10.10.2025

Принято: 23.10.2025

Received: 19.09.2025

Reviewed: 10.10.2025

Accepted: 23.10.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԶԱԿՈՂԱԿԱՆ ԶԵՆՔԵՐԸ.
ՄԵԴԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ
ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ**

Պողոսյան Սամվել

*պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան, Հայաստանի Հանրապետություն,
poghosyansamvel@yahoo.com
<https://orcid.org/0000-0003-2478-1860>*

Եփրիկյան Արմինե

*պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, Հայաստանի Հանրապետություն,
yeprikyanarmine16@aspu.am
<https://orcid.org/0000-0003-2926-3667>*

Ամփոփում

Պատմության ուսուցման հիմնական նպատակն է գիտելիք ձեռք բերել, հմտություններ զարգացնել, հոգեբանական դիրքորոշումներ ու արժեքներ ներմուծել ու դաստիարակել: Ի թիվս 21-րդ դարի մարդու հմտությունների՝ UNICEF-ը առանձնացնում է փափուկ հմտությունները, թվային ու մասնագիտական հմտությունները, որոնք անհրաժեշտ են բոլոր երեխաներին ու դեռահասներին՝ բարելավելու կյանքի ընթացքում ուսուցման, զբաղվածության և անձնական աճի հնարավորությունները:

Կարևոր է, որ պատմության դասավանդման մեջ մեդիագրագիտության զարգացման նպատակները ոչ թե ներդրվեն դպրոցական առարկայական ծրագրից առանձին, որպես հավելյալ ուղղություն, այլ ներառվեն հենց դասի տրամաբանության մեջ: Ուստի կրթական համակարգի առջև ծառացած այս խնդիրները լուծելու հնարավոր տարբերակներն ենք առաջարկում ուրարտական և ասորեստանյան հարձակողական զենքի համեմատության թեմայի շրջանակում:

Մեր ուսումնասիրության շրջանակում ներառել ենք մի քանի դասատիպեր՝ փորձ կատարելով համատեղել ավանդական ու նորարական մեթոդները: Մեր ուշադրության առանցքում են թվային տեխնոլոգիաների ներգրավումը դասապրոցեստում, գննականության մեթոդի կիրառումը, էլեկտրոնային հարթակի ներդրումը, թանգարանային այցն ու մեթոդական որոշ հնարների ներկայացումը:

Հետազոտությունը արդիական է, քանի որ մինչ այս հետազոտությունը զինագիտությունը գրեթե չի ներառվել դասագործընթաց՝ ավանդական ու նորարական մեթոդների և ռազմավարությունների համատեղմամբ:

Ուսումնասիրության արդյունքում «Վանի թագավորության (Ուրարտու) և ասորեստանյան հարձակողական զենքերի համեմատություն» թեմայի դասավանդման համար առաջարկում ենք որոշ մեթոդներ ու ռազմավարություններ՝ ՏՏ ու գննականություն, կրթական նոր հարթակի ներդրում, դաս թանգարանում և այլն: Առաջարկվող մեթոդների միավորիչ կետը գննականության մեթոդի կիրառումն է: Մեր գիտափորձի արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ներառումը դասապրոցե-

սում բարձրացնում է սովորողների մոտիվացվածությունն ու հետաքրքրվածությունը դասավանդվող թեմայի վերաբերյալ:

Բանալի բառեր՝ պատմության դասավանդման մեթոդիկա, թվային և մեդիա տեխնոլոգիաներ, նպատակային կողմնորոշիչներ, Ուրարտու, հարձակողական զենք:

Հիմնախնդիրը: Ուսումնասիրության հիմնախնդիրն է վերհանել այն մեթոդները, որոնք կարող ենք կիրառել Վանի թագավորության հարձակողական զենքերի ուսուցման ընթացքում:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների ու հրատարակությունների կարճ վերլուծություն: Հիմնախնդրի վերաբերյալ գիտական գրականությունն առնչվում է դասավանդման մեթոդներին: Ուսումնասիրության տեսական հիմքը կազմում են մի շարք տեսաբանների (Է. Թորնդայք, Դ. Վիլինգհեմ, Ս. Բրայենթն, Ջ. Հանթոն, Ռ. Ռեյսեր, Ռ. Գայգն, Ռ. Քլարք, Մ. Մեյսն, Մ. Պոպովիչ) աշխատությունները:

Է. Թորնդայքն այն համոզմանն է, որ դասավանդման և ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասագրքերում ներկայացված նկարների կամ պատկերների նպատակային կիրառման արդյունավետությունից, քանի որ դրանք նպաստում են սովորողների ուշադրության կենտրոնացմանը: Ըստ գիտնականի՝ «ուշադրությունը մի բան է, որը հարկ է ստեղծել, այն ուժ է, որը հարկ է ուղղորդել այնտեղ, ուր անհրաժեշտ է» [33, 125]:

Ըստ Դ. Վիլինգհեմի՝ ժամանակակից մեդիա տեխնոլոգիաների կիրառմամբ անհրաժեշտ է պատմության տվյալ դասագործընթացում լուսաբանվող գերակա հասկացությունները կապակցել սովորողների հիշողության մեջ արդեն իսկ գոյություն ունեցողների հետ [34, 44]:

Ք. Սմիթն ու Է. Բլենքենշիփը, փաստում են, որ տարբեր մեդիա տեխնոլոգիաների, մասնավորապես սահիկահանդեսների կիրառմամբ, պատմական այս կամ այն թեմայի տեսողականացման միջոցով սովորողներին մղում ենք մտավոր ավելի ակտիվ գործողությունների, որոնց շնորհիվ չոր փաստերի կուտակման վրա կենտրոնանալու փոխարեն գերակա է դառնում նրանց ներգրավումը գիտելիքների համակարգման ու տրամաբանական կառուցման գործընթաց [39, 749-768]: Մ. Բրայենթն ու Ջ. Հանթոնը կարծում են, որ սահիկահանդեսների կիրառմամբ դասավանդողը սկզբունքորեն մեկտեղում է դասավանդման ու ուսուցման ոճերը՝ ձգտելով դրանց հետ համադրել այս տեխնոլոգիան [35, 129-163]: Իսկ ահա Ռ. Ռեյսերն ու Ռ. Գայգնը այն կարծիքին են, որ սահիկահանդեսների կիրառմամբ դասավանդման և ուսուցման ոճերի մեկտեղումն ու դրանց հետ այս տեխնոլոգիան համադրելու հարցադրումը հանգեցին, այսպես կոչված, «մեդիա ընտրության մոդելների» ըմբռնմանը [36, 499-512]:

Սակայն չենք կարող անտեսել նաև այն հեղինակավոր հետազոտողների կարծիքները, որոնք մեդիա դասավանդման վերաբերյալ ներկայացնում են հակառակ փաստարկներ: Այդպիսի հետազոտողներից է Ռ. Քլարքը, որը համարում է, որ մեդիա դասավանդումը հասարակ հաղորդիչ է [37, 445-459]: Ռ. Քլարքի փաստարկի

մեջ տեսնելով որոշակի գրավչություն՝ Մ. Մեյսն ու Մ. Պոպովիչը միաժամանակ այն համարում են խիստ միակողմանի ու սահմանափակ՝ որպես հիմնավորում նշելով, որ Ռ. Քլարքի ուշադրությունից դուրս է մնացել այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին դասավանդողի փորձառությունն ու դերակատարությունն է, որը, ձեռնամուխ լինելով մեդիա դասավանդման գործընթացին, ակամայից նվազեցնում է սեփական ներկայությունը, բայց շարունակում է մնալ դասագործընթացի հեղինակը, կազմակերպիչն ու իրականացնողը [38, 44]:

Հետազոտության նպատակն է վերլուծել թեմայի դասավանդման առանձնահատկությունները:

Հետազոտության նորույթը Վանի թագավորության ու ասորեստանյան հարձակողական զենքերի համեմատության ու դրանք սովորողներին ներկայացնելու մեթոդների վերհանումն է:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ նոր չափանիշները ուսուցչին հնարավորություն են տալիս ծրագրում չներառված թեմաների ուսուցում, ուստի մեր ուսումնասիրությունը ծառայում է վերոնշյալ նպատակին:

Հիմնական նյութի շարադրանք: Պատմության ուսուցման հիմնական նպատակներից է գիտելիք ձեռք բերելը, հմտություններ զարգացնելը, ինչպես նաև հոգեբանական դիրքորոշումներ ու արժեքներ ներմուծելն ու դաստիարակելը [18, 3496]:

Ի թիվս 21-րդ դարի մարդու հմտությունների (քննական մտածողություն, ստեղծագործականություն, համագործակցություն, ինքնարդյունավետություն, հաստատակամություն և այլն) [21, 3], UNICEF-ը առանձնացնում է փափուկ հմտությունները, թվային և մասնագիտական հմտությունները, որոնք անհրաժեշտ են բոլոր երեխաներին ու դեռահասներին՝ բարելավելու կյանքի ընթացքում ուսուցման, զբաղվածության ու անձնական աճի հնարավորությունները [32, 52]: Սովորողները, օգտվելով տեղեկատվական պաշարներից, կարող են՝

- կատարել հետազոտություններ,
- գտնել, վերլուծել, գնահատել, սինթեզել տարբեր աղբյուրներից ստացած տեղեկատվությունը,
- մշակել տվյալներն ու ներկայացնել արդյունքները [17, 8]:

Կրթական գործընթացում թվային տեխնոլոգիաների ներառումը նպաստում է ուսուցման որակի բարելավմանը, քանի որ ներկայացնելով փոխներգործուն, տեսողական և այլ նյութեր՝ բովանդակությունը սովորողի համար ավելի գրավիչ է դառնում: Որպես թվային տեխնոլոգիա դասավանդման գործընթացում կարելի է ներառել մուլտիմեդիա, ուսուցողական տեսանյութեր, կրթական խաղեր ու առցանց ուսուցման հարթակներ [25, 9649]: Քանի որ թվային տեխնոլոգիաները արագ զարգանում են, կրթական միջավայրը կանգնում է փաստի առջև, թե ինչպես այդ գործիքները բովանդակալից ձևով ներառեն՝ ուսուցումը խթանելու համար [16, 2105]: Չպետք է անտեսել նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման

արդյունքում սովորողների շրջանակում դրդապատճառի բարձրացման հանգամանքը [23, 12]:

Կարևոր է, որ պատմության դասավանդման մեջ մեղիագրագիտության զարգացման նպատակները ոչ թե ներդրվեն դպրոցական առարկայական ծրագրից առանձին, որպես հավելյալ ուղղություն, այլ ներառվեն հենց դասի տրամաբանության մեջ: Ուստի կրթական համակարգի առջև ծառացած այս խնդիրները լուծելու հնարավոր տարբերակներն ենք առաջարկում ուրարտական ու ասորեստանյան հարձակողական զենքերի համեմատությունը թեմայի շրջանակում:

Մեր ուսումնասիրության շրջանակում ներառել ենք մի քանի դասատիպեր՝ փորձ կատարելով համատեղել ավանդական ու նորարական մեթոդները: Մեր ուշադրության առանցքում են թվային տեխնոլոգիաների ներգրավումը դասապրոցեստում և զննականության մեթոդի կիրառումը, էլեկտրոնային հարթակի ներդրումը, թանգարանային այցն ու դասավանդման մեթոդական որոշ հնարներ:

Մուլտիմեդիայի ինտեգրմամբ հնարավորություն է ստեղծվում փոխգործակցելու համակարգչային բազայի հետ՝ զարգացնելով տեսողական և լսողական ընկալումը [26, 49]: Շատ կարևոր են ընտրությունն ու դրա դիպուկ օգտագործումը արդյունավետության գործակցի բարձրացման համար: «Բանակի կառուցվածք ու զինատեսակներ» թեմայի դասավանդման համար անհրաժեշտ է տեսողական մեղիան, քանի որ ցուցադրվում են հնագիտական նմուշների լուսանկարներ ու նկարազարդումներ [19, 38], կարելի է ընտրել նաև դասագիրքը, էլեկտրոնային գրքերը, որոնց միջոցով կիրականացվի սկզբնաղբյուրների հետ աշխատանք [27, 265]: Թեպետ տեսանյութերի [18, 3497], ինչպես նաև ֆիլմերի [30, 180-184] օգտագործումը պատմության ուսուցման մեջ նորույթ չէ, բայց կարող է լինել օգնող «գործիք»՝ զենքերը վիզուալ պատկերացնելու համար՝ զարգացնելով տեսողական ու լսողական զգայարաններն ու հիշողությունը: Հաշվի առնելով սովորողների ներկա հմտությունները՝ հնարավոր է նաև կարճ, տեղեկատվական տեսահոլովակների պատրաստումը:

Կարևոր հանգամանք է, որ սոցիալական մեղիայում իրականացվող գործունեությունը համընկնի դասի նպատակներին և նպաստի սովորողների մտածողության զարգացմանը [28, 53]: Մեր ուսումնասիրության նյութը կապվում է ուսումնական ծրագրի՝ «Վանի թագավորության տնտեսությունը, պետական կարգը և բանակը» թեմային: Զինատեսակների ուսումնասիրումն ու ներկայացումը օգնում են սովորողներին ավելի լայն պատկերացում կազմել թեմայի վերաբերյալ: Կարևորում ենք ուսուցման սկզբունքների պահպանումը, որոնցից են համակարգվածությունն ու հաջորդականությունը [7, 149-150]: Սկզբունքի պահպանման համար, հիմնվելով միջնակարգ դպրոցի հիմքի վրա, նախ անհրաժեշտ է վերականգնել կապը հայոց թագավորությունների բանակների թվաքանակի, զորատեսակների ու սպառազինության վերաբերյալ: Դա հնարավոր է հարց ու պատասխանի մեթոդի կիրառմամբ:

Աղյուսակ 1

Թագավորություն/ Ջորատեսակ	Ուրարտու	Եր- վան- դունի	Արտա- շեսյան	Արշակունի	Բագրատունի
Հետևակ	-	40.000	-	-	-
Հեծելազոր	-	8.000	-	55-85.000	-
Մարտակառք	-	-	-	-	-
Ընդհանուր	350.000	48.000	300.000	100-120.000	90-100.000

Աղյուսակ 1-ը կազմվել է դպրոցական դասագրքերի հիման վրա [5, 44, 56, 124, 168; 10, 6]: Տրված է այն գորքերի ու գորատեսակների թվաքանակը, որոնք հստակ նշված են դասագրքերում, բաց են թողնված այն գորատեսակները, որոնք բացակայում են:

Կրկնության միջոցով մենք ստեղծում ենք միջառարկայական կապ նաև նախնական զինվորական ծառայություն առարկայի հետ: Այնուհետև կարող ենք անցում կատարել թեմային, որի դասավանդման մեթոդական հիմքը ընտրել ենք մեղիագրագիտությունը: Սովորողների որոնողական, հետազոտական, ճանաչողական հետաքրքրությունների զարգացման վերջնարդյունքին հասնելու արդի մեղիակրթական բազում մեթոդների ու տեխնոլոգիաների շարքում առավել ակտիվ կիրառություն է գտել սահիկահանդեսը (Power Point) [2, 64-65]: Բազմակողմանի մեղիակրթական ու ուսումնաստեխնոլոգիական միջավայրը ապահովում է պատմության դասընթացում երեք մոդել, որոնցից մեր թեմայի դասավանդման համար առավել նպատակահարմար է տեսողական ուսուցումը [2, 67]: Դասավանդումը պետք է ընթանա զննականության ապահովմամբ, քանի որ սովորողը առանց նկարների ու պատկերազարդումների պատկերացում չի կազմի թեմայի վերաբերյալ [2, 60]: ՏՏ կիրառումը կարող է դիտարկվել նաև որպես մոտիվացիոն գործիք, որը նպաստում է թեմայի բովանդակությունը հեշտությամբ ընկալելուն: Աուդիովիզուալ նյութերի կիրառումը դասը դարձնում է ավելի գրավիչ և օգնում է սովորողներին ընդգրկվել պատմական համատեքստում [24, 24]:

Թեմայի դասավանդման համար ընտրված մեթոդի կիրառման համար կարևոր է դասասենյակի ճիշտ կահավորումը: Անհրաժեշտ են դիդակտիկ պարագաներ՝ պրոյեկտոր, գրատախտակ ու քարտեզ՝ Սալմանասար Գ-ի Ք.ա. 856 թ. ու Մարգոն Բ-ի Ք.ա. 714 թ. դեպի Հայաստան արշավանքների երթուղիները [6, 171]: Թեման ուսուցանվելու է սահիկահանդեսի ուղեկցությամբ: Թեման ներկայացնելուց առաջ կարևոր է հասկանալ, թե ինչ պատկերացում ունեն սովորողները «զենք» հասկացության ու դասակարգման վերաբերյալ, անհրաժեշտ է բացատրել զենքի նշանակությունը պետության պաշտպանության և խաղաղության հարատևման համար: Այսպիսով՝ առաջնահերթ պետք է տալ «հարձակողական զենք» եզրույթը, որի բացատրությունից հետո սովորողները սկսում են թվարկել իրենց իմացած զենքերը՝

ուսուցչից հարցնելով, թե արդյոք ճիշտ են դասակարգում իրենք: Ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողներին, պատասխանի նրանց հարցերին: Ներածական մուտքից հետո ուսուցիչը կարող է անցնել հիմնական մասին՝ առանձին-առանձին մեկնաբանելով զինատեսակները, սահիկում արտացոլված պատկերները: Ձինագիտական եզրույթները պատկերացնելը դժվարություն է առաջացնում սովորողների մոտ, և անհրաժեշտություն է առաջանում զինատեսակը պատկերելու գրատախտակին՝ ցույց տալով զենքի մասերը: Ուստի այդ պարագայում դիմում ենք զննականության մեթոդին: Այն զինատեսակները, որոնց նկարները չեն արտացոլվել սահիկաշարում, սակայն սովորողներից ոմանք պատկերացնում են զինատեսակը, կարող են նկարել գրատախտակին և իրենք բացատրել իրենց դասընկերներին: Բերվածի լավագույն օրինակը գուրգ զինատեսակն է, որը սովորողներին ծանոթ էր «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմից: Սակայն մեր նպատակը ոչ միայն լոկ զինատեսակներին ծանոթացնելն է, այլ նաև համեմատելը սովորողներին քաջածանոթ երկու հինարևելյան գերտերությունների՝ Վանի ու Ասորեստանի թագավորությունների հարձակողական սպառազինությունը:

Դասավանդման գործընթացում՝ յուրաքանչյուր զինատեսակը ցուցադրելիս, մեկ սահիկում պարտադիր է երկու թագավորություններում կիրառված զինատեսակների ցուցադրումը, որպեսզի սովորողը տեսնի և համեմատության մեջ դնի զինատեսակը և ինքնությունը վերլուծի, թե որն է ավելի արդյունավետ:

Ձինատեսակները նկարագրելուց հետո ցանկալի է ցուցադրել պատկերաքանդակներն ու բարձրաքանդակները, որոնց վրա պատկերված են զինվորներ: Կարելի է ցուցադրել նաև պատկերագրություններ ու վերակազմություններ: Սա հնարավորություն է տալիս սովորողին ամբողջական տպավորություն կազմելու զինվորի սպառազինության հագեցվածության վերաբերյալ: Միջառարկայական կապի ապահովման համար կարելի է համեմատություն անցկացնել եվրոպական ասպետների զինվածության հետ՝ նշելով որ ասպետների սպառազինության կարևոր և անբաժան մասն են եղել սրերը, դաշույնները, նիզակները, տեգերը, սակրերը, գուրգերը, նետն ու աղեղը: Սովորողների ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ պատմական բոլոր ժամանակաշրջաններում զենքը եղել է թանկ հաճույք, օրինակ՝ միջնադարյան ասպետի մարտական ձին յոթ անգամ ավելի թանկ է եղել սովորական ձիուց, իսկ ամբողջական սպառազինություն ձեռք բերելը արժեք չորս կավածք, 25 եգ կամ 250 ոչխար [15, 38-39]:

Քանի որ թեման դասագրքային նյութ չէ, և սովորողից չենք կարող պահանջել զինատեսակների բաղադրիչները լիովին հիշել, մենք շեշտը դնում ենք նրա վրա, թե ինչ տվեց իրենց, և ինչը տպավորեց: Մենք որպես ամփոփում կատարում ենք հարց ու պատասխան, որի ժամանակ սովորողները կիսվում են իրենց տպավորություններով, հայտնում իրենց կարծիքը, թե որ երկրի հարձակողական զինանոցն էր ավելի հզոր և արդիական տվյալ ժամանակաշրջանում:

Նշված մեթոդի կիրառման արդյունավետությունը ապացուցված է գիտափորձի միջոցով (գիտափորձը կատարվել է 28.04.2025թ.) ՀՊՄՀ հենակետային վարժա-

րանի (ավագ դպրոց) 10-րդ դասարանի պատմահասարակագիտական ենթահոսքում և այնքան էր տպավորել, հետաքրքրություն առաջացրել սովորողների մեջ, որ կազմել են լոգոտիպ ուրարտական զինատեսակների վերաբերյալ: Հատկանշական է, որ սովորողների մեծամասնությունը տպավորված և հիացած էր ուրարտական զինանոցով: Սա նաև հայրենասիրության խթանման և պետության արժևորման համար կարևոր միջոց է:

Մյուս դասատիպը, որը առաջարկում ենք մեր հետազոտության շրջանակում, կրթական հարթակի ներդրումն է: Այսօր բազմաթիվ կրթական արդյունավետ հարթակներ (Google Classroom, Moodle, Microsoft Teams) են գործում, որոնց թիվը տարեցտարի մեծանում է: Մեր այս հետազոտության ընթացքում առաջարկում ենք «Edmodo» հարթակի փորձարկումն ու կիրառումը:

«Edmodo»-ն անկախ սոցիալական ուսումնական հարթակ է սովորողների, ծնողների ու ուսուցիչների համար: Այն հաճախ անվանում են «դպրոցի Ֆեյսբուք»: Գիտամեթոդական գրականության մեջ նշվում է, որ «Edmodo»-ն շարժական ուսուցման պարզ միջոց է, որը նախատեսված է ուսուցման նյութերի կամ բովանդակության համար և սովորաբար օգտագործվում է սմարթֆոնով՝ սովորողների ու ուսուցիչների միջև առցանց փոխազդեցությունն ապահովելու համար ցանկացած ժամանակ ու ցանկացած վայրում: Հարթակի միջոցով ուսուցիչը կարող է տալ առցանց հանձնարարականներ, ուղարկել ֆայլեր և հղումներ, կազմել «Quizzes» (թեստեր) ու գնահատել, ստեղծել էլեկտրոնային գրադարան, որպես խրախուսման միջոց սովորողին տալ մեդալ: Ծնողը «Parent Code» (ծնողի կոդ) գործառույթի միջոցով կարող է հետևել իր երեխայի մասնակցությանն ու առաջադիմության [22, 120-121]:

Այս կրթական հարթակի միջոցով հնարավորության լայն դաշտ է ստեղծվում սկզբնաղբյուրային աշխատանք կատարելու համար: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում գրքերի ու հղումների տեղադրումը համակարգ, որի միջոցով հնարավոր է տրամադրել տարատեսակ տեղեկություններ թեմայի վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայալեզու մասնագիտական գրականությունը թեմայի վերաբերյալ խիստ սակավ է, կարելի է սովորողներին տրամադրել ակնարկային հոդվածներ: Կարելի է տրամադրել օտարալեզու գրականություն՝ սովորողների տարիքահոգեբանական առանձնահատկություններին համապատասխան: Վերջինս կնպաստի սովորողների լեզվական հմտությունների բարելավմանը, ինչը ևս 21-րդ մարդու հմտությունների շարքում է ընդգրկված: Սովորողները, կարդալով ու վերլուծելով զինատեսակների վերաբերյալ հոդվածները, կատարելով նկատառումներ ու եզրահանգումներ, հաջորդ դասաժամին իրենց կարծիքը պետք է արտահայտեն և մեկնաբանեն դասարանում:

«Դաս թանգարանում» մեթոդի կիրառման համար առաջարկում ենք երկու թանգարան՝ Էրեբունի պատմահնագիտական-արգելոց թանգարանն ու Հայաստանի պատմության թանգարանը:

Թանգարան այցելությունը արդյունավետ դարձնելու համար նախապես պլանավորումը պարտադիր և կարևոր պայման է: Դա պայմանավորված է այն հանգա-

մանքով, որ խմբերի մեծությունը պետք է համապատասխանեցվի թանգարանի սրահների տարողունակությանը: Կարևոր է հաշվի առնել սովորողների տարիքային խումբը [29, 236]:

Ներկայումս Էրեբունի թանգարանում ներդրված են նորագույն տեխնոլոգիաներ, որոնք այցելուների մոտ հետաքրքրություն են առաջացնում և ավելի արդյունավետորեն են հաղորդակից դարձնում ուրարտական ժամանակաշրջանին [11]:

Դեռևս 2005 թ. ՀՀ-ում ներդրվել է օրենք՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին [8]: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը մշակութային կյանքին ներգրավումը ամրապնդված է օրենքով [9]: Ներկայումս Էրեբունի պատմահնագիտական-արգելոց թանգարանը աշխատանքներ է տանում տեսողության խնդիրներ ունեցող անձանց ներգրավելու մշակութային կյանքին: Ուստի հաշվի առնելով ԿԱՊԿՌ-ի սովորողների առկայության հնարավորությունը՝ առաջարկում ենք «Էրեբունի» թանգարանում ձևավորվող նմանօրինակների, որոնց թվում կա ուրարտական սաղավարտը տեքստերի կազմում բրայլյան այբուբենով, ինչպես նաև շոշափողական ալբոմի պատրաստում [3, 84-85]:

Մինչ թանգարանային այցի կազմակերպումը անհրաժեշտ է կազմել էքսկուրսիայի երթուղին, սովորողներին տրամադրել տեղեկություններ թանգարանի պատմության, շինության հարակից քանդակների, պատմամշակութային վայրերի վերաբերյալ: Թանգարանում սովորողները հաղորդակից կդառնան ուրարտական մշակութին, կտեսնեն կավե կուժեր, ուրարտուհու կերպար և, իհարկե, ուրարտական գենքեր՝ սրեր, վահաններ, սաղավարտ: Թանգարանային այցը կամրապնդի զինատեսակների վերաբերյալ սովորողների գիտելիքները: Թանգարանային այցը կեզրափակվի հնավայր այցելությանը: Թանգարանային այցից հետո սովորողներին կտրվի հանձնարարություն՝ գրել շարադրանք իրենք տպավորությունների վերաբերյալ:

Հստակ է, որ պատմության դասագործընթացում կարևոր է սովորողների կողմից պատմական իրադարձություններն առավել լիարժեք և արդարացի ընկալելը ու դրանց համապատկերը ներկայացնելը: Նպատակին հասնելու համար քննարկվող թեմայի շրջանակում առաջարկում ենք նաև մեթոդական որոշ հնարներ՝ մեղիագրագիտության համատեղմամբ:

Մեթոդական հնար 1

«Պատմական հակասական մեկնաբանություններ» անվանմամբ ուսումնական ռազմավարությունը արդյունավետ միջոց է սովորողի՝ միևնույն իրադարձության վերաբերյալ տարբեր տեքստեր վերլուծելու հմտությունը զարգացնելու առումով: Այն կարող է դառնալ ինչպես մեկ դասի ընթացքում տրվող ընթացիկ առաջադրանք, այնպես էլ ավելի երկարաժամկետ նախագիծ:

Սա հրաշալի միջոց է մեղիագրագիտության, լուրերի վստահելիության ստուգման հմտություններ զարգացնելու համար:

➤ Սովորողներին տվե՛ք որևէ ճառի կամ ուղիղ խոսքի բնօրինակ և որևէ այլ նյութ, որում բնօրինակ ճառի «համատեքստից դուրս» հաստվածներ են մեջբերված: Օրինակ՝ Արգիշտին՝ Ռուսայի որդին, սեզմենտաձև աղեղից կրակելով [13, 70], «նետը վերագցեց հենց այս տեղից»՝ Գիլուրանի գյուղի անտառի առջևից մինչև Իշպիլի Բատուորդու այգին՝ ինը հարյուր հիսուն կանգուն» [12, 116]: Արձանագրությունը գրված է եղել փոքր քարի վրա: Գտնվել է Վան քաղաքի Հայկավանք թաղամասում: Մեկ կանգունը հավասար է 51,8 սմ-ի, ուստի Արգիշտի Բ-ի արձակած նետը թռել է 492 մ [4, 186], իսկ Մելիքիշվիլիի հաշվարկներով՝ 476 մ [14, 306]: Մյուս կողմից անհրաժեշտ է ներկայացնել ասուրական պատկերացումներն ու խորհրդանիշերը զենքի վերաբերյալ: Օրինակ՝ «Իտունին՝ Տեումմանի՝ Էլամ երկրի թագավորի ներքինին, որին նա (Տեումմանը) հանդուգն կերպով մի քանի անգամ ուղարկեց իմ առաջ, տեսնելով իմ հզոր մարտական կազմը՝ իր երկաթե դաշույնով կտրեց իր ձեռքով իր աղեղը՝ իր ուժի խորհրդանիշը» [31, 267]: Չնայած տեքստերում չկան հստակ վկայություններ առ այն, որ աղեղները օգտագործվել են որպես հաղթանակի խորհրդանիշ, բայց կա տեղեկություն այն մասին, որ աստվածներ Աշուրն ու Ադադը, աստվածուհիներ Իշթարն ու Աշթարթեն իրենց աղեղներն են տվել թագավորներին՝ նպաստելով թշնամու պարտությանը: Բացի դրանից՝ այս տեքստերում նշվում է, որ Ասորեստանյան կայսրության դեմ պատերազմող թշնամին պատերազմ է հայտարարել ապավինելով իրենց աղեղներին: Աղեղները միջոց էին նաև աստվածներին կանչելու համար, օրինակ՝ Աշուրնասիրպալ Բ-ի ժամանակաշրջանում ռելիեֆի վրա պատկերված աստվածների ձեռքին աղեղ է պատկերված: Աղեղը՝ որպես հաղթանակի խորհրդանիշ, առաջին անգամ վկայված է Նարամ-Սինի պատկերաքանդակում, որում նա ձախ կրծքին ամուր սեղմել է աղեղը, իսկ աջում պահել է նետը, որով սպանել է թշնամուն [20, 272]:

➤ Համեմատե՛ք և քննարկե՛ք դրանք: Որքանո՞վ և ինչպե՞ս է համընկնում բնօրինակի ասելիքը երկրորդային նյութին: Թեպետ ռազմավարությունը հնարավորություն է տալիս ուսուցչին ներկայացնելու հակասական տեղեկություններ և նպաստել սովորողների քննական մտածողության զարգացմանը, սակայն հաշվի առնելով թեմայի առանձնահատկությունն ու տեղեկությունների սակավությունը՝ ուսուցիչը կարող է միայն հանձնարարել կատարել համեմատություն:

Արդյունավետ հարցադրումներով սովորողներին կարելի է հանձնարարել խմբային, զույգերով կամ անհատական ձևաչափով վերլուծել այդ տեքստերը, ապա անցկացնել բաց քննարկում ստացված արդյունքների հիման վրա:

Ի դեպ, նույն ռազմավարությունն ուսուցիչը կարող է կիրառել պատմական բուլբուլին այլ ժամանակաշրջանին վերաբերող դասի ընթացքում՝ պարզապես փոխելով տեքստերն ու հարցադրումները բովանդակությունը:

Մեթոդական հնար 2

Ժամանակակից մեդիայում գրավոր տեքստերի հետ առատորեն ներկայացվում են նաև պատկերներ, որոնք հաճախ նախատրամադրող և ուղղորդող ազդեցություն են ունենում ընթերցողի վրա, նույնիսկ նախքան տեքստն ընթերցելը: Հե-

տնաբար, մասնավորապես պատմության դասերին, պատկերների վերլուծությամբ առաջադրանքները սովորողի մոտ կձևավորեն պատկերի վրա դասի տվյալ հարցադրմանը մեկնաբանելու համար անհրաժեշտ ատրիբուտներ տեսնելու, դրանց հիման վրա մեկնաբանություններ անելու, տեքստն ու պատկերը համադրելու հմտություններ, արդյունքում պատկերը կդառնա ոչ թե ավելորդ նախատրամադրող ու շեղող, այլ, հակառակը, տեքստը համալրող աղբյուր:

Պատկերային վերլուծության մեկ օրինակ՝ «Պատկերի ակնթարթային դիտում» անվանմամբ [1, 69-72]:

Օրինակ՝ ասորական բարձրաքանդակի կամ Սարդուրի Բ-ի կապարճի լուսանկար:

Ա. 5 վայրկյանով ցուցադրե՛ք ասորական բարձրաքանդակի կամ Սարդուրի Բ-ի կապարճի լուսանկարը:

Բ. Անջատե՛ք էկրանը:

Գ. Հարցե՛ր տվեք. օրինակ՝ ի՞նչ տեսաք և մտաբերեցիք պատկերից (յուրաքանչյուրը կարող է նշել մեկ կամ երկու բաղադրիչ), ի՞նչ էր կատարվում պատկերում, ի՞նչ կարող ենք եզրակացնել տվյալ միջավայրի/ ժամանակաշրջանի վերաբերյալ:

Դ. Ամփոփե՛ք հղում անելով սովորողների առաջ քաշած վարկածներին՝ համադրելով դրանք պատմական փաստերի հետ:

Այս առաջադրանքը կարելի իրականացնել դասարանային տարբեր ձևաչափերով՝ խմբային, անհատական, քննարկումներ, բանավեճեր, գրավոր, բանավոր և այլն:

Այս թեմայի շրջանակում, որպեսզի սովորողը սովորի պատկերի վերաբերյալ իր արած մեկնաբանությունները համադրել դրան առնչվող տեքստի հետ, կարելի է անցկացնել դաս թանգարանում (Հայաստանի պատմության կամ Էրեբունի պատմահնագիտական-արգելոց թանգարանում)՝ քննարկելով, թե արդյոք պատկերում ներկայացված լուծումներն իրենց մեկնաբանություններով համահունչ, թե տարբեր են թանգարանային նյութերի բովանդակությունից:

Մեթոդական հնար 3

Մեղիագրագիտությունը զարգացնելու համար, տեքստերի ու պատկերի հետ վերլուծական աշխատանքներին զուգընթաց, անփոխարինելի առաջադրանք կարող է լինել սովորողին հանձնարարել պատրաստել պատմական որևէ իրադարձության մասին լրատվական սյունակ, հրատապ լուր, իսկ որպես ավելի երկարաժամկետ նախագիծ՝ գրել լրատվական հոդված՝ իր պատկերային բաղադրիչներով: Օրինակ՝ նման նախագիծ կարող է լինել Վանի կամ ասորեստանյան աղեղների պատրաստման յուրահատկությունները: Փորձել ճշտել աղեղի ու նետերի կառուցվածքը, չափերը, քաշը, նյութը, հեռահարությունը, մարտավարական դերը, արդյունավետությունը:

Այս դեպքում սովորողը, բացի վերլուծողից, դառնում է հետազոտող ու ստեղծագործող, ինքն է ծանոթանում լրագրողի, լրագրական նյութի էթիկական, մասնագիտական տարբեր չափանիշներին:

Եզրակացություն: Այսպիսով՝ ուսումնասիրության արդյունքում «Վանի թագավորության (Ուրարտու) և Ասորեստանի հարձակողական զենքերի համեմատություն» թեմայի դասավանդման համար առաջարկում ենք մի շարք մեթոդներ ու ռազմավարություններ՝ SS և զննականություն, կրթական նոր հարթակի ներդրում, դաս թանգարանում և այլն: Առաջարկվող մեթոդների միավորիչ կետը զննականության մեթոդի կիրառումն է: Մեր գիտափորձի արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ներառումը դասապրոցեստում բարձրացնում է սովորողների մոտիվացվածությունն ու հետաքրքրվածությունը դասավանդվող թեմայի վերաբերյալ:

Ներկայումս ամենակարևոր հարցերից մեկը հետևյալն է. «Որքան ժամանակ են սովորողներն ու երեխաները անցկացնում ամեն օր մեդիայի հետ»: Երեխաները պետք է կարողանան մեդիաբովանդակության կանխամտածված ընտրություն կատարել: Իսկ դրա համար հարկավոր է զարգացնել քննադատական մտածողությունը՝ հարցեր տալով. չէ՞ որ նրանք միայն սպառողներ չեն, նրանք նաև մեդիա բովանդակություն ստեղծողներ են: Այս մոտեցումը միաժամանակ մի քանի խնդիր է լուծում.

- ծրագրային թեմաները կապելով օրվա կարևոր իրադարձությունների հետ՝ ուսուցիչը դրանք ավելի հետաքրքիր է դարձնում սովորողի ընկալման համար,
- դասերի մեջ տեսնելով այսօրվա մարտահրավերները՝ սովորողը կարող է փորձել ինքնուրույն և ստեղծարարությամբ կողմնորոշվել ու լուծումներ փնտրել,
- սովորողը կարողանում է ավելի գրագետ օգտվել այդ գործիքներից, տեղեկատվական աղբյուրներից, հարթակներից, սովորում է տարբերել ու ստուգել կասկածելի ու վստահելի աղբյուրները,
- սովորողը սկսում է քննադատորեն վերլուծել մեդիայի տարածած տեղեկությունները, դրանց ազդեցությունը աշխարհի ու իրենց կյանքի վրա,
- քննարկում ու վերլուծում է լրատվամիջոցների ու տեղեկատվության դերը արտակարգ իրավիճակներում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Գիտական ծրագիր № 10-5/TB-24):

OFFENSIVE ARMAMENT OF THE KINGDOM OF VAN: METHODOICAL AND MEDIA-TECHNOLOGICAL APPROACHES TO TRAINING

Poghosyan Samvel

*Doctor of Historical Sciences, Professor,
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Republic of Armenia,
poghosyansamvel@yahoo.com*

Yeprikyan Armine

*PhD in History, Associate Professor,
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan,
Republic of Armenia,
yeprikyanarmine16@aspu.am*

Summary

The fundamental aim of history education lies in the acquisition of knowledge, the development of skills, and the cultivation of psychological dispositions and value orientations. Within the framework of 21st-century competences, UNICEF identifies soft skills, along with digital and professional competencies, as essential for all children and adolescents in order to expand their opportunities for lifelong learning, employability, and personal development.

It is essential that the objectives of developing media literacy in the teaching of history are not introduced as a separate or supplementary component outside the school curriculum, but are instead embedded within the very logic and structure of the lesson itself.

Therefore, we propose possible approaches to addressing these challenges within the framework of comparing Urartian and Assyrian offensive weaponry. Within the scope of our study, several lesson models were developed, aiming to integrate traditional and innovative methods. Particular attention was given to the incorporation of digital technologies into the teaching process, the application of the inquiry-based method, the use of electronic platforms, museum visits, and the strategy entitled '*Historical Contradictory Interpretations*.'

The relevance of the research lies in the fact that, prior to this study, military history had not been incorporated into the teaching process through a combination of both traditional and innovative methods and strategies.

The study led us to conclude that, for teaching the topic "*A Comparative Analysis of the Offensive Weapons of the Kingdom of Van (Urartu) and Assyria*", a range of methods and strategies can be effectively employed, including ICT and inquiry-based learning, the implementation of new educational platforms, and museum-based lessons. The unifying element of these methods is the application of the inquiry-based approach. Our experimental results demonstrate that the integration of information technologies into the teaching process significantly enhances students' motivation and engagement with the subject matter.

Keywords: *History teaching methodology, digital and media technologies, learning objectives, Urartu, offensive weaponry.*

НАСТУПАТЕЛЬНОЕ ВООРУЖЕНИЕ ЦАРСТВА ВАН: МЕТОДИЧЕСКИЕ И МЕДИА-ТЕХНОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ

Погосян Самвел

*Доктор исторических наук, профессор,
Армянский государственный педагогический университет им.*

Х. Абовяна,

*Республика Армения,
poghosyansamvel@yahoo.com*

Еприкян Армине

*Кандидат исторических наук, доцент,
Армянский государственный педагогический университет им.*

Х. Абовяна,

*Республика Армения,
yeprikyanarmine16@aspu.am*

Аннотация

Основная цель преподавания истории заключается в приобретении знаний, развитии навыков и формировании психологических установок и ценностных ориентаций. В числе ключевых компетенций XXI в. ЮНИСЕФ выделяет мягкие навыки, а также цифровые и профессиональные компетенции, которые необходимы всем детям и подросткам для расширения возможностей обучения на протяжении жизни, трудоустройства и личностного развития.

Важно, чтобы цели развития медиаграмотности в преподавании истории не вводились отдельно от школьной предметной программы как дополнительное направление, а были интегрированы в саму логику и структуру урока.

Следовательно, в рамках темы сравнения наступательного вооружения Урарту и Ассирийского царства мы предлагаем возможные подходы к решению этих задач образовательной системы. В рамках нашего исследования были разработаны несколько типов уроков с попыткой сочетания традиционных и инновационных методов. Основное внимание уделялось интеграции цифровых технологий в учебный процесс, применению исследовательского (inquiry-based) метода, использованию электронных платформ, организации музейных экскурсий и стратегии под названием «Исторические противоречивые интерпретации».

Актуальность исследования обусловлена тем, что до настоящего времени военное дело не было включено в учебный процесс с применением комбинации традиционных и инновационных методов и стратегий.

По результатам исследования мы пришли к выводу, что для преподавания темы «Сравнение наступательного вооружения Ванского (Урарту) и Ассирийского царств» может эффективно применяться ряд методов и стратегий: ИКТ и исследовательский подход, внедрение новой образовательной платформы, уроки в музее и др. Объединяющим элементом предлагаемых методов является применение исследовательского метода. Экспериментальные данные показали, что включение информационных технологий в учебный процесс значительно повышает мотивацию учащихся и их интерес к изучаемой теме.

Ключевые слова. методика преподавания истории, цифровые и медиа-технологии, целевые ориентиры, Урарту, наступательное вооружение.

Օգտագործված գրականության ցանկ

1. Gitq patmutyan usutsman. inchu', inchpe's, «Paradigma» krtakan himnadram, Yerevan, 2020, 296 ej. (in Armenian).
2. Eprikyanyan A., Patmutyan dasavandman ardi metodner yev tekhnoloianer, Gitamethodakan dzernark, Yerevan, VMV-Print, 2021, 336 ej. (in Armenian).

3. Kirakosyan M., Tesoghutyan khndirner unecogh andzants nergravumy «Erebuni» patmahnagitakan argelots-tangarani kensagortsuneutyuny, Patmutyan usucman himnakhndirner, ej 83-110. (in Armenian).
4. Hay zhoghovrdi patmutyan qristomatia, Hator I, Hnaguyn zhamanakneric minchyev Q.a. 298t., Kazmoghnar P.H. Hovhannisyan, A.E. Movsisyan, Yerevan, Yerevani hamals. hrat., 2007, 550 ej. (in Armenian).
5. Hajots patmutyun: 10-rd das. Yndhanur yev bnagitamatematikakan hosqer: A. Melqonyan, H. Avetisyan, S. Movsisyan, P. Hovhannisyan, E. Danielyan, V. Barkhudaryan, G. Harutyunyan, P. Chobanyan, Yerevan, «Zangak», 2014, 240 ej. (in Armenian).
6. Hakobyan (Tarumean) R., Mi arshavanqi hetqerov. Asorestani Sargon B-y arqayi 8-rd` m. t. a. 714 tvakani atshavanqi ertughin, Yerevan, «Hratarakhchutyan», 2024, 210 ej. (in Armenian).
7. Mankavazhutyun, Usumnakan dzernark buheri hamar, Kazmecin` L.T. Asatryany, G.H. Hakobyany, M.A. Asatryany yev urishner, Yerevan, Artagers, 2017, 360 ej. (in Armenian).
8. Hayastani Hanrapetutyan orenqy krtutyun arandznahatuk paymanneri kariq unecogh andzanc krtutyun masin- URL:<https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166> (in Armenian).
9. Hayastani Hanrapetutyan orenqy hashmandamutyun unecogh andzanc iravunqneri masin- URL:<https://www.arlis.am/documentview.aspx?docid=152960> (in Armenian).
10. Nakhnakan zinvorakan patrastutyun, Hanrakrtakan dproci 9-rd dasarani dasagirq, V. Ohanyan, S. Margaryan, V. Araqelyan, Yerevan, Astghik gratun, 2015, 120 ej. (in Armenian).
11. Nor tekhnologianeri mijocov Argishti arqan kpatmi Erebuni tcndnyan vkayaknai masin. Miqayel Badalyan- URL:<https://www.aravot.am/2023/03/17/1329393/> (in Armenian).
12. Teryan A., Hnaguyn patmakan vkayutyanner hay razmiki masin, Haykakan banak, «Razmagitakan handes», 3 (17), 1998, ej 15-27. (in Armenian).
13. Gorelik M., Oruzhie drevnogo Vostoka (IV tisyaelevie IV v. do n. e.), Moskva, Vostochnaya literature, 1993, 352s. (in Russian).
14. Melikishvili G., Drevnevistochne materiali po istorii narodov Zakavkaz'e, I, Nairi-Urtu, Izd-vo Akademii nauk Gruzinskoy SSR, Tbilisi, 1954, 446 s. (in Russian).
15. Shkol'nik Yu., Ritsari, Polnaya entsiklopediya, M., Eskimo, 2013, 176 s. (in Russian).
16. Chaerani D., Harianto J.E., Baehaqi L., Frantius D., Mulvia R., Digital Literacy in the 21st Century Classroom: Bridging the Gap Between Technology Integration and Student Engagement, Global International Journal of Innovative Research, Vol. 2 No. 9, 2024, p. 2104-2116. (in English).
17. Dede C., Comparing Frameworks for “21st Century Skills”, Harvard Graduate School of Education, July, 2009, p. 1-16. (in English).
18. Hastuti H., Zafri, Zul 'Asri, Development of Video Based on Historical Thinking on the History of Islamic Civilization in Indonesia, International Journal of Social Science And Human Research, Volume 05 Issue 08 August, 2022, p. 3495-3499. (in English).
19. Hikmah D., Media for language teaching and learning in digital era, IJOEEL, VOL. 01 NO. 02, DECEMBER, 2019, p. 36-41. (in English).
20. Kavak A., Bows used as symbols of military victory in the Neo-Assyrian Period, SDU Faculty of arts and sciences journal of social sciences, Isparta, Turkey, Süleyman Demirel university, no. 56, August, 2022, pp. 266-283. (in English).
21. Lamb S., Maire Q., Doecke E., Key Skills for the 21st Century: an evidence-based review, Victoria university, Melbourne, Australia, August, 2017, 70 p. (in English).
22. Lee Bih Ni, Media for History Learning in The Digital Era, SPEKTA Vol 3. No.2, December, 2022, pp. 117-127 (in English).
23. Lubis L.H., Febriani B., Rendi F.Y., Azhar, Mulkan Darajat, The Use of Learning Media and its Effect on Improving the Quality of Student Learning Outcomes, International Journal of Education, Social Studies, And Management, Volume 3, Issue 2, June, 2023, p. 7-14. (in English).
24. Martínez-Valcárcel N., Ortega-Roldán M., García-Marín R., Printed Material and Digital Media in Teaching of History: Presence and Level of Frequency of Use in the Classroom, International Journal of Social Policy and Education, Vol. 2, No. 1, March, 2020, p. 14-29 (in English).

25. Naharia O., Wullur M., Modigir N., The role of digital technology to enhance creativity and innovation skills for learners in the 21st century era, *Eduvest - Journal of Universal Studies*, Volume 4, Number 10, October, 2024, p. 9646-9653. (in English).
26. Natarajan J., Effective Teaching Through Media, *Quest Journals Journal of Research in Humanities and Social Science*, Volume 9 ~ Issue 8, 2021, p 47-49. (in English).
27. Nurhalimah D., Thahura A.D., The impact of learning media on students' development in learning, *International journal of students' education*, vol. 1 No 2, 2023, p 264-266. (in English).
28. Okumuş O., Wherever Students Are, We Are There: History Teaching on Social Media. *International Congress on Political, Economic and Social Studies*, volume 3, Venice, 2018, p 40-60. (in English).
29. Sayyidan A., Teaching History with Museums, *International Journal of Social Science, Innovation and Educational Technologies (Online)*. Vol: 3 Issue, October, 2022, pp. 234-242 (in English).
30. Setiawati E., Hidayat B., Hartati U., Widiastuti A., Development of Historical Learning Media Based on Documentary Film to Strengthen Student's Understanding of Local History, *International Journal of Research and Review*, Vol. 8, Issue: 5, May, 2021, p 177-186. (in English).
31. Ulanowski K., The Practical Dimension of Neo-Assyrian Militarism: Terror of War as a Political Tool in the Neo-Assyrian Empire, *Alcumena: Pismo Interdyscyplinarne*, vol. 3. 15, 2023, p. 253-279. (in English).
32. 21st-Century Skills: What potential role for the Global Partnership for Education? A Landscape Review, *GPE Transforming Education*, January, 2020, 56 p. (in English).
33. Edward L., Thorndike Education, New York, Macmillan, 1912, p. 125.
34. Willingham D.T., What Will Improve a Student's Memory? *American Educator*, Winter, 17-25, 2008, p.44. URL:http://www.aft.org/sites/default/files/periodicals/willingham_0.pdf.
35. Bryant S.M. and Hunton J.E., The Use of Technology in the Delivery of Instruction: Implications for Accounting Educators and Education Researchers. *Issues in Accounting Education*, 15 (1), 2000, pp. 129-163.
36. Reiser R. Gagne R., Characteristics of Media Selection Models. *Review of Educational Research*, 52 (4), 1982, pp. 499-512.
37. Clark R.E., Reconsidering Research on Learning from Media, *Review of Educational Research*, Vol. 53, No.4, Winter, 1983, pp. 445-459.
38. Clark R.E., Reconsidering Research on Learning from Media, *Review of Educational Research*, Vol. 53, No.4, Winter, 1983, pp. 61-70.
39. Smith B.K., Blankenship E. Justifying Imagery: Multimedia Support for Learning Through Exploration. *IBM Systems Journal*, 39 (3/4), 2000, pp. 749-768. URL:<http://pubs.media.mit.edu/pubs/papers/blankinship.pdf>

Получено: 23.10.2025

Рассмотрено: 27.10.2025

Принято: 23.11.2025

Received: 23.10.2025

Reviewed: 27.10.2025

Accepted: 23.11.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**ՏԵԼԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՎՐԱ**

Սահակյան Ազնիվ

Անգլերենի ուսուցչուհի,

Արմավիրի Ռ. Եղոյանի անվան թիվ 1 ավագ դպրոց,

Հայաստանի Հանրապետություն,

sahakyanazniv93@gmail.com

<https://orcid.org/0009-0007-9690-6235>

Ամփոփում

Համառոտ ներածական: Ուսումնական գործընթացում շատ կարևոր են բոլոր սովորողների ներգրավվածությունն ու մասնակցությունը, ինչը երբեմն թերի է լինում մոտիվացիայի բացակայության դեպքում: Մոտիվացիան ուսումնական գործընթացի հիմնական շարժառիթ է, հատկապես 21-րդ դարում: Ժամանակաշրջան, երբ կյանքն օրեցօր փոխվում է, երկիրը զարգանում ու առաջընթաց է ապրում, և «նոր սերունդն» ունի մարտահրավերներով լի գաղափարներ, դար, որի ընթացքում ստեղծվել է արհեստական բանականություն, որը գնալով ավելի է կիրառվում կրթության ոլորտում:

Հոգևածում քննվում են մոտիվացիայի դերը, նշանակությունը և դրա ներքին ու արտաքին գործոնները: Բերված են օրինակներ և ներկայացված են ուսուցողական ռազմավարություններ, որոնք նպաստում են սովորողների մոտիվացիայի բարձրացմանը:

Հատուկ ուշադրություն է դարձվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) տարբեր գործիքներին ու հարթակներին, որոնք ոչ միայն ստեղծում են հետաքրքրություն ուսման հանդեպ և բարձրացնում մոտիվացիան, այլև ներգրավում են ուսումնական գործընթացում թույլ սովորողներին: Վերլուծվում է նաև դրանց ազդեցությունը ուսումնական գործընթացի արդյունավետության ու սովորողների մոտիվացիայի վրա՝ ընդգծելով դրական ու բացասական կողմերը:

Հետազոտությունը հիմնված է և՛ տեսական, և՛ գործնական աղբյուրների ուսումնասիրության ու վերլուծության վրա:

***Բանալի բառեր՝** մարտահրավերներ, ուսումնական գործընթաց, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ, մոտիվացիա, ներքին և արտաքին դրդապատճառներ, Մասլոուի կարիքների պահանջմունքները, Ջոն Բեյլերի ARCS մոդելը, սպասելիքների-արժեքի տեսություն, ուսուցողական ռազմավարություն, սովորողներ:*

Հիմնախնդիրը: Մարտահրավերներով լի այս դարաշրջանում, ժամանակակից դպրոցի, կրթության, հետևաբար ուսուցիչների ամենակարևոր խնդիրներից է դառնում ուսումնական գործընթացում ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ սովորողներն ակտիվորեն կընդգրկվեն ուսումնական գործընթացում, ինչն էլ կխթանի նրանց հետաքրքրության ու մոտիվացիայի բարձրացմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցությունը սովորողների մոտիվա-

ցիայի բարձրացման վրա՝ վերլուծելով անձնական և տարբեր հեղինակների փորձերը:

Հետազոտության նորույթը: Հիմնված է 21-րդ դարի տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցությամբ պայմանավորված փոփոխությունների վրա, որոնք նպաստում են սովորողների ներգրավվածությանը և մոտիվացիայի բարձրացմանը ուսուցման ընթացքում:

Աշխատանքը շեշտադրում է անգլերենի դասերի ընթացքում ՏՀՏ գործիքների համակցված և ինտեգրված կիրառումը, որը հնարավորություն է տալիս ստեղծելու ինտերակտիվ, գրավիչ դասընթաց ու գնահատելու դրա ազդեցությունը սովորողների մասնակցության և մոտիվացիայի վրա:

Հետազոտության ընթացքում կիրառվել են *LearningApps, Quizizz, Google forms, Playposit, Office Sway* գործիքները, որոնց ազդեցությունն ուսումնասիրվել է սովորողների ինքնագնահատականի (հարցաթերթիկ) ու դասալսողների դիտարկումների համադրությամբ՝ հաշվի առնելով հայկական կրթական միջավայրի առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակից բխող **խնդիրներն** են.

- հետազոտել և ուսումնասիրել ՏՀՏ գործիքների ազդեցությունը ուսումնական գործընթացում,
- պարզել դրանց ազդեցությունը սովորողների վրա,
- հասկանալ, թե որքանով են այդ գործիքները մոտիվացնում սովորողներին:

Հետազոտության մեթոդները: Ուսումնառության ընթացքում կիրառվել են տարբեր հեղինակների աշխատությունների, ինչպես նաև մոտիվացիայի վերաբերյալ միջազգային հոդվածների, աղբյուրների ուսումնասիրության մեթոդը՝ փորձելով ավելի խորը հասկանալ, ըմբռնել մոտիվացիայի դերն ու նշանակությունը: Կիրառվել են նաև հարցման մեթոդն ու դասալսողների դիտարկումը, որոնք ապահովել են թե՛ քանակական, թե՛ որակական տվյալների հավաքագրում:

Հիմնական նյութի շարադրանքը: Մոտիվացիայի մասին կան շատ տեսություններ ու սահմանումներ: Ի մի բերելով այդ բոլոր սահմանումները՝ կարելի է ասել, որ մոտիվացիան շարժառիթ է, մարդկային գործողությունների շարժիչ ուժ, խթանող միջոց, որը հանգեցնում է սեփական նպատակների իրագործմանը:

Ըստ Ջեֆ Փեթթիի՝ մոտիվացիան թե՛ հմուտ, թե՛ սկսնակ ուսուցիչների կողմից ընկալվում է իբրև արդյունավետ ուսումնառության նախապայման, և շատ ուսուցիչների համար մեծագույն մարտահրավեր է սովորողների մեջ սովորելու ցանկություն սերմանելը [4, 1]: Իսկ ինչպես ամերիկացի դասախոսներից մեկը՝ Ռոնալդ Ջիրմուսն է ասել. «Մոտիվացիան կարևոր է՝ սովորելու համար: Ուսուցումը տեղի չի ունենում առանց նախորդող մոտիվացիոն իրադարձության: Ե՛վ հոգեբանական, և՛ նեյրոգիտական ապացույցները ցույց են տալիս, որ մոտիվացիան ու ճանաչողությունն անքակտելիորեն կապված են» [7, 3]:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մոտիվացիան բաժանվում է երկու բաղադրիչի՝ ներքին ու արտաքին: Արտաքին մոտիվացիան ներկայացնում է արտա-

քին խրախուսումների հասնելու մղումը, որոնցից են գումարը, մեդալները, այլ տեսակի խրախուսումներ կամ սոցիալական կարգավիճակը, իսկ ներքին մոտիվացիան՝ ներքին մղումը, իդձը, ցանկությունը, որոնցով մարդիկ աչքի են ընկնում որոշակի գործունեության ժամանակ:

Ուսումնական գործընթացում մոտիվացիայի մեջ ներգրավված են և՛ ներքին, և՛ արտաքին դրդապատճառները: Արտաքին խրախուսումների արդյունավետ օգտագործումը կարող է զարգացնել սովորելու ներքին մոտիվացիա: Արտաքին խրախուսումներն օգտակար են, երբ սովորողների նախնական հետաքրքրությունները ցածր են: Արտաքին խրախուսումները պետք է արժեքավորեն ուսումը և հիմնված լինեն ուսուցման հատուկ նպատակների վրա: Խրախուսումը պետք է լինի շոշափելի և զգայուն ժամանակի նկատմամբ: Բանավոր գովասանքի արդյունավետ օգտագործումը հզոր արտաքին մոտիվացիա է [7, 4]: Գովեստը սովորողի համար շարժիչ ուժ է: Այն խթանում և ստիպում է սովորողին ներկայանալ առավել դրական տրամադրվածությամբ և ոգևորությամբ: Իր փոքրիկ հաջողություններով նա սկսում է հավատալ առարկան յուրացնելու իր ուժերին ու կարողություններին:

Քանի որ դպրոցներում ընթացիկ միավորային գնահատումն այլևս չի անցկացվում, ինչը նախկինում որոշ չափով ծառայում էր որպես խրախուսանք, հետազոտության ընթացքում ավագ դպրոցի սովորողների մոտ խրախուսման նպատակով օգտագործվել են տարբեր տեսակի էմոջիներ (emojis) (տե՛ս Նկար 1): Դրանք կիրառվել են տնային առաջադրանքների կատարման, թեման ներկայացնելու և փոքր դրական քայլերի համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ սովորողները դասին պատրաստ չէին կամ մասնակցությունը թերի էր: Հաջորդ դասերին սովորողները հաճախ ավելի լավ պատրաստված էին գալիս՝ ստանալու դրական սմայլիկներ:

Այս տվյալները հիմնականում հիմնված են դիտարկումների վրա և չեն ներկայացնում լիարժեք քանակական չափում, ինչը սահմանափակում է հետևությունների վստահելիությունը. ապագա հետազոտություններում անհրաժեշտ է մշակել մեթոդներ՝ ազդեցությունը քանակական կերպով գնահատելու համար:

Նկար 1.



Ինչ վերաբերում է ուսուցման ներքին մոտիվացիային, այն ունի ճանաչողական և սոցիալական շարժառիթներ, այսինքն՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու և կյանքում հաջողության հասնելու ցանկություն:

Ներքին մոտիվացիայի օրինակներ են՝

- գիրք կարդալը, ոչ թե դրա մասին զեկույց գրելու, այլ հաճույք ստանալու կամ պատմվածքով կամ թեմայով հետաքրքրված լինելու համար,
- որևէ մարզաձևում մասնակցելը, ոչ թե մրցանակ ստանալու, այլ այն վայելելու և հաճույք ստանալու համար,
- նոր լեզու սովորելը, ոչ թե աշխատանք գտնելու, այլ նոր բաներ փորձելու համար,
- մի մարդու հետ ժամանակ անցկացնելը, ոչ թե սոցիալական դիրքը բարձրացնելու, այլ նրա ընկերությունը վայելելու համար,
- նկար նկարելը, ոչ թե արվեստը վաճառելու նպատակով գումար վաստակելու, այլ հանգիստ ու երջանիկ զգալու համար [1]

Ամերիկացի հոգեբան, հումանիստական հոգեբանության հիմնադիր Աբրահամ Մասլոուի կարիքների պահանջմունքները մոտիվացիայի ամենահայտնի տեսություններից են: Մասլոուի տեսությունը նշում է, որ մեր գործողությունները պայմանավորված են ֆիզիոլոգիական և հոգեբանական որոշակի կարիքներով, որոնք առաջ են շարժվում հիմնականից մինչև բարդ: Այս տեսությունը ընդգծում է, որ արտաքին մոտիվացիան ավելի շատ կապված է նվազագույն կարիքների հետ, մինչդեռ ներքին մոտիվացիան ակտիվանում է բարձր մակարդակի անհրաժեշտությունների դեպքում:

Մոտիվացիայի ժամանակակից տեսությունն է Ջոն Քելլերի **ARCS մոդելը**, որը նպատակ ունի ոչ միայն խթանելու սովորողների մոտիվացիան, այլև ապահովելու դրա շարունակականությունը ուսուցման ընթացքում: Մոդելն առանձնացնում է հետևյալ չորս բաղադրիչը.

1. **ուշադրություն (Attention)** – նպատակ ունի գրավելու և պահպանելու սովորողների հետաքրքրությունն ու ուշադրությունը, ինչը ուսուցման արդյունավետության նախապայման է,

2. **համապատասխանություն (Relevance)** – ընդգծում է բովանդակության օգտակարության և իրական կյանքի միջև կապը, ինչը սովորողներին հնարավորություն է տալիս տեսնելու ուսուցման գործնական կիրառությունը: Մոտիվացիան կորցնում է իր ուժը, եթե բովանդակությունը սովորողի համար արժեք չի ներկայացնում,

3. **վստահություն (Confidence)** – ուղղված է սովորողների մոտ հաջողության սպասումների ձևավորմանը, ինչն էլ, իր հերթին, մեծացնում է ուսուցման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը: Ուստի անհրաժեշտ է նրանց տրամադրել նաև գնահատական՝ սեփական հաջողության հասնելու հավանականության մասին, ինչը ևս նպաստում է ուսուցման արդյունավետությանը,

4. **բավարարվածություն (Satisfaction)** – մոտիվացիայի ու բավարարվածության միջև առկա է ուղիղ կապ: Ուստի անհրաժեշտ է ապահովել, որ սովորողները բավարարված լինեն ուսուցման ընթացքում ձեռք բերված արդյունքներից [5, 3]:

Ձոն էթկինսոնն իր հերթին փորձել է մանրամասն ուսումնասիրել անձերի **հաջողության մոտիվացիան**՝ մշակելով **սպասելիքների-արժեքի տեսությունը** (expectancy-value theory): Ըստ այս տեսության՝ առաջադրանքի ընտրությունը պայմանավորում է անձի կատարողականությունն ու ներդրած ջանքը, այն, թե որքան արդյունավետ է նա իրականացնում առաջադրանքը, ինչպես նաև նրա վերաբերմունքը և գնահատականը առաջադրանքի նկատմամբ:

Սպասելիքների-արժեքի տեսության համաձայն, սպասելիքը ներկայացնում է այն հավանականությունը, որ գործողությունը կբերի նպատակին հասնելուն, իսկ արժեքը՝ այդ նպատակի կարևորության մակարդակը: Անձերը կարող են համեմատել տարբեր առաջադրանքներ և ընտրել այն, որը իրենց համար առավել գրավիչ և իրագործելի է: Եթե մարդը հավատում է, որ կարող է հաջողությամբ իրականացնել առաջադրանքը, դա խթանում է նրա մոտիվացիան այն կատարելու համար [8, 123]:

Վերջապես, որոշ ժամանակ զգալի բանավեճ էր ընթանում սովորողներին մոտիվացնելու համար ներքին և արտաքին խրախուսումների հարաբերական կարևորության ու արդյունավետության մասին: Ժամանակի ընթացքում պարզ է դարձել, որ երկուսն էլ կարևոր դեր են խաղում ակադեմիական միջավայրում սովորողների ներգրավվածության ու ուսումնական հաջողության ապահովման համար: Այս եզրակացությունը համադրում է Մասլոուի, Քելլերի և Էթկինսոնի մոտեցումները՝ ընդգծելով, որ արդյունավետ մոտիվացիան հիմնված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մոտիվացիաների համադրության վրա:

Ուսուցողական ռազմավարություններ

Գիտական հետազոտությունների և բնագավառի փորձի համադրությունը բացահայտել է մի քանի ընդհանուր ուսուցողական ռազմավարություն, որոնք օգտագործվում են ուսուցիչների կողմից՝ առաջացնելով ուսանողների մոտիվացիա և ներգրավվածություն ակադեմիական առաջադրանքներում և ուսուցման մեջ: Այդ ռազմավարություններն են արտաքին խրախուսումներն ու համագործակցային ուսուցումը, սոցիալական փոխազդեցությունները, ուսանողների ինքնավարությունն ու ընտրությունը, իրավիճակային հետաքրքրությունը, նպատակի կարգավորումը, մրցույթը և համապատասխանությունը, իմաստավորումն ու իրական աշխարհի կապերը:

Ռոնալդ Ջիրմունս առաջարկում է մի քանի ռազմավարություններ, որոնք կօգնեն ուսումնական գործընթացում:

➤ Սոցիալական փոխազդեցություն

Առաջարկել արագ աշխատող սովորողներին օգնել դժվարություններ ունեցող սովորողին առաջադրանքի կատարման հարցում:

Երկու սովորողների հանձնարարել օգնել դժվարություններ ունեցող սովորողին սովորելու նոր նյութը: Օգնականները բացատրում են այն իրենց բառերով (աշակերտական լեզվով): Նրանք կարող են ներկայացնել օրինակներ, թե ինչպես են աշխատել նոր նյութի հետ կապված խնդիրների վրա, կամ ստեղծել իրենց խնդիրները կամ քննադատական մտածողության իրավիճակները՝ օգնելու դժվարություններ ունեցող սովորողին:

➤ **Գտե՛ք ձեր զույգին**

Ուսուցիչն օգտագործում է ինդեքսային քարտեր և գրում բառեր/սահմանումներ, տասնորդական, տոկոս, կոտորակներ, համարժեքներ և այլն: Սովորողները պատահական ընտրում են քարտերը և գտնում իրենց «համապատասխանությունը (match)»: Աշխատանքը կլինի «պայքարող» սովորողների համար, քանի որ պատասխաններ կամ գիտելիքներ փնտրող սովորողներին օգնում են այլ սովորողներ, որոնք փնտրում են իրենց համապատասխան զույգին: Սովորողները դառնում են ուսուցիչներ և ուսումնական պահեր ապահովում այլ սովորողների համար: Թեստից մեկ օր առաջ կարող է կիրառվել որպես բառապաշարը վերհիշելու կամ ուսումնական այլ նյութ կրկնելու համար:

➤ **Ապոլլոն 13:** (Հյուսիս՝ ոն, մենք խնդիր ունենք: Ես օգնության կարիք ունեմ: Ես չգիտեմ, թե ինչպես դա սովորեցնել ձեզ):

Ուսուցիչն իրեն դնում է անօդանավի վիճակում: Սովորողները պետք է միասին աշխատեն, որպեսզի օգնեն ուսուցչին ճանապարհ գտնել:

Որպես ուսուցիչ՝ դուք կարող եք զգալի ազդեցություն ունենալ ձեր սովորողների մոտիվացիոն մակարդակների ու դասարանում ներգրավվածության վրա:

Ուսուցչի մոտիվացիան սովորողի մոտիվացիայի հիմնական տարրն է: Ոչ մոտիվացված ուսուցիչները կարող են խաթարել սովորողի մոտիվացիան: Հետազոտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաները առաջին դասարան են մտնում բարձր մոտիվացիայով և կամաց-կամաց կորցնում են մոտիվացիայի զգացումը մինչև միջին դպրոցական տարիները: Ուսուցիչների մոտիվացիոն վիճակներում երեք կարևոր դերակատարներ են՝ սթրեսը, ինքնագործունեության զգացումն ու զգացմունքները [7, 9]:

S2S գործիքների կիրառումը

Այսպիսով, երբ խոսում ենք ուսումնական գործընթացի մասին, այն ցավոք ու դժվար հարցերից մեկը, որ միշտ հուզում է մեզ՝ ուսուցիչներիս, այն է՝ թե ինչ նոր մեթոդներ, դասավանդման նոր ձևեր, նոր մոտեցումներ ընտրել աշակերտներին մոտիվացնելու համար: Ինչպես Ս. Խաչատրյանն է նշել իր «Ուսուցման արդյունավետ հնարներ» (2020) գրքում, փոխգործուն մոտեցումներն անհրաժեշտ են սովորողներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար [9, 21]:

Այդ հարցում մեզ օգնության է հասնում S2S գործիքների կիրառումը, որոնց ներդրումը էական փոփոխություններ է կատարում դասավանդման մեթոդաբանության մեջ: S2S գործիքներն ու հարթակները, անկասկած, կարող են օգտագործ-

վել որպես փոխգործուն մեթոդ սովորողներին մոտիվացնելու, նրանց քերականության զարգացման, բառապաշարի հարստացման և գիտելիքների ստուգման համար: Հնարավոր է դառնում նաև ուսումնական գործընթացում ներգրավել բոլոր սովորողներին և դասը դարձնել բազմաբնույթ ու հետաքրքիր:

Ուսումնական գործընթացում SՀS գործիքներն ունեն մի շարք **առավելություններ**.

- ☞ ապահովում են սովորելու դրական մոտիվացիա,
- ☞ խթանում սովորողների ակտիվությունը,
- ☞ բարձրացնում առաջադիմությունն ու հետաքրքրվածությունը,
- ☞ բարձրացնում դասի արդյունավետությունը,
- ☞ օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում,
- ☞ խորացնում կամ ամրապնդում են ուսուցանվող նյութի իմացությունը,
- ☞ բարելավում ունկնդրման հմտությունները՝ լսելով նյութը լեզվակրի կողմից,
- ☞ անհատականացնում ուսումնական գործընթացը,
- ☞ թույլ է տալիս իրականացնել անհատական կամ խմբային աշխատանք,
- ☞ ապահովում է հետադարձ կապ իրական ժամանակում,
- ☞ հնարավորություն են տալիս իրականացնելու սովորողների առցանց համաժամանակյա միավորային գնահատում:

Ս. Եդիազարյանը (2016) նշում է, որ կրթական համակարգի տեղեկատվայնացումը և SՀS-ների կիրառումը ուսումնական գործընթացում կրթության բովանդակության բարեփոխումների հիմքն են, որոնք թույլ են տալիս որակական փոփոխությունների ենթարկել ինչպես ողջ կրթական համակարգը, այնպես էլ ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու կազմակերպման ձևերը [10, 282]:

SՀS-ի կիրառումը կարող է դրական ազդել սովորողների ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մոտիվացիայի վրա, ինչն էլ մեծապես նպաստում է սովորողների հետաքրքրության առաջացման, դրա մեծացման ու պահպանման վրա: SՀS-ի միջոցով ուսումնական նյութը կարելի է ոչ միայն ներկայացնել զանազան ձևերով՝ տեսանյութերով, տեսասահիկներով, այլ նաև կարելի է ստուգել ուսումնական նյութի իմացությունը՝ ինտերակտիվ խաղեր, թեստեր և այլն: Դրանք թույլ են տալիս բարձրացնել սովորողների ուշադրությունը, հետաքրքրությունն ու ներգրավվածությունը: Վերջիվերջո, SՀS-ի կիրառումն ուսումնական գործընթացում թույլ են տալիս հեռախոսներն ու պլանշետներն օգտագործել սովորելու նպատակով:

Աշխատելով որպես անզլերենի ուսուցչուհի Արմավիրի Ռ. Եդոյանի անվան թիվ 1 ավագ դպրոցում՝ հետազոտությունն իրականացվել է այնտեղ, դասավանդվող դասարաններից մեկում: Հետազոտական փուլը տևել է 5 շաբաթ ու մեկ շաբաթ տարբերությամբ անցկացվող դասերի շրջանակում: Անցկացվել են մեկ դաս առանց SՀS գործիքի ու չորս դաս՝ SՀS գործիքների կիրառմամբ: Ընդհանուր մաս-

նակցել են 18 սովորող, իսկ տարբեր դասերին դիտարկումներ կատարել են 2-4 դասախոսող, որոնց թվում ընդգրկված էին դպրոցի տնօրենն ու ուսումնական գծով փոխտնօրենը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են **SZS գործիքներ:**

LearningApps¹⁰ գործիքը հնարավորություն է տալիս ստեղծելու տարաբնույթ ուսումնական խաղեր ու ինտերակտիվ վարժություններ: Այն հիմնականում ծառայում է **ուսուցողական գնահատմանը:** Ուսուցիչը կարող է տեսնել սովորողների պատասխանները միայն պրոյեկտորին միացված ընդհանուր համակարգչի դեպքում, իսկ անհատական հեռախոսների միջոցով սովորողների աշխատանքները չի վերահսկում:

Quizizz¹¹ ու **Kahoot¹²** առցանց գործիքների միջոցով հնարավոր է իրականացնել սովորողների **համաժամանակյա միավորային գնահատում:** Սովորողները հարցումների հետևում են և պատասխաններ տալիս հեռախոսների կամ այլ միացված սարքերի միջոցով: Գնահատվում են ինչպես ճիշտ պատասխանները, այնպես էլ կատարումի արագությունը: Quizizz-ը թույլ է տալիս աշխատել առանձին սարքերից, իսկ Kahoot-ը պահանջում է, որ բոլոր աշակերտները գտնվեն նույն սենյակում և հետևեն մեկ ընդհանուր համակարգչին միացված էկրանին: Հարցերում կարելի է տեղադրել նկարներ, բանաձևեր ու գծագրեր: Նշենք, որ երկու գործիքներից ստացված տվյալները հնարավոր է արտահանել MS Excel-ով՝ առանձին աշակերտների միավորների վերլուծության համար [2, 57]:

Google forms¹³– Համաժամանակյա առցանց գիտելիքների ստուգման գործիք, որն օգտագործվում է **առցանց, միավորային գնահատման** համար: Այն նույնպես թույլ է տալիս արտահանել արդյունքները Excel ձևաչափով, ինչը հեշտացնում է սովորողների գնահատման վերլուծությունը:

Playposit¹⁴ – Գործիքը թույլ է տալիս կատարել տեսահոլովակների մոնտաժ ու խմբագրում, ուսուցողական գործընթացը դարձնելով ավելի ընկալելի և հետաքրքիր: Տեսահոլովակների ցանկացած հատվածում հնարավոր է տեղադրել ուսուցողական հարցեր, ինչի շնորհիվ բարձրանում են **ներգրավվածությունն ու գիտելիքների ամրապնդումը:**

Office Sway¹⁵ առցանց գործիքը PowerPoint-ի այլընտրանք է: Այն թույլ է տալիս ստեղծել տեսասահիկներ, թվային հաշվետվություններ, վերբեռնել տարբեր ֆայլեր (նկար, տեսահոլովակ, տեքստ) ու հղումներ, ինչպես նաև արտահանել պատրաստի նյութը և հրապարակել հղումով [2, 60]: Այս գործիքը հիմնականում կիրառվում է **ներկայացման և տեղեկատվության կառուցվածքային մատուցման** նպատակով:

¹⁰ <https://learningapps.org/>

¹¹ <https://quizizz.com/>

¹² <https://kahoot.com/>

¹³ <https://docs.google.com/>

¹⁴ <https://go.playposit.com/>

¹⁵ <https://sway.cloud.microsoft/>

Հետազոտության թեման ընտրել եմ՝ ելնելով դասարանում առկա խնդիրներից, որոնցից են անուշադրությունը, հեռախոսով զբաղվելը, անպատրաստ դասին ներկայանալը: Այդ իսկ պատճառով հարկավոր էր ելք գտնել, այդ սովորողներին մոտիվացնելու, դասընթացին ներգրավելու ու սովորեցնելու համար: Հաշվի առնելով հեռախոսներից սովորողների կախվածությունը, որպես ազդեցության գործիք ընտրեցի տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը, որը կարող էր ոչ միայն մոտիվացնել սովորողներին, այլ նաև հեռախոսներն օգտագործել սովորելու նպատակով:

Հետազոտության համար մշակվել են երկու հիմնական գործիք, որոնք լրացվել են տվյալ դասի ավարտին.

1. **սովորողների անանուն հարցաթերթիկ** (տե՛ս Նկար 2), որը ներառել է ինչպես փակ, այնպես էլ բաց հարցեր: Հարցաթերթիկի նպատակն էր պարզել սովորողների ընկալումը առաջադրանքների նկատմամբ, նրանց մասնակցության ակտիվությունը, ինչպես նաև դասի վերաբերյալ առաջարկներն ու գնահատականները,

2. **դասալսողի դիտարկման քարտեր** (տե՛ս Նկար 3), որը նախատեսված էր դասի ընթացքում սովորողների մոտիվացիոն վարքագիծը գրանցելու համար: Դիտարկման քարտը ներառում էր մի շարք ցուցիչներ՝ հետաքրքրություն, մասնակցություն, պատասխաններ, հարցերի առաջադրում, անտարբերություն և այլ վարքագծեր:

Նկար 2.

Սովորողի հարցաթերթիկ

- 1. Հեշտությամբ կատարեցի առաջադրանքը _____
- 2. Հարցեր տվեցի _____
- 3. Պատասխանեցի հարցերին _____
- 4. Կցանկանայի քննարկել առաջադրանքը _____
- 5. Ի՞նչը կցանկանայիք փոխել _____
- 6. Ի՞նչը դուր եկավ _____

Նկար 3.

Դասալսողի դիտարկումներ

Անուն, ազգանուն _____

Ամսաթիվ _____

Դասի թեման _____

Սովորողի մոտիվացիային բնորոշ վարքագիծ	Տվյալ վարքագիծը բնորոշող աշակերտների թիվը կամ անունները
Ցուցաբերում է հետաքրքրություն	
Մասնակցում է դասին (միջին մոտիվացիա)	
Պատասխանում է հարցերին	
Հարցեր է տալիս	
Ցուցաբերում է անտարբերություն	
Այլ վարքագիծ	

Արդյունքների գնահատման հիմքում ընկած են վերը նշված դասալսողի դիտարկումներն ու սովորողների ինքնագնահատականը (հարցաթերթիկներ), ինչը հնարավորություն է տվել փաստացի պատկերացում ստանալու SՀS գործիքների ազդեցության մասին դասերի ընթացքում: Տվյալների վերլուծությունը իրականացվել է նկարագրական վիճակագրության մեթոդներով ու գծապատկերների միջոցով:


Անձնական դիտարկումները չեն համարվել որպես ինքնուրույն մեթոդ, այլ ծառայել են լրացուցիչ որակական աղբյուրի դերի՝ համեմատելու համար դասավանդման ընթացքում արձանագրված փորձը հարցման ու դիտարկման տվյալների հետ: Դասալսողների կարծիքները որոշ դեպքերում համընկել են միմյանց, իսկ որոշ դեպքերում տարբերվել են, ինչը փաստում է բազմազան ընկալումների առկայությունը:

Առաջին դասին, որն իրականացվել է ավանդական մեթոդով՝ առանց SՀS գործիքի կիրառության, դասալսողի դիտարկումների արդյունքում ունեցել ենք հետևյալ պատկերը. հետաքրքրություն էր ցուցաբերում 7 աշակերտ, իսկ 11-ն ունեին անտարբեր վերաբերմունք, որից 5-ն էլ հեռախոսով էին զբաղվում:

Այն դասերի ընթացքում, որի ժամանակ կիրառվել էին վերը թվարկված գործիքները, սովորողները մեծ ակտիվություն էին ցուցաբերում, ինչը փաստում էր նաև դասալսողների ու սովորողների հարցաթերթիկների վերլուծությունը: Նրանց հետաքրքրել էին խաղերը, այն ուսուցողական տեսանյութը, որում լեզվակիրն էր բացատրում նյութը: Եվ ամեն անգամ որևէ գործիք կիրառելուց հետո նրանք ցանկանում էին նորից տեսնել տվյալ գործիքը:

Սովորողների հարցաթերթիկների ու դիտարկողների քարտերի արդյունքների վերլուծությունների հիման վրա ի մի բերելով 5 դասերը՝ կարող ենք ասել, որ հետազոտական աշխատանքի սկզբում մոտիվացված աշակերտների թիվը քիչ էր, իսկ հետազոտական աշխատանքի վերջում նրանց թիվը ավելացավ, և ունեցանք հետևյալ պատկերը.

Գծապատկեր 1



Սովորողները իրենց կարծիքները արտահայտեցին դասերի ընթացքում՝ նշելով, որ ՏՀՏ գործիքը դրական ազդեցություն է ունեցել, քանի որ նրանք մրցակցության մեջ էին մտնում, ինչը ավելացնում էր նրանց մոտիվացիան: Դա ստիպեց կրկնել ու վերհիշել անցած թեմաները, վերլուծել ու գտնել իրենց հարցերի պատասխանները: Բառերը ավելի լավ տպավորվեցին, իսկ խաղերն ու ուսուցողական տեսանյութերը դասերը դարձրին ավելի հետաքրքիր ու բազմաբովանդակ: Տեսանյութերի միջոցով նոր նյութը ավելի տպավորիչ էր, իսկ խաղերը օգնեցին արագ կողմնորոշվել, պատասխանել հարցերին ու ամրապնդել գիտելիքները: Սովորողները նոր գիտելիքներ ձեռք բերեցին և ավելի հեշտ ըմբռնեցին նյութը՝ նշելով, որ ցանկանում են նման դասերը հաճախակի կազմակերպել:

Պետք է նշել, որ ներկայացված արդյունքները հիմնականում հիմնված են սուբյեկտիվ գնահատականների վրա, և հետազոտությունը չունի օբյեկտիվ տվյալներ՝ օրինակ միջին միավորների կամ գրավորների արդյունքների համեմատություն: Հետագա հետազոտություններում նպատակահարմար կլինի այդպիսի տվյալների հավաքում, ինչը կուժեղացնի արդյունքների առարկայականությունն ու վարկանիշը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով համապատասխան գրականություն թեմայի շուրջ՝ նկատեցի, որ այն հեղինակները, որոնց անդրադարձել եմ հետազոտության ընթացքում, միայն նշում են տեղեկատվական տեխնոլոգիաների դրական ազդեցությունն ուսումնական գործընթացում: Սակայն պետք է նաև նշել, որ ինչքան էլ այդ տեխնոլոգիաներն ու ՏՀՏ գործիքներն ունեն դրական կողմեր, այնուամենայնիվ դրանք ունեն մի շարք բացասական կողմեր, որոնց միջոցով ուսումնական հաջողություն տեղի չի ունենում:

☛ Դժվար է իրականացնել կրթական միջավայրի կազմակերպումը:

☛ Բոլոր դասաժամերին հնարավոր չէ կիրառել դրանք, քանի որ ոչ բոլոր դպրոցներն ու դասասենյակներն են հագեցած համակարգիչներով, սմարթ գրատախտակներով, չկա համապատասխան քանակով պրոյեկտոր:

☛ Ուսուցիչներին նախապատրաստելու համար անհրաժեշտ է մեծ նախնական ներդրում:

☛ ՏՀՏ գործիքների կիրառությունը պահանջում է Google հաշվի առկայություն: Ուսուցիչը պետք է առաջին հերթին մուտք գործի իր հաշիվը, որից հետո նոր միայն կկարողանա օգտագործել տվյալ գործիքը: Դասի ընթացքում տվյալ խնդրից խուսափելու համար պետք է նախապես մուտք գործել հաշիվ, ինչն էլ պահանջում էր ազատ ժամանակի առկայություն:

☛ Ժամանակատար է, շատ հաճախ հնարավոր չէ դասն իրականացնել պլանավորած ձևով, քանի որ լինում են տեխնիկական խնդիրներ համացանցի հետ:

☛ Հնարավոր չէ ապահովել ինտերնետ կապի հավասար մատչելիություն:

☛ Ոչ բոլորն ունեն այնպիսի հեռախոսներ, որոնք թույլ կտան օգտագործել ՏՀՏ գործիքը:

☞ Չի ստուգվում սովորողների իմացությունը, քանի որ շատերը պատասխանում են հարցին պատահականության սկզբունքով:

Ելնելով կատարած հետազոտության արդյունքից, սովորողների կարծիքների ուսումնասիրությունից ու վերլուծությունից՝ կարող ենք նշել, որ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնում է սովորողների մոտիվացիան: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ չնայած ՏՀՏ գործիքները մոտիվացնում ու ոգևորում են սովորողներին, այդ ոգևորությունը չի պահպանվում այն դասերին, որի ժամանակ ՏՀՏ գործիք չի կիրառվում:

THE IMPACT OF INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES ON INCREASING STUDENT MOTIVATION

Sahakyan Azniv

English Teacher,

R. Yeghoyan N1 High School, Armavir,

Republic of Armenia,

sahakyanazniv93@gmail.com

Summary

In the learning process, the involvement and participation of all students is of great importance, which often remains incomplete when motivation is lacking. Motivation is considered a key driving force in students' educational process, especially in the 21st century—a period of rapid change, development, and progress, where the “new generation” grows up with ideas full of challenges. It is also the era when artificial intelligence was created and is increasingly being integrated into education.

This article addresses the role and importance of motivation, its external and internal factors. Examples are provided that serve as stimuli for enhancing both external and internal motivation. Some teaching strategies are presented that contribute to the increase of learners' motivation.

Ինքնակատարելագործման ու ինքնազարգացման գործընթացների շարժիչ ուժերից են հոգեբանական գործոնները, որոնք նույնպես ունեն ինչպես դրական այնպես էլ բացասական ներգործություն այդ գործընթացների վրա: Ըստ Ամերիկայի Միացյալ Նահանգների Ռոչեստրի մասնավոր հետազոտական համալսարանի, հոգեբանության ֆակուլտետի պրոֆեսորներ Էդվարդ Լ. Դեյինի և Ռիչարդ

Մ. Ռայանի՝ հոգեբանական գործոնները ներառում են անձի մոտիվացիան, ինքնագնահատականը, էմոցիոնալ ինտելեկտն ու անձնային հավատը սեփական կարողությունների նկատմամբ: Դրանք ինքնազարգացման գործընթացի հիմնական շարժիչ ուժերն են: Հատկապես մոտիվացիան գերակայում է մանկավարժական, կրոնական և կառավարչական գործունեություն ծավալող անձանց շրջանում [7, 68]:

Մանկավարժի ներքին մոտիվացիան, ինքնավստահությունը, ինքնակառավարման հմտությունները, հուզական ինտելեկտը, նպաստում են նրա անձնային և մասնագիտական աճին, ինքնակատարելագործմանն ու ինքնազարգացմանը: Գտնվելով առողջ հոգեբանական վիճակում՝ մանկավարժն ունենում է մասնագիտական առաջընթացի, ինքնակրթության, ինքնակատարելագործման ու ինքնազարգացման մեծ ցանկություն:

Հոգեբանական գործոնների՝ ինքնակատարելագործման և ինքնազարգացման անընդհատության վրա ունեցած խոչընդոտող գործոններից են՝ ինքնագնահատականի ցածր մակարդակը կամ բացակայությունը, սթրեսակայունության, հավասարակշռության, հանդուրժողականության ու ապրումակցման կարողությունների բացակայությունը, չարականությունը, նախանձը, կոնֆլիկտային, ագրեսիվ ու սովորողների հանդեպ անարդար ու կողմնակալ վարքագծի դրսևորումը: Նշված բացասական գործոնների ազդեցության պատճառով մանկավարժը չի կարող մշտապես դրսևորել բարձր աշխատունակություն, պատրաստակամություն և զգոնություն, որ կարողանա անընդհատ ինքնակրթվել, ինքնակատարելագործվել և գնալ ինքնազարգացման:

❖ Առողջական գործոններ

Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ առողջությունը ոչ միայն հիվանդության բացակայությունն է, այլև լիարժեք ֆիզիկական, հոգեբանական, մտավոր ու սոցիալական բարեկեցությունը:

Ինչպես առողջ լինելու դեպքում մարդը կարող է աշխատել առանց խոչընդոտների, այնպես էլ ֆիզիկական և հոգեկան առողջության վատթարացման պատճառով հնարավոր չէ կենտրոնանալ աշխատանքի վրա:

Առողջական գործոնների՝ ինքնակատարելագործման և ինքնազարգացման անընդհատության ապահովման դրական գործոնների օրինակ են առողջ ապրելակերպի վարումը, ֆիզիկական ակտիվության ապահովումը, իսկ խոչընդոտող գործոններից են՝ քրոնիկ կամ ժամանակավոր հիվանդությունների առկայությունը, հոգեկան առողջության վատթարացումը (սթրես, անձնական խնդիրներ, մտածմունքներ), որոնց պատճառով խաթարվում են մանկավարժի աշխատանքային գործունեության բնականոն ընթացքը, ինքնակրթությունը, ինքնակատարելագործումն ու ինքնազարգացումը:

Մանկավարժի ինքնակատարելագործման ու ինքնազարգացման գործընթացին նպաստող ու խոչընդոտող գործոնները փոխազդում են միմյանց հետ, և դրան-

ցից յուրաքանչյուրն առանձնահատուկ դեր ունի մանկավարժի ինքնակրթության և մասնագիտական կայացման գործում:

Եզրակացություն

Մանկավարժի ինքնակատարելագործումն ու ինքնագարգացումը կայուն են դառնում այն դեպքում, երբ մանկավարժն իր մասնագիտական առաջընթացը դիտարկում է ոչ միայն որպես կարիերայի առաջընթաց, այլև որպես անձնական ու հասարակական արժեք: Մանկավարժի համար իր անձնային և մասնագիտական աճը պետք է դառնա ոչ թե պարտադիր պահանջ, այլ ներքին պահանջմունք ու արժեքային կողմնորոշում:

THE CONTINUITY AND CONSISTENCY OF EDUCATORS' SELF-IMPROVEMENT AND SELF-DEVELOPMENT IN THE PROFESSIONAL SPHERE

Aleksanyan Mane

*PhD student at the Chair of Pedagogy,
Yerevan State University,
Republic of Armenia,
mane.alexanyan@ysu.am*

Summary

Enhancing the effectiveness of education quality has always been and remains one of the main principles of state policy in the field of education. Improvement and efficiency in education quality are impossible without highly professional and skilled pedagogical staff. The development of pedagogical personnel can be ensured only through the continuous improvement of their education. An educators' self-education and self-improvement are ongoing processes that require continuous development and are influenced by various educational, social, psychological, and health-related factors. Each of these factors has both positive effects — supporting the teacher in their processes of self-development and self-improvement — and negative effects that hinder these processes. Without competent and well-developed teachers who act in accordance with the demands of the time, it is impossible to ensure quality education.

The purpose of the study is to analyze and present the essence of educators' self-improvement and self-development processes, as well as the factors that contribute to or stop their continuity and consistency. The scientific study of self-improvement and self-development processes is important not only for pedagogical theory but also for educational policy and practice.

Keywords: *Educator, self-education, self-development, self-improvement, continuity, motivation.*

НЕПРЕРЫВНОСТЬ И ПРОДОЛЖИТЕЛЬНОСТЬ САМОСОВЕРШЕНСТВОВАНИЯ И САМОРАЗВИТИЯ ПЕДАГОГА В ПРОФЕССИОНАЛЬНОЙ СФЕРЕ

Александян Мане

*Соискатель кафедры педагогики,
Ереванский государственный университет,
Республика Армения,
mane.alexanyan@ysu.am*

Аннотация

Повышение эффективности качества образования всегда было и остаётся одним из главных принципов государственной политики в сфере образования. Улучшение и повышение эффективности качества образования невозможно без педагогических кадров, обладающих высоким уровнем профессионального развития и личных качеств. Развитие педагогических кадров может быть обеспечено только при условии совершенствования их непрерывного

образования. Самообразование и самосовершенствование педагога – это процессы, требующие постоянного развития и зависящие от ряда образовательных, социальных, психологических и физических факторов. Каждый из этих факторов имеет как положительное влияние, способствующее процессам саморазвития и самосовершенствования педагога, так и отрицательное, которое может препятствовать этим процессам. Если у нас не будет компетентных и развитых педагогов, действующих в соответствии с требованиями времени, невозможно обеспечить качественное образование.

Цель исследования – проанализировать и представить сущность процессов самосовершенствования и саморазвития педагога, а также факторы, способствующие или препятствующие их непрерывности и постоянству. Научное изучение процессов самосовершенствования и саморазвития важно не только для педагогической теории, но и для образовательной политики и практики.

Ключевые слова: педагог, самообразование, саморазвитие, самосовершенствование, преемственность, мотивация.

Օգտագործված գրականության ցանկ

1. Harutyunyan N., Vardanyan I., *Fundamental principles of the pedagogue's quality education*, Вісник Черкаського університету. Серія «Педагогічні науки», Випуск № 2, 2019.
2. Bobrova I.A., Chursinova O. V., *Professionalnoye samorazvitiye pedagoga kak usloviye yego nepreryvnogo obrazovaniya*, Stavropolskiy kraevoy institut razvitiya obrazovaniya, povysheniya kvalifikatsii i perepodgotovki rabotnikov obrazovaniya, (Rossiya, g. Stavropol) DOI: 10.24411/2500-1000-2018-10059, (in Russian)
3. Ivanova A.I., Bayagantaev G.G., *Razvitiye professionalnykh kompetentsiy molodykh pedagogov v usloviyakh selskoy shkoly v kontekste nepreryvnogo obrazovaniya*, Pedagogical Journal, Vol. 12, Is. 3A, 2022. DOI: 10.34670/AR.2022.57.98.099, /http://publishing-vak.ru/file/archive-pedagogy-2022-3/c41-bayagantaev-ivanova.pdf/ (in Russian)
4. Maralov V.G., *Osnovy samopoznaniya i samorazvitiya*, Dopushcheno Ministerstvom obrazovaniya Rossiyskoy Federatsii v kachestve uchebnogo posobiya dlya studentov pedagogicheskikh professionalnogo obrazovaniya, 2-ye izdaniye, stereotipnoye Moskva, Academia, 2004, 245 pages. (in Russian)
5. Bandura A., *Social Learning Theory & Social Cognitive Learning Theory*, Stanford University, General Learning Press, 79 Madison Avenue, New York city, 2012, 46 pages.
https://www.asecib.ase.ro/mps/Bandura_SocialLearningTheory.pdf/
6. Maslow A.H., *Motivation and Personality*, Reprinted from the English Edition by Harper & Row, Publishers, 1954, 394 pages
7. Ryan R.M., Deci E.L., *Self-Determination Theory and the Facilitation of Intrinsic Motivation, Social Development, and Well-Being*, University of Rochester, Copyright 2000 by the American Psychological Association, Vol. 55, No. 1, 68-78, DOI: 10.1037/110003-066X.55.1.68,
https://selfdeterminationtheory.org/SDT/documents/2000_RyanDeci_SDT.pdf/

Получено: 05.11.2025

Рассмотрено: 10.11.2025

Принято: 21.11.2025

Received: 05.11.2025

Reviewed: 10.11.2025

Accepted: 21.11.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՁԱԽԼԻԿ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Խլոպուզյան Անահիտ

*Մանկավարժության ամբիոնի հայցորդ,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն,
anahit.khlopuzyan@ysu.am
<https://orcid.org/0000-0003-3607-4434>*

Ամփոփում

Համառոտ ներածական: Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջին ու առանցքային սոցիալական ինստիտուտն է, որտեղ ձևավորվում են նրա ինքնաճանաչման հիմքերը, արժեքային կողմնորոշումներն ու սոցիալական վարքագծի մոդելները: Ընտանեկան միջավայրի դերը հատկապես մեծ է այն երեխաների դեպքում, որոնք ունեն նյարդաֆիզիոլոգիական առանձնահատկություններ, ինչպիսին է ձախլիկությունը: Վերջինս դիտարկվում է ոչ թե որպես շեղում, այլ որպես անհատականության յուրահատուկ առանձնահատկություն, որը պահանջում է հատուկ ըմբռնում և ընդունում: Ընտանիքը, լինելով երեխայի հուզական, ճանաչողական ու վարքային զարգացման միջավայր, միաժամանակ կարող է հանդես գալ որպես հարմարման խթանող կամ խոչընդոտող գործոն:

Ձախլիկ երեխաների կոգնիտիվ ու նյարդահոգեբանական առանձնահատկությունները հաճախ չեն համընկնում սոցիալական նորմերի ու ավանդական ուսուցման մեթոդների հետ: Այս հանգամանքը կարող է դժվարացնել նրանց հարմարումը դպրոցական ու սոցիալական միջավայրերում: Այդ իսկ պատճառով ծնողների դերը որոշիչ է. եթե նրանք տեղյակ են երեխայի առանձնահատկություններին և դաստիարակության ընթացքում առաջնորդվում են ընդունող ու աջակցող մոտեցմամբ, ապա ստեղծում են անվտանգ մթնոլորտ, որտեղ ձախլիկ երեխան կարող է զարգանալ առանց համեմատության և ճնշման:

Նման պայմաններում ձևավորվում է դրական ինքնագնահատական, ուժեղանում է վստահությունը սեփական կարողությունների նկատմամբ, ինչպես նաև ապահովվում է ստեղծագործական ու ճանաչողական ներուժի լիարժեք իրականացում: Ընդունող ու ըմբռնող ընտանեկան մթնոլորտը նպաստում է սոցիալական ներառվածությանը, նվազեցնում է ապահարմարման ռիսկերը և ուժեղացնում է հոգեբանական կայունությունը:

Մյուս կողմից, ծնողների անտեղյակությունը կամ սխալ պատկերացումները կարող են հանգեցնել այն իրավիճակին, երբ նրանք ձգտում են «ուղղել» երեխային, ստիպել նրան գործել աջ ձեռքով կամ համապատասխանել ընդունված նորմերին: Նման ճնշող վերաբերմունքը առաջացնում է ներքին հակասություններ, սթրես, ուսումնական և հաղորդակցական դժվարություններ, որոնք կարող են վերածվել ապահարմարման լուրջ խնդիրների: Արդյունքում ընտանիքը դառնում է ոչ թե աջակցող միջավայր, այլ սոցիալական ու հոգեբանական լարվածության աղբյուր:

Բանալի բառեր՝ ընտանեկան միջավայր, սոցիալականացում, ինքնաճանաչում, ձախլիկություն, սոցիալական նորմեր, ինքնագնահատական, ինքնահաստատում, պաշտպանող գործոն, ռիսկային գործոն:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների ու հրատարակությունների կարճ վերլուծություն: Հիմնախնդրին իրենց հետազոտություններում անդրադարձել են տարբեր գիտնականներ (Օ. Ա. Շելոպուխո, Մ. Մ. Բեգուսկիխ, Վ. Ա. Սլաստենին, Լ. Ս. Վիգոտսկի, Ու. Բրոնֆենբերեններ, Ս. Լ. Ռուբինշտեյն):

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել ընտանեկան միջավայրի դերը ձախլիկ երեխաների սոցիալական հարմարման գործընթացում՝ վերլուծելով ծնողների տեղեկացվածության, վերաբերմունքի ու դաստիարակչական մոտեցումների ազդեցությունը երեխայի հոգեբանական կայունության, ինքնագնահատականի, ուսումնական հաջողությունների և սոցիալական ինտեգրման վրա:

Հետազոտության նորույթը: Նորույթն այն է, որ ընտանեկան միջավայրի և ծնողական վերաբերմունքի ազդեցությունը դիտարկվում է ձախլիկ երեխաների սոցիալական հարմարման համատեքստում՝ միավորելով նեյրոֆիզիոլոգիական, հոգեբանական ու մանկավարժական մոտեցումները: Աշխատության մեջ փորձ է արվում պարզաբանելու, թե ինչպես են ծնողների տեղեկացվածության մակարդակը և ընտանեկան դաստիարակության բնույթը պայմանավորում երեխայի ինքնագնահատականի ձևավորումը, ստեղծագործական ներուժի զարգացումն ու սոցիալական ներառման արդյունավետությունը:

Հիմնական շարադրանք: Ընտանիքը երեխայի զարգացման և սոցիալականացման հիմնական ու առաջնային սոցիալական ինստիտուտն է, որտեղ ոչ միայն իրականացվում է առաջին սոցիալական փորձառությունը, այլև դրվում են անձի ինքնաճանաչման, ինքնավերահսկման և վարքագծի նորմերի ձևավորման հիմքերը: Ընտանեկան միջավայրն իր էությամբ արտացոլում է տվյալ հասարակության մշակութային, լեզվաբանական ու արժեքային համակարգերը, սակայն միաժամանակ այն իրականացնում է կենսաբանական, հոգեբանական և մանկավարժական գործառնություններ, որոնք ուղղորդում են երեխայի վարքագծային, հուզական և ճանաչողական արձագանքները:

Այդ առումով ընտանեկան դաստիարակությունը հանդես է գալիս որպես կարևոր գործոն, որը կա՛մ ապահովում է երեխայի ներքին հավասարակշռության կայունությունը, կա՛մ էլ խախտում է այն՝ ստեղծելով սոցիալական ու հոգեբանական ապահարմարման ռիսկեր [1, 300-301]:

Ձախլիկ երեխաների դեպքում ընտանեկան միջավայրի դերը դառնում է առավել վճռորոշ, քանի որ նրանց նյարդահոգեբանական, կոգնիտիվ առանձնահատկությունները հաճախ չեն համընկնում դասական ուսումնական ու սոցիալական նորմերին: Այս առանձնահատկությունները պահանջում են ավելի նուրբ, ըմբռնող ու անհատականացված մոտեցում: Եթե ծնողները տեղեկացված են ձախլիկության նեյրոֆիզիոլոգիական բնույթի մասին և դաստիարակչական պրակտիկայում առաջնորդվում են այդ գիտելիքով, ապա ընտանեկան միջավայրը վերածվում է պաշտպանող ու աջակցող հենարանի: Այս մոտեցումը նպաստում է ոչ միայն երեխայի ինքնագնահատականի կայունացմանը, այլև նրա ճանաչողական և ստեղծա-

գործական ունակությունների լիարժեք զարգացմանը, ինչպես նաև սոցիալական ներառվածության ապահովմանը:

Ընտանեկան միջավայրի այսպիսի կառուցվածքը ստեղծում է անվտանգ ու խթանող միջավայր, որտեղ ձախլիկ երեխայի յուրահատկությունները ընկալվում են որպես բնական երևույթ, ինչը նվազեցնում է ներքին հակասությունները և բարձրացնում սոցիալական հարմարումը:

Հակառակ դեպքում, երբ ծնողներն անտեղյակ են և ձախլիկությունը ընկալում են որպես շտկման ենթակա շեղում, նրանք հաճախ փորձում են պարտադրել երեխային գործել աջ ձեռքով կամ հարմարվել ընդունված նորմերին: Արդյունքում առաջանում են ներքին հակասություններ, սթրեսային վիճակներ, ինքնավստահության կորուստ և ուսումնական գործընթացում հարմարման խոչընդոտներ:

Լ. Վիգոտսկու մշակութափոխանակական մոտեցման համաձայն՝ երեխայի հոգեբանական զարգացումը տեղի է ունենում «մոտակա զարգացման գոտում», որտեղ միջավայրն ունի միջնորդի ու ուղղորդողի դեր: Ըստ Վիգոտսկու՝ սոցիալական փոխազդեցությունը նախորդում է անհատական հոգեբանական գործընթացների ձևավորմանը, այսինքն՝ ընտանիքի ներսում ձևավորվող հարաբերությունները այն հենքն են, որի վրա կառուցվում է երեխայի ճանաչողական և անձնային զարգացումը [5, 86-88]: Այս տեսանկյունից ընտանիքը՝ որպես սոցիալական միջավայր, կատարում է միջնորդի ու ուղղորդողի դեր: Այն ոչ միայն ապահովում է երեխայի համար գործողությունների և փորձառությունների դաշտ, այլև ուղղորդում է երեխային ինքնուրույնության, խնդիրների լուծման ու սոցիալական հմտությունների ձևավորման մեջ:

Սոցիալական փոխազդեցությունը, ներառյալ ծնողների և այլ մտերիմների հետ, նախորդում է անհատական հոգեբանական գործընթացներին, ինչը նշանակում է, որ ճանաչողական և անձնային զարգացումը ստեղծվում է միջավայրում ձևավորված հարաբերությունների, զուգակցված փորձառությունների ու աջակցող հարթակների միջոցով: Ձախլիկ երեխաների դեպքում միջնորդող գործոնը հատկապես կարևոր է, քանի որ նրանց գործունեության յուրահատկությունները հաճախ չեն համընկնում ավանդական մոտեցումներին և պահանջում են նուրբ սոցիալական աջակցություն:

Այս դիտարկումը համահունչ է Յու. Բրոնֆենբերենների էկոլոգիական համակարգերի տեսությանը, ըստ որի՝ ընտանեկան միջավայրը ներառվում է միկրոհամակարգում՝ լինելով երեխայի զարգացման ամենամիջնորդված ու անմիջական ազդեցություն ունեցող դաշտը: Ըստ Բրոնֆենբերենների՝ ընտանիքը ոչ միայն ապահովում է երեխայի կենսաբանական ու հոգեբանական զարգացումը, այլև ուղղորդում է նրա սոցիալական կապերի որակն ու ինտեգրման ձևերը: [7, 22-25]

Մենք կարծում ենք, որ ձախլիկ երեխաների պարագայում սա ստանում է լրացուցիչ նշանակություն: Նրանց նյարդահոգեբանական ու կոգնիտիվ առանձնահատկությունները հաճախ չեն համընկնում ավանդական ուսումնական ու սոցիալական մոտեցումներին, ուստի ընտանիքը՝ որպես միկրոմիջավայրի առանցքային

գործոն, կարող է կամ նվազեցնել կամ ուժեղացնել երեխայի հարմարման ռիսկերը: Ընտանեկան միջավայրի ըմբռնող ու աջակցող բնույթը նպաստում է երեխայի սոցիալական կապերի կառուցմանը՝ ստեղծելով անվտանգ տարածք, որտեղ նա կարող է զարգանալ՝ ըստ իր յուրահատուկ ներքին ռիթմի և հոգեբանական առանձնահատկությունների:

Բրոնֆենբերենների մոտեցումն ու Վիգոտսկու «մոտակա զարգացման գոտու» գաղափարը լրացնում են մեկը մյուսին. մինչ Վիգոտսկին շեշտում է սոցիալական փոխազդեցության և միջնորդման ազդեցությունը անհատական զարգացման վրա, Բրոնֆենբերենը ընդգծում է համակարգային, բազմաշերտ, միջավայրային ազդեցությունը, որտեղ ընտանիքը անմիջական և ամենակարևոր դերակատար: Այս համատեքստում մեր դիտարկմամբ ընտանիքի դերը ձախլիկ երեխաների համար դառնում է երկու կարևոր ֆունկցիա միաժամանակ:

Ձախլիկ երեխաների դեպքում սա նշանակում է, որ ընտանեկան միջավայրը կարող է գործել որպես կամուրջ դպրոցական և հասարակական նորմերի հետ՝ նվազեցնելով հնարավոր աններդաշնակություն:

Ս. Ռուբինշտեյնի գործունեության տեսության մեջ ևս ընդգծվում է միջավայրի դերակատարությունը: Նրա համոզմամբ անձը ձևավորվում է գործունեության և միջավայրի փոխազդեցության արդյունքում, որտեղ յուրաքանչյուր հոգեբանական հատկություն բխում է իրական սոցիալական պայմաններից [2, 121-124]: Եթե ընտանեկան միջավայրը ձախլիկ երեխային հնարավորություն է տալիս ազատորեն կիրառելու իր առանձնահատկություններին համապատասխան գործունեության ձևերը, ապա նա ձեռք է բերում ինքնահաստատման ու ինքնավստահության փորձառություն: Հակառակ պարագայում սահմանափակող միջավայրում ձևավորվում են ոչ թե դրական հմտություններ, այլ հարմարման խոչընդոտներ:

Մեր մոտեցմամբ ընտանիքը՝ որպես առաջնային սոցիալական ինստիտուտ, այն հարթակն է, որտեղ ձևավորվում են երեխայի գործունեության ձևերը, կերտվում ինքնավստահությունը, և զարգանում են սոցիալական հմտությունները: Եթե ընտանեկան միջավայրը ցուցաբերում է ընդունող և աջակցող բնույթ, ապա երեխան հնարավորություն է ունենում իր յուրահատուկ առանձնահատկությունների համահունչ գործունեություն իրականացնելու՝ զարգացնելով ինքնագնահատականն ու ստեղծագործական ունակությունները:

Հակառակը, սահմանափակող կամ ճնշող միջավայրում ձախլիկ երեխայի գործունեությունը հաճախ բխվում է խոչընդոտների, ինչը կարող է հանգեցնել ներքին հակասությունների, սթրեսային վիճակների, ինքնավստահության պակասի և ուսումնական մոտիվացիայի թուլացման:

Այսպիսով՝ Ռուբինշտեյնի տեսությունը մեզ թույլ է տալիս գիտականորեն հիմնավորել այն, որ ընտանեկան միջավայրը պարզապես չի ապահովում կենսաբանական ու հոգեբանական զարգացումը, այլ նաև անմիջականորեն ձևավորում է երեխայի գործունեության փորձը, ինքնավստահությունն ու սոցիալական հմտությունները:

Շատ ընտանիքներում ձախլիկ երեխայի հայտնվելը դառնում է ոչ միայն անհանգստության, մտահոգությունների և հոգսերի, այլև վիճաբանությունների ու ծնողների միջև անհամաձայնության պատճառ: Գործնականում նկատվում է, որ տեսակետների բազմազանությունը, պայմանավորված այն հարցերով, թե արդյոք ձախլիկին «վերափոխելը» կամ ինչպես նրա նյարդայնությանը արձագանքելը կարող են երեխայի վրա թողնել խորը ազդեցություն: Առավել բարդ իրավիճակ է առաջանում, երբ ծնողները չունեն միասնական դաստիարակչական գիծ, երբ մեկը խստորեն պատժում է, իսկ մյուսը գերհոգատար է [4, 10]:

Երեխայի բարոյահոգեբանական դաստիարակության վրա մեծ ազդեցություն է թողնում ընտանիքի համընդհանուր հուզական մթնոլորտը: Կարելի է տարբերակել ընտանիքներ, որոնց հուզական տոնը ընկճված է. երեխաները մեծանում են վախկոտ, լացկան, քմահաճ և հաղորդակցման ցածր մակարդակով: Վերոնշյալին հակառակ՝ բարձր հուզական տոն ունեցող ընտանիքներում երեխաները մեծանում են կենսուրախ, ակտիվ և շփվող [3, 48]:

Պատմամշակութային համատեքստում ևս ընտանեկան վերաբերմունքը ձախլիկության նկատմամբ կրում է բազմաշերտ բնույթ: Օրինակ՝ միջնադարյան Եվրոպայում ձախլիկությունը հաճախ դիտարկվել է որպես «այլություն» կամ նույնիսկ «անբարեհաճության նշան», ինչի հետևանքով ընտանիքներն ավելի հակված էին ճնշող դաստիարակչական մոտեցումների: Խորհրդային շրջանում, չնայած կրթական համակարգի հավասարեցման քաղաքականությանը, ընտանեկան միջավայրում հաճախ ձախլիկությունը դիտվում էր որպես շտկման ենթակա երևույթ, ինչը ծնողներին ստիպում էր հետևել միատարր նորմերին: Ժամանակակից հասարակությունում, սակայն, կրթական ու մանկավարժական գրագիտության բարձրացման շնորհիվ, ավելի լայն տարածում է գտնում աջակցող ու ներառական մոտեցումը, որի հիմքում ընկած է երեխայի յուրահատկությունների հարգանքը:

Հոգեբանական տեսանկյունից ընտանեկան միջավայրի ազդեցությունը դրսևորվում է հիմնականում երկու հարթությունում: Առաջինը վերաբերում է երեխայի ինքնագնահատականի ձևավորմանը: Եթե ընտանիքում ընդունվում են ձախլիկ երեխայի առանձնահատկությունները, ապա վերջինս իրեն ընկալում է որպես արժեքավոր և հավասար անդամ: Սա ապահովում է ներքին կայունություն և բարձրացնում սոցիալական դիմակայունականությունը: Երկրորդ հարթությունը վերաբերում է ուսումնական մոտիվացիային ու ճանաչողական հետաքրքրություններին: Ընթերցող ու աջակցող միջավայրում ձևավորվում են դրական ուսումնական մոտիվացիաներ, որոնք խթանում են երեխայի ստեղծագործական գործունեությունը: Ընշող ու անտեղյակ միջավայրում, հակառակը, առաջանում են ուսման նկատմամբ անտարբերություն, հիասթափություն և ինքնամփոփ վարքագիծ [8, 104]:

Գործնական-մանկավարժական տեսանկյունից կարևոր է նաև այն հանգամանքը, որ ծնողներն ունենան համապատասխան գիտելիքներ ու հմտություններ՝ ապահովելու համար երեխայի ներդաշնակ զարգացումը: Այստեղ անհրաժեշտ է ծնողական կրթության և հոգեբանական խորհրդատվության համակարգային

ներդրում, որպեսզի ընտանիքները կարողանան հաղթահարել սոցիալական կարծրատիպերը, որդեգրեն դաստիարակչական ճիշտ մոտեցումներ:

Դպրոց–ընտանիք համագործակցության մոդելները ևս կարող են ապահովել լրացուցիչ աջակցություն, քանի որ ուսուցիչների և ծնողների համատեղ ջանքերը թույլ են տալիս ստեղծել հավասարակշռված ու միասնական միջավայր՝ առանց հակասական ազդակների:

Այսպիսով՝ ընտանեկան միջավայրը ձախլիկ երեխաների համար ունի բազմաշերտ և առանցքային նշանակություն: Այն միաժամանակ կենսաբանական, հոգեբանական ու մանկավարժական զարգացման հիմք է ու սոցիալականացման հարթակ: Ծնողների տեղեկացվածությունը և ընտանեկան միջանձնային հարաբերությունների ընդունող ու հարգալից բնույթը որոշիչ դեր են խաղում երեխայի ինքնության կայացման, ինքնագնահատականի ձևավորման, ճանաչողական ու ստեղծագործական ունակությունների իրականացման ու հասարակության մեջ լիարժեք ինտեգրման գործընթացում:

Անստեղյակ ու ճնշող մոտեցումները ոչ միայն խոչընդոտում են երեխայի անհատական զարգացմանը, այլև առաջացնում են ապահարմարման և սոցիալական մեկուսացման ռիսկեր: Ընդունող ընտանիքը հանդես է գալիս որպես պաշտպանող ու խթանող միջավայր, որը հնարավորություն է տալիս ձախլիկ երեխային զարգանալու իր անհատական ճանապարհով՝ առանց պարտադրանքի համեմատվել սոցիալական նորմերին, սակայն լիարժեքորեն ներառվել դրանց շրջանակում:

Ընտանեկան միջավայրը ձախլիկ երեխաների զարգացման ու սոցիալականացման հիմնական գործոնն է, որը միաժամանակ ապահովում է կենսաբանական, հոգեբանական ու մանկավարժական պայմաններ: Ծնողների տեղեկացվածությունն ու ընդունող, աջակցող վերաբերմունքը ձևավորում են երեխայի ինքնագնահատականը, ճանաչողական և ստեղծագործական կարողությունները, ինչպես նաև նպաստում սոցիալական ինտեգրմանը: Միաժամանակ ճնշող կամ սխալ հասկացող միջավայրում զարգանում են ներքին հակասություններ, սթրես և հարմարման դժվարություններ, ինչը ընդգծում է ընտանեկան միջավայրի առանցքային դերը երեխայի անհատական զարգացման ու հարմարվողականության գործընթացում:

THE INFLUENCE OF FAMILY ENVIRONMENT ON THE SOCIAL ADAPTATION PROCESS OF LEFT-HANDED CHILDREN

Khlopuzyan Anahit

*PhD student at the Chair of Pedagogy,
Yerevan State University,
Republic of Armenia,
anahit.khlopuzyan@ysu.am*

Summary

Brief Introduction: The family is the first and primary institution of a child's socialization, where the foundations of self-awareness, value orientations, and social behavior patterns are formed. The role of the family environment is particularly significant for children with neurophysiological characteristics, such as left-handedness. The latter is viewed not as a deviation but as a unique

individual characteristic that requires special understanding and acceptance. The family, as an environment for emotional, cognitive, and behavioral development, can simultaneously act as either a facilitator or an obstacle to adaptation. The cognitive and neuropsychological characteristics of left-handed children often do not align with social norms and traditional teaching methods. This may complicate their adaptation to school and social environments. Therefore, the role of parents is decisive; if they are informed about the child's characteristics and adopt an accepting and supportive approach during upbringing, they create a safe environment in which the left-handed child can develop without comparison or pressure. Under such conditions, positive self-esteem develops, confidence in one's abilities is strengthened, and the full realization of creative and cognitive potential is ensured. An accepting and understanding family environment promotes social inclusion, reduces maladjustment risks, and enhances psychological stability. Conversely, parental ignorance or misconceptions may lead to situations in which they attempt to "correct" the child, force them to use the right hand, or conform to established norms. Such a coercive approach generates internal conflicts, stress, learning and communication difficulties, which can evolve into serious maladjustment issues. Consequently, the family becomes not a supportive environment but a source of social and psychological tension.

Keywords: *family environment, socialization, self-awareness, left-handedness, social norms, self-esteem, self-assertion, protective factor, risk factor.*

ВЛИЯНИЕ СЕМЕЙНОЙ СРЕДЫ НА ПРОЦЕСС СОЦИАЛЬНОЙ АДАПТАЦИИ ЛЕВШЕЙ

Хлопузян Анаит

*Соискатель кафедры педагогики,
Ереванский государственный университет,
Республика Армения,
anahit.khlopuzyan@ysu.am*

Аннотация

Краткое введение. Семья является первой и основной институцией социализации ребёнка, где формируются основы самопознания, ценностные ориентации и модели социального поведения. Роль семейной среды особенно значима для детей с нейрофизиологическими особенностями, такими как леворукость. Последняя рассматривается не как отклонение, а как уникальная индивидуальная характеристика, требующая особого понимания и принятия. Семья, будучи средой эмоционального, когнитивного и поведенческого развития, одновременно может выступать как фактор, способствующий адаптации, так и как препятствие ей. Когнитивные и нейропсихологические особенности левшей часто не совпадают с социальными нормами и традиционными методами обучения. Это может осложнять их адаптацию в школьной и социальной среде. Поэтому роль родителей является решающей; если они осведомлены о характеристиках ребёнка и руководствуются принимающим и поддерживающим подходом в воспитании, создаётся безопасная среда, в которой левша может развиваться без сравнения и давления. В таких условиях формируется положительная самооценка, укрепляется уверенность в собственных способностях, обеспечивается полная реализация творческого и когнитивного потенциала. Принятие и поддержка со стороны семьи способствуют социальной интеграции, что снижает риски дезадаптации и повышает психологическую устойчивость. Напротив, неосведомлённость или неправильные представления родителей могут привести к ситуациям, когда они пытаются «исправить» ребёнка, заставить его использовать правую руку или соответствовать установленным нормам. Такой принудительный подход вызывает внутренние конфликты, стресс, трудности в обучении и коммуникации, что может перерасти в серьёзные проблемы дезадаптации. В результате семья перестаёт быть поддерживающей средой и становится источником социального и психологического напряжения.

Ключевые слова: *семейная среда, социализация, самопознание, леворукость, социальные нормы, самооценка, самовыражение, защитный фактор, фактор риска.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Komenskiy Ya.A. *Velikaya didaktika*. Moskva: Prosveshchenie, 1989, 310 s. [in Russian]
2. Rubinshteyn S.L. *Osnovy obshchey psikhologii*. Moskva: Prosveshchenie 1957, 720 s. [in Russian]
3. Shelopukho V.V. *Sotsial'no-psikhologicheskie aspekty razvitiya detey* Sankt-Peterburg: Piter, 2005, 153 s. [in Russian]
4. Slastenin V.A. *Psikhologiya i pedagogika sem'i*. Moskva: Akademiya, 2002, 477 s. [in Russian]
5. Vygotskiy L.S. *Myshlenie i rech'*. Moskva: Prosveshchenie, 1984, 367 s. [in Russian]
6. Bronfenbrenner U. *The Ecology of Human Development: Experiments by Nature and Design*. Cambridge, MA: Harvard University Press. 1979, 352 pages.
7. Locke J. *Some Thoughts Concerning Education*. London: Cambridge University Press, 1996, 262 pages.

Получено: 30.09.2025

Рассмотрено: 13.10.2025

Принято: 24.10.2025

Received: 28.03.2025

Reviewed: 01.04.2025

Accepted: 11.04.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**ԳԵՆՈԳՐԱՄՄԱՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ՈՐՊԵՍ ԸՆՏԱՆԻՔԻ
ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ**

Հայրապետյան Լուսինե

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն,

lusine.hayrapetyan@ysu.am

<https://orcid.org/0000-0003-2884-7935>

Ավետիսյան Մերի

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Երևանի պետական համալսարան,

Հայաստանի Հանրապետություն,

mavetisyan@ysu.am

<https://orcid.org/0000-0001-9339-1060>

Ամփոփում

Համառոտ ներածական: Ժամանակակից սոցիալական մանկավարժությունը կարևորում է ընտանիքի կառուցվածքի և ներընտանեկան փոխհարաբերությունների խորքային ուսումնասիրությունը՝ երեխայի սոցիալականացման գործընթացը լիարժեք հասկանալու համար: Այս համատեքստում գենոգրամման՝ որպես մեթոդական գործիք, հնարավորություն է տալիս պատկերավոր ձևով ներկայացնելու ընտանիքի սերունդների, կապերի, դերերի ու ներհանրային դինամիկայի համակարգը:

Գենոգրամմայի կառուցման գործընթացը ոչ միայն տեղեկատվական քարտեզ է, այլև արտահայտման ստեղծագործական ձև, որը խթանում է ընտանիքի անդամների ներգրավվածությունը, բացում է լատենտ սոցիալական կապեր ու նպաստում միջսերնդային փորձի գիտակցմանը: Սոցիալական մանկավարժի համար այս տեխնոլոգիան արժեքավոր է հատկապես ռիսկային ընտանիքների հետ աշխատանքում, կանխարգելիչ ծրագրերում ու անհատական աջակցման ռազմավարությունների մշակման փուլում:

Հետազոտությունը **նպատակ** ունի հիմնավորելու գենոգրամմայի տեխնոլոգիայի կիրառելիությունը սոցիալական մանկավարժության մեջ որպես ընտանիքի սոցիալ-մանկավարժական դինամիկայի բացահայտման գործիք:

Բանալի բառեր՝ գենոգրամմա, սոցիալական մանկավարժ, ընտանիք, տեխնոլոգիա, արտթերապիա, սոցիալականացում, գործընթաց, տեղեկատվական քարտեզ, սերունդ, ռազմավարություն:

Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը. Հետազոտության նպատակն է ուսումնասիրել գենոգրամմայի տեխնոլոգիայի կիրառությունը սոցիալական մանկավարժի ընտանիքի հետ աշխատանքում որպես ընտանիքի սոցիալ-մանկավարժական դինամիկայի բացահայտման գործիք:

Հետազոտության նորություն: Ուսումնասիրվել և բացահայտվել են գենոգրամ-

մայի տեխնոլոգիայի կիրառության առանձնահատկությունները սոցիալական մանկավարժի աշխատանքում որպես ընտանիքի սոցիալ-մանկավարժական դինամիկայի բացահայտման գործիք:

Հիմնախնդրի առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Հիմնախնդրով զբաղվել են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Բ. Կրատսը, Ս. Հոֆերկովան, Ջ. Ալեքսանդերը և այլք: Նրանք տարբեր կողմերով դիտարկել են գենոգրամմայի հնարավորությունները որպես սոցիալ-հոգեբանական ախտորոշիչ գործիք միջսերնդային հիմնախնդիրներ դուրս բերելու հարցում:

Հիմնական նյութի շարադրանքը: Ընտանիքը յուրաքանչյուր անձի զարգացման և սոցիալականացման հիմնական սոցիալական ինստիտուտն է: Սոցիալականացման ընթացքում սերունդներին փոխանցվում է սոցիալական փորձ, որի արդյունքում ոչ միայն յուրացվում են սոցիալական միջավայրի պայմանները, այլև առաջանում են սոցիալ-մանկավարժական նոր խնդիրներ, խոչընդոտներ, որոնք մարդը սոցիալականացման հետագա ընթացքում փորձում է հաղթահարելով լուծել [1, 85]: Հետևաբար անձի խնդիրները չեն կարող վերլուծվել՝ առանց դիտարկելու նրա տեղն ու դերը ընտանեկան համակարգում, քանի որ դրանք միշտ ավելի մեծ գործընթացների մաս են կազմում: Այս համակարգային տեսակետը կենսականորեն կարևոր է սոցիալական մանկավարժի գործունեության համար: Սոցիալական մանկավարժությունը հաճախ սահմանվում է որպես մանկավարժության գիտաճյուղ, որը ներառում է մարդաբանական, արքեոլոգիական (արժեքանական) և կրթական գործոններ՝ անձի զարգացմանն ու ինտեգրմանը նպաստելու համար [3, 57-71]:

Հայաստանի Հանրապետությունում սոցիալական մանկավարժների դերակատարությունը ներկայումս ընդլայնման կարիք ունի՝ դուրս գալով միայն հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատանքի շրջանակներից ու ընդգրկելով բոլոր աշակերտների սոցիալականացման և ինտեգրման խնդիրները: Այս մասնագիտության ընդլայնված գործառնությունները պահանջում են գործիքներ, որոնք թույլ են տալիս համակարգային և միջսերնդային մակարդակներում գնահատել ընտանեկան ավանդույթների զարգացման դինամիկան: Այս տեսանկյունից անգնահատելի գործիք է գենոգրամման, որը կարող է նպաստել սոցիալ-մանկավարժական աշխատանքի արդյունավետությունը:

Գենոգրամման գործիք է, որը թույլ է տալիս ներկայացնել անձի ընտանեկան հարաբերությունները, պատմությունը, գենետիկական և հուզական օրինաչափությունները: Այս հայեցակարգը մշակվել է ամերիկացի հոգեբույժ Մյուրեյ Բոուենի կողմից 1970-ական թվականների վերջին որպես իր կողմից ուսումնասիրված ընտանեկան համակարգերի տեսության անբաժանելի մաս: Այն շարունակեցին զարգացնել նրա աշակերտները՝ Մոնիկա ՄաքԳուդրիկը, Ռենդի Գերսոնը: Բոուենի տեսությունը հիմնված է այն դիտարկման վրա, որ ընտանիքը գործում է որպես փոխկապակցված և փոխկախյալ անձերի հուզական միավոր, ուստի ցանկացած

անդամի վարքը կամ խնդիրը պետք է դիտարկվի հիմնախնդրի համատեքստում [5]:

Գենոգրամման իր հիմնական ու երկրորդային սիմվոլներով ներկայացնում է սերնդային ազդեցությունները (օրինակ՝ ակոհոլիզմի, բռնության, հիվանդությունների կրկնություն), բացահայտում ընտանեկան դերի փոխանցումը սերունդներին, հստակ ցույց տալիս միջսերնդային կապվածության, հուզական կապերի և հակամարտությունների բնույթը, հասկանալի դարձնում անձի ինքնության ձևավորման ընտանեկան ենթատեքստը: Այն օժանդակ միջոց է՝ կազմակերպելու ընտանեկան կամ անհատական թերապիան կամ սոցիալ-մանկավարժական խորհրդատվությունը:

Գոյություն ունի էական գիտական բաց՝ կապված **սոցիալական մանկավարժության** շրջանակում գենոգրամմայի հայեցակարգային ինտեգրման հետ: Գենոգրամման ռեսուրսային է, սակայն կիրառման հարցում մասնագետների իրազեկվածության պակասը թույլ չի տալիս երբեմն օգտվել այս գործիքի լայն հնարավորություններից: Հաշվի առնելով ընտանեկան հարաբերությունների բարդ, դինամիկ ու փոխկապակցված, ինչպես նաև սոցիալական մանկավարժության ոլորտում գենոգրամմայի կիրառության նորարարական բնույթը՝ առավել նպատակահարմար է կիրառել որակական կամ խառը մեթոդական մոտեցում: Որակական մեթոդաբանությունը, մասնավորապես բազմակի դեպքի ուսումնասիրությունների շարքը, թույլ կտա խորությամբ ուսումնասիրել, թե ինչպես է գենոգրամման օգնում սոցիալական մանկավարժներին գիտելիք ստանալ առհասարակ ընտանեկան համակարգերի մասին: Այն ավելին է, քան պարզապես առանձին հարաբերությունները դիտարկելը, ինչը հնարավորություն է տալիս սխեմատիկորեն ներկայացնելու և տեսականորեն հիմնավորելու ընտանեկան համակարգերի ռեյացիոն հայեցակարգերը՝ բացահայտելով ընդհանուր օրինաչափություններ տոհմի տարբեր սերունդների միջև: Այս մեթոդաբանությունը համահունչ է սոցիալական մանկավարժության նպատակներին և նպաստում է ընտանիքի սոցիալ-մանկավարժական դինամիկայի, միջսերնդային դերերի, կրթական օրինաչափությունների և աջակցության ցանցերի համապարփակ բացահայտմանը նպատակային ու ուժեղ կողմերի վրա հիմնված միջամտությունների մշակման համար: Սոցիալական մանկավարժի աշխատանքն ընտանիքում վերափոխվում է սիմվոլիկ գծապատկերի, որտեղ յուրաքանչյուր սիմվոլ օգնում է քարտեզագրելու ընտանեկան հիմնախնդիրներ [3, 57-71]: Երբ տեղեկատվությունը ներկայացվում է ոչ թե գրավոր ձևով, այլ սիմվոլիկ պատկերներով որպես մեկ «գծագիր», այն օգնում է, որ ակնառու դառնան կապերն ու օրինաչափությունները ոչ թե հերթականությամբ, այլ ամբողջությամբ: Գծապատկերում միանգամից երևում են հարաբերությունների խտությունը, լարված կետերը կամ բացերը: Գծագրելիս սոցիալական մանկավարժը կարող է տեսնել ընտանիքը որպես մեկ միասնական համակարգ, այլ ոչ թե անձերի շարք:

Այս մոտեցումը օգնում է հասկանալ՝ ով է կենտրոնական ազդեցություն ունեցողը, ով է մեկուսացվածը, ինչպես է հոսում աջակցությունը կամ լարվածությունը

ընտանիքի ներսում: Այդ պատկերն անհնար է ստանալ միայն գրավոր նշումներով: Գենոգրամման շատ ավելի արագ է «ընթերցվում», քան տեքստը:

Սոցիալական մանկավարժը կարող է մեկ հայացքով հիշել ընտանիքի դերակատարների կապերը՝ առանց երկար նշումներ կարդալու: Այլ կերպ ասած՝ այն դառնում է **գործնական քարտեզ**, որը թույլ է տալիս տարբեր գծերով ցույց տալ հարաբերությունների բնույթը՝ լարվածություն, օտարում, աջակցություն: Գրավոր տարբերակում դժվար է այդ նրբությունները պահել առանց երկար նկարագրության: Գծապատկերում՝ մեկ գիծը կարող է արտահայտել մի ամբողջ պատմություն: Երբ գենոգրամման կառուցվում է միասին ընտանիքի հետ, մարդիկ բառացիորեն *տեսնում են իրենց փոխկապակցվածությունը*: Հաճախ դա առաջացնում է զգացմունքային արձագանք. «Այսպես նայելով՝ ես հասկացա, որ մենք բոլորս կարծես մի շրջանակի մեջ ենք պտտվում...»: Այսինքն՝ գենոգրամման ոչ միայն սոցիալ-մանկավարժական խնդրի վերլուծման, այլ նաև **ինքնագիտակցության գործիք** է:

Գենոգրամման ունի **միջազգային ընդունված նշանային համակարգ**, որը մշակվել է Մոնիկա ՄաքԳոլդրիկի ու Ռենդի Գերսոնի կողմից (տե՛ս ստորև՝ Աղյուսակ 1. Գենոգրամմայի նշանային համակարգը):

Աղյուսակ 1. Գենոգրամմայի նշանային համակարգը

Խումբ	Նշան / Նշում	Բացատրություն	Մեկնաբանություն մանկավարժի աշխատանքի տեսանկյունից
Ա. Հիմնական անձնական տվյալներ	☐	Տղամարդ	
	☐	Կին	
	<input type="diamond"/>	Չճնված երեխա	Օգտակար վաղաժամ հղիությունների կամ պտղի կորստի նշման դեպքում
	†	Մահացած անձ	Մերնդային վշտերի վերլուծության ժամանակ
	☐ կամ ☐ կրկնակի շրջանակով	Ուսումնասիրվող անձ	Մանկավարժի աշխատանքի հիմնական կենտրոն
Բ. Ընտանեկան կապեր	☐ — ☐	Ամուսնություն կամ պաշտոնական միություն	
	☐ — ☐	Քաղաքացիական (ոչ պաշտոնական) միություն	Կարևոր կարգավիճակ՝ ընտանիքի սոցիալական կարգավիճակի ըմբռնման համար:
	☐ —//— ☐	Ամուսնալուծություն	Ցույց է տալիս հարաբերության ավարտը:

	□—/—○	Ժամանակավոր բա- ժանում	Օգտագործվում է ծնողնե- րի ժամանակավոր բացա- կայության դեպքում:
		Ծնող-երեխա կապ	
	┌──┐	Եղբայր-քույր կապ (ծնողների ընդհա- նուր գիծ)	
Գ. Հուզական հարա- բերություններ	———	Նորմալ կապ	
	=====	Շատ մոտ կամ հա- մահյուսված կապ	Կարող է լինել չափից ավե- լի կախվածության նշան:
	— — —	Հեռավոր կապ	Տեսանելի է հուզական հե- ռավորությունը:
	⚡	Կոնֆլիկտ, լարվա- ծություն	Օգտակար է ընտանեկան խնդիրների վերլուծության ժամանակ:
	✂	Կապի խզում, օտա- րում	Ցույց է տալիս հաղորդակ- ցության բացակայություն:
	==<==	Մերտ, բայց հակա- սական կապ (սեր և կոնֆլիկտ միաժամա- նակ)	Ցույց է տալիս հակասա- կան դինամիկա:
Դ. Առողջական և սո- ցիալ-հոգեբանական վիճակներ	▲	Հոգեբանական կամ ֆիզիկական խնդիր (օր.՝ դեպրեսիա, կախվածություն)	Կարող է լրացվել գույնով կամ մեկնաբանությամբ:
	● կամ գույ- նավոր շրջանակ	Հիվանդություն կամ ռիսկային վիճակ	Օրինակ՝ կարմիր՝ հիվան- դություն, կապույտ՝ կախ- վածություն
Ե. Սոցիալական և կրթական գործոններ (լրացուցիչ)	👤	Կրթական հաջողու- թյուն կամ դպրոցա- կան ակտիվություն	Օգտակար է դպրոցական միջավայրի գնահատման համար:
	🏠	Բնակարանային խնդիր կամ անբա- վարար պայմաններ	Օգտագործվում է սոցիա- լական միջամտության պլանավորման ժամանակ:
	🎒	Աշխատանքային խնդիր (անաշխա- տունակություն, գոր- ծազրկություն)	Սոցիալական կարևոր իրավիճակներում:
	❄	Աջակցող արտաքին անձ (հարևան, ուսու- ցիչ, բարեկամ)	Ցույց է տալիս ռեսուր- սային կապեր:
	📄	Համայնքային աջակ- ցություն կամ ծառա-	Օգտակար՝ համակար- գային աշխատանքի հա-

		յության ներգրավվածություն	մար:
	□	Խնամքի կամ վերահսկողության կարիք ունեցող երեխա	Օգտագործվում է ռիսկային ընտանիքների նկարագրության մեջ:

Գենոգրամման օգտակար գործիք է այն ընտանիքների հետ աշխատանքում, որոնք ՀՀ-ում ներգրավված են սոցիալ-մանկավարժական աջակցության ծրագրերում, և որտեղ առկա են սոցիալական ինտեգրման, կրթական դժվարությունների, կամ բարձր ընտանեկան անկայունության նշաններ [2, 91-111]: Քանի որ գենոգրամմայի հիմնական նպատակն է բացահայտել միջսերնդային օրինաչափությունները, անհրաժեշտ էր ընտրել այնպիսի ընտանիքներ, որտեղ հնարավոր կլինի քարտեզագրել առնվազն երեք սերունդ:

Գործընթացը ներառել է հետևյալ քայլերը.

- **Նախնական զրույց և վստահության կառուցում:** Պետք է սկսել բաց և կարեկցող զրույցներից՝ ապահովելով հարաբերությունների կառուցումն ու ճշգրիտ տեղեկատվություն ստանալը:
- **Գենոգրամմայի կառուցում:** Գենոգրամման կիրառել սոցիալ-մանկավարժական աշխատանքի սկզբնական փուլերում որպես ընտանեկան կառուցվածքը, հարաբերությունների որակը (հուզական կապերը), կարևոր կյանքի իրադարձությունները (ամուսնալուծություններ, մահեր) և միջսերնդային դերերը քարտեզագրող միջոց:
- **Մշակութային գենոգրամմայի ինտեգրում:** Անհրաժեշտության դեպքում ընդլայնել ու կիրառել Բոուենի հայեցակարգը՝ ներառելով մշակութային գործոններ (էթնիկ պատկանելություն, սոցիալական դաս, կրոնական պատկանելություն)՝ հասկանալու համար, թե այդ գործոնները ինչպես են ձևավորել ընտանեկան համակարգն ու ինքնությունը:
- **Կիսակառուցվածքային հարցազրույցներ:** Գենոգրամմայի կառուցմանը պետք է ուղեկցվի անհատականացված կիսակառուցվածքային հարցազրույցները, որոնք լրացնում են պատկերը, խորությամբ ուսումնասիրում հուզական օրինաչափություններն ու ընտանեկան կյանքի անցումները:

Էթիկական նկատառումներ

Գենոգրամմայի կիրառությունը պահանջում է խիստ էթիկական մոտեցում, քանի որ այն բացահայտում է զգայուն տեղեկատվություն (հիվանդություններ, կոնֆլիկտներ, բարդ հարաբերություններ):

Գենոգրամմայի ներդրումը սոցիալական մանկավարժի գործունեության մեջ հանգեցնում է դերային հայեցակարգային փոփոխության: Թեև գենոգրամման պատմականորեն ծագել է կլինիկական հոգեբուժության ու սոցիալական աշխատանքի դաշտերից որպես ախտորոշիչ և գնահատման գործիք, սոցիալական ման-

կավարժության մեջ դրա կիրառումը կունենա **ախտորոշիչ** ու **հոգեկրթական** նշանակություն [4, 98]: Սոցիալական մանկավարժի նպատակն է հնարավորություն տալ ընտանիքին տեսնելու իրենց կյանքի «սցենարը» և ճանաչել միջսերնդային կրկնվող ցիկլերը: Այս տեսողական ներկայացումը ծառայում է որպես հոգեկրթական հիմք, որն օգնում է ընտանիքի անդամներին գիտակցել, որ իրենց ներկայիս դժվարությունները (օրինակ՝ վարքային խնդիրները) համակարգային են և փոխանցվում են սերնդեսերունդ: Նման մոտեցումը զգալիորեն բարձրացնում է վստահորդի ներգրավվածության մակարդակը և ստեղծում է թափանցիկ, աջակցող հարաբերություններ մասնագետի հետ: Օրինակ, եթե գենոգրամման ցույց է տալիս ծնողների միջև լարվածություն, որի դեպքում երեխան ստանձնում է միջնորդի դեր (եռանկյունի), ապա երեխայի մոտ դպրոցական դժվարությունները կամ սոցիալական մեկուսացումը կարող են մեկնաբանվել որպես ընտանեկան համակարգի հակագործառական գործընթացի արտացոլում, այլ ոչ թե զուտ անհատական ձախողում: Գենոգրամմայի վերլուծությունը մանկավարժին հնարավորություն է տալիս ուղղորդելու միջամտությունը դեպի ընտանեկան համակարգի փոփոխություն՝ ընդհատելով անցանկալի ռեյացիոն ցիկլերը:

Սույն ուսումնասիրությունը գիտական ներդրում ունի՝ կամրջելով կլինիկական համակարգային գործիքը (գենոգրամման) սոցիալ-մանկավարժական մետատեսության հետ, առաջարկելով ընտանեկան համակարգերի կրթական և ինտեգրացիոն ամրապնդման նոր հայեցակարգային մոդել: Ավելին, այն ընդգծում է, որ գենոգրամման ոչ միայն գործնական գնահատման գործիք է, այլև տվյալների հավաքագրման ու վերլուծության գիտական մեթոդաբանություն: Որակական գենոգրամմայի վերլուծության (QGA) մոդելը կարող է կիրառվել սոցիալական մանկավարժների կողմից իրենց պրակտիկ գործունեությունը գիտականորեն հիմնավորված հետազոտական բազա դարձնելու համար՝ համակարգելով խորը որակական տվյալները:

Եզրակացություն

Գենոգրամմայի տեխնոլոգիան վերլուծության հայեցակարգերով կարող է դառնալ անփոխարինելի համակարգային գործիք սոցիալական մանկավարժի աշխատանքում: Այն հնարավորություն կտա դուրս բերելու մարդու անձնական խնդրի միջսերնդային, համակարգային արմատները: Ընտանիքի կառուցվածքի, հուզական օրինաչափությունների, կրթական ցիկլերի և արտաքին ռեսուրսների քարտեզագրումը թույլ է տալիս սոցիալական մանկավարժներին անցում կատարել ախտորոշիչ մոտեցումներից դեպի **նպատակային, ուժեղ կողմերի վրա հիմնված միջամտությունների մշակում**, որոնք ուղղված են ընտանեկան համակարգի կրթական ու սոցիալական ինտեգրացիոն ներուժի ամրապնդմանը: Այս մոտեցման լայն կիրառումը ՀՀ-ում կբարձրացնի սոցիալական մանկավարժի պրակտիկայի որակն ու գիտական հիմնավորվածությունը:

THE USE OF GENOGRAM TECHNOLOGY IN THE WORK OF A SOCIAL PEDAGOGUE AS A TOOL FOR REVEALING THE SOCIO-PEDAGOGICAL DYNAMICS OF THE FAMILY

Hayrapetyan Lusine

*PhD in Pedagogy, Associate Professor,
Yerevan State University,
Republic of Armenia,
lusine,hayrapetyan@ysu.am*

Avetisyan Meri

*PhD in Pedagogy, Associate Professor,
Yerevan State University,
Republic of Armenia,
mavetisyan@ysu.am*

Summary

Modern social pedagogy emphasizes the in-depth study of family structure and interpersonal relationships to fully understand the processes of a child's socialization. In this context, the genogram, as a methodological tool, makes it possible to visually represent the system of family generations, their connections, roles, and internal dynamics. The process of creating a genogram is not only an informational map but also a creative form of expression that encourages family members' involvement, reveals latent social ties, and fosters the awareness of intergenerational experience. For social pedagogues, this technology is particularly valuable when working with at-risk families, implementing preventive programs, and developing individual support strategies. The study aims to substantiate the use of genogram technology in social pedagogy as a tool for identifying family socio-pedagogical dynamics.

Keywords: *genogram, social pedagogue, family, technology, art therapy, socialization, process, informational map, generation, strategy.*

ПРИМЕНЕНИЕ ТЕХНОЛОГИИ ГЕНОГРАММЫ В РАБОТЕ СОЦИАЛЬНОГО ПЕДАГОГА КАК ИНСТРУМЕНТ ДЛЯ ВЫЯВЛЕНИЯ СОЦИАЛЬНО-ПЕДАГОГИЧЕСКОЙ ДИНАМИКИ СЕМЬИ

Айрапетян Лусине

*Кандидат педагогических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения,
lusine,hayrapetyan@ysu.am*

Аветисян Мери

*Кандидат педагогических наук, доцент,
Ереванский государственный университет,
Республика Армения,
mavetisyan@ysu.am*

Аннотация

Современная социальная педагогика придаёт большое значение глубокому изучению структуры семьи и характера внутрисемейных отношений для полного понимания процессов социализации ребёнка. В этом контексте генограмма, как методический инструмент, предоставляет возможность наглядно представить систему поколений семьи, их связи, роли и внутрисемейную динамику. Процесс построения генограммы является не только информационной картой, но и творческой формой самовыражения, которая стимулирует участие членов семьи, раскрывает латентные социальные связи и способствует осознанию межпоколенческого опыта. Для социального педагога данная технология особенно ценна в работе с семьями группы риска, в профилактических программах, а также на этапе разработки индивидуальных стратегий поддержки. Цель исследования — обосновать применение технологии генограммы в социальной педагогике как инструмента выявления семейной социально-педагогической динамики.

Ключевые слова: генограмма, социальный педагог, семья, технология, арт-терапия, социализация, процесс, информационная карта, поколение, стратегия.,

Օգտագործած գրականության ցանկ

1. Harutyunyan N.K., Ghazaryan A.P., Ghukasyan L.H., Socialakan mankavarjutyun, Erevan, YePH hratarakchutyun, 2017, 336 ej. (in Armenian)
2. Alexander J.H., M. Callaghan J.E. and Fellin L.C., «Genograms in research: participants' reflections of the genogram process», Qualitative Research in Psychology, vol. 19, no. 1, Dec. 2018, pp. 91–111. doi: 10.1080/14780887.2018.1545066.
3. Kraus B. and Hoferková S., «The relationship of social pedagogy and social work», Sociální Pedagogika. Social Education, vol. 4, no. 1, Nov. 2016, pp. 57–71. doi: 10.7441/soced.2016.04.01.04.
4. Majhi G., Reddy S., and Muralidhar D., «The use of family genogram in psychiatric social work practice», Open Journal of Psychiatry & Allied Sciences, vol. 9, no. 2, Jan. 2018, p. 98. doi: 10.5958/2394-2061.2018.00034.4.
5. GenoPro, «Family Systems Theory - GenoPro». <https://genopro.com/genogram/family-systems-theory/>

Получено: 22.10.2025

Рассмотрено: 27.10.2025

Принято: 17.11.2025

Received: 22.10.2025

Reviewed: 27.10.2025

Accepted: 17.11.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

ARTIFICIAL INTELLIGENCE APPLICATIONS IN SOCIAL PEDAGOGY: PREDICTIVE ANALYTICS FOR EARLY INTERVENTION ENHANCEMENT

Asatryan Samvel,

PhD in Pedagogy, Associate Professor,

Yerevan State University,

Republic of Armenia

samvel.asatryan@ysu.am

<https://orcid.org/0000-0002-8323-822X>

Summary

Հոդվածը հիմնված է հայ ու միջազգային հեղինակավոր աղբյուրների վերլուծության վրա և կարող է ծառայել որպես ուղեցույց՝ բուհերի կառավարման մշակույթի բարելավման և կրթության որակի բարձրացման նպատակով:

***Բանալի բառեր**՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, կառավարման մշակույթ, էթիկա, հաղորդակցում, միջանձնային հարաբերություններ, մարդկային ռեսուրսների կառավարում, էթիկայի կանոնագիրք:*

Հիմնախնդիրը: 21-րդ սոցիալ-տնտեսական և կառավարման դարի բարդ հարաբերությունների համատեքստում բարձրագույն կրթության ոլորտը կանգնած է ամբողջապես, մասնավորապես, կառավարման գործիքակազմերի վերանայման անհրաժեշտության առջև:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ որպես մարդկային ռեսուրսի ձևավորման առաջնային միջավայրեր, պարտավոր են ոչ միայն փոխանցել մասնագիտական գիտելիքներ, այլև ձևավորել արժեհամակարգային նկարագիր ունեցող մասնագետներ: Այս պայմաններում բարձրագույն ուսումնական հաստատություններում էթիկան՝ որպես միջանձնային հարաբերությունների և հաղորդակցման հիմնարար կարգավորիչ գործոն, պայմանավորում է հաղորդակցության որակը, ձևավորում փոխադարձ հարգանք, ապահովում կայունություն մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացում:

ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համակարգում ընթացող բարեփոխումները, որոնք ամրագրված են «Կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագրում» և «Կառավարության գործունեության ծրագրում», արտահայտում են պետության ռազմավարական ձգտումը՝ ստեղծելու միջազգայնորեն մրցունակ բարձրագույն կրթության և գիտության համակարգ:

Ներկայիս բարեփոխումները, որոնք տեղի են ունենում ֆինանսական ճնշում-

ների, փոփոխվող առաջնահերթությունների և կրթության մեջ ավելի մեծ ճկունության պահանջների ժամանակաշրջանում, համահունչ են եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (The European Higher Education Area In 2024 (EHEA)) շրջանակում որդեգրված քաղաքականությանը, մասնավորապես՝ Բոլոնյան գործընթացի ու ԵՄ Բարձրագույն կրթության արդիականացման օրակարգի (2021-2030) դրույթներին (հիմնված «A renewed agenda for higher education»), որոնք շեշտադրում են ոչ միայն որակի ապահովման և ինստիտուցիոնալ ինքնավարության բարձրացումը, այլև ակադեմիական ազնվության, էթիկական կառավարման և մարդկային ռեսուրսների պատասխանատու քաղաքականության ներդրման անհրաժեշտությունը՝ որպես երկարաժամկետ մրցունակության նախապայման [9, 13]:

Այս տեսլականի իրականացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է բուհերում էթիկայի, հաղորդակցման մշակույթի և մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգային փոխգործակցությամբ, որտեղ էթիկան հաստատության արժեքային հենքն ապահովող կարևորագույն գործոններից է, որը միաժամանակ կարգավորում է աշխատակիցների, ուսանողների և վարչական օղակի փոխհարաբերությունները: Այն գործնականում դրսևորվում է վարքագծի կանոնների, հաղորդակցության մշակույթի ու փոխադարձ հարգանքի սկզբունքների միջոցով, որոնք խթանում են համագործակցային մթնոլորտը՝ բարձրացնելով աշխատակիցների ներգրավվածությունը, նվազեցնելով կոնֆլիկտների հավանականությունը, խթանելով կազմակերպության երկարաժամկետ կայունությունը:

Այսպիսով՝ էթիկական կարգավորման բացակայությունը, ակադեմիական ազնվության խաթարումը, հաղորդակցման անարդյունավետ մեխանիզմները շարունակում են մնալ համակարգային մարտահրավերներ, որոնք սահմանափակում են թե՛ մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, թե՛ կառավարման նորարարական մոդելների ներդրումը բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հետևաբար էթիկական կառավարման, հաղորդակցման մշակույթի և մարդկային ռեսուրսների կառավարման համակարգերի փոխգործակցությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես արդյունավետ կառավարման գործիքակազմ, այլև ազգային կրթական քաղաքականության հաջողության ու միջազգային ինտեգրման կարևորագույն նախապայման: Այս խնդրի հրատապությունը ոչ միայն ներքին համակարգային պահանջ է, այլև միջազգային պարտավորությունների և համագործակցության շրջանակում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների մրցունակության նախադրյալ:

Յուրաքանչյուր բուհի խնդիրն ու հրամայականն է դառնում պատրաստել ոչ միայն համապատասխան ոլորտային մասնագետներ, այլ նաև գործարար տիրույթ ներգրավվելուն պատրաստ հասարակության անդամներ:

Հիմնախնդրին առնչվող հետազոտությունների ու հրատարակությունների հակիրճ վերլուծությունը: Հիմնախնդրին (հաղորդակցում) անդրադարձել են ան-

վանի մանկավարժ-հոգեբաններ Ժ. Պիաժեն, Ա. Մակարենկոն, Լ. Վիգոտսկին և ուրիշներ, ժամանակակից հետազոտողներից՝ Վ. Կան-Կալիկը, Ա. Լոբանովը, Ա. Բոդայովը, Ա. Լեոնտևը, Ա. Ռեանը, Բ. Լոմովը և ուրիշներ, ինչպես նաև, բազմաթիվ փիլիսոփաներ, որոնց թվում՝ Կոնֆուցիոսը, Արիստոտելը, կառավարման մասնագետներ Պ. Դրաքերը, Մ. Պ. Ֆոլետը, Հ. Մինցբերգը, հոգեբաններ Դ. Գոլմենը, Կ. Ռոջերսը, Ա. Մասլոուն, մանկավարժներ Զ. Դյուին, Յ. Հ. Պետտալոցին՝ իրենց աշխատություններում ընդգծելով մարդկանց միջև հարաբերությունների և բարոյական սկզբունքների պահպանման կարևորությունը:

Հետազոտության **նպատակն** է բացահայտել կառավարման էթիկայի, հաղորդակցման մշակույթի և մարդկային ռեսուրսների կառավարման փոխգործակցությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարման գործընթացում:

Հետազոտության **նորույթը**: Ներկայացվում է գործարար էթիկայի, էթիկետի և հաղորդակցման մշակույթի համակցված կիրառման համակարգային մոտեցում, որը նպաստում է մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության **գործնական նշանակությունը**: Հոդվածը կարող է օգտակար լինել բուհերում ռազմավարական կառավարման գործընթացի և ակադեմիական միջավայրում բարեվարքության զարգացման համար:

Ուսումնասիրությունը հիմնված է միջազգային և տեղական գիտական աղբյուրների վերլուծության վրա:

Հիմնական նյութի շարադրանք

Վերջին տասնամյակում ՀՀ տնտեսական դաշտը բնորոշվում է տնտեսական հարաբերությունների զարգացմամբ, որից զերծ չի մնում նաև կրթության ոլորտը: Մի կողմից՝ նորանոր գործարար կապեր են հաստատվում աշխարհի տարբեր երկրների ուսումնական հաստատությունների միջև, մեկ այլ կողմից, ՀՀ-ն միանալով Բոլոնյան գործընթացին, պարտավորվել է որդեգրել Եվրոպական բարձրագույն կրթական համակարգում գործող սկզբունքները և աշխատանքային ուղղությունները:

Չնայած այս գործընթացներին և ռազմավարական բարեփոխումներին՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում վերջին տասը տարիների ընթացքում (2013-2023 թթ.) դիմորդների թիվը նկատելիորեն նվազել է շուրջ 30 %-ով՝ 100.854-ից հասնելով մոտ 80.095-ի (տե՛ս Գծապատկեր 1) [12]: Այս միտումը պայմանավորված է ոչ միայն ժողովրդագրական ցուցանիշների անկմամբ, այլև կրթական միջավայրի որակական խնդիրներով՝ բարձրագույն կրթության նկատմամբ հանրային վստահության աստիճանական նվազմամբ, ներառյալ էթիկական նորմերի ոչ պատշաճ ու հաղորդակցման մեխանիզմների անարդյունավետ կիրառմամբ:



Գծապատկեր 1. Դիմորդների թիվն ըստ տարեթվերի (2013-2023)

Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի կողմից դեռևս 2019 թ. իրականացված «Բարձրագույն կրթության հիմնախնդիրները» թեմայով ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է. «Տասնամյակից ավել է, որ Հայաստանը անդամակցում է Բոլոնիայի կրթական գործընթացներին, այդուհանդերձ, փոփոխությունը հաստատություններում չի ընկալվում և ընդունվում ո՛չ դասախոսների, ո՛չ ուսանողների, և ոչ էլ վարչական մարմինների զգալի մասի կողմից իբրև իրական առաջընթաց ապահովող փոփոխություն: Հայաստանում ընդունված բոլոր ռազմավարական փաստաթղթերը ընկալվել են որպես նախարարություններում այս կամ այն միջազգային պարտավորության շրջանակներում գրված շարադրություններ, այլ ոչ թե իրականությունը փոխելու անհրաժեշտ գործիքներ: Կրթությունն իրականացնող մարդկանց հետ աշխատելը, մարդկանց լսելը, մարդկանց համոզելը, երբեք չեն դիտվել որպես ռազմավարության մաս: Ենթադրվել է, որ մարդիկ կկարդան ռազմավարական փաստաթուղթը և կփոխեն իրենց վարքագիծը: «Վերևից» եկող այս հրամայականը տարիներ շարունակ ցույց է տվել իր ոչ միայն անարդյունավետությունը, այլ նաև սնանկությունը» [4, 13]:

Ներկայացված իրավիճակն այսօր էլ շարունակում է մնալ արդիական, քանի որ բարձրագույն կրթության մրցունակության և գրավչության ապահովումը չի կարող սահմանափակվել միայն ծրագրային ու կառուցվածքային փոփոխություններով: Արդյունավետ ու կայուն զարգացումը պահանջում է համակարգային մոտեցում, որտեղ գործարար էթիկան և հաղորդակցման մշակույթը հանդես են գալիս որպես ռազմավարական գործիքներ՝ նպաստելով բուհերում մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմանն ու կրթական ծառայությունների որակի բարձ-

րացմանը:

Այս անհրաժեշտությունից է բխում կրթության համակարգի կազմակերպչական մշակույթի ազգային մոդելի մշակման հրամայականը, որի առանցքային տարրերն են գործարար էթիկան (բարոյագիտություն) ու էթիկետը (բարեվարքություն, վարվեցողություն), որոնք արտացոլվում են կազմակերպչական վարքագծում՝ ընդգրկելով գործարար հարաբերությունների ոլորտը և տարածվելով օրենսդրական սահմաններից դուրս: Էթիկական (բարոյագիտական) նորմերը կարգավորում են գործարար հարաբերությունների մասնակիցների իրավիճակային վարքագիծը՝ ելնելով բանականության, արդարության ու համագործակցության պահանջներից:

«Կազմակերպչական էթիկան (բարոյագիտությունը) գործում է հետևյալ երեք մակարդակներում՝

- համաշխարհային մակարդակ (բարձրագույն մակարդակի նորմերն են, որոնք հիմնված են համամարդկային արժեքների վրա և արտացոլում են համաշխարհային բարոյականության կոդեքսը),

- ազգային (այս նորմերը և նրանց հարակից բարոյականության դրույթները իրականացվում են կազմակերպչական բարոյականության ճյուղային և ազգային օրենսգրքերում),

- կազմակերպչական մակարդակ (առանձին կազմակերպության և նրա շահառուների միկրոմակարդակ): Այս մակարդակում լուծվում են բոլոր մասնավոր բարոյական հիմնախնդիրները, հատկապես նրանք, որոնք առաջանում են մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակ» [2, 56]:

Գործարար ոլորտի պրակտիկան ցույց է տվել, որ համագործակցող կողմերի փոխհարաբերությունների արդյունավետությունն ու հաջողությունը պայմանավորված են ոչ միայն անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների, այլև գործարար հաղորդակցման հմտությունների իմացությամբ: Նշենք, որ արտասահմանյան մի շարք զարգացած երկրներ ֆինանսական հսկայական միջոցներ են տրամադրում գործարար մարդկանց հաղորդակցման հմտություններին ու վարվեցողության կանոններին իրազեկ դարձնելու համար: Օրինակ՝ «Ճապոնացիները տարեկան ավելի քան հարյուր միլիոն ամերիկյան դոլար են տրամադրում գործարար էթիկետի ու հաղորդակցության հմտությունների դասընթացների համար» [5, 7]:

Մեզանում պատշաճ ուշադրություն չի դարձվում կառավարման գրեթե բոլոր ոլորտներում գործարար էթիկայի և էթիկետի կարևորությանը առանձնապես կրթական համակարգում, որտեղ այն առանձնակի կարևորվում է՝ պարունակելով հաղորդակցման բազմաբովանդակ համակարգ՝ միտված առողջ, գրագետ, հաղորդունակ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը, որից կախված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու առաջընթացը:

Մարդու կյանքն անխուսափելիորեն ընթանում է այլ մարդկանց հետ շփման պայմաններում: Եվ սոցիալական հավասարակշռությունը չխախտելու, հարաբերությունների համահունչ ու հաճելի լինելու համար դեռևս հին ժամանակներում

մշակվել են էթիկետի կանոններ, որոնց հիմքում ընկած են էթիկայի ու հաղորդակցման սկզբունքները:

Այսպես հին ժամանակներից սկսած գործարար հաղորդակցության ոլորտում բարոյական նորմերի և արժեքների պահպանումն ունեցել է կարևոր նշանակություն: Դեռևս 1936 թ. Դեյլ Քարնեգին նշում է. «Մարդու ֆինանսական հաջողությունների միայն 15 %-ն է կախված նրա մասնագիտական գիտելիքներից ու կարողություններից, 85 %-ը կախված է այլ մարդկանց հետ շփվելու, վարվելու հմտություններից» [5, 161]: Այստեղ ուշագրավ է նշել նաև Խրատարարում ներկայացված հետևյալ դիտողությունը. «Մեծ զգուշություն է պետք իշխանների որդիներին դաստիարակելիս՝ նկատի ունենալով, որ նրանք պատրաստվում են հասարակության ղեկավար դառնալ» [7, 69]: Ասացվածքն այսօր էլ արդիական է:

Հաղորդակցման հմտությունները հսկայական նշանակություն ունեն կառավարման, մասնավորապես կրթության կառավարման արդյունավետության բարձրացման գործում: Ինչպես արդարացիորեն նշում է Սոկրատեսը, «ով կարողանում է հաղորդակցվել մարդկանց հետ, նա լավ է վարում և՛ մասնավոր, և՛ ընդհանուր գործերը, իսկ ով չի կարողանում, նա և՛ այնտեղ, և այստեղ սխալներ է թույլ տալիս» [3, 8]:

Հաղորդակցման արվեստը՝ հոգեբանական առանձնահատկությունների, հնարքների ու էթիկայի սկզբունքների իմացությամբ ու կիրառմամբ, խիստ կարևոր է այն մասնագետների համար, որոնց աշխատանքի հիմքում ընկած է հաղորդակցման «մարդ-մարդ» մոդելը (գործարարներ, կառավարիչներ, մանկավարժներ, քաղաքական գործիչներ և այլն): Ըստ այդմ՝ հաղորդակցումը դրսևորվում է տարբեր ոլորտներում՝ քաղաքական, մասնագիտական, ընկերական և գործարար:

Ժամանակակից մարդը սոցիալական տարաբնույթ պարտականությունների իրականացման ընթացքում կամա թե ակամա ներգրավվում է այլ մարդկանց հետ համագործակցության մեջ: Աշխատանքային միջավայրում ու հասարակական այլ հարաբերություններում մարդու գործունեությունը, որպես կանոն, կառուցվում է հաղորդակցման վրա: Ըստ Յունեսկոյի (UNESCO) ուսումնասիրությունների՝ «ամերիկացիների 73 %-ը, անգլիացիների 63 %-ը, ճապոնացիների 85 %-ը գտնում են, որ կազմակերպության առաջընթացին խոչընդոտում է մարդկանց ոչ ճիշտ հաղորդակցումը» [14, 65]:

Նշված տվյալները վկայում են, որ հաղորդակցման արդյունավետության մակարդակը ոչ միայն միջանձնային փոխհարաբերությունների որակի ցուցիչ է, այլև կազմակերպության կառավարման համակարգի կենսունակության ու զարգացման ներուժի առանցքային նախադրյալներից: Միջազգային փորձը (ԵՄ, ԱՄՆ ու Ճապոնիա) փաստում է, որ բարձրագույն կրթական հաստատություններում հաղորդակցման արդյունավետության բարձրացումն անքակտելիորեն կապված է էթիկական սկզբունքների կիրառման հետ, որոնք ապահովում են վստահության, թափանցիկության ու գործընկերային հարաբերությունների կայուն զարգացում: Այս համատեքստում, հատկապես բուհերի կառավարման համակարգում, հաղոր-

դակցման ու էթիկական գործոնների համատեղ զարգացումն առավել նշանակալի է դառնում կառավարման հորիզոնականացման և ինքնավարության ընդլայնման ներկա գործընթացներում, քանի որ դրանք ուղղակիորեն պայմանավորում են պատասխանատվության, հավասարակշռության և կայունության ապահովումը:

«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքով բուհերի կառավարման համակարգը դառնում է ավելի հորիզոնական՝ պատասխանատվությունների ու հակակշիռների բազմաշերտ համակարգի նախատեսմամբ: Միննույն ժամանակ նախատեսվում է բուհի ակադեմիական ստորաբաժանումների ավելի լայն ինքնավարության աստիճան» [11]: Այս փոփոխությունները ընդգծում են բարձրագույն կրթության կառավարման համակարգում արդյունավետ հաղորդակցման, էթիկական սկզբունքների պահպանման և մարդկային ռեսուրսների կառավարման ինտեգրված մոտեցման ռազմավարական նշանակությունը, որոնք համատեղ ձևավորում են ակադեմիական միջավայրի կայունությունը, արդյունավետությունն ու մրցունակությունը:

Բարձրագույն կրթության ոլորտի միջազգային փորձը ևս վկայում է, որ համալսարաններում գործընկերային փոխհարաբերությունների արդյունավետությունն ու հաջողությունը պայմանավորող գործոնները ոչ միայն ակադեմիական և կառավարչական մասնագիտական գիտելիքներն են, այլ նաև հաղորդակցման հմտությունների ու ակադեմիական էթիկայի և էթիկետի սկզբունքների պահպանումը: Ըստ Եվրոպական հանձնաժողովի «Բարձրագույն կրթության վերափոխման օրակարգ 2021-2030 թթ.» («Higher Education Transformation Agenda 2021-2030») զեկույցի՝ բարձրագույն կրթության արդիականացման առաջնահերթություններից են ակադեմիական ազնվության և էթիկայի ինստիտուցիոնալացումը, կառավարման հորիզոնական համակարգերի ներդրումը, հաղորդակցման բաց և թափանցիկ մեխանիզմների ապահովումը, դասավանդողների և վարչական կազմի հաղորդակցական հմտությունների զարգացումը [13]: Նման մոտեցումները կարևոր են հատկապես այն երկրների համար, որտեղ վերջին տասնամյակում կրթության որակի վերաբերյալ հանրային վստահության նվազումը, դիմորդների թվի անկումը դարձել են զգալի մարտահրավեր:

Հետևապես, բարձրագույն կրթության ոլորտում հաղորդակցման հմտությունների ու էթիկական նորմերի ներդրումը ոչ թե երկրորդական պահանջ է, այլ կառավարման արդյունավետության, մարդկային ռեսուրսների զարգացման և միջազգային մրցունակության ապահովման հիմնարար գործոն:

Թեև կրթության համակարգը պաշտոնապես ստանում է ուղերձ, որ իր հիմնական առաքելությունը կրթությունն ու հետազոտությունն է, և թեև ներդրվել են էթիկայի կանոններ, ձևավորվել էթիկայի հանձնաժողովներ, դրանց գործնական արդյունավետությունն ակնհայտորեն չի ապահովում ակնկալվող արդյունքները: Էթիկայի հանձնաժողովի և կանոնների առկայությունը ձևականորեն ուղղված են կուսակցական ազդեցությունների ու քարոզչության բացառմանը, սակայն դրանց գործունեության իրական նպատակը պետք է լինի ակադեմիական ազնվության և գոր-

ծարար էթիկայի համակողմանի ապահովումը [12]:

Այս իրավիճակը ցույց է տալիս, որ գործող մեխանիզմները կրում են ձևական բնույթ և չեն հասնում իրենց ռազմավարական նպատակին՝ ապահովելու բարձրագույն կրթության միջավայրի արժեհամակարգային հստակությունը, գործարար հարաբերությունների թափանցիկությունն ու ակադեմիական արդարության անխախտելիությունը: Հետևաբար անհրաժեշտ է էթիկական կառույցների վերախմաստավորում ու գործառնական վերազինում՝ շեշտը դնելով գիտական ազնվության, արդարության, պատասխանատվության և հաշվետվողականության իրական ամրապնդման վրա:

Խնդրի կարգաբերման համար առաջարկվում է բարձրագույն ուսումնական հաստատություններում ներդնել էթիկայի կանոնակարգեր/կանոնագրքեր, որոնք կծառայեն որպես բարոյագիտական նորմերի և արժեքային համակարգի միասնական կարգավորիչ: Կանոնագրքերը հնարավորություն կտան.

- **հստակեցնելու վարքագծային սպասելիքները** ուսանողների, դասախոսների և վարչական անձնակազմի համար,

- **նվազեցնելու կոնֆլիկտները և շահերի բախումը**՝ սահմանելով փոխադարձ հարգանքի և արդարության սկզբունքները,

- **բարձրացնելու ակադեմիական ազնվության մակարդակը**՝ կանխարգելելով գրագողությունը, կոռուպցիոն ռիսկերը և անբարեխիղճ վարքագիծը,

- **ապահովելու հաշվետվողականություն և թափանցիկություն**՝ բուհի կառավարման և մարդկային ռեսուրսների քաղաքականության մեջ:

Էթիկայի կանոնագրքի անհրաժեշտությունը բխում է ոչ միայն նորմատիվ կարգավորման բացերից, այլև այն հանգամանքից, որ բարձրագույն ուսումնական հաստատություններն արժեքների փոխանցման և մշակութային կապիտալի կուտակման հիմնական հարթակներ են: Առանց միասնական և գործունակ էթիկական հիմքի կրթության որակը և կառավարման արդյունավետությունը մնում են անկայուն և կախված անհատական մոտեցումներից:

«Կառավարման ոլորտում էթիկայի պահպանումը և խթանումը հիմնված է երեք հիմնարար սկզբունքի վրա.

- սահմանադրական և իրավական շրջանակում էթիկական սկզբունքների և նպատակների հաստատում,

- մարդկային ռեսուրսների կամ անձնակազմի արդյունավետ կառավարում,

- առանձին պետական պաշտոնյաների, հատկապես ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց մոտ էթիկական արժեքների զարգացում» [6, 8]:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) առանձնացնում է կանոնակարգերի երկու տեսակ՝

- «կանոնակարգեր, որոնք բխում են էթիկայի նկատմամբ մշակութային մոտեցումից՝ հիմնված **իրավական համապատասխանության սկզբունքի** վրա,

- կանոնակարգեր, որոնք բխում են մշակութային մոտեցումից՝ հիմնված **բարեվարքության և ոգեշնչման սկզբունքների վրա**» [6, 14]:

Առաջին կանոնակարգը հիմնված է կանոնների ու օրենքների վրա: Երկրորդ կանոնակարգը խրախուսում է էթիկական վարքագիծը՝ իրազեկության և մոտիվացիայի բարձրացման միջոցների ավելի լայն կիրառմամբ: Սակայն կարծում ենք, որ էթիկական խնդրի արդյունավետ կանխարգելումը երկու միջոցների, մի կողմից՝ հարկադրանքի, մյուս կողմից՝ մոտիվացիայի ու անհատական հանձնառության, ճիշտ հավասարակշռության մեջ է: Մոտեցումներից յուրաքանչյուրն ունի իր մարտահրավերները (տե՛ս Աղյուսակ 1):

Բնութագիր / Չափանիշ	Իրավական (կանոնահեն) մոտեցում	Արժեքահեն (բարեվարքության) մոտեցում
Հիմքը	Օրենսդրական ակտեր, կանոնակարգեր, հստակ ընթացակարգեր:	Էթիկական արժեքներ, բարոյագիտական սկզբունքներ, կազմակերպչական մշակույթ:
Առավելություններ	➤ Հստակություն և կանխատեսելիություն, ➤ Պատասխանատվության հստակ մեխանիզմներ, ➤ Հավասարություն և անաչառություն, ➤ Իրավախախտումների կանխարգելման արդյունավետություն, ➤ Կառավարման կայունություն:	➤ Անհատական պատասխանատվության բարձրացում, ➤ Կազմակերպչական արժեքների հստակեցում, ➤ Արժեքահեն որոշումների կայացում, ➤ Ակադեմիական ազնվության և վստահության բարձրացում, ➤ Կազմակերպության հեղինակության ամրապնդում:
Թերություններ	➤ Կանոնների բարդություն և ձևականություն, ➤ Սահմանային մտածողության խթանում («թույլատրված չէ, ուրեմն թույլատրելի է»), ➤ Էթիկական գիտակցվածության սահմանափակում, ➤ Չափելիության սահմանափակում, ➤ Խոցելիություն ոչ էթիկական վարքագծի նկատմամբ, եթե վերահսկողությունը թույլ է:	➤ Արժեքների սուբյեկտիվ ընկալում, ➤ Չափելիության դժվարություն, ➤ Հնարավոր է դառնա միայն հոշակագիր, ➤ Կախվածություն կազմակերպչական մշակույթից, ➤ Դիմադրություն փոփոխություններին:
Որտե՞ղ է առավել արդյունավետ	<i>Լուրջ իրավախախտումների կանխարգելման, կարգապահության ապահովման, արտաքին վերահսկողության պահանջների բավարարման դեպքում:</i>	<i>Կազմակերպչական վարքի բարելավման, վստահության բարձրացման, երկարաժամկետ արժեքահեն զարգացման ապահովման դեպքում:</i>
Աղյուսակ 1. «Կանոնակարգերի առանձնահատկությունները»		

Տարբեր երկրներ, կախված իրենց ազգային առանձնահատկություններից, ունեն էթիկական խնդիրների կարգավորման իրենց կանոնակարգը: «Օրինակ՝ Ֆրանսիան, Իտալիան ու Գերմանիան կիրառում են համեմատաբար խիստ՝ իրավական համապատասխանության սկզբունքի վրա հիմնված մոտեցումը, Ավստրալիան, Կանադան, Միացյալ Թագավորությունը, Շվեդիան ու Նորվեգիան, նախապատվությունը տալիս են կանխարգելիչ մոտեցմանը կամ համատեղում են նշված երկու մոտեցումները» (տե՛ս Աղյուսակ 2) [6, 14]:

Երկիր, տարածաշրջան	Մոտեցման տեսակը / մոդել	Հիմնական նպատակը / առանձնահատկությունը	Առավելություններ/ թերություններ	Համեմատությունը ՀՀ-ի հետ
Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա	Իրավական / կանոնահեն	Իրավախախտումների խիստ վերահսկողություն, ընթացակարգերի հստակ կիրառություն:	Առավելություններ Կարգապահություն, կանխատեսելիություն, արդյունավետ վերահսկողություն: Թերություններ: Ձևական, փոքր խթան արժեքահեն վարքագծի համար:	ՀՀ-ում որոշակի կանոններ գոյություն ունեն, բայց կրում են ձևական բնույթ:
Ավստրալիա, Կանադա, Միացյալ Թագավորություն, Շվեդիա, Նորվեգիա	Արժեքահեն / կանխարգելիչ կամ համադրված	Էթիկական վարքագիծ, անձնական պատասխանատվության խթանում:	Առավելություններ Արժեքահեն որոշումների կայացում, ակադեմիական ազնվության բարձրացում: Թերություններ Արժեքների սուբյեկտիվ ընկալում, ուժեղ կազմակերպչական մշակույթի պահանջարկի առաջացում:	ՀՀ-ում արժեքահեն մոտեցման կիրառությունը սահմանափակ է:
Ճապոնիա	Համադրված / միավորված	Էթիկայի, էթիկետի, հաղորդակցման մշակույթի ներդրում:	Առավելություններ Գործարար հաղորդակցման հմտությունների	ՀՀ-ում նման ներդրումներ գրեթե չեն արվում:

			բարձրացում, էթիկական վարքագիծը դրսևորում: <i>Թերություններ</i> Ֆինանսական մեծ ներդրում պահանջող համակարգ:	
Հայաստանի Հանրապետություն	Իրավական / կարգավորիչ բնույթ	Կանոնակարգերի ձևական առկայություն/կիրառություն:	<i>Առավելություններ</i> Հիմնական իրավական կանոնների սահմանում: <i>Թերություններ</i> Ձևական, էթիկայի և հաղորդակցման խորը ներդրումը բացակայում է:	Հարկավոր է համադրված մոտեցում՝ իրավական և արժեքահեն հաղորդակցական հմտություններ:

Աղյուսակ 2.

«Կանոնակարգերի կիրառելիության համաշխարհային և ՀՀ փորձի համեմատություն»

Ի տարբերություն ԵՄ երկրների, որտեղ էթիկական կանոնները համադրվում են ոչ միայն իրավական, այլև արժեքահեն ու հաղորդակցական քաղաքականությունների հետ, ՀՀ բուհերում էթիկայի կանոնագրքերն ու վարքականոնները հիմնականում մշակվում են որպես ներքին իրավական ակտեր՝ հաստատված ռեկտորի կամ համալսարանի խորհրդի կողմից, և ունեն նորմատիվ-հսկողական բնույթ: Արժեքահեն կանոնակարգերի կամ վարքականոնների մոտեցումը քիչ է զարգացած և հաճախ կրում է ձևական բնույթ: Դրանք նախատեսում են՝

- իրավախախտումների կանխարգելման ու կարգապահական պատասխանատվության հիմքեր,
- վարքականոնների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցներ (զգուշացում, նկատողություն, հեռացում),
- պարտավորությունների ու արգելքների սահմանում (օր.՝ ակադեմիական ազնվության խախտման դեպքերում):

Այսպիսով՝ ՀՀ բարձրագույն կրթության համակարգում էթիկական կանոնակարգերը հիմնականում կրում են կարգավորիչ ու իրավական բնույթ, որոնք կենտրոնացած են խախտումների կանխարգելման ու վերահսկման վրա: Այնուամենայնիվ, բարձր արդյունավետության ու կրթական միջավայրի արժեքահեն կայունության ապահովման համար անհրաժեշտ է համադրված մոդել, որտեղ իրավական հիմքը համալրվում է արժեքահեն ու հաղորդակցական բաղադրիչներով:

Այս ուղղությամբ վերջին տարիներին մի շարք բուհեր միջազգային և ազգային փորձագետների հետ համատեղ մշակել են տիպային էթիկայի կանոնագրքեր՝ ուսանողների, վարչական ու ակադեմիական աշխատակազմի համար: Սրա հիմնական նպատակն է աջակցել, նպաստել կրթական հաստատություններում, մաս-

նավորապես բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի որակի բարձրացմանը:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում գործարար էթիկայի կանոնների մշակման փորձի համար հիմք են հանդիսացել միջազգային փորձագետների կողմից մշակված 2 փաստաթղթեր՝ «Բարձրագույն ուսումնական հաստատություններում դերակատարների էթիկայի կանոններ» և «Շրջանային փաստաթղթերի համար էթիկայի կանոնագրքեր կազմելու մասին ուղեցույց»: Ըստ այդ փաստաթղթում գետեղված նորմերի՝ էթիկայի կանոններն են՝ «բարեվարքություն, ազնվություն, ճշմարտություն, թափանցիկություն, հարգանք այլոց հանդեպ, վստահություն, հաշվետվողականություն, արդարացիություն, հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն, կրթական համակարգի ու կրթական հաստատությունների ժողովրդավարական ու էթիկական ղեկավարում և կառավարում, որակյալ կրթություն, անձի կատարելագործում ու համակարգերի բարելավում, ինստիտուցիոնալ ինքնավարություն, միջազգային համագործակցություն, նվիրվածություն, օբյեկտիվություն, հրապարակայնություն, առաջնորդություն, ակադեմիական ազատություն» [8, 5-7]:

Հաշվի առնելով կրթական համակարգի բազմամակարդակ կառավարման համակարգը (ինստիտուցիոնալ, միջին օղակ, ստորին օղակ)՝ այս երևույթը կարող է դառնալ սոցիալապես վտանգավոր, քանի որ կապված է երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության հետ: Ուստի կանոնակարգի մշակումը, մասնավորապես կառավարման մշակույթի վերաբերյալ բարձրագույն կրթության համակարգի կառավարման գործընթացում կարևոր է և արդիական:

Եզրակացություններ

Ամփոփելով ներկայացված տեսական դրույթները՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումներին: ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում գործարար էթիկայի, հաղորդակցման մշակույթի ու մարդկային ռեսուրսների կառավարման փոխգործակցությունը կառավարման արդյունավետության, կրթության որակի և միջազգային մրցունակության հիմնական նախադրյալներից է: Գործարար էթիկայի ու հաղորդակցման մշակույթի ոչ լիարժեք ներդրումը, ինչպես նաև ակադեմիական ազնվության ու բարեվարքության պակասը հստակորեն ազդում են ուսանող-դասախոս փոխհարաբերությունների վրա, խոչընդոտում նորարարական կրթական մոդելների ներդրմանն ու բուհերի ռազմավարական նպատակների իրականացմանը:

Առաջարկություններ

➤ Բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերում ներառել «Գործարար հաղորդակցում և էթիկա» առարկան, որը կնպաստի ուսանողների ու դասախոսների գիտելիքների համակողմանի զարգացմանը հաղորդակցման, գործարար էթիկայի և ակադեմիական ազնվության ոլորտում: Առանձնապես այն պարտադիր է մագիստրոսական կրթական ծրագրերի համար, քանի

որ կրթությունը պատրաստում է ավելի բարձր մակարդակի կառավարման մասնագետներ:

➤ **Վերանայել և արդիականացնել** բուհերի էթիկայի կանոնագրքերը՝ ներառելով գործարար էթիկայի տարրերը, հաղորդակցման բազմաբնույթ ձևերը, ինչպես նաև ակադեմիական ազնվության և գնահատման կանոնները:

➤ **Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ** դասախոսների և վարչական կազմի համար էթիկայի, հաղորդակցման և արժեքային առաջնորդության համատեքստում:

➤ **Ստեղծել մշտադիտարկման ու գնահատման համակարգ**, որը հնարավորություն կտա գնահատելու էթիկայի կանոնագրքի կիրառելիությունն ու ազդեցությունը՝ օգտագործելով հարցաթերթիկներ, վերլուծական հաշվետվություններ ու ներքին վերահսկողության մեխանիզմներ:

➤ **Կիրառել համաշխարհային և եվրոպական լավագույն փորձը**՝ Հայաստանի բուհերի կառավարման մշակույթի, ռազմավարական մոտեցումների ու հաղորդակցման արդյունավետ մեխանիզմների զարգացման գործում:

➤ **Զարգացնել անհատական էթիկական հմտություններն ու կազմակերպչական մշակույթը**՝ ապահովելով արժեքային ու կառուցվածքային կայուն փոփոխություններ բարձրագույն կրթության համակարգում:

ETHICS AS A REGULATOR OF INTERPERSONAL RELATIONS AND COMMUNICATION IN THE HUMAN RESOURCE MANAGEMENT PROCESS OF HIGHER EDUCATION INSTITUTIONS

Harutyunyan Nazik

*Doctor of Pedagogical Sciences, Professor,
Head of the Center of Pedagogy and Education Development,
Yerevan State University,
Republic of Armenia,
nazik.harutyunyan@ysu.am*

Tonoyan Tatevik

*PhD student, Chair of Pedagogy and Psychology,
Vanadzor State University after H. Tumanyan,
Republic of Armenia,
tateviktonoyan1994@gmail.com*

Summary

In the contemporary context of intense competition, higher education institutions face the imperative of developing a new model of management and organizational culture. This article examines the role of business communication, ethics, and etiquette as central factors for effective human resource management and the value-driven sustainability of the educational environment.

The theoretical framework incorporates a comparative analysis of international experience, highlighting manifestations of ethical governance and communication culture in higher education systems. Special attention is given to universities in the United States and European Union countries, where ethics is considered not only as a behavioral regulator but also as a strategic component of educational quality assurance and human resource development. U.S. “Professional Conduct Standards” and European ethical codes exemplify models that ensure academic integrity, transparency, and accountability. Within the EU educational policy framework (EUA, Bologna Process), systematic integration of ethical and communication skills is emphasized as part of institutional management and

organizational culture.

The study aims to reveal international differences and propose an integrated approach for developing a national ethical management model that aligns with international standards while reflecting local educational realities. The scientific novelty lies in the creation of a systematic model combining business ethics, etiquette, and communication, linking value-based human resource management with structural stability.

The findings demonstrate that without clear mechanisms for ethical governance and consistent communication policies, improvements in higher education quality, public trust restoration, and long-term competitiveness are unattainable. Harmonized development of ethical and communication factors fosters organizational culture, reduces conflicts, and enhances trust and collaboration within universities. The study recommends introducing the course “Business Communication and Ethics,” revising university ethical codes, and developing a hybrid model combining legal and value-based approaches. This article, grounded in authoritative Armenian and international sources, provides guidance for enhancing university management culture and educational quality.

Keywords: *higher education institution, management culture, ethics, communication, interpersonal relations, human resource management, code of ethics.*

ЭТИКА КАК РЕГУЛЯТОР МЕЖЛИЧНОСТНЫХ ОТНОШЕНИЙ И КОММУНИКАЦИИ В ПРОЦЕССЕ УПРАВЛЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ В ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ

Арутюнян Назик

*Доктор педагогических наук, профессор,
Директор Центра педагогики и развития образования,
Ереванский государственный университет,
Республика Армения,
nazik.harutyunyan@ysu.am*

Тоноян Татевик

*Соискатель кафедры педагогики и психологии,
Ванадзорский государственный университет им. О. Туманяна,
Республика Армения,
tateviktonoyan1994@gmail.com*

Аннотация

В современных условиях острой конкуренции высшие учебные заведения сталкиваются с необходимостью разработки новой модели управления и организационной культуры. В статье рассматривается роль делового общения, этики и этикета как ключевых факторов эффективного управления человеческими ресурсами и обеспечения ценностной устойчивости образовательной среды.

Теоретическая основа включает сравнительный анализ международного опыта, выявляющий проявления этического управления и культуры коммуникации в системах высшего образования. Особое внимание уделено университетам США и стран ЕС, где этика рассматривается не только как регулятор поведения, но и как стратегический компонент обеспечения качества образования и развития человеческих ресурсов. «Стандарты профессионального поведения» в США и этические кодексы европейских вузов демонстрируют модели, обеспечивающие академическую честность, прозрачность и подотчетность. В рамках образовательной политики ЕС (EUA, Болонский процесс) делается акцент на системной интеграции этических и коммуникационных компетенций в управление и организационную культуру.

Цель исследования — выявить международные различия и предложить интегрированный подход к формированию национальной модели этического управления, соответствующей международным стандартам и местным образовательным реалиям. Научная новизна заключается в разработке системной модели, объединяющей деловую этику, этикет и коммуникацию, связывающей ценностное управление человеческими ресурсами и структурную устойчивость.

Результаты показывают, что без четких механизмов этического управления и последовательного развития коммуникационной политики невозможно повысить качество образования, восстановить общественное доверие и обеспечить долгосрочную конкурентоспособность. Гармоничное развитие этических и коммуникационных факторов способствует формированию организационной культуры, снижению конфликтности и укреплению доверия и сотрудничества в вузах. Рекомендуется включить дисциплину «Деловое общение и этика», пересмотреть этические кодексы университетов и разработать гибридную модель, объединяющую правовой и ценностный подход. Статья, основанная на авторитетных армянских и международных источниках, служит руководством по совершенствованию управления вузами и повышению качества образования.

Ключевые слова: *высшее учебное заведение, культура управления, этика, коммуникация, межличностные отношения, управление человеческими ресурсами, кодекс этики.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Aleksanyan A., Mijandznayin hagordakcman irakanacumy krtakan gorcyntacum, Yerevan, YPH hrat., 2015, 264 ej. (in Armenian)
2. Gyurjyan A., Nasilyan I.V., Korporativ kulturayi karavarman himnakhndirneri hanrapetut'yan kazmakerput'yunnerum, Us. Dzer'nark, Yerevan, Tigran Mec hrat., 2009, 360 ej. (in Armenian)
3. Khachatryan T., Haxordacut'yan yev yndhanur ashkhatanqayin gortcuneut'yan hmtutyunner, Masnagetakan krtut'yan yev usuc'man zargacman azgayin kentron, Er., Krtut'yan azgayin institut, 2012, 256 ej. (in Armenian)
4. Kardonan F., Patshaj karavarman ugetcuycner (etikayi kanonagrqeri anhrajeshtut'yan yev gorcarut'yunneri masin), tiv 8, Norvergiai karavarut'yan anvtangut'yan yev spasarkman kazmakerput'yun, 2019, 21 ej. (in Armenian)
5. Humanitar hetazotut'yunneri haykakan kentron, Bardzraguyn krtut'yan himnaxndirneri Hayastanum, Er., 2019, 62 ej. (in Armenian)
6. Nazaryan A., Gortsarar hagordacut'yun, Er., Zangak-97, 2001, 256 ej. (in Armenian)
7. Patriark' P. Adranapols'eci, Khrati tangaran, S. Ejmiatsin, 2002, 125 ej. (in Armenian)
8. Varrington D., Anapyosyan A., Aleksanyan N., Bardzraguyn usumnakan hastatut'yunneri tipayin etikayi kanonagrqer usanogneri, vajarakan yev akademiakan ashxatakazmi hamar, 2016, 28 ej. (in Armenian)
9. European Commission / EACEA / Eurydice, 2024. *The European Higher Education Area in 2024: Bologna Process Implementation Report*. Luxembourg: Publications Office of the European Union, 2024, 262 pg.
10. Singh Divya / Christoph Stückelberger (Eds.), *Ethics in Higher Education Values-driven Leaders for the Future*, Geneva: Globethics.net, 2017, 370 pg.
11. <https://escs.am/am/news/30135?fbclid=101.09.2025>
12. https://armstat.am/am/?id=19144&nid=12&utm_source=101.09.2025

Получено: 08.09.2025

Рассмотрено: 20.10.2025

Принято: 28.10.2025

Received: 08.09.2025

Reviewed: 20.10.2025

Accepted: 28.10.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

UDC 378(492)
DOI 10.46991/educ-21st-century.v7.i2.288

**ԲՈՒՀ-ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ
ՆԻԴԵՈՒԱՆԴՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Աբաջյան Խաչիկ

*Մանկավարժության ամբիոնի հայցորդ,
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն,
khachik.abadzhyan@ysu.am
<https://orcid.org/0009-0002-3529-5462>*

Ամփոփում

Համառոտ ներածական: Բարձրագույն կրթությունն ու աշխատաշուկան այսօր դիտարկվում են ոչ միայն որպես կրթական ու աշխատանքային առանձին համակարգեր, այլև որպես փոխկապակցված սոցիալ-տնտեսական ինտիտուցիոնալ համակարգ, որի արդյունավետ գործարկումը նպաստում է պետության զարգացմանն ու նորարարական տնտեսության կայացմանը: Կրթությունը ծառայում է ոչ միայն գիտելիքի փոխանցման, այլև աշխատաշուկայում մրցունակ մասնագետների ձևավորման ռազմավարական գործիք:

Նիդեռլանդների բարձրագույն կրթության համակարգը, ներառելով կիրառական (HBO) ու ակադեմիական (WO) կրթության ուղղություններ, գործում է հենց այդ մոտեցումների հիման վրա՝ ապահովելով ուսանողների համատեղ մասնագիտական ու գործնական պատրաստվածություն: Համակարգի արդյունավետությունը բարձրացվում է բուհերի, գործատուների և պետական մարմինների ռազմավարական համագործակցության միջոցով, ինչը արտացոլված է ազգային «Բարձրագույն կրթության և հետազոտությունների ռազմավարական օրակարգ 2015-2025» փաստաթղթում: Աշխատանքային պրակտիկան, կրկնակի ուսուցումը, շրջանավարտների ներգրավումը, ոլորտային պլանավորումը հիմնական մեխանիզմներ են, որոնք ապահովում են ուսանողների աշխատունակությունն ու բարձրագույն կրթության սոցիալ-տնտեսական արդյունավետությունը:

Նիդեռլանդների փորձը ընդգծում է, որ բարձրագույն կրթությունը պետք է սերտորեն համապատասխանի աշխատաշուկայի պահանջներին, ինչը բարձրացնում է շրջանավարտների մրցունակությունը, նվազեցնում գործազրկության ռիսկը և ստեղծում հուսալի հիմք նրանց մասնագիտական շարունակական զարգացման ու նորարարական գործունեության համար: Մույն հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են Նիդեռլանդների բուհ-աշխատաշուկա համագործակցության հիմնական մոդելները, վեր են հանվել առկա մարտահրավերները, վերլուծվել է կրթության ազդեցությունը աշխատաշուկայի ընդհանուր կառուցվածքի վրա:

Բանալի բառեր՝ *Նիդեռլանդներ, բարձրագույն կրթություն, աշխատաշուկա, բուհ-աշխատաշուկա համագործակցություն, ակադեմիական կրթություն, աշխատունակություն, մարդկային կապիտալ:*

Հետազոտության **հիմնախնդիրը** բուհ-աշխատաշուկա համագործակցության հիմնական մոդելները, առկա մարտահրավերները քննարկելն է, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգի ազդեցությունն է աշխատաշուկայի ընդհանուր կառուցվածքի վրա:

Հետազոտության **նպատակն** է ուսումնասիրել և վերլուծել Նիդեռլանդների բարձրագույն կրթության ու աշխատաշուկայի փոխկապակցվածությունը՝ անդրադառնալով ուսումնական ծրագրերի ձևավորմանը, կիրառական և ակադեմիական կրթության մոտեցումներին, շրջանավարտների աշխատունակությանն ու բուհերի, գործատուների ու պետական կառույցների համագործակցության ռազմավարական մեխանիզմներին:

Հետազոտության նորույթը պայմանավորված է Նիդեռլանդների բարձրագույն կրթության ու աշխատաշուկայի փոխկապակցվածության համակարգային փորձի համակողմանի վերլուծությամբ՝ ընդգծելով կիրառական բարձրագույն կրթության (HBO) և գիտահետազոտական / բարձրագույն կրթության (WO) միջև աշխատանքի պահանջներին համապատասխանեցման առանձնահատկությունները, ինչպես նաև կիրառված մոդելների՝ կրկնակի ուսուցման, շրջանավարտների ներգրավման, ոլորտային պլանավորման արդյունավետության համադրված գնահատումը: Հետազոտությունն առաջին անգամ համատեղ գնահատում է թե՛ ակադեմիական, թե՛ բարձրագույն կիրառական կրթության մոտեցումները, շրջանավարտների աշխատունակությունն ու ռազմավարական համագործակցությունը Նիդեռլանդների բարձրագույն կրթության համակարգում՝ հիմնվելով հետազոտական տվյալների վրա:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների կարճ վերլուծություն: Բուհ-աշխատաշուկա փոխգործակցության հիմնախնդրին են անդրադարձել Գ. Բեքերը (Մարդկային կապիտալի տեսություն, 1964 թ.), Մ. Յորքը (Աշխատունակության շրջանակի մոդել, 2006 թ.), Հ. Էցկովիցն ու Լ. Լեյդեսդորֆը (Նորարարության եռակի պարույրի մոդել, 2000 թ.), Ի. Մ. Ֆրեյտասը, Բ. Վերսպագենը, Մ. Պերկմանը, Ջ. Ուոլշը, Ա. Բերմեյխոն:

Հիմնական նյութի շարադրանքը: Բարձրագույն կրթության ու աշխատաշուկայի փոխկապակցվածությունը հիմնավորված է մի շարք տեսական մոտեցումներով, որոնցից առավել կիրառական նշանակություն ունեն «Մարդկային կապիտալի տեսությունը» (1964 թ.), «Աշխատունակության շրջանակի մոդելը» (2006 թ.), «Նորարարության եռակի պարույր մոդելը» (2000 թ.):

Այս տեսությունները կրթությունը դիտարկում են ոչ միայն որպես գիտելիքի փոխանցման գործընթաց, այլև որպես տնտեսական և սոցիալական զարգացման ռազմավարական գործիք: «Մարդկային կապիտալի տեսության» համաձայն՝ կրթության ներդրումը նպաստում է անձի արտադրողականության ու եկամտի աճին՝ դրանով ձևավորելով երկրի տնտեսական աճի հիմքը [2, 7-23]: Աշխատունակության շրջանակի մոդելը ընդգծում է, որ բուհերը պետք է զարգացնեն ոչ միայն ակադեմիական, այլև գործնական, հաղորդակցական ու մասնագիտական

հմտություններ՝ շրջանավարտների՝ աշխատաշուկայում մրցունակությունը բարձրացնելու համար [12, 7-11]: Իսկ «Նորարարության եռակի պարույր» մոդելը վերհանում է համալսարանների, արդյունաբերության ու պետական կառույցների փոխգործակցության անհրաժեշտությունը գիտելիքահեն տնտեսության և նորարարական համակարգերի կայացման համար [5, 109-123]:

Այս տեսական հիմքերը ձևավորում են կրթության ու աշխատանքի փոխազդեցության միջառարկայական մոտեցումը, որը ներկայումս լայնորեն կիրառվում է Նիդեռլանդների բարձրագույն կրթական ռազմավարության մեջ որպես բուհերի, գործատուների ու պետության համագործակցության հիմնասյուն:

Նիդեռլանդների բարձրագույն կրթության համակարգը (Tertiary Education System) առանձնանում է երկբաղադրիչ կառուցվածքով՝ ներառելով երկու հիմնական ուղղություն՝ կիրառական բարձրագույն կրթությունը (Hoger beroepsonderwijs – HBO) ու գիտահետազոտական կամ ակադեմիական բարձրագույն կրթությունը (Wetenschappelijk onderwijs – WO): Այս համակարգն ամրագրված է Նիդեռլանդների «Բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների մասին» օրենքում (Wet op het hoger onderwijs en wetenschappelijk onderzoek – WHW):

Կիրառական բարձրագույն կրթությունը (HBO) իրականացվում է կիրառական գիտությունների համալսարաններում (hogescholen), որոնք ապահովում են տեսական և գործնական պատրաստվածություն բարձրագույն մասնագիտական որակավորում պահանջող մասնագիտությունների համար: Նիդեռլանդներում գործող 43 կիրառական գիտությունների հաստատությունները առաջարկում են ավելի քան 200 կրթական ծրագիր՝ ընդգրկելով տնտեսության, հասարակական ծառայությունների, առողջապահության, ճարտարագիտության և արվեստի գործնական ուղղությունները: Կիրառական բարձրագույն կրթությունը նպատակ ունի ուսանողներին պատրաստելու անմիջական մասնագիտական գործունեության, ուստի ուսումնառության կառուցվածքում մեծ տեղ է տրվում գործնական բաղադրիչին, նախագծային ուսումնառությանն ու աշխատաշուկայի հետ համագործակցությանը:

Գիտահետազոտական կամ ակադեմիական կրթությունը (WO), իր հերթին, իրականացվում է հետազոտական համալսարաններում, որոնք միավորում են գիտական հետազոտությունն ու ուսուցումը: Այս ուղղությունը կենտրոնանում է ակադեմիական մտածողության, գիտական մեթոդաբանության ու վերլուծական կարողությունների ձևավորման վրա: Նիդեռլանդներում գործում են գիտահետազոտական/ակադեմիական 13 համալսարաններ, որոնցից երեքը տեխնոլոգիական են:

Ինչպես գիտահետազոտական, այնպես էլ կիրառական գիտությունների համալսարանները, կենտրոնանում են ոչ միայն ակադեմիական ուսուցման ու հետազոտությունների վրա, այլև ուսանողների՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան պատրաստված լինելու վրա: Հենց այս համալսարանների ու գործատուների, գործարար համայնքի և հասարակական կազմակերպությունների

միջև կառուցված սերտ համագործակցությունն է ապահովում ուսումնական ծրագրերի՝ աշխատանքային հեռանկարների համապատասխանությունը՝ ստեղծելով իրական գործնական փորձի ինտեգրման հնարավորություններ: Այս մոտեցումը, որն ընդգծված է «Բարձրագույն կրթության և հետազոտությունների ռազմավարական օրակարգ 2015-2025» փաստաթղթում, ընդգծում է շրջանավարտների մասնակցության, գործնական փորձառություն ունեցող դասախոսների ներգրավման ու աշխատանքի տեղավորման միջոցով ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը բարձրացնելու ռազմավարական անհրաժեշտությունը:

Նիդեռլանդների կրթության, մշակույթի և գիտության նախարարության կողմից մշակված «Բարձրագույն կրթության և հետազոտությունների ռազմավարական օրակարգ 2015-2025» փաստաթուղթը բարձրագույն կրթության և աշխատաշուկայի միջև սերտ և արդյունավետ կապի ստեղծումը դիտարկում է որպես կրթության որակի ու շրջանավարտների մասնագիտական հաջողության առանցքային ուղենիշ: Աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջներն ու անորոշությունը պարտադրում են կրթական հաստատություններին մշտապես հարմարեցնել ուսումնական ծրագրերը, ստեղծել բազմաշերտ ուսուցողական միջավայր և ինտեգրել գործնական փորձ, ինչը բարձրացնում է շրջանավարտների պատրաստվածությունն ու նրանց համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին [7, 69]:

Առաջնային մեխանիզմներից է բուհերի, գործարար միջավայրի ու հասարակական կազմակերպությունների միջև կայուն համագործակցության ձևավորումը, որը թույլ է տալիս ուսանողներին մասնակցել ուսուցման ու պրակտիկայի համակցված գործընթացին: Հատուկ ուշադրություն է դարձվում շրջանավարտների ներգրավվածությանը, քանի որ նրանք կարող են գնահատել ուսումնական ծրագրերի կառուցվածքային տարրերի արդյունավետությունը, ներգրավվել պրակտիկ կամ հյուր դասախոսների դերում և նպաստել ուսանողների մասնագիտական ու գործնական հմտությունների զարգացմանը:

Մինչ այժմ կիրառական գիտությունների համալսարանների ծրագրերում աշխատանքի տեղավորումները (աշխատանքային պրակտիկա) լայնորեն կիրառվում են: Հետազոտական համալսարաններում դրանց համակարգված ներդրումը շարունակում է ընդլայնվել՝ ապահովելով ուսանողների գործնական փորձի հնարավորությունները: Աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը ուսանողներին, ներառյալ շրջանավարտների զբաղվածության ցուցանիշների հրապարակումը, ուսանողների շրջանում ապահովում է իրատեսական պատկերացում իրենց մասնագիտական հեռանկարների մասին:

Նոր ուսումնական ծրագրերի մշակման գործընթացում աշխատաշուկայի պահանջների գնահատումն ու գործատուների, ոլորտային կազմակերպությունների ներգրավումը հատկապես կարևոր են կիրառական գիտությունների մագիստրոսական ծրագրերի համար: Ոլորտային պլաններն ու վերլուծությունները առանձ-

նացնում են այն ոլորտները, որոնցում պահանջվում է հատուկ ուշադրություն, օրինակ՝ ֆիզիկայի, քիմիայի ու կիրառական տեխնոլոգիաների բնագավառներում:

Այս մոտեցումը ամրապնդում է բուհերի ու աշխատաշուկայի միջև հարաբերությունների ռազմավարական բնույթը և ուղղորդում կրթական ծրագրերի ձևավորումը՝ ապահովելով դրանց համապատասխանությունը հասարակական և տնտեսական նպատակներին: Պատահական չէ, որ «Մասնագիտական կրթություն և վերապատրաստում 2023–2027» հրապարակված զեկույցի համաձայն՝ մասնագիտական կրթության ու վերապատրաստման շրջանավարտները մեծ պահանջարկ ունեն գործատուների շրջանում. նրանց 81 տոկոսը գտնում է աշխատանք ուսումնառության ավարտից հետո երեք ամսվա ընթացքում [8, 8-9]:

Բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ կրթության մակարդակը էականորեն ազդում է անձանց զբաղվածության հնարավորությունների ու աշխատաշուկայում նրանց մրցունակության վրա: Բարձրագույն կրթությունը զգալիորեն նվազեցնում է գործազրկության առաջացման հավանականությունը և մեծացնում է վերազբաղվածության հաջողության հնարավորությունները. այսինքն՝ բարձր կրթական մակարդակ ունեցող անձինք ոչ միայն ավելի արագ են գտնում աշխատանք, այլև ունեն ավելի կայուն զբաղվածություն [11, 453-463], [1, 262-266]:

Բարձրագույն կրթությունը ձևավորում է աշխատաշուկայում մրցունակության բարձր մակարդակ՝ զարգացնելով մասնագիտական ու սոցիալական հմտությունների այն համակցությունը, որը պահանջվում է ժամանակակից տնտեսությունում:

Այսպիսով՝ կարելի է պնդել, որ բարձրագույն կրթությունը հանդես է գալիս որպես մարդու կապիտալի ձևավորման առանցքային գործոն՝ ապահովելով ավելի արդյունավետ դիրքավորում աշխատաշուկայում՝ մեծացնելով մասնագիտական կայունության ու կարիերային աճի հնարավորությունները:

Այս համապատասխանությունը ոչ միայն բարելավում է զբաղվածության ցուցանիշները, այլև նվազեցնում գործազրկության ռիսկը և նպաստում մասնագիտական զարգացման շարունակականությանը: Այս տեսանկյունից Նիդեռլանդների ցուցանիշները բավականին բարձր են: Բարձրագույն կրթություն ունեցող 25-64 տարեկան տղամարդկանց 92 %-ն ու կանանց 87 %-ն ունեն զբաղվածություն: Տվյալները ներկայացված են Աղյուսակ 1-ում [9, 12]:

Աղյուսակ 1. 25-64 տարեկան բնակչության զբաղվածության մակարդակը՝ ըստ կրթական մակարդակի ու սեռի

25-64 տարեկան բնակչության զբաղվածության մակարդակը՝ ըստ կրթական մակարդակի և սեռի	Նիդեռլանդներ		Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության միջին ցուցանիշ	
	2022		2022	
	Տղամարդ %	Կին %	Տղամարդ %	Կին %

Միջնակարգից ցածր	77 %	57 %	70 %	48 %
Միջնակարգ	89 %	79 %	84 %	69 %
Բարձրագույն	92 %	87 %	90 %	83 %

Նիդեռլանդների բարձրագույն ուսումնական հաստատությունների ասոցիացիայի պատվերով Մասստրիխտի համալսարանի կրթության և աշխատաշուկայի հետազոտական կենտրոնի կողմից 2024 թ. 24000 շրջանավարտների շրջանում արված «Բարձրագույն մասնագիտական կրթության շրջանավարտների աշխատաշուկայի դիրքը» հետազոտությունը ցույց է տալիս.

- 2024 թ. տվյալներով բարձրագույն կրթություն ունեցող շրջանավարտների միջին գործազրկությունը կազմում է 3.5 %, ինչը փոքր աճ է 2023 թ. 2.8 %-ի համեմատ: Շրջանավարտների 85.3 %-ը անմիջապես աշխատանք է գտնում ավարտելուց հետո: Առավել ցածր գործազրկությունը գրանցվել է կրթության (1 %) և առողջապահության (1.2 %) ոլորտներում, որոնք համարվում են «բարձր սոցիալական արժեք ունեցող» ոլորտներ: Ամենաբարձր գործազրկությունն արձանագրվել է արվեստի ոլորտում (6.5 %):

- Միջին ամսական վարձատրությունը կազմում է 3,307 եվրո, իսկ ժամային միջինը՝ 22.2 եվրո: Ամենաբարձր վարձատրությամբ ոլորտներն են՝ կրթությունն (25 եվրո/ժ) ու առողջապահությունը (24.8 եվրո/ժ): Միջին աշխատանքային շաբաթը կազմում է 34 ժամ, իսկ կրթության ու առողջապահության ոլորտներում՝ մոտ 32 ժամ:

- Հարցվածների 77 %-ը աշխատում է իր մասնագիտության կամ հարակից ոլորտում: Շրջանավարտների 78 %-ը ուսումնական ծրագրի ու աշխատանքի համապատասխանությունը գնահատում է «բավարար» կամ «լավ»: Առավել բարձր համապատասխանություն դիտվել է կրթության (88 %) ու առողջապահության (84%) ոլորտներում:

- Շրջանավարտների 70 %-ը նշում է, որ իրենց կրթությունը ապահովել է հուսալի հիմք հետագա մասնագիտական զարգացման համար: 52 %-ը գոհ է աշխատանքի նախապատրաստության մակարդակից, իսկ 63 %՝ ուսման ու աշխատաշուկայի կապից:

- Շրջանավարտների 75 %-ը շարունակում է աշխատել իրենց ուսումնական հաստատության շրջանից 50 կմ շառավղով: 20 %-ը մնում է նույն քաղաքում, որտեղ սովորել է, ինչը վկայում է բարձր տարածաշրջանային կապի ու տեղական աշխատաշուկայի ներգրավվածության մասին [6, 1-7]:

Նիդեռլանդների բարձրագույն կրթության համակարգը կառուցված է այն սկզբունքով, որ կրթությունը պետք է ուղղակիորեն առնչություն ունենա աշխատաշուկայի պահանջներին: Այդ համագործակցությունը դիտվում է ոչ թե հավելյալ, այլ կրթական գործընթացի հիմնական բաղադրիչ: Այն ապահովում է ուսուցման

գործնական կողմը, շրջանավարտների աշխատունակությունն ու կրթության սոցիալ-տնտեսական արդյունավետությունը:

Գործնականում ձևավորվել են մի քանի մոդելներ, որոնք ամրագրված են ինչպես ազգային կրթական ռազմավարություններում, այնպես էլ կիրառվում են բուհերի մակարդակում: Այժմ քննարկենք դրանցից մի քանիսը:

1. Համատեղ կրթական ծրագրերի մշակում. բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում Նիդեռլանդները որդեգրել է ուսումնական ծրագրերի համատեղ ձևավորման մոտեցումը, որը հիմնված է կրթական հաստատությունների, գործատուների ու ոլորտային խորհրդատվական մարմինների համագործակցության վրա: Այս մոդելի նպատակն է ապահովել կրթական ծրագրերի շարունակական համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին ու ոլորտային բարձր չափորոշիչներին: Բուհերը մշտապես համագործակցում են մասնագիտական ասոցիացիաների ու գործատուների հետ՝ կրթական ծրագրերի վերանայման ու արդիականացման փուլերում, ինչը համահունչ է միջազգային փորձին, որտեղ հետազոտությունները ցույց են տալիս, որ բուհերի ու աշխատաշուկայի սերտ համագործակցությունը բարձրացնում է ուսումնական ծրագրերի արդյունավետությունն ու շրջանավարտների աշխատունակությունը [6, 615-622], [4, 379-412]: Այս մոտեցումն ընդգծում է, որ արդյունավետ ուսումնական ծրագրերի նախագծումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ տարբեր դերակատարներ՝ կրթական ոլորտից, գործատուներից ու հասարակական հատվածից, համատեղ մասնակցում են բովանդակային որոշումների կայացմանը: Նման համագործակցությունը նպաստում է ծրագրերի ճկունությանն ու դրանց կարողությանը՝ արագ արձագանքելու տեխնոլոգիական ու սոցիալ-տնտեսական փոփոխություններին [10, 260-261]:

2. Կրկնակի ուսուցման համակարգ. Նիդեռլանդներում լայնորեն կիրառվում է կրկնակի ուսուցում (*duaal studeren*) մոդելը՝ ուսումնական գործընթացի ու աշխատանքի զուգակցմամբ: Այս մոդելով ուսանողը սովորում է համալսարանում և միաժամանակ աշխատում է կազմակերպությունում: Այս համակարգը խթանվում է պետական մակարդակով: Կրթության, մշակույթի և գիտության ու Սոցիալական հարցերի և զբաղվածության նախարարությունները Նիդեռլանդներում համատեղ ֆինանսավորում են գործատուներին, որոնք ուսանողներին տալիս են իրական աշխատանքային փորձ: Գործատուները ստանում են պետական “*Subsidieregeling praktijkleren*” դրամաշնորհ՝ յուրաքանչյուր ուսանողի համար (տարեկան մինչև 2,700 եվրո)՝ որպես խրախուսում կրթական համագործակցության համար:

3. Շրջանավարտների ներգրավման համակարգ. Նիդեռլանդների բարձրագույն ուսումնական հաստատություններում աստիճանաբար ձևավորվել է շրջանավարտների ներգրավման համակարգ՝ որպես հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմ: Այն դիտարկվում է որպես կրթության որակի ապահովման և ծրագրե-

րի շարունակական արդիականացման առանցքային բաղադրիչ: Շրջանավարտների փորձն ու մասնագիտական գնահատականները կարևոր դեր ունեն ուսումնական ծրագրերի կիրառական արժեքի գնահատման, ինչպես նաև աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համահունչ բարեփոխումների իրականացման գործում: Բարձրագույն ուսումնական շատ հաստատություններ, ինչպես, օրինակ, Ուտրեխտի կիրառական գիտությունների համալսարանը, Մաքսիմի կիրառական գիտությունների համալսարանը և այլն, ձևավորել են շրջանավարտների միավորումներ, որոնք ծառայում են որպես կամուրջ կրթական համակարգի ու գործատուների միջև՝ ապահովելով ուսանողների համար խորհրդատվական ու գործնական փորձառության հնարավորություններ: Այս մոտեցումը ամրագրված է Նիդեռլանդների կրթության, մշակույթի և գիտության նախարարության «Բարձրագույն կրթության և հետազոտությունների ռազմավարական օրակարգ 2015-2025» փաստաթղթում, ըստ որի՝ շրջանավարտների հետ կապի ամրապնդումը նպաստում է կրթական ծրագրերի և մասնագիտական դաշտի փոխադարձ ինտեգրմանը [7, 47]:

4. Ոլորտային պլանների և ռազմավարական գործընկերության մոդել. Նիդեռլանդների բարձրագույն կրթության համակարգում կիրառվում է ոլորտային պլանավորման մոտեցում, որի միջոցով պետական մարմինները, բարձրագույն ուսումնական հաստատությունները և գործատուները համատեղ սահմանում են երկրի տնտեսական ու գիտական զարգացման համար առաջնահերթ ուղղություններ: Այս համակարգի նպատակը մարդկային կապիտալի հավասարակշռված զարգացումն է՝ աշխատաշուկայի կառուցվածքային պահանջների հետ համապատասխանությամբ: Ոլորտային պլանները հատկապես ընդգրկում են այն բնագավառները, որոնք համարվում են ռազմավարական՝ ֆիզիկա, քիմիա, առողջապահություն, ճարտարագիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն: Բուհերն իրենց հերթին պարտավորվում են կրթական ծրագրերի ձևավորման և բովանդակային որոշումների փուլերում ներգրավել գործատուներին ու մասնագիտական ասոցիացիաներին՝ ապահովելով ուսումնական գործընթացի գործնական ուղղվածությունը: Այս մոտեցումը դիտարկվում է որպես Նիդեռլանդների կրթական քաղաքականության առանցքային տարր և արտացոլված է ինչպես «Բարձրագույն կրթության և հետազոտությունների ռազմավարական օրակարգ 2015-2025» փաստաթղթում, այնպես էլ «Մարդկային կապիտալի օրակարգ 2022-2025» ծրագրում, որում շեշտադրվում է բուհերի, գործատուների և պետական կառույցների համագործակցության ռազմավարական բնույթը՝ նորարարական տնտեսության կառուցման համատեքստում:

Չնայած Նիդեռլանդների բարձրագույն կրթության և աշխատաշուկայի կապը համարվում է եվրոպական լավագույն մոդելներից մեկը, մի շարք հիմնարար մար-

տահրավերներ շարունակում են սահմանափակել համակարգի արդյունավետությունն ու հարմարվողականությունը: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

1. Չնայած կրթական ծրագրերի ու աշխատաշուկայի սերտ համագործակցությանը՝ շրջանավարտների մոտ դեռ նկատվում է հմտությունների անհամապատասխանություն, մասնավորապես՝ թվային հմտությունների, հաղորդակցական կարողությունների ու միջմշակութային հաղորդակցության ոլորտներում: Այս խնդիրն առավել ընդգծվում է բարձր տեխնոլոգիական և ինովացիոն ոլորտներում, որտեղ աշխատաշուկայի պահանջները փոխվում են զգալիորեն արագ, քան կրթական ծրագրերի բովանդակությունը:

2. Թեև առկա են ոլորտային պլաններ՝ բուհական համակարգը երբեմն չի հասցնում արագ արձագանքել նոր տնտեսական ուղղության արագ զարգացող մարտահրավերներին: Այս խնդիրը հասկապես արտահայտված է տեղեկատվական տեխնոլոգիաների, արհեստական բանականության և կայուն էներգետիկայի ոլորտներում: Հիմնական դժվարությունը պայմանավորված է նոր կրթական ծրագրերի հաստատման երկարատև գործընթացով, որը սահմանափակում է բուհերի ձկունությունը:

3. Չնայած Նիդեռլանդների բարձրագույն կրթության համընդհանուր հասանելիությանը՝ որոշ խմբերի, հատկապես միգրանտների ու ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երիտասարդների շրջանում դեռ առկա է մասնակցության և բարձրագույն կրթության ոչ լիարժեք մատչելիության խնդիր (Նիդեռլանդների վիճակագրության տվյալների բազա): Մոցիալ-տնտեսական նախադրյալները շարունակում են ազդել բարձրագույն կրթության հասանելիության ու շրջանավարտների աշխատանքի տեղավորման վրա:

4. Նիդեռլանդների հարավային ու արևելյան շրջաններում (օր.՝ Լիմբուրխ, Օվերեյսել) շրջանավարտների՝ աշխատաշուկայում ինտեգրման մակարդակը մի փոքր ցածր է, քան արևմտյան տնտեսական կենտրոններում՝ Ռոտերդամ, Ուտրեխտ, Ամստերդամ: Այս միտումը վկայում է, որ կրթության ու աշխատանքի փոխկապակցման արդյունավետությունը դեռևս կախված է տարածաշրջանային տնտեսական հզորությունից և գործատուների ներգրավման աստիճանից:

Եզրակացություններ

1. Նիդեռլանդների բարձրագույն կրթության երկբաղադրիչ համակարգը, ներառելով կիրառական (HBO) ու գիտահետազոտական/ակադեմիական (WO) բարձրագույն կրթությունը, ապահովում է ուսանողների համապարփակ մասնագիտական ու գործնական պատրաստվածություն, որը բարձրացնում է շրջանավարտների աշխատունակությունն ու մրցունակությունը աշխատաշուկայում և արդյունավետորեն նպաստում մարդկային կապիտալի ձևավորմանը:

2. Բուհերի, գործատուների և պետական մարմինների ռազմավարական համագործակցությունը՝ արտացոլված ուսումնական ծրագրերի համատեղ ձևավոր-

ման, կրկնակի ուսուցման, շրջանավարտների ներգրավման, ոլորտային պլանավորման և այլ մոդելներում, բարձրագույն կրթության սոցիալ-տնտեսական արդյունավետության ու ուսանողների մասնագիտական կայունության հիմնական երաշխիքն է:

3. Չնայած համակարգի բարձր արդյունավետությանը՝ աշխատաշուկայում ինտեգրման մակարդակում պահպանվում են կառուցվածքային մարտահրավերներ՝ թվային, հաղորդակցական ու միջմշակութային հմտությունների անհամապատասխանություն, նոր տեխնոլոգիական ոլորտներին արագ արձագանքելու սահմանափակումներ, սոցիալ-տնտեսական խոցելի խմբերի մասնակցության անհավասարություն ու տարածաշրջանային տարբերություններ:

4. Նիդեռլանդների փորձը վկայում է, որ բուհերի, աշխատաշուկայի և պետական կառույցների շարունակական ու համակարգված համագործակցությունը ապահովում է կրթական ծրագրերի մշտական արդիականացում, սերտ համապատասխանություն աշխատաշուկայի պահանջների հետ և ստեղծում հուսալի հիմք նորարարական, գիտելիքահեն տնտեսության կայացման համար:

THE ISSUE OF UNIVERSITY–LABOR MARKET COOPERATION IN THE HIGHER EDUCATION SYSTEM OF THE NETHERLANDS

Abajyan Khachik

*PhD student, Chair of Pedagogy,
Yerevan State University,
Republic of Armenia,
khachik.abadzhyan@ysu.am*

Summary

Today, higher education and the labor market are viewed not only as separate educational and occupational systems but also as interconnected socio-economic institutional systems, whose effective operation contributes to national development and the establishment of an innovative economy. Education serves not only as a means of knowledge transfer but also as a strategic instrument for training labor-market-competitive professionals.

The higher education system of the Netherlands, encompassing both applied (HBO) and academic/research-oriented (WO) tracks, operates based on these approaches by ensuring students' integrated professional and practical competencies. The system's effectiveness is enhanced through strategic cooperation among universities, employers, and state bodies, as reflected in the national Strategic Agenda for Higher Education and Research 2015–2025. Mechanisms such as work placements, dual learning programs, graduate engagement, and sectoral planning are fundamental in ensuring students' employability and the socio-economic efficiency of higher education.

The Dutch experience emphasizes that higher education must closely align with labor market demands, thereby increasing graduates' competitiveness, reducing unemployment risks, and providing a reliable foundation for continuous professional development and innovative activity. Within the scope of this study, the main models of university–labor market cooperation in the Netherlands have been analyzed, existing challenges identified, the impact of education on the overall labor market structure examined, and potential improvements outlined.

Keywords: *Netherlands, higher education, labor market, university–labor market cooperation, academic education, employability, human capital.*

ПРОБЛЕМА СОТРУДНИЧЕСТВА УНИВЕРСИТЕТОВ И РЫНКА ТРУДА В СИСТЕМЕ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ НИДЕРЛАНДОВ

Абаджян Хачик

*Соискатель кафедры педагогики,
Ереванский государственный университет,
Республика Армения,
khachik.abadzhyan@ysu.am*

Аннотация

В современном контексте высшее образование и рынок труда рассматриваются не только как отдельные образовательная и профессиональная системы, но и как взаимосвязанные социально-экономические институциональные структуры, эффективное функционирование которых способствует развитию государства и формированию инновационной экономики. Образование выполняет роль не только средства передачи знаний, но и стратегического инструмента формирования специалистов, конкурентоспособных на рынке труда.

Система высшего образования Нидерландов, включающая прикладное (НВО) и академическое/исследовательское (ВО) направления, функционирует именно на основе этих подходов, обеспечивая комплексную профессиональную и практическую подготовку студентов. Эффективность системы повышается за счет стратегического сотрудничества университетов, работодателей и государственных органов, что отражено в национальном Стратегическом плане высшего образования и исследований 2015–2025 гг. Основными механизмами, обеспечивающими трудоспособность студентов и социально-экономическую эффективность высшего образования, являются практики на рабочем месте, программы дуального обучения, вовлечение выпускников и отраслевое планирование.

Опыт Нидерландов подчеркивает, что высшее образование должно тесно соответствовать требованиям рынка труда, что повышает конкурентоспособность выпускников, снижает риски безработицы и создает надежную основу для их непрерывного профессионального развития и инновационной деятельности. В рамках данного исследования проанализированы основные модели сотрудничества университетов и рынка труда в Нидерландах, выявлены существующие вызовы, оценено влияние образования на структуру рынка труда и представлены возможные направления совершенствования.

Ключевые слова: *Нидерланды, высшее образование, рынок труда, сотрудничество университетов и рынка труда, академическое образование, трудоспособность, человеческий капитал.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Golenkova T.Z., Kosharnaja B.G., Kosharnyj P.V., «Vlijanie obrazovaniya na povyshenie konkurentosposobnosti rabotnikov na rynke truda», integraciya obrazovaniya. T. 22, № 2., 2018, str.262-266. (in Russian)
2. Becker G.S., «Human Capital: A theoretical and empirical analysis with special reference to education, third edition», The University of Chicago Press, 1994, 17-23.
3. Bermejo V., «University–industry collaboration in curriculum design and delivery: A model and its application in manufacturing engineering courses», Industry and Higher Education Journal, Volume 36, Issue 5, 2021, p. 615-622.
4. Bodas Freitas I.M., Verspagen B., «The motivations, institutions and organization of university-industry collaborations in the Netherlands», Journal of Evolutionary Economics, Vol. 27, Issue 2, 2017, p. 379–412.
5. Etzkowitz H., Leydesdorff L., «The dynamics of innovation: from National Systems and «Mode 2» to a Triple Helix of university–industry–government relations», Research Policy, Vol. 29, No. 2, 2000, 109–123.

6. Maastricht University, «The labor market position of higher professional education graduates», 2024, 1-7.
7. Ministry of Education, Culture and Science of the Netherlands, «Strategic agenda for higher education and research 2015-2025», 2015.
8. Ministry of Education, Culture and Science of the Netherlands, «Agenda for VET 2023-2027», 2023.
9. Organization of Economic Co-operation and Development, «Education at a Glance: Netherlands», 2023.
10. Perkmann M., Walsh K. «University-industry relationships and open innovation: towards a research agenda», International Journal of Management Reviews 9(4), 2007, p. 260-261.
11. Riddell W.C., Song X., «The impact of education on unemployment incidence and re-employment success», Labour Economics, Volume 18, Issue 4, 2011, p. 453-463.
12. Yorke M., «Employability in higher education: what it is – what it is not», Learning and Employability Series, Higher Education Academy, 2006, 7-11.

Получено: 27.09.2025

Рассмотрено: 04.11.2025

Принято: 28.11.2025

Received: 27.09.2025

Reviewed: 04.11.2025

Accepted: 28.11.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

ԲԱԺԻՆ 7. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 7: ГРАЖДАНСКОЕ ОБРАЗОВАНИЕ
SECTION 7: CIVIC EDUCATION

UDC 37.017.4
DOI 10.46991/educ-21st-century.v7.i2.300

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԽՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ
ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գալստյան Մարինա

*սոցիոլոգիական գիտությունների թեկնածու,
Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն,
Հայաստանի Հանրապետություն,
galstyanmarina@gmail.com
<https://orcid.org/0000-0001-9396-0550>*

Ամփոփում

Համառոտ ներածական. Հետազոտության նպատակն է քննել Հայաստանում քաղաքացիական կրթական ծրագրերի բարելավման ուղղությունները: Այս հոդվածը փորձ է ներդրում ունենալու երիտասարդների քաղաքացիական կրթության բարելավման ուղղությունների գիտական վերաիմաստավորման գործընթացում՝ հաշվի առնելով հետպատերազմյան հասարակություններին բնորոշ առանձնահատկությունները: Հայաստանում քաղաքացիական կրթության վերաիմաստավորումը պայմանավորված է պատերազմից ու համավարակից հետո հասարակական վերափոխումներով: Այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական կրթությունը պետք է դուրս գա միայն գիտելիքի փոխանցման շրջանակից և դառնա ինքնության, իմաստի, արժեքային կողմնորոշումների ձևավորման ու ժողովրդավարական ներգրավվածության հարթակ: Հետազոտության արդյունքները վկայում են, որ մասնակցության օրինաչափությունները մնում են անհավասար. առավել ակտիվ են քաղաքաբնակ աղջիկները, ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ հետպատերազմյան շրջանում: Մա ընդգծում է ներառման տարբերակված ռազմավարությունների մշակման անհրաժեշտությունը հատկապես գյուղական երիտասարդների համար: Մեթոդաբանական տեսանկյունից առավել արդյունավետ են փոխգործուն ու պրոբլեմային ուսուցման ձևերը: Դասավանդողները հանդես են գալիս որպես օրինակելի դերակատարներ, ուստի նրանց ընտրությունն ու մեթոդական պատրաստվածությունը կարևոր նշանակություն ունեն: Քաղաքացիական կրթությունը պետք է ամրապնդի երիտասարդների ու համայնքի կապերը՝ խթանելով համագործակցությունը տեղական կառույցների հետ և ապահովելով ծրագրերի շարունակականությունը: Միևնույն ժամանակ առկա են մարտահրավերներ՝ ֆինանսական կայունության ու քաղաքացիական ակտիվությունը զբաղվածության դաշտի հետ նույնացնելու հակումների տեսքով: Ուսումնասիրությունը եզրակացնում է, որ քաղաքացիական հասարակության կառույցների ու պետության համագործակցության խորացումը, ինչպես նաև նորարարական աջակցման մեխանիզմների ներդրումը կարևոր պայմաններ են քաղաքացիական կրթության արդյունավետության ու շարունակականության համար: Նորագույն տեխնոլոգիաները դարձել են ժամանակակից քաղաքացիականության առանցքը՝ ազդելով տեղեկացվածության, քաղաքական մասնակցության ու սոցիալական փոխհարաբերությունների վրա: Հետևաբար քաղաքացիական

կրթության նպատակադրման և մեթոդաբանական կարևոր ուղղություն պետք է դառնա քաղաքացիական կրթության ու տեխնոլոգիաների քննադատական ըմբռնման համադրումը՝ ընդգրկելով մեդիագրագիտության ու մեդիա բովանդակություն ստեղծելու հմտությունների զարգացումը:

Քանայի բառեր՝ երիտասարդներ, մասնակցություն, քաղաքացիական կրթություն, թվային մասնակցություն, ՀՀ երիտասարդները, հետպատերազմյան հասարակություն:

Հիմնախնդիրը: Հայաստանում երիտասարդների քաղաքացիական կրթության բարելավման ուղղությունները հետպատերազմյան հասարակության համատեքստում:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների ու հրատարակությունների վերլուծություն: Լայն իմաստով «քաղաքացիական կրթություն» նշանակում է բոլոր այն գործընթացները, որոնք ազդում են մարդկանց համոզմունքների, պարտավորությունների, կարողությունների ու գործողությունների վրա որպես համայնքների անդամներ կամ ապագա անդամներ [5, 1]:

Քաղաքացիական կրթության վերաբերյալ վերջին հետազոտությունները ձգտում են դուրս բերել, թե որոնք են քաղաքացիական կրթության արդյունավետության՝ ուսանողների քաղաքացիական մասնակցության պատրաստակամության, հասարակական համերաշխության, հասարակական կայունության վրա ազդող գործոնները: Վերջին ուսումնասիրությունները փաստում են, որ ուսուցման որակի բոլոր կողմերը հավասարապես կարևոր չեն ուսանողների մասնակցության պատրաստակամության համար: Մասնավորապես, ուսանողների ներգրավվածության խթանումը ճանաչողական ակտիվացման միջոցով կարծես ավելի մեծ դեր է խաղում, քան նախկինում ենթադրվում էր, ընդ որում՝ ճանաչողական ակտիվացման ու մասնակցության պատրաստակամության միջև կապը միջնորդվում է քաղաքական հետաքրքրությամբ ու քաղաքական գիտելիքներով [2, 1897]: Որոշ հետազոտություններ փաստում են համագործակցության խթանման, դասավանդողների մասնագիտական զարգացման, ուսուցման փորձարարական հնարավորությունների կարևորության մասին [3]: Քաղաքացիական կրթության վերաբերյալ արդի ուսումնասիրություններում նշանակալի տեղ են զբաղեցնում նաև թվային մասնակցության, առցանց կրթական ռեսուրսների, առցանց քաղաքացիական կրթության, մեդիագրագիտության շուրջ գիտական քննարկումները [10]:

Հայաստանում քաղաքացիական կրթության վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում անդրադառնում են հասարակագիտական առարկաների դասավանդման [1] ու քաղաքացիական կրթության գործիքների արդյունավետությանը: Հայաստանում քաղաքացիական մասնակցության և կրթության առկա գործիքակազմն ու ռեսուրսները, որոնք հիմնականում մշակվել են քաղաքացիական հասարակության կառույցների կողմից, կարիք ունեն առավել հիմնարար գիտական անդրադարձի, ինչի օրինակները արդեն իսկ կան¹⁶:

¹⁶ Քաղաքացիական կրթության կարողունակությունները գնահատելու գործիքը մշակելու ճանա-

Քաղաքացիական կրթությունը հակամարտությունից հետո հասարակությունների վերականգնման կենտրոնական հենասյունն է: Այն նպատակ ունի ոչ միայն գիտելիքներ տրամադրելու իրավունքների, ինստիտուտների և ժողովրդավարական արժեքների մասին, այլև վերականգնելու սոցիալական վստահությունն ու համերաշխությունը: Հետպատերազմյան համատեքստերը սովորաբար բնութագրվում են պետական ինստիտուտների, մասնավորապես հանրային ոլորտների ու միջսերնդային տրավմայի նկատմամբ լայնորեն տարածված սկեպտիցիզմով: Նման պայմաններում քաղաքացիական կրթությունը չի կարող սահմանափակվել միայն քաղաքացիության կամ օրենքի պահպանման վերաբերյալ ուսուցմամբ. այն պետք է ակտիվորեն լուծի լեգիտիմության ճգնաժամը: Յ. Հաբերմասը ցույց է տալիս, որ ժողովրդավարությունները կարող են լեգիտիմության ճգնաժամ ապրել (նորմատիվային ճգնաժամ, ռացիոնալության ճգնաժամ, մոտիվացիոն ճգնաժամ), երբ քաղաքացիները կասկածի տակ են դնում ինստիտուտների օրինականությունը, իսկ կրթությունը կարող է կամ վերարտադրել այդ վիճակը կամ նպաստել փոփոխությանը: Թեև Յ.Հաբերմասը շատ քիչ է քննարկել բուն քաղաքացիական կրթության հարցերը, սակայն նրա գաղափարները՝ ծագած Ֆրանկֆուրտյան դպրոցի քննադատական տեսությունից, մեծ ազդեցություն են ունենում քաղաքացիական կրթության հետազոտությունների ու մոտեցումների վրա: Հաբերմասը ցույց է տալիս, թե ինչպես կարելի է սովորեցնել քաղաքացիներին ոչ միայն ընդունել ժողովրդավարության կանոնները, այլև քննադատաբար վերլուծել ինստիտուտների և հանրային ոլորտի գործառնությունները, զարգացնել հաղորդակցական հմտություններ ու նպաստել ժողովրդավարության իրական լեգիտիմացմանը [9]

Քաղաքացիական կրթության միջոցով լեգիտիմության ու ժողովրդավարության ճգնաժամի հաղթահարմարման հնարավորությունները կարելի է դիտարկել մի շարք ուղղություններով:

Քաղաքացիական կրթության նպատակները

○ **Կրթության դերը՝ վերարտադրություն, թե՛ փոփոխություն:** Քաղաքացիական կրթությունը կարող է կամ պարզապես պահպանել գոյություն ունեցող իշխանական հարաբերություններն ու նորմերը, կամ դառնալ փոփոխությունների գործիք: Հաբերմասի գաղափարները օգնում են տարբերակել այս երկու հնարավորությունները:

○ **Գիտելիքի շահեր** – Հաբերմասը տարբերակում է տեխնիկական, գործնական ու ազատագրող գիտելիքի շահերը: Քաղաքացիական կրթության համար առանձնապես կարևոր է ազատագրող մոտեցումը, որը նպաստում է քննադատական մտածողությանն ու ազատության ձգտմանը:

○ **Հանրային ոլորտ ու խորհրդատվական ժողովրդավարություն:** Հաբերմասի հանրային ոլորտի ու քննարկողական ժողովրդավարության գաղափարը կարևոր է. քաղաքացիական կրթությունը պետք է սովորեցնի ինչպես հասկանալ, մասնակցել ու քննադատել հանրային խոսույթը:

Քաղաքացիական կրթության մեթոդաբանությունը

○ **Համատեղ ուսուցում:** Մարդիկ սովորում են համատեղ քննարկման ու փորձի միջոցով, և դա պետք է լինի քաղաքացիական կրթության հիմք:

○ **Հաղորդակցական (կոմունիկատիվ) գործողություն:** Կրթությունը պետք է զարգացնի բանավիճելու, լսելու և հիմնավորված երկխոսության, փոխհամաձայնության հասնելու կարողություններ, ոչ թե միայն գործիքային կամ արդյունքահեն մտածողություն:

○ **Քննարկման հարթակներ:** Դասարանները, կրթական միջավայրերը պետք է դառնան իրական քննարկման հարթակներ, ոչ թե միայն գիտելիքի փոխանցման վայր:

Քաղաքացիական կրթության արդյունքները

○ Երիտասարդները պետք է սովորեն քննադատաբար մտածել ինստիտուտների, նորմերի ու իշխանության մասին:

○ Կրթությունը պետք է զարգացնի լսելու, փաստարկելու, համառոտելու ու հիմնավորված երկխոսություն վարելու կարողություններ:

○ Սովորողները պետք է տեսնեն կապերը տեղական, ազգային ու գլոբալ հանրային ոլորտների միջև:

Քաղաքացիական կրթության դժվարություններն ու սահմանափակումները

○ Իրական կյանքում հանրային ոլորտները հաճախ աղավաղված են իշխանությամբ, անհավասարություններով ու մեղիայի շահերով, ուստի «կատարյալ խոսույթի» մոդելը գործնականում դժվար է:

○ Դպրոցները, համալսարանները, կրթական միջավայրերը հաճախ ունեն հիերարխիկ ու ստանդարտացված կառուցվածք, ինչը սահմանափակում է ազատ երկխոսության հնարավորությունները:

○ Պետք է գտնել հավասարակշռություն՝ և՛ զարգացնել քննադատությունը, և՛ պահպանել սոցիալական համախմբվածությունը:

Հետազոտության նպատակն է քննել Հայաստանում քաղաքացիական կրթական ծրագրերի բարելավման ուղղությունները:

Հետազոտության մեթոդաբանությունը ներառում է անհատական հարցազրույցներ, խմբային քննարկումներ ՀՀ երիտասարդների, փորձագետների հետ, ինչպես նաև երիտասարդության վերաբերյալ փաստաթղթերի վերլուծություն՝ իրականացված 2025 թ. մայիս-օգոստոս ամիսներին:

Հետազոտության նորույթը հետազոտական արդյունքների հիման վրա քաղաքացիական կրթական ծրագրերի վերաիմաստավորումն է: Այս հոդվածը փորձ է ներդրում ունենալու երիտասարդների քաղաքացիական կրթության բարելավման ուղղությունների գիտական իմաստավորմանը Հայաստանում՝ հաշվի առնելով հետպատերազմյան հասարակություններին բնորոշ առանձնահատկությունները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել երիտասարդներին ուղղված քաղաքացիական կրթական ծրագրերի մշակման, բարելավման ու գնահատման համար:

Հիմնական նյութի շարադրանք: Հայաստանում քաղաքացիական կրթության վերաիմաստավորումը պետք է միաժամանակ հաշվի առնի հետպատերազմյան ու հետհամավարակային հասարակական վերափոխումները: Այս գործընթացում առաջնային են երիտասարդների մասնակցության խթանումը, քննադատական մտածողության զարգացումն ու ժողովրդավարական արժեհամակարգի ամրապնդումը: Քաղաքացիական կրթական ծրագրերը պետք է մշակվեն ոչ միայն որպես գիտելիքի փոխանցման հարթակ, այլև ինքնության, իմաստի, արժեքային կողմնորոշման ու գործողության դաշտ՝ հիմք ընդունելով մասնակիցների նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը:

Քաղաքացիական կրթության նպատակները

Քաղաքացիական կրթության նպատակների սահմանման տեսանկյունից առանցքային կարևորություն ունի երիտասարդներին տեղեկատվությունն ու մասնակիցների ընտրությունը: Մի շարք հետազոտություններ փաստում են, որ երիտասարդական ծրագրերում շարունակաբար ավելի ակտիվ են քաղաքաբնակ աղջիկները, ընդ որում՝ նման պատկեր եղել է ինչպես պատերազմից առաջ¹⁷, այնպես էլ հետպատերազմյան իրականությունում: Հետևաբար քաղաքացիական կրթական ծրագրերը կարիք ունեն մշակելու ու կիրառելու մասնակիցների ներառման տարբերակված գործիքներ՝ համայնքային թիրախավորված հանդիպումներ, հաջողված պատմությունների լուսաբանումներ, սոցիալական մեդիայի բովանդակության մշակում ու տարածում:

Հայաստանում քաղաքացիական կրթության ծրագրերը հիմնականում նույն բովանդակային ուղղություններն ունեն, բայց գիտելիքից բացի կարևոր է, թե ինչ սկզբունքներ են սովորեցնում այդ ծրագրերում: Կարևոր են ընդհանուր սկզբունքների վերաբերյալ խորքային գիտելիքների ստացումը, ինչը նրանց կարող է օգնել տարբեր խնդիրներ լուծել: Նման ընդհանրական ուղղություն է քննադատական, վերլուծական մտածողությունը, ինչը կարող է օգնել տարբեր խնդիրներ քննարկել ու հաղթահարել:

Հաշվի առնելով, որ նորագույն տեխնոլոգիաները դարձել են ժամանակակից քաղաքացիության անբաժանելի մաս. այն ձևավորում է մեր տեղեկացվածությունը, քաղաքական մասնակցության ուղիներն ու սոցիալական փոխհարաբերությունները, կարիք կա նաև վերաիմաստավորելու քաղաքացիական կրթությունը՝ այն դարձնելով համատեղված գործընթաց, որում ժողովրդավարության ուսուցումն անբաժանելի է տեխնոլոգիաների քննադատական ըմբռնումից [8]: Գրականության մեջ շրջանառվում է «civics of technology»-ի գաղափարը, որը նշանակում է՝ քաղաքացիական կրթությունը պետք է ուսուցանի ոչ միայն ժողովրդավարական արժեքներն ու ինստիտուտները, այլ նաև տեխնոլոգիաների սոցիալական, քաղաքական ու էթիկական հետևանքները [8]: Կարևոր է նաև երիտասարդների քաղաքացիական կրթական ծրագրերում նպատակ սահմանել ոչ միայն տեխնոլոգիաներ

¹⁷ Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտություն. ինստիտուտի ներկայիս վիճակը և կայացման հեռանկարները, ԵՄԻԿ ՊՈԱԿ, ԵՌԻ, Երևան, 2015:

կիրառելու, մեղիագրագիտությանն ուղղված հմտությունների ձևավորում, այլ նաև մեղիա բովանդակությունն ստեղծելու հմտություններ [7]:

Քաղաքացիական կրթության մեթոդաբանությունը

Առհասարակ, քաղաքացիական կրթության արդյունավետության վրա նշանակալի է ոչ թե գիտելիքի, այլ հենց մատուցման ձևի ազդեցությունը, թե ինչ գործողություններ (classroom activities) են կատարում մասնակիցները այդ ուսումնառության ընթացքում [4]: Հետևաբար, կարիք կա շեշտադրել մատուցման ձևի բարելավումը՝ դասավանդման ինտերակտիվ ռազմավարությունների մշակման և կիրառման, պրակտիկ ուսուցման շեշտադրմամբ: Ձևաչափի հետ կապված մյուս կարևոր շեշտադրումը ուղղված է պրոբլեմի վրա հիմնված ուսուցման ավելի շատ կիրառմանը (problem based learning), երբ դասավանդման հիմքում որևէ պրոբլեմային իրավիճակ է, դրա քննարկումը և մասնակցային եղանակով լուծումների, լուծման սցենարների վեր հանումը և քննարկումը: Սա ևս պրակտիկ ուսուցման հնարավորություն է տալիս: Պրակտիկ ուսուցում ասելով երիտասարդները շեշտադրում են համայնքային նախաձեռնություններում առաջացող կոնկրետ խնդիրների քննարկում և լուծում:

Քաղաքացիական կրթության մեջ դասախոսների անձը կարևոր գործոն է որպես օրինակ (role model) ծառայելու համար: Հետևաբար կարևոր է զգուշորեն ու հիմնավոր կատարել դասախոսների, բանախոսների ընտրությունը, որից հետո մեթոդական ու մոտեցումների վերաբերյալ հանդիպումներ կազմակերպել նրանց համար:

Քաղաքացիական կրթական ծրագրերի և նորագույն տեխնոլոգիաների փոխառնչությունները ներկայումս ակադեմիական ու կիրառական հետազոտությունների կարևոր ուղղություն են: Օրինակ՝ առցանց քաղաքացիական կրթության վերաբերյալ հետազոտությունները վկայում են, որ առցանց քաղաքացիական կրթությունը կարող է լինել արդյունավետ գործիք նոր ժողովրդավարություններում, քանի որ այն ապահովում է լայն հասանելիություն ու մասնակցություն՝ նվազեցնելով կրթական ու տարածքային սահմանափակումները [6, 613-630]: Սակայն դրա կայունությունն ու ազդեցությունը ժողովրդավարացման գործընթացների վրա պահանջում են երկարաժամկետ հետազոտություն:

Քաղաքացիական կրթության արդյունքները

Քաղաքացիական կրթական ծրագրերը պետք է ձևավորեն համայնքի հետ սերտ կապ, կապեն երիտասարդին իր համայնքի հետ, նպաստեն համայնքում գործող կառույցների ու դերակատարների հետ համագործակցությանը: Քաղաքացիական կրթական ծրագրերում պետք է աշխատել համայնքի հետ, համայնքում գործող կառույցների հետ, հասկանալ ոչ միայն երիտասարդի, այլ հենց համայնքի խնդիրները, ապահովել կապը երիտասարդի ու իր միջավայրի հետ, ինչը կնպաստի համայնքի հզորացմանը, ծրագրերի շարունակականությանն ու երիտասարդների կողմից պլանավորվող ծրագրերի արդյունավետությանը: Համայնքի հետ սերտ կապը կարող է նաև համայնքում բնակվող երիտասարդի մոտ ձևավորել

մասնակցելու շարժառիթ ու իմաստ:

ՀՀ երիտասարդները ակնկալում են, որ քաղաքացիական կրթական ծրագրեր իրականացնող կառույցները լինել ո՛չ կուսակցական, ո՛չ քաղաքական, սակայն գուրկ չլինեն դիրքորոշումից ու քաղաքական բովանդակությունից, ինչը կրթական կարևոր արդյունքներ կարող է ձևավորել երիտասարդների մոտ:

Քաղաքացիական կրթության դժվարությունները և սահմանափակումները

Կրթական ծրագրեր մշակելու փուլում կարևոր է հասկանալ դրամաշնորհներ տրամադրելու բաղադրիչի ներառման հնարավորությունը, ինչը կարող է կատարել խրախուսական գործառույթ. ֆինանսավորումը նաև անհրաժեշտ է ծրագրային ծախսերը հոգալու համար: Այս իմաստով պետք է նշել, որ հաճախ երիտասարդները դիտարկում են քաղաքացիական ակտիվությունը որպես հիմնական զբաղվածության ոլորտ, հետևաբար ակնկալում են ֆինանսավորում, իսկ եթե երիտասարդը զբաղված է այլ ոլորտում, քաղաքացիական ակտիվությունը աստիճանաբար պակասում է: Կրթական ծրագրերը կարող են մշակել ֆինանսավորման մեխանիզմներ ավելի ցածր տարիքի երիտասարդների համար, իսկ ավելի փորձառու երիտասարդների համար խրախուսման մեխանիզմ կարող են լինել համագործակցությունների ընդլայնումը, կապերի ձևավորումը, ջանքերի մեկտեղումը:

Երիտասարդները ակնկալում են, որ քաղաքացիական համանման կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունները սերտ համագործակցեն, ձևավորեն շրջանավարտների հարթակ, համակարգեն այդ հարթակը, որտեղ կլինի շարունակական հանդիպումների ավանդույթ: Քաղաքացիական հասարակության կառույցների (ՔՀԿ) միջև համագործակցությունների գործոնը ուժերի, ջանքերի, ռեսուրսների, փորձի մեկտեղման, փոխանակման կարևոր մեխանիզմ կարող է դառնալ, ինչպես նաև օրինակ ծառայել երիտասարդների համար: Քաղաքացիական կրթական ծրագրերում կարևոր է նաև պետության ու ՔՀԿ համագործակցությունը, պետության կողմից ՔՀԿ-ների ֆինանսավորման կարևորությունը: Պետության կողմից ՔՀԿ ֆինանսավորման հարցը կարևորվում է հայաստանյան երիտասարդների կողմից ոչ միայն ծրագրեր իրականացնելու, այլև հասարակական գործունեությունը որպես պետության համար կարևոր, առաջնահերթ գործունեություն դիտարկելու տեսանկյունից:

Եզրակացություն

Հայաստանում քաղաքացիական կրթության վերաիմաստավորումը պայմանավորված է հետպատերազմյան ու հետհամավարակային փոփոխություններով, ինչը միաժամանակ պահանջում է երիտասարդների մասնակցության խթանում, քննադատական մտածողության զարգացում ու ժողովրդավարական արժեքների ամրապնդում: Քաղաքացիական կրթական ծրագրերը պետք է դիտվեն ոչ միայն որպես գիտելիքի փոխանցման, այլ նաև ինքնության, իմաստի ու արժեքների ձևավորման հարթակ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ծրագրերում առավել ակտիվ են քաղաքաբնակ աղջիկները, ինչն ընդգծում է մասնակցության խթանման նոր գործիքների անհրաժեշտությունը՝ համայնքային հանդիպումներ, հաջողված

պատմությունների տարածում, սոցիալական մեդիայի ակտիվ կիրառում:

Մեթոդաբանական առումով կարևորվում է փոխգործուն ուսուցումը, պրակտիկ ու պրոբլեմային ուսուցման գործիքների կիրառվումը: Դասախոսները հանդես են գալիս որպես օրինակելի դերակատարներ, հետևաբար նրանց ընտրությունն ու մեթոդական պատրաստվածությունը վճռորոշ են: Վերջնարդյունքում ծրագրերը պետք է կապեն երիտասարդներին համայնքի հետ՝ նպաստելով կառույցների հետ համագործակցությանն ու ծրագրերի շարունակականությանը:

Միևնույն ժամանակ կրթական նախաձեռնությունները բխվում են ֆինանսական ու կազմակերպական սահմանափակումների: Երիտասարդները հաճախ քաղաքացիական ակտիվությունը դիտարկում են որպես հիմնական զբաղվածության ոլորտ՝ ակնկալելով դրամաշնորհներ կամ համագործակցության խրախուսական այլ մեխանիզմներ: Կարևոր է նաև ՔՀԿ-ների և պետության միջև համակարգված համագործակցությունը, շրջանավարտների հարթակների ձևավորումն ու երիտասարդների շարունակական ներգրավումը՝ ծրագրերի ազդեցությունը երկարաժամկետ դարձնելու համար:

RE-CONCEPTUALISING YOUTH CIVIC EDUCATION IN POST-WAR ARMENIA

Marina Galstyan

PhD in Sociology,

Center for Educational Research and Consulting,

Republic of Armenia,

galstyanmarina@gmail.com

<https://orcid.org/0000-0001-9396-0550>

Summary

The purpose of the research is to examine the directions for improving civic education programs in Armenia. The postwar and post-pandemic context in Armenia has created new challenges and opportunities for rethinking education, and civic education as well. This article is an attempt to contribute to the scientific understanding of the directions for improving civic education of young people in Armenia, taking into account the main features of the post-war society. The re-conceptualising of civic education in Armenia is conditioned by the war and the pandemic, a combination of social transformations. This study shows that civic education should go beyond the scope of only transferring knowledge and become a platform for formation of identity, meaning, values and democratic engagement.

The results of the research indicate that the patterns of participation remain uneven. Urban girls are more active, both before the war and in the post-war period. This clarifies the necessary strategy for the differentiated development of inclusion for rural youth. Interactive and problem-based learning forms are the most effective methodologically. Teachers act as exemplary performers, therefore their choice and methodological structure should have. Civic education should maintain the connections of young people, promoting cooperation with local structures and ensuring the continuity of programs. At the same time, there are challenges.

The latest technologies have become the core of modern citizenship, affecting awareness, political participation and social relations. Therefore, the purposefulness and methodological right of civic education should become a combination of civic education and

a critical understanding of technologies.

This study contributes to the growing body of research on civic education in transitional societies, offering evidence-based recommendations for rethinking civic education in Armenia. It calls for inclusive, community-driven, and digitally integrated approaches that empower youth and reinforce democratic values in a postwar context.

Keywords: *youth, participation, civic education, digital participation, youth in Armenia, post-war society.*

ПЕРЕОСМЫСЛЕНИЕ ГРАЖДАНСКОГО ОБРАЗОВАНИЯ МОЛОДЕЖИ В ПОСЛЕВОЕННОЙ АРМЕНИИ

Галстян Марина

*Кандидат социологических наук,
Центр по образовательным исследованиям и консультаций,
Республика Армения,
galstyanmarina@gmail.com*

Аннотация

Введение. Целью исследования является изучение направлений совершенствования программ гражданского образования в Армении. Данная статья представляет собой попытку внести вклад в научное понимание направлений совершенствования гражданского образования молодежи в Армении с учётом особенностей, характерных для послевоенных обществ. Переосмысление гражданского образования в Армении обусловлено сочетанием социальных преобразований после войны и пандемии. Данное исследование показывает, что гражданское образование должно выйти за рамки передачи знаний и стать платформой для формирования идентичности, смысла, ценностной ориентации и демократической активности. Результаты исследования свидетельствуют о том, что модели участия остаются неравномерными: городские девушки более активны как до войны, так и в послевоенный период. Это подчёркивает необходимость разработки дифференцированных стратегий инклюзии, особенно для сельской молодежи. С методической точки зрения, интерактивные и проблемно-ориентированные формы обучения более эффективны. Учителя выступают в качестве образцовых участников, поэтому их отбор и методическая подготовка имеют большое значение. Гражданское образование должно укреплять связи между молодёжью и сообществом, способствуя сотрудничеству с местными структурами и обеспечивая преемственность программ. В то же время существуют вызовы, связанные с финансовой устойчивостью и тенденцией отождествлять гражданский активизм со сферой занятости. В исследовании сделан вывод о том, что углубление сотрудничества между организациями гражданского общества и государством, а также внедрение инновационных механизмов поддержки являются важными условиями эффективности и преемственности гражданского образования. Новейшие технологии стали стержнем современной гражданственности, влияя на осведомленность, политическое участие и общественные отношения. Поэтому важным направлением в целеполагании и методологической направленности гражданского образования должно стать сочетание гражданского образования с критическим осмыслением технологий, включая развитие медиаграмотности и навыков создания медиаконтента.

Ключевые слова: *молодежь, участие, гражданское образование, цифровое участие, молодежь в Армении, послевоенное общество.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Sargsyan H.L., Harutyunyan M.L., Hasarakagitutyun ararkayi dery Hayastani Hanrapetutyunum qaghaqatsiakan hasarakutyan zargacman hamateqstum. Of Russian-Armenian University (Series: Humanities and Social Sciences), 2022, S. 200. (in Armenian)

2. Alscher P., Ludewig U., McElvany N., Civic education, teaching quality and students' willingness to participate in political and civic life: Political interest and knowledge as mediators. *Journal of Youth and Adolescence*, T. 51, №. 10, 2022, C. 1886-1900.
3. Altaany H.M., Civic education and its role in social stabilization: A comprehensive review. Available at SSRN 5002738, 2024.
4. Claassen R.L., & Monson J.Q., *Does Civic Education Matter? The Power of Long-Term Observation and the Experimental Method*. *Journal of Political Science Education*, 11(4), 2015.
5. Crittenden J., Levine P., Civic education, 2007.
6. Finkel E., Neundorf S., Rascón Ramírez A., Can online civic education induce democratic citizenship? Experimental evidence from a new democracy. *American Journal of Political Science*, T. 68, №. 2, 2024, C. 613-630.
7. Gordon E., Mihailidis P. (ed.), *Civic media: Technology, design, practice*. MIT Press, 2022.
8. Krutka D.G., Heath M.K., Smits R.M., Toward a civics of technology. *Journal of Technology and Teacher Education*, T. 30, №. 2, 2022, C. 229-237.
9. Morrow R.A., Habermas and civic education. *Handbook of Civic Engagement and Education*. Edward Elgar Publishing, 2022, C. 28-41.
10. Reuter A., Scharf T., Digital civic engagement in later life. *Civic Engagement in Later Life*, 2025, C. 122.

Получено: 26.09.2025

Рассмотрено: 13.10.2025

Принято: 20.10.2025

Received: 26.09.2025

Reviewed: 13.10.2025

Accepted: 20.10.2025



© The Author(s) 2025

This work is licensed under a Creative Commons Attribution-Non Commercial 4.0 International License

**«Կրթությունը 21-րդ դարում»
գիտամեթոդական միջազգային գրախոսվող հանդես**

Հատոր 7, համար 2, 2025, Երևան

**«Образование в 21-ом веке»
международный научно-методический рецензируемый журнал**

Том 7, Номер 2, 2025, Ереван

**“Education in the 21st Century”
International Scientific-Methodical Peer-Reviewed Journal**

Volume 7, Issue 2, 2025, Yerevan

*Հանդեսի շապիկին Մեսրոպ Մաշտոցի դիմանկարն է
(հեղինակ՝ Ստեփանոս Ներսիսյան):*

*На обложке журнала изображен портрет Месропа Маштоца
(Автор – Степанос Нерсисян).*

*On the cover of the journal is a portrait of Mesrop Mashtots
(Author: Stepanos Nersisyan).*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի, Ա. Խիզանցյանի, Գ. Հարությունյանի

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am